



ՄԱՍՏԵՎԱՆԴԱՐԱՆ

ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР
„МАТЕНАДАРАН“

Г. В. АБГАРЯН

„ИСТОРИЯ СЕБЕОСА“
и
ПРОБЛЕМА АНОНИМА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1965

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ՄԻՒԽԱՏՐԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՐԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

Գ. Վ. Ա. Բ Գ Ա Ր Յ Ա Ն

«ՄԵԲԵՐՈՒՄ ՊՈՏՄԱԴՐՅԱԼԵՐԻ»
ԵՎ
ԱՆԱՌԵՐԻ ԱՐԵՎԱԴՐՎԱԼԵՐԻ

•

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1965

«ԱԵՐԿՈՍԻ Պատմությունը» հայ մատենագրության նշանավոր հուշարձաններից է, որը հրատարակվելով հին հայերեն (գրաբար) և օտար լեզուներով, օգտագործվել է VI—VII դարերի պատմությամբ գրաղված հայ և օտար գիտնականների կողմից։ Ավելի քան 1300 տարի առաջ Հորինված այս գրվածքի բնագիրը շարերի բնիցքում կրել է զանազան փոփոխություններ։ Սույն հետազոտության նպատակն է՝ վերականգնել Պատմության սկզբնական բնագիրը և դասնալ ճշգրտել այս երկի միջոցով գիտության մեջ թափանցած և երբեմն խոչը թյուրիմացությունների, մասնավորապես «Անանունի առեղծվածի» համար առիթ տված տվյալները։ Ուսումնասիրության մեջ շոշափված են նաև Փալստոռ Բուզանդին, Մոլոս Խորենացուն և ուրիշ հայ մատենագիրների վերաբերող համապատասխան հարցեր։

Խմբագրությամբ՝

Լ. Ա. ԽԱՉԻԿՅԱՆԻ

10802

ԵՊՀ Գրադարան



SU0164469

ԱԼԻՆԱՑԻՆ
ՎԱՂԱՄԵՐԻԿԱ ԿՆՈԶՈ

Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Ն

Մեր թվագրության յոթերորդ դարը հայտնի է համաշխարհային պատմական նշանակություն ունեցող իրադարձություններով, ինչպիսիք են պարսկա-բյուզանդական պատերազմները, Երուսաղեմի առումը (614), արաբների քաղաքական ասպարեզ իջնելը և նրանց առաջին արշավանքները, Սասանյան Պարսկաստանի անկումը, բյուզանդական տիրապետությունների նվաճումը արաբների կողմից և այլն:

Չնայած սրան՝ ո՞չ պարսկական, ո՞չ էլ հունական, լատինական, ասորական, արաբական կամ այլ գրականություններ յոթերորդ դարում չեն ստեղծել զուտ պատմագրական որևէ երկ, ուր ամփոփված լիներ նշված դեպքերի նկարագրությունը: Վերջիններիս մասին արձագանքներ մնացել են ավելի ուշ ժամանակներում ապրած հեղինակների երկերում:

Միակ բացառությունը միջազգային պատմագրության մեջ կազմում է «Սեբեոսի Պատմությունը», որի հեղինակը ժամանակակից ու ականատես է դարաշրջան կազմող այդ դեպքերին և իր գրվածքով մեզ է հասցրել Անդրկովկասի, Իրանի, Մերձավոր արևելքի և Բյուզանդիայի քաղաքական կյանքին վերաբերող ուշագրավ աեղեկություններ:

Այսպիսով, «Սեբեոսի Պատմության» շնորհիվ հայ մատենագրությունը գրավում է առաջնակարգ դեր VII դարի համընդհանուր պատմագրության ասպարեզում:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ այս արժեքավոր երկը որպես հայ գրավոր մշակույթի հուշարձան, օգտագործվել և ըստ արժանվույն գնահատվել է, առաջին հերթին հայ պատ-

մարանների և գրականագետների կողմից. Գաթրճյան, Էմին, Պատկանյան, Խալաթյանց, Գարագաշյան, Նորայր Բլուզան դացի, Զարբհանալյան, Ալիշան, Բարսեղ Սարգիսյան, Աղոնց, Լեռ, Մանանդյան, Մալխասյանց, Աբեղյան, Զամինյան, Ալինյան և շատ ուրիշներ։ Այն բարձր գնահատականի է արժանացել նաև օտար մասնագետների կողմից։ Բավական է ասել, որ զերմանացի Համբավավոր գիտնական Հ. Հյուրշմանը համալսարանական դասախոսի իրավունք ստանալու։ Համար մրցանակաբաշխության է ներկայացրել «Սեբեոսի Պատմությանը» նվիրված մի հետազոտություն և այդ Պատմության արարական արշավանքներին վերաբերող գլուխների թարգմանությունը¹։ Պարսկա-բյուզանդական պատերազմների լավագույն ուսումնասիրողներից մեկը՝ էրնստ Գերլանդը «Սեբեոսի Պատմությունն» օգտագործել է գոկտորական դիսերտացիայի համար ընտրած իր ուսումնասիրությունում², իտալացի բյուզանդագետ Անժելո Պերնիչեն, որը հունական, սլավոնական, լատինական, ասորական, զպտական և հայկական աղբյուրների հիման վրա մանրամասն շարադրել և ամփոփել է բյուզանդական կայսր Հերակլի պատմությունը, իր օգտագործած աղբյուրների շարքում առաջին դերը հատկացրել է «Սեբեոսի Պատմությանը»³։ Այս սկզբնաղբյուրը նյութ է մատակարարել նաև ֆրանսիացի (է. Դյուկորյէ⁴, Վ. Լանգլուա⁵, Ֆ. Մալլեր⁶)։

¹ Hübschmann H., Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber. Aus dem Armenischen des Sebeos. Habilitationsschrift, Leipzig, 1875.

² Gerland E., Die persischen Feldzüge des Kaisers Herakleios. In. Dissertation f. Erl. d. Phil. Doktorwürde, Leipzig, 1894.

³ Pernice A., L'imperatore Eraclio, saggio di storia bizantina, Firenze, 1905.

⁴ Dulaquier E., Recherches sur la Chronologie arménienne technique et historique, Paris, 1859.

⁵ Langlois V., Collection des historiens anciens et modernes de l'Arménie, t. I, Paris, 1867.

⁶ Histoire d'Héraclius par l'évêque Sebeos, trad. de l'arménien et annotée par Frédéric Macler:- „Journal asiatique“, juillet-aout, Paris, 1905.

սուս (Գ. Հասկին, Վ. Մոլոտով⁸, Ն. Մառ⁹, Յու. Կովակով¹⁰), անդիհացի (Յ. Բ. Բյուրի¹¹), գերմանացի (Յ. Մարկ-փարտ¹²) և բազմաթիվ այլ գիտնականների:

Սկսած «Սեբեոսի Պատմության» հայտնաբերման ժամանակներից¹³ մինչև մեր օրերում լուս տեսած ուսումնասիրությունները այս գիրքը մնում է որպես VII դարի պատմության հիմնական աղբյուրներից մեկը համաշխարհային գրականության մեջ: Սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ հայ պատմիչի գործը թարգմանվել է ոռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն¹⁴:

⁷ Ласкин Г., Ираклий. Византийское государство в первой половине седьмого века, Харьков, 1889.

⁸ Болотов В., К истории Императора Ираклия:—«Визант. врем.», т. XIV (1907), С. Петербург, 1908.

⁹ Антиох Стратиг, Пленение Иерусалима персами в 614 г. греческий текст исследовал, издал и арабское извлечение приложил Н. Марр, СПб, 1909.

¹⁰ Кулаковский Юл., История Византии, т. III, Киев, 1915.

¹¹ Gibbon E.; The History of the Decline and Fall of the Roman Empire, t. V, ed. J. B. Bury, Appendix I, p. 498, London, 1898.

¹² Markwart J., Untersuchungen zur Geschichte von Eran: „Philologus“, supplementband X, H. I. Osteuropäische und Ostasiatische Streifzüge.

¹³ «Սեբեոսի Պատմության» ձեռագիրը հայտնաբերվել է անցյալ դարի առաջին տասնամյակներին, էջմիածնի գիտնական-մատենադարանապետ Հր.Վհաննես Շահնամիունյանցի կողմից, որին և պատկանում է նրա մասին առաջին տպագիր խոսքը (տե՛ս «Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ», Հտ. Ա., էջմիածին, 1842, էջ 262 ևն):

¹⁴ «Սեբեոսի Պատմության» տպագիր թարգմանություններից բացի հայտնի են նաև դեռ անտիպ մի քանի լրիվ կամ հատվածական թարգմանություններ՝ ոռուսերեն (տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան=Մ. Մ., Խռարյանների արխիվ, թղթ. 100, վագ. № 51), անգլերեն (տե՛ս «Հանգէս ամսորհայ», 1897, № 2, էջ 56), գերմաներեն («Արձագանք», 1894, № 13, էջ 3, նաև՝ Gerland E., Die persischen Feldzüge, S. 3. Պրոֆ. Մարկվարտի կտարած մի հատվածական թարգմանություն պահպամ է Հռոմի Պոպուլար Իստիտուտո Բիլիկո-ի արխիվում) և ֆրանսերեն (տե՛ս ՄՄ, անհատական արխիվների բաժին, թղթ. 235, վ. 204) լեզուներով:

Հայ դասական մատենագրության այս ինքնատիպ հուշարձանի հեղինակը համարվել է Սեբեոսը և այդ մասին պատմագիտության և բանասիրության մեջ որևէ կասկած չի եղել: Սակայն մենք սույն ուսումնասիրության մեջ ցույց ենք տալիս, որ Սեբեոսին վերագրված երկի բովանդակությունը չի համապատասխանում այն տվյալներին, որոնք հաղորդում են միջնադարյան հայ մատենագիրները իրական Սեբեոսի գրած «Պատմութիւն ի Հերակլն» երկի մասին¹⁵: Նոր նյութերի հետազոտությամբ մենք միաժամանակ փորձում ենք գտնել բազմիցս Սեբեոսի անվանը հրատարակված պատմական գրվածքի իրական հեղինակին, որը մեր կարծիքով յոթերորդ դարի հայ պատմիչ Խոսրովն է:

Եթե Սեբեոս պատմիշի հեղինակության մասին ոչ մի տարակոյս չի եղել, ապա նույնը չի կարելի ասել նրան վերագրված գրվածքի առաջին շրու գլուխների¹⁶ կապակցությամբ, որոնք դիտվել են մերթ որպես «Սեբեոսի Պատմության» բաղկացուցիչ մասեր, մերթ վերագրվել են Անանուն կոչված պատմիշին կամ՝ մի քանի այլ հայտնի կամ անհայտ պատմիչների:

Հայ մատենագրության հուշարձանների մեջ թերևս գոյություն շունի ավելի առեղծվածային մի բնագիր, քան նշված բնագիրն է: Ակադեմիկոս Ստ. Մալխասյանցն այդ կապակցությամբ գրում է: «Մեր գրականության մեջ չկա մի ուրիշ հեղինակ, բացի Խորենացուց, որ 95 տարվա ընթացքում այնքան տարբեր կարծիքների ենթարկվեր, որքան «Սեբեոսի Պատմությունը»¹⁷ (իմա առաջին շրու գլուխները):

¹⁵ Այս կարծիքը հիմնավորող փաստերի մի մասը մենք շարագրել ենք առանձին հոդվածում: Տե՛ս Դիտողություններ Սեբեոսի Պատմության մասին: «Բանքեր Մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 61—72: Թրգմ. Remarques sur l'Histoire de Sèbèos:- Revue d'Ét. Armén. N. S., T. I. Paris, 1964, p. 203—215.

¹⁶ Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն, բաղկատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջարանիւ և ծանօթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939 (այսուհետեւ՝ ՍԵՊ), էջ 1—22:

¹⁷ Մալխասյանց Ստ., Մատենագիտական դիտողություններ, Երևան, 1961, էջ 180:

Անցել է ավելի քան կես դար հարցի լավագույն հետազոհառղիմներից մեկի՝ Ն. Աղոնցի փայլուն աշխատության հրապարակման օրից, բայց այսօր էլ ուժի մեջ են մնում ականավոր պատմաբանի խոսքերն առեղծվածի մասին. «Հայոց նախնական պատմությունը, չնայած նրան նվիրված ուսումնասիրությունների դգալի քանակին, դեռ շարունակում է մնալ հայ բանասիրության՝ համար հանելուկ: Հանելուի բացահայտումը հիմնովին կարենոր է առանձնապես այժմ, Մովսես Խորենացու հարցում այս բնագրի ունեղած վճռական նշանակության առումով: Կիտնականներին չի հաջողվել «նախնական պատմությունը» պարզաբանել իր բնական լույսի տակ և գտնել նրա իրական հարաբերությունը Խորենացու հետ հիմնականում այն պատճառով, որ նրանք թեանցել են բնագրի պատշաճ քննության հարցը, որը պետք է նախորդի մնացած բոլոր քննություններին»¹⁸:

Մեր սույն հետազոտությունը նվիրված է Հանելուկային պլոյիների հենց պահանջվող բնագրական քննությանը:

Հարցին անդրադարձած բազմաթիվ հայ և օտար անվանի գիտնականներ¹⁹ բնագրին գիմել են գլխավորապես Մովսես Խորենացու կապակցությամբ և հայտնել են ամենաբաղմա-

¹⁸ Адонц Н., «Начальная история Армении» у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фавста Византийского:—«Виз. врем.», т. VIII, вып.1—2, СПб, 1901, стр. 64.

¹⁹ Առեղծվածը շոշափող որոշ արժեքավոր ներդրումներ դեռ կարոտ են հրատարակության: Դրանցից լավագույններն են Ա. Զամինյանի սևագիր գրառումները, որոնք պահպանվում են մեր Մատենադարանի արխիվում (ՄՄ, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 232ա., գ. 114, թղթ. 232, գ. 101, 121, 125, 133) և Հռոմի Pontificio Istituto Biblico-ում գտնվող՝ Յ. Մարկվարտի հետեւյալ գործերը՝ 1. Armenische Urgeschichte des Mat Abas 2. Ausgewählte Kapitel des Sebeos. Geschichte des Bischofs Sebeos über Herakl. 3. Armentsche Urgeschichte des Sebeos և այլն, Մարկվարտի անտես աշխատությունների ցուցակը նաևակով մեզ ուղարկել է Istituto Biblico-ի պրոֆ. M. F. Martin-ը, որին չնորհակալություն ենք հայտնում:

զան կարծիքներ նրա հորինման ժամանակի և հեղինակի վերաբերյալ։ Այսպես, օրինակ, ֆրանսիացի գիտնական Վ. Լանգլուայի կարծիքով բնագրի հեղինակը Մովսես Խորենացուց հետո ապրած և նրանից օգտված մի հեղինակ է։ Գերմանացի գիտնական Գուտշմիդը համոզված է, որ այդ հեղինակը հենց ինքը Խորենացին է, որը նշվող բնագրով նախ շարադրել է որպես համառոտ ուրվագիծ, ապա նույնն ընդլայնել է իր «Հայոց պատմության» մեջ։ Մեկ ուրիշ գերմանացի բանասերի՝ Ֆեթթերի ենթադրությամբ, որոնվող հեղինակն ու Մովսես Խորենացին երկուսն էլ օգտվել են միանույն սկզբնաղբյուրից։ Ն. Մառը հետեւով Ք. Պատկանյանին, գտել է, որ բնագիրն ստեղծվել է Խորենացու «Հայոց պատմությունից» առաջ և հանդիսանում է Խորենացու սկզբնաղբյուրներից մեկը։ Ն. Աղոնցը, Ն. Ալիխնյանը, Հ. Մանանդյանը բնագիրը համարել են Սեբեոսին վերագրված Պատմության անբաժան մասը, և Խորենացու «Հայոց պատմությունում» հանդիպելով այդ բնագիրն հիշեցնող տվյալների՝ եղրակացրել են, որ Խորենացին ծանոթ է Եղել «Սեբեոսի Պատմությանը», ուստի և ապրել է նրա ստեղծման ժամանակից՝ VII դարից հետո։ Գ. Խալաթյանցը բնագրի հորինման ժամանակը համարելով VIII—IX դարերը, միացել է Պատմահորը հինգերորդ դարից արտաքսող գիտնականներին։

Հետազոտությունները Մովսես Խորենացու առեղծվածից բացի առնշվել են նաև Փավստոս Բուղանդի, Ղազար Փարապեցու և այլ մատենագիրների հետ։ Մի շարք գիտնականներ (Ն. Մառ, Ն. Աղոնց, Հ. Թոփչյան, Կ. Տեր-Մահակյան, Ա. Մատիկյան, Ն. Ալիխնյան և այլք) կարծիք են հայտնել, թե մեզ հետաքրքրող գլուխները հանդիսանում են Փավստոս Բուղանդի «Հայոց պատմության» այժմ կորած համարվող Ա և Բ դպրությունները կամ քաղվածք նրանցից։ Ուրիշ գիտնականներ (Ղ. Ալիշան, Բ. Սարգսյան, Գ. Տեր-Պողոսյան) նշված բնագրի հեղինակ են համարել Ղաղար Փարապեցուն կամ նրա անվամբ հանդես եկած մեկին։ Հարցի պատասխանը որոնելու ընթացքում կյանքի է կոչվել նույնիսկ դոյցություն շունեցող մի

սլատմիչ՝ կարծեցյալ Ստեփանոս Տարոնացին, որը իր ամրել է IV—VI դարերի ժամանակամիջոցում²⁰:

Այսպիսով, Սեբեռոսին վերագրվող Պատմության առաջին շորս գլուխների հարցը միաժամանակ հանդիսանում է նաև մի քանի այլ մատենագիրների հետ առնչվող հարց, որի լուծումը զուգահեռաբար կնպաստի նաև հայ հին գրականության դեռ լուսաբանման կարոտ որոշ խնդիրների պարզաբանմանը: Ներկա աշխատության մեջ մենք հարցին մոտեցել ենք հենց այդ տեսակետից կ զանազան մատենագրական հուշարձանների համեմատական ուսումնասիրությամբ փորձել ենք գրտնել այն ուղիները, որոնք տանում են դեպի քննարկվող բնագրի հորինման ժամանակը, ինչպես նաև բացահայտում են այս երկի կապը բանասերներին զբաղեցրած մյուս մատենագիրների հետ:

Նորահայտ փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկար ժամանակ վեճերի առիթ հանդիսացած կ երթեմն Սեբեռոսին, երբեմն էլ Խորենացուն կամ այլ հեղինակների վերագրված շորս գլուխները գրված են շատ ավելի ուշ ժամանակներում կ կրում են XI դարի դրոշմը²¹: Որպես նրանց հավանական հեղինակ մեզ ներկայանում է այդ դարում ապրած Հովհանն Տարոնացին, որի մեզ հասած երկի խորագիրն ու նախաբանը պահպանվել է մեր Մատենադարանի ձեռագրերից մեկում: Այս կորած երկի մի հատվածն է ահա, որ սլատահաբար միանալով Սեբեռոսին վերագրվող Պատմությանը, հասել է մեզ և իր մեջ քաղվածաբար կրելով վաղ ժամա-

²⁰ Սեբեռոսին վերագրված Պատմության առաջին շորս գլուխների կապակցությամբ հայտնված զանազան բանասիրական կարծիքների մասին ավելի մանրամասն տեղեկություններ տե՛ս ՍեՊ, էջ ԺԹ—ՀԳ:

²¹ Այս հարցին նախօրոք անդրադարձել ենք մասնակի հովածածներով. տե՛ս կարծեցյալ Ստեփանոս Տարոնացին նույն ինքը Ստեփանոս Տարոնացի Ասողիկն է. «Պատմա—բանասիրական հանդես», 1962, № 1, էջ 210—225: Նաև՝ երկու տարբեր հեղինակներ Սեբեռոսին վերագրվող Պատմություններ. — «Բաներ Մատենապարանի», № 6, 1962, էջ 25—55: Նաև՝ Մամիկոնյանների զրուցից հնագույն գրանցումը հայ մատենագրության մեջ (Բուղանվարանի կորած դպրությունների կապակցությամբ). — «Բաներ Մատենապարանի», № 7, 1964, էջ 239—271:

նակների հայտնի և անհայտ գրավոր հուշարձանների հետքեր, առիթ է տվել հատվածը կապելու այս կամ այն պատմիչի անվան հետ:

Հատվածից անկախ «Սեբեռսի Պատմությունը» հայ հին գրականության մեջ առանձնակի դիրք է գրավում նաև բնագրագիտական առումով։ Դժվար է պատկերացնել առավել աղճատված մի պատմական երկ, քան այս Պատմության բնագիրն է։ VII դարում Հորինված երկը մեղ հասել է միայն հազար հարյուր տարի հետո ընդօրինակված մի ձեռագրի կազմում։ Տասնմեկ երկար ու ծիգ դարերի ընթացքում գրիշներն այնպիսի փոփոխությունների են ենթարկել բնագիրը, որ երբեմն անհնարին է որոշել զանազան բնագրական միավորների նախնական տեսքը։

Բանասերներն արդեն քիչ ջանք չեն դործադրել «Սեբեռսի Պատմության» բնագրի ճշգրտման ուղղությամբ։ Այդ առումով աշխատանք է կատարված նաև մեր սույն ուսումնասիրությունում, որտեղ բնագրի վերլուծության, ինչպես նաև հայ և օտար աղբյուրների համեմատության և ձեռագրական նոր նյութերի հիման վրա ճշգրտված և սրբագրված են բազմաթիվ բառեր, նախադասություններ, տեղանուններ, անձնանուններ, թվականներ, կարգավորված են ետևառաջ ընդօրինակված մի քանի հատվածներ, զտված են գրչական ներմուծումները հեղինակային բնագրից, վերականգնված և լրացված են մինչ այժմ անհայտ հատվածներ «Սեբեռսի Պատմության» մեջ, բացահայտված են պակասող հատվածների տեղեր և այլն։

Կատարված ճշգրտումների միջոցով պատմագիտությունը ձեռք է բերում նոր տվյալներ անցյալի պատմության վերաբերյալ և ազատվում է աղավաղված բնագրի հետևանքով կյանքի կոչված որոշ պատմական անճշտություններից։

1

ՍԵԲԵՈՍ ԹԵՇ ԽՈՍՔՈՎ

Միջնադարյան հինգ պատմիչներ՝ Ստեփանոս Ասողիկը, Սամվել Անեցին, Միհիթար Անեցին, Կիրակոս Գանձակեցին և Միսիթար Այրիվանեցին, ինչպես նաև մի քանի մատենագիտական ցանկերի հեղինակներ հիշում են Սեբեոս անունով մի պատմիչ, որը գրել է Հերակլի պատմությունը՝ «Պատմութիւն Հերակլի, որ ի Սեբիոսէ եպիսկոպոսէ ասացեալ»: Ուխտանեսր այդ նույն Պատմությունը հիշում է առանց Սեբեոսի անունը տալու: Ո՞վ է եղել Սեբեոսը, ի՞նչ ծավալ է ունեցել նրա Պատմությունը, հիշյալ աղբյուրները չեն նշում: Սեբեոս և Հերակլ անուններից բացի պատմիչներն ուրիշ ոչ մի մանրամասնություն չեն հազորպում: Միայն Ուխտանեսն է, որ Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունու մասին խոսելիս մի փոքր ակնարկ է անում Հերակլի պատմության բովանդակության մասին:

1831 թվականին (կամ ավելի վաղ)¹ Հովհաննես Շահսաթունյանը էջմիածնի ձեռագրերից մեկում հանդիպում է, մի

¹ Մինչև այժմ ընդունված է եղել կարծել, թե «Սեբեոսի Պատմությունը» չովհ: Շահսաթունյանը հայտնաբերել է 1842 թվականին: Սակայն Մատենագրանում պահպան փաստաթղթերից մեկում (Կաթ. դիվան, թղթ. 59, վագ. 652ա—1Զ, թ. 15ա) հանդիպում ենք Շահսաթունյանի 1831 թ. մայիսի 15-ի նամակին, որտեղ նա արդեն ծանոթ է «Սեբեոսի Պատմությանը»: Այսուհետ Զվարթնացի շինության մասին խոսելիս նա գրում է, «Զօրմնարկութիւն եկեղեցւոյս գրէ Սեբեոս եպիսկոպոս պատմաբան լայս ձեւ օրինակի» երեսում է ներկա «Սեբեոսից» մի ամբողջ քաղվածք: Այսպիսով, նա դեռ 1831 թվականին ծանոթ է եղել «Սեբեոսի Պատմությանը»:

անխորագիր բնագրի, որի հետ ծանոթանալուց հետո ենթադրում է, որ այն Սեբեռոսի Պատմությունն է: Այդ օրվանից սկսած, զրիշներն սկսում են անհայտ հեղինակի անվերնագիր դորձն ընդօրինակել Սեբեռոսի անունով, իսկ բանասերները հետևում են Շահիաթունյանի ենթադրությանը:

Այսուհետեւ «Կանոնք Դունայ սուրբ ժողովոյն»² կոչվող կանոնների վերջում գրանցված «Տէր Սեբէոս եպիսկոպոս Բագրատունեաց» ստորագրության հեղինակը նույնացվում է Հերակլի պատմության հեղինակի հետ և Պատմությունն սկզբում է հրատարակվել որպես Բագրատունյաց Սեբեռոս եպիսկոպոսի «Պատմութիւն ի Հերակլն» աշխատություն:

Պատմության վերջին հրատարակության խորագիրն այլևս չի կրում Հերակլի անունը: Այն տպագրված է որպես «Սեբէստոսի եպիսկոպոսի պատմութիւն», առանց Հերակլի: Այս նորությունը պատկանում է Ստ. Մալխասյանցին, որն այդ առթիվ գրում է. «Հերակլ անունը չէ համապատասխանում Պատմության բովանդակությանը. Հայոց նախնական պատմությունը, Պարթևներն ու Արշակունիները, մարզպանները, Խոսրով Անուշըրվան, արաբական արշավանքները, Հայոց դավանության թուղթը և այլն ոչ մի կապ չունին Հերակլի հետ, որի մասին խոսում է հեղինակը յուր գրքի տասը զլխում միայն, իսկ մյուս քառասուն գլուխները Հերակլին շեն վերաբերում»³:

Այս իրողությունը Մալխասյանցից առաջ նկատել են Հ. Գաթրճյանը, Ն. Ալինյանը և ուրիշներ: Սակայն նրանք բոլորն էլ ընդունել են Շահիաթունյանի ենթադրությունը և աշխատել են արդարացնող բացատրություններ տալ Պատմության բովանդակության և մատենագիրների նշած «Պատմութիւն ի Հերակլն» վերնագրի միջն գոյություն ունեցող հակասությանը:

Գաթրճյանի կարծիքով, Սեբեռոսն սկզբում գրել է Հերակլի պատմությունը, «բայց միանգամ սկսելէն յետե, ինչպէս բնականապէս կը պատահի, յառաջ ու վերջն ալ շատ յարակից

² «Կանոնք Դունայ սուրբ ժողովոյն». տե՛ս «Կանոնգիրը Հայոց», ձեռագրերի համեմատությամբ խմբեց Արսեն Ղոտնեան, Թիֆլիս, 1913, էջ 130:

³ Անդ, էջ ՀԷ:

1000

րաներ շարեր է»⁴, —որի հետևանքով, իբր, գրվածքի բովանդակությունը փոխվել է, իսկ վերնագիրը մնացել է «Պատմութիւն ի Հերակլին»: Ն. Ակինյանը Գաթրճյանի այս կարծիքին ավելացրել է իրենը. Սերեսուր իր Պատմության մեջ նղովում է սասանյան աշխարհավեր թագավոր Խոսրով Ապրվեզին և խոստանում գրել նրա պատմությունը, ուստի գրքի վերնագիրը եղել է «Պատմութիւն յԱպրուէզն Խոսրով», սակայն հետագայում պատմիչներից մեկը Ապրվեզի անունը ջնջել և վերնագրում ավելացրել է բարեպաշտ Հերակլի անունը⁵:

Ակինյանի ենթադրությունը կրկնել է նաև Ստ. Մալիխասյանցը⁶: Այս ենթադրությունները բխում են ոչ թե պատմիչների վկայած փաստից, այլ՝ ենթադրաբար Սերեսուր Պատմությունի համարվող մի դրվածքի բովանդակությունից: Այնինչ բայց ազրյունները միաբերան վկայում են, որ Սերեսուրի պատմաթյունը եղել է հատկապես Հերակլի պատմությունը:

Շահիսաթունյանի հայտնաբերած զրվածքում Հերակլի գործերի նկարագրությանը առաջին անգամ հանդիպում ենք լի գլխում, որին հաջորդող լի, լե, լջ գլուխները դարձյալ ոչ մի կապ չունեն Հերակլի հետ: Հերակլին չեն վերաբերում նաև գրքի վերջին՝ ԽԱ—Ծ գլուխները: Այսպիսով, Հերակլի պատմությունը համարվող այս գրքում Հերակլին են վերաբերում ընդամենը 6 գլուխ, մնացած 44 գլուխները այլ բովանդակություն ունեն⁷: Պարզ է, որ այս Պատմությունը չէր կարող կոչվել «Պատմութիւն ի Հերակլին»:

⁴ Հ. Գարենյան, Սերէսու եպիսկոպոս պատմագիր, «Եւրոպա», շաբաթական լուրեր, Վիեննա, 1852, թիվ 21, մայիսի 24, էջ 83:

⁵ Ն. Ակինյան, Սերիսու եպիսկոպոս Բագրատուննեաց և իր Պատմութիւննի Հերակլ «Հանդէս ամսօրեայ», 1923, էջ 334:

⁶ ՍԵՊ, էջ 181, ծան. 35:

⁷ Հերակլի անունը հանդիպում է նաև հայ, հույն և պարսիկ թագավորների ժամանակագրական ցանկում (գլ. Դ), ինչպես նաև գրքի բովանդակությունը ներկայացնող Ե. գլուխում: Սակայն, ինքնըստինքյան հասկանալի է, որ ինչպես ժամանակագրական աղյուսակը, այնպես և գրքի ընդհանուր ցանկը չէին կարող որևէ նշանակություն ունենալ՝ զիրքը Հերակլի անունով կոչելու հարցում:

Թյուրիմացաբար Սեբեսին վերագրված այս երկի հեղինակը սովորություն ունի երբեմն ճարտասանական դարձվածքներով սկսել իր Պատմության որևէ նոր գլուխ։ Այդպես է նա վարվել Ը, Ի՛, Խ, ԽԴ, ԽԵ, ԽԷ և այլ գլուխներ սկսելիս։ Խոսրով Ապրվեզի մուտքը Պատմության մեջ նշանավորված է գրեթե շափածո մի նախերգանքով։ Այս պայմաններում, եթե քննարկվող երկը իրոք «Հերակլի պատմությունը» լիներ, բնականաբար Պատմության գլխավոր հերոսի՝ Հերակլի մուտքը նույնպես կնախապատրաստվեր ինչ-որ մի ձևով։ Այնինչ Հերակլը ներկա «Սեբեսի Պատմության» մեջ մուտք է գործում հարկանցիորեն։

Սեբեսին վերագրված Պատմության հեղինակն ինքը հետեւյալ կերպ է ներկայացնում իր գրքի բովանդակությունը. «Բայց զայն ամենայն, որ ի Պերողի ժամանակն եղեալ շարութիւն, և զառ ի Խոսրովայ (Անուշըրովանայ—Գ. Ա.) զալըստամբութիւնն զՎարդանայ, և զզաւրացն Պարսիցն զալըստամբելն ի յՈրմզդիէ, զմահն Որմզդայի և զթագաւորելն Խոսրովայ. զմահն Մաւրիայ և զթագաւորելն Փոկասայ. զառնուկն Եգիպտոսի. զկոտորածն Ալեքսանդրի. զդիմելն Հերակլի ի կողմանս հիւսիսոյ առ արքայն Թէաւալացւոց... զմահն Խոսրովայ. զթագաւորելն Կաւատայ... և թէ որպէս յանկարծաւրէն շարժեցան բանակքն իսմայելի, և ի վայրկեան ժամանակի վանելով զզաւրութիւն թագաւորացն երկոցունց՝ կալան յԵղիպտոսէ... և յեզերէ ծովուն մեծի արեմտից մինչեւ ի դուռն թագաւորութեանն Պարսից զամենայն քաղաքս Միջագետաց Ասորւոց... —զայս ամենայն կամեցայ ի ձեռն զրոյս այսորիկ կարճառաւ ձեզ վիպասանել»⁸.

Պերողից մինչեւ իսմայելցիների արշավանքներն ընկած ժամանակամիջոցն ընդգրկում է պարսիկ և Հույն մոտ 15 թաղավորների երկուհարյուրամյա տիրապետության պատմություն։ Այսպիսի ընդհանուր բովանդակություն ունեցող Պատմությունը, անշուշտ, չէր կարող կոչվել ո՞չ Հերակլի, ո՞չ եւ Խոսրովի անունով։

⁸ ՍԵՊ, էջ 24:

Շահսաթունյանի ենթադրությանը դեմ են խոսում նաև մի բանի հայ պատմիչների վկայություններ:

Ուխտանեսը, օրինակ, Սմբատ Բագրատունու մասին գրում է. «Բազում պատերազմունս վանեալ և վատնեալ ի Հայս, ի Յոյնս և ի Պարսիկս՝ որպէս ցուցանէ քեզ Պատմութիւնն Հերակղի»⁹: Ներկա «Հերակլի պատմությունում» հիշատակություն չկա Սմբատի՝ Հայաստանում և Հունաստանում վարած բազում պատերազմների մասին: Այստեղ Սմբատը մասնակից է միայն պարսկական ներքին պատերազմներին: Մինչդեռ Բյուզանդիայում վարած պատերազմներն են, անշուշտ, որ Սմբատին մասնակից են դարձրել Բյուզանդական պատմությանը և տեղ տվել Հերակլի պատմության մեջ: Եթե միայն պարսկական ներքին կոփվներով սահմանափակվեին Սմբատի գործերը՝ նա Հերակլի պատմության մեջ անելիք չէր ունենա:

Ուխտանեսը Սմբատի մասին հայտնում է նաև հետեւյալ տեղեկությունը, որը դարձյալ բացակայում է ներկա Սեբեռսից: «Եւ Սմբատն՝ զորմէ ասացաք, թէ մարդպան էր Հայոց»¹⁰:

Այս տեղեկությունը հաստատում է նաև Ասողիկը¹¹, որն Ուխտանեսին ծանոթ չի եղել և իր տեղեկությունը քաղել է, հավանաբար, նույնպես իրական «Հերակլի պատմությունից»:

Միշնադարյան ոչ մի մատենագրական հուշարձանում չի պահպանվել որևէ տեղեկություն, որից երեսը, որ այժմ Սեբեռսին վերագրվող երկը միշնադարում նույնպես դիտվել է որպես Սեբեռոսի գործ: Ընդհակառակը, մի շարք պատմիչներ—Թ. Արծրունի, Ստ. Ասողիկ, Հովհ. Դրասիանակերտցի, Վ. Արևելցի և այլք — երբեմն բառացի մեջբերումներ են կատարում Սեբեռոսին վերագրվող երկից, բայց նրանցից ոչ մեկը, բացի Ասողիկից, չի նշում Սեբեռոսի անունը: Ասողիկն էլ այդ

⁹ Ուխտանելու, Պատմութիւն Հայոց, Հատ. 2, Վաղարշապատ, 1871, էջ 56:

¹⁰ Անզ, էջ 17:

¹¹ Ստ. Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 85:

անունը հիշատակում է Հայ պատմիչների բնդ՛անուր ցուցակում և ոչ թե «Տիեզերական պատմության» այս կամ այն հատվածի կապակցությամբ, որով հնարավոր լիներ որոշել, թե «Տիեզերական պատմության» ո՞ր հատվածին է վերաբերում Սեբես անունը:

Այս գեպքում, սակայն, ինչպես բացատրել այն հանգամանքը, որ Ասողիկը և մյուս պատմիչները կարծեցյալ Սեբեսից լայնորեն օգտվելով հանդերձ, Հայ պատմիչների ցանկում չեն նշել այս հեղինակի անունը: Հետազոտությունը պարզում է, որ Սեբեսին վերագրվող Պատմության մեզ չհասած ձեռագրերի մի խումբ զրկվել է երկի խորագրից դեռ շատ վաղ ժամանակներում և ընդօրինակված է եղել առանց հեղինակի անվան, ճիշտ այնպես, ինչպես որ է Սեբեսին վերագրվող Պատմության մեզ հասած հնագույն և փաստորեն միակ ձեռագիրը: Ահա այս է պատճառը, որ ոչ միայն Ասողիկը, այլև կարծեցյալ Սեբեսից օգտված շատ պատմիչներ չգիտեն այս հեղինակի անունը:

Որ Ասողիկի ժամանակ՝ «Սեբեսի Պատմության» որոշ օրինակներ արդեն զրկված էին վերնագրից, երեսում է նաև Երեանի Մաշտոցի անվան Մատենադարանում պահպող Հայերեն հնագույն թղթյա ձեռագրից (ձեռ. № 2679, ընդօրինակված 971 թ.): Այստեղ «Սեբեսի Պատմությունից» քաղված մի ամբողջ հատված (հմմտ. ՍԵՊ, էջ 133, տող 32—էջ 135, տող 26) ընդօրինակված է առանց հեղինակի անվան:

Այս նույն գործը վերնագիր չի ունեցել նաև Սամվել Անեցու ձեռքի տակ եղած ձեռագրում: Անեցին ներկա «Սեբեսի Պատմությունից» քաղում է մի տեղեկություն Դիբինի առման մասին և այն ժամանակ, երբ մյուս պատմիչներից օգտվելիս նշում է նրանց անունները (Տէր Յովհաննէս, Մովսէս Քերզողահայր, Եվսերիոս, Ղաղարիկ Փարպեցի, Շալուհ, Ստեփանոս Տարօնացի, Հովհաննէս Սարկավագ), Սեբեսին վերագրվող Պատմությունից օգտվելիս նրա հեղինակի անունը չգիտե և գրում է «ասէ պատմագիրն». «Յաւուրս Կոստանդնի սրգույթ Հերակլայ առաւ Դուին ի տաճկաց, ասէ պատմագիրն»:

(Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 80):

Սերեսին վերագրվող Պատմության ձեռագրերի միայն այն խումբն է, ունեցել խորագիր (Հեղինակի անվամբ հանդերձ), որը դանվել է Կիրակոս Գանձակեցու և Միհիթար Այրիվանեցու ձեռքին և որի հիման վրա այդ մատենագիրները նշել են Խոսրով պատմիչի անունը:

Ենթագրյալ «Սերեսի Պատմության» և նրա հեղինակ համարված Բագրատունյաց եպիսկոպոս Սերեսի փոխարարերությունների կապակցությամբ չպետք է աշքաթող անել նաև այն կարեւոր հանգամանքը, որ ամբողջ գրվածքի մեջ ոչ մի հիշատակություն չկա Դվինի 645 թ. ժողովի մասին, որին մասնակից էր Բագրատունյաց Սերեսի եպիսկոպոսը: Եթե այս եպիսկոպոսը իսկապես ներկա գրվածքի հեղինակը՝ լիներ՝ ապա զժվար թե ամբողջ Պատմության մեջ գոնե մեկ անգամ շակնարկեր այդ ժողովը:

Նշված փաստերը բացահայտում են մեկ շհասած «Հերակլի Պատմության» մասին պատմիչների հալորդած տեղեկությունների և Սերեսին վերագրվող ներկա գրվածքի միջև դոյլություն ունեցող անհամաձայնությունը և առիթ են տալիս մտածելու երկի իրական հեղինակի մասին:

Այս տեսակետից առանձին նշանակություն է ստանում ըննարկվող գրվածքի մասին մի նորահայտ տեղեկություն, որը վերաբերում է Սերեսին վերագրվող բնագրի մայր ձեռագրին:

Այս թանկարժեք ձեռագիրը պահպում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում՝ № 2639 (նախկին № 611, Կարենենեան ցուցակ № 2463): Այն՝ միաժամանակ Ղազար Փարսկեցու Պատմության և թղթի մայր ձեռագիրն է: Այսուղ են հավաքած նաև Կորյունի, Ագաթանգեղոսի, Եղիշեի, Խորենացու և Մեսրոպ Վայոցձորեցու երկերի լավագույն օրինակներ: Զեռագիրը հիմնականում ընդօրինակվել է մի շատ հին ձեռագրից, որը XVII դարում արդեն բրբրված է եղել և այժմ գոյություն չունի: Զեռագիրը ժողովածուի առաջին և մանրամասն նկարագրությունը պատկանում է Գալուստ Տեր-Մկրտչյա-

նին¹²: Այնուհետև, տարբեր առիթներով՝ նրան անդրադարձել են Ստ. Մալխասյանցը¹³, Մ. Աբեղյանը¹⁴, Ն. Ակինյանը¹⁵, և Տէր-Մինասյանը¹⁶ և ուրիշներ: Ժողովածուն ամենուրեք ներկայացված է որպես մի կուռ ամբողջություն, ընդօրինակված 1672 թվականին, երկու գրիշների՝ Պողոս Գալլոցու և Գրիգոր Երեցի կողմից:

Զեռագիրն ընդօրինակվել է Բաղեշի Հովհաննու Կարապետի (Ամրդոլու) վանքում: Ժամանակին այդ վանքում գտնված ձեռագրերի ցուցակում, որը կազմել է Հայտնի մատենագիտ և Բաղեշի դպրոցի ականավոր ուսուցիչ Վարդան Բաղեշեցին, ժողովածուի բովանդակությունը ներկայացված է այսպիս: «Ագաթանգեղ, Մովսէս, Եղիշէ, Ներսէսի պատմութիւն, Ղաղարու Փարագեցոյ և Խոսրովու»¹⁷: Այս տեղեկությունից և ձեռագրի համեմատությունից երևում է, որ Վարդան Բաղեշեցու օ-

¹² Միքան, Խորենացու Պատմության ուսումնասիրություն—«Արարատ», 1891, էջ 147—155. նույնի՝ Ղաղար Փարագեցու ձեռագրերը—«Արարատ», 1901, էջ 542—549: Հմմտ. նաև Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ Ժ:

¹³ «Ղաղարայ Փարագեցոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1904, էջ Ե—Զ: ՍԵՊ, էջ Թ:

¹⁴ «Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց», աշխատասիրութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութինեան, Տփղիս, 1913, էջ ԺԵ—ԺԶ: Կորյոն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 20—21:

¹⁵ «Հանդէս ամսօրեայ», 1923, էջ 3—6, 100 . Ն. Ակինյան, Վարդան Բաղեշեցի, առաջնորդ Ամիրտոլի վանքին, «Հանդէս ամսօրեայ», 1952, էջ 44—45, Կորին, Պատմութիւն վարուց Ս. Մաշտոցի, Հրատ. Հանդերձ ներած. և ծանոթ. Հ. Ներսես վ. Ակինյան, Վիեննա, 1952, էջ ԽԱ, և լի:

¹⁶ «Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ XXXIV:

¹⁷ Ամրդոլու գրքերի ցուցակը՝ Հետեւյալ վերնագրով՝ «Այս են գրեանք ի վանքն Ամիրդոլու՝ Համարով անշինչ յիշատակ գրեալ իմովս ձեռամբ Վարդանայ վարդապետին», գտնվում է Մատենադարանի № 737 (Նախկին № 639) ձեռագրում, թ. 223բ—232ա: Այն տպագրվել է «Արարատ» ամսագրում (Վաղարշապատ, 1903, էջ 178—189): Ցուցակի գրության ժամանակի մասին ձեռագիրը տվյալներ շունի Ակինյանը, Հայտնի չէ, թե ինչ աղբյուր-ներից օգտվելով, գրում է. «1673-ին կազմած է ինքը (Վարդանը—Գ. Ա.) Ամիրտոլու գրքերու ցուցակը» («Հ. ամս.», 1952, էջ 34): Ցուցակում հան-

րոր ձեռագիրը այլ տեսք է ունեցել, քան այժմ։ Հետևաբար ժամանակի լնթացքում զիրքը փոփոխություն է կրել և այլևս չի կարող դիտվել որպես ամբողջովին 1672 թվականի գործ։

Վարդանի կազմած ցուցակի համաձայն՝ ժողովածուում Ղաղար Փարպեցու Պատմությանը պետք է հաջորդեր միայն մեկ բնագիր, որը Վարդանը Խոսրովի անոնվ է ներկայացրել, մինչդեռ իրականում այնտեղ կան երկու անխորագիր բնագրեր, որոնցից առաջինը այժմ վերագրվում է Սեբեռուին, իսկ երկրորդը Կորյունի գրած Մաշտոցի վարքն է։ Ալինյանը ժողովածուն ամբողջությամբ համարելով 1672 թվականի գործ՝ գրում է «Վարդան իր գրացուցակին մէջ ... չէ անդրադամած, թե ձեռագրին մէջ... կայ նաև Սեբիոսի (կամ Եւերիոսի) Պատմութիւնն ի Հերակղ, վասն զի այն անխորագիր էր, իսկ յաջորդ գրուածքը... որ Կորիւնն է՝ համարած է գործ Խոսրովու...»¹⁸։ Ստացվում է այնպես, թե № 2639 ձեռագրում 123 մեծագիր էջեր գրաղեցնող Սեբեռոսի Պատմությունը Վարդան Բաղիշեցին կարող էր իր ցուցակում չգրանցել միայն այն պատճառով, որ այն խորագիր չուներ (կարծես թե ձեռագրաց ցուցակներում գրանցվում են միայն խորագիր ունեցող երկերը), իսկ ընդամենը 14 թերթից բաղկացած Մաշտոցի վարքը. որը ձեռագրում դարձյալ անխորագիր է՝ Վարդանը մտցրել է ցուցակի մեջ, որովհետև գիտեցել է, որ նրա հեղինակը... Խոսրովն է։ Կարճ ասած, հանգուցյալ գիտնականը համոզված է, որ ցուցակում նշված Խոսրովի գործը Մաշտոցի Վարքն է¹⁹։

դիպու գրքերից երկուսը (Հովհ. Կոստանդնուպոլիսիցու «Քերականությունը», Պողոս Փիրումալլե) լույս են տեսել 1674 և 1675 թվականներին և այդպիսով հերքում են Ակինյանի կարծիքը։ Մենք կարող ենք ցուցակի անխախտ ժամանակ նշել 1675—1704 թվականները (վերջինս Վարդանի մահվան թվականն է)։ Եթ քանի որ ցուցակում գրանցված գրքերի տարեթվերը կանոնավոր հերթականությամբ հասնում են մինչև 1675 թվականը և այլևս չեն շարունակվում՝ կարելի է ենթադրել, որ ցուցակը գրվել է 1675 թվականին կամ նրանից մի քանի տարի հետո։

¹⁸ «Հանդէս ամսօրեայ», 1952, էջ 44—45։ Տե՛ս նաև 1923, էջ 100 և այլուր։

¹⁹ Խոսրովի մասին մի այլ կարծիք է հայտնել Ամբողուու ձեռագրաց ցուցակը՝ հրատարակող Ս. Տեր-Հակոբյանը։ Տեղեկություն շունենալով Ամբո-

Խոսրովի կապակցությամբ մեր հետագոտությունները այս արդյունք տվեցին:

Զեռագրի մանրակրկիտ ուսումնասիրությունից պարզվեց, որ Խոսրովի անունով նշված բնագրին հաջորդող Մաշտոցի Վարքը գրված է նախորդ բնագրից տարբերվող մի այլ ձեռագրով²⁰: Այս նոր գրչության հեղինակն է Գրիգոր վարդապետը, որը ծնվել է 1670 թվականին²¹: № 2639 ձեռագիր ժողովածուն կազմելու ժամանակ (1672 թվականին) նա եղել է ընդամենը երկու տարեկան: Հետևաբար, Մաշտոցի Վարքը նա կարող էր բնագրին առաջ առնվազն 1685 թվականին, եթե 15 տարեկան էր:

Այս թվականից մոտ 10 տարի առաջ Վարդան Բաղիշեցին արդեն կազմել էր Ամբողություն գանքում գտնվող ձեռագրերի ցուցակը, որտեղ նշել է № 2639 ձեռագրում լնդօրինակված նյութերն առանց Մաշտոցի Վարքի:

Փաստերը ցուց են տալիս, որ Մաշտոցի Վարքը՝ ընդօրինակվելուց հետո էլ՝ երկար ժամանակ գտնվել է մի այլ ձեռագրում, որից հետո նոր է այնտեղից հանվել և ներմուծվել № 2639 ձեռագրի մեջ: Ըստ որում՝ ներմուծումը կատարվել է № 2639 ձեռագրի կազմը քանի դուրս գտնվի: Այս փոփոխության հետքերը այժմ պարզ երևում են ձեռագրի վրա²²:

Պարս ձեռագրերի այդ ցուցակում գրանցված գրքի և № 2639 ձեռագրի նույնական մասին՝ նա կարծել է, թե Վարդանի նշած հոսրավի գրձե՛՝ հոսրով մարդմանչի «Պատմութիւն սրբոյն Սահակայ» երկը պետք է լինի («Արարատ», 1903, էջ 179):

20 Այդ նույն ձեռագրով գրված ուրիշ գրքեր մենք գտնում ենք Մատենակարանի № 2078 և 2771 ձեռագրերում, № 2078 ձեռագրի 472ա թիվում այս նոր գրչի մասին գրված է: «Յիշեցէք... և դիս զանարդան Գրիգոր գրիշն և միւս ծեր տէր Գրիգորն, որ օգնեաց ինձ և հասոյց յաւարտ»: Այսուեկ նըշված «միւս ծեր տէր Գրիգորը» ոչ այլ որ է, քան № 2639 ձեռագրում Փարպեցու և ներկա «Սեբեսոսի» բնագրերն ընդօրինակող Գրիգոր երեցը: Այդ ապացուցվում է նրանով, որ № 2078 ձեռագրում այս Գրիգոր երեցի ձեռագրով ընդօրինակված է մի ընդարձակ բնագրի: Եվ այս բնագրի կապակցությամբ է, որ երիտասարդ գրիշը խնդրում է հիշել «միւս ծեր տէր Գրիգորն, որ օգնեաց ինձ և հասոյց յաւարտ»:

21 Ակինյան, Բաղէշի պարոցը, Վիեննա, 1925, էջ 323:

22 Նշենք այդ փոփոխությունը պատկերող մի քանի փաստեր:

№ 2639 ձեռագիրը բաղկացած է 47 պրակներից, որոնցից վեցինը

Այսպիսով, հասկանալի է դառնում, թե ինչու Ամրգոլու ձեռագրաց ցուցակում № 2639 ձեռագրի բովանդակությունը նշելիս Վարդանը Մաշտոցի Վարքը չի նշել:

Միաժամանակ բացահայտվում է մի շատ ուշագրավ փաստ: № 2639 ձեռագրում Փարզեցու Պատմությանն ու Թըղթին հաջորդող անխորագիր բնագիրը, որը Հովհաննելի կողմից վերագրվել է Սեբեոսին, Ամրգոլու ձեռագրաց ցուցակում նշված է «Խոսրովու» անունով:

Մեզ հայտնի չէ, թե Վարդան Բաղիշեցին որտեղից է վերցրել Խոսրովի անունը: Փաստն այն է, որ նա այդ անունը նշում է առանց կասկածի, որպես հայտնի իրողություն, մյուս նշանավոր պատմիշների հետ միասին. «Ագաթանգեղ», Մովսէս,

Վարքն է: Վարքից բացի, նախորդ բոլոր պրակները իրար պիստ կարգած են շրնջատվող հաստ թելերավ, որոնք 5 տարրեր տեղերում հյուսվում են իրար և անցնում 46 պրակների մեջքերի վրա բացված 5 ընդհանուր ակոսների միջով: Պրակները միացնող թելերը փոխանակ 46-րդ պրակից հետո շարունակվելու 47-րդ պրակի մեջ՝ դուրս են գալիս 46 պրակներից (որովհետև 47-րդ պրակի մեջքի վրա ակոսներ չկան) և անմիշապես մտնում են կաղմի դաշտ կտորի տակ: Այսպիսով, կազմի հետ միացված են միայն 46 պրակները, իսկ Վարքը մնում է կազմից անշատ: Ուրեմն ձեռագիրը կազմելու ժամանակ Վարքը կազմարարի ձեռքի տակ չի եղել և ձեռագիրը կազմվել է առանց նրա: Հետագայում ձեռագրի կազմը քանդել են և վերջին պրակին միացքել Վարքը: Միացումը կատարված է բարակ և անհամեմատ ավելի նոր թելերով, որոնք ձեռագիրը կազմելու ժամանակ գործածության մեջ չեն եղել: Վարքի վրա նկատվում են նրա մայր ձեռագրից մնացած 11 ասեղի անցքեր, որոնցով անցել են այդ ձեռագիրը կարող թելերը: Այս ձեռագիրը տնեցել է $25 \times 18,5$ մետրիցուն, մինչդեռ № 2639 ձեռագրի մեծությունն է՝ $25,5 \times 19,3$: Վարքը իր վրա կրում է իր մայր ձեռագրից եկող որույն համարակալություն: Կազմարարական ակոսների բացակայությունը Վարքի վրա ևն թաղքել է առաջ, որ նրա մայր ձեռագիրը գեռ հիմնական կազմ չի ունեցել, երբ իրենից հեռացը են Վարքը: № 2639 ձեռագրի բոլոր 46 պրակները անխոտիր համարակալված են կազմարարի կողմից, իսկ Վարքի պրակը ոչ մի համարակալություն չունի: № 2639 ձեռագրում գտնվող բնագրերը նկարազարդված են հայտնի ծաղկող Սահակ Վանեցու կողմից, որը Բաղեշում է գտնվել մինչև 1676 թվականը: Վարքը ոչ մի նկարաղարգություն չունի: Այն գրված է բոլորովին տարրեր թղթի վրա, տարրեր գծագրական ոճով և մնացած բնագրերից առանձնանում է իր անշուր գրությամբ և թղթերի եղբերի անինամ կտրվածքով:

Եղիշէ, Ներսէսի պատմութիւն, Ղաղար Փարակեցոյ և Խոսրովու»:

Որոշ տվյալների համաձայն՝ անցյալ դարի 40-ական թվականներին Խոսրովի անունը կրող Պատմության մի ձեռագիր գտնվելիս է եղել Աստրախանում։ 1847 թ. ապրիլի 25-ին այդ մասին Հովհաննես եպիսկոպոս Շահիսթունյանը Ներսէս Աշտարակեցուն գրում է. «Վեհափառ Տէր, որպէս գիտէք և արդէն լսեմ ևս եթէ Վեհափառութիւն Զեր ունի առաքել զյշեալ (Մատթէոս) արքեպիսկոպոսն նախ ի յԱստրախան... ոչ աւելորդ համարիմ խնդրել խոնարհաբար, յանձնել յատկապէս նոյն արքեպիսկոպոսին Մատթէոսի և զայն, զի ի գնալ նորա անդր հասու լիցի գրատան եկեղեցւոյն Սուրբ Աստուածածնի... Լուեալ է իմ, թէ՝ անդ յԱստրախան գտանի անուանեալն Խոսրով պատմագիր՝ առ տեղոյն բնակիչ Գրիգոր Ամիրաղովն՝ մնացեալ առ ինքն ի հօրեղբօրէ իւրմէ յԱրքահամէ։ Սոյն Գրիգոր վախճանեալ գոլով արդէն՝ կայ որդի նորին Արքահամ անուն՝ փեսայ տան Շամխարեանց, և ունի զդուստր զստեր Դանիէլի Շամխարեանց։ Հասու լիցի յատկապէս և այսմ, որ կարծի գիտ թանկագին, զի անուն և եթ լսի ի կարգի անգիտ հեղինակաց ի մեզ (ընդգծումներն ամենուրեք մերն են—Գ. Ա.), և անձանոթ է ամենեին ցարդ յազգէ մերմէ և յայլոց»²³,

Հայ մատենագիրների շարքում Խոսրով անունը նորություն չէ։ Հայտնի են մի քանի տարբեր Խոսրովներ՝ Խոսրով պատմագիր (ապրել է Զ—Ը դարերում)²⁴, Խոսրովիկ թարգմանիչ կամ Խոսրով Հոետոր (Ը դարի մատենագիր, գրել է դավանաբանական թղթեր և զանազան այլ գործեր)՝ Խոսրով Անձեաւ-

²³ Ա. Սեղրակյան, Հովհաննես եպիսկոպոս Շահիսթունյանցի կենուագրությունը, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 174—175.

²⁴ Կ. Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 7։ Մի. Այրիվանեցի, Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 37։ Մատենադարանի ձեռագիր № 126, թերթ 255թ. Ղազար Զահկեցի, Գիրք Աստուածարանական, որ կոչ դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 646։ Անառյան, Հայոց անձնանունների բառարան, Հատ. Բ, էջ 534 և այլն։

²⁵ Գ. Հովսեփյան, Խոսրովիկ թարգմանիչ, Վաղարշապատ, 1899։

ցի (Գրիգոր Նարեկացու հայրը, ժամանակից)՝²⁶ և այլն:

Այս Խոսրովներից առաջինը Հիշատակվում է որպես Ռ. ղարի պատմիչ Ղեռնդ երեցին նախորդող պատմագիր: Այսպիսով նա մոտենում է Վարդան Բաղիշեցու նշած Խոսրովին («Սեբեսին»), որի գրվածքը, իսկապես, Ղեռնդի Պատմության նախորդն է Հանդիսանում: Այս երկու Պատմությունների կապն այնքան ակնհայտ է, որ բանասեր Բ. Սարգիսյանը նույնիսկ կարծիք է Հայտնել, թե Սեբեսին վերագրվող Պատմության Բ դպրությունը հանդիսացել է Ղեռնդի Պատմության սկիզբը: «Այնուելին կսկսի Արարացոց պատմութիւնը, ուր կաւարով Անանունի («Սեբեսին»—Գ. Ա.) Բ դպրութիւնը»²⁷:

Կիրակոս Գանձակեցին այս Խոսրովին Հիշատակվում է Ղեղվոնդից անմիջապես առաջ: «Եւ Պատմութիւն սքանչելի առն կորեան: Եւ Խոսրով: Եւ Ղեռնդ երեցու Պատմութիւն»: Միիթար Այրիվանեցին նրան Հիշում է Թովմա Արծրունոց առաջ: «Խոսրով, Թովմայ վարդապետ»: Մատենադարանի № 126 ձեռագրում (թ. 255թ) գտնվող մի ցուցակում²⁸ նույնպես Խոսրովը Հիշատակված է Ղեռնդից առաջ: «Խոսրով Կորովին և զորինց պատմեաց: Ղեռնդ, որ զգալն Մահմէտի պատմէ լիապէս»: Հայ պատմագիրների մի այլ ցուցակում նույնպես Խոսրովը Հիշատակված է Ղեռնդ երեցից անմիջապես առաջ²⁹: Այդպես է նաև Ղազար Ջահկեցու ցուցակում:

«Եօթներորդ՝ Բիւլանդ վայրախօս,
Ութներորդ՝ Խոսրով,
Իններորդ՝ Ղեռնդ»³⁰:

26 Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի մեկնութիւն աղօթից պատարացին, Վենետիկ, 1869: Մեկնութիւն ժամակարգութեան, Օրթագյուղ, 1840:

27 «Բաղմավլէպ», 1915, էջ 38:

28 Ցուցակի Հեղինակն ու գրության ժամանակն անհայտ են: Զեռագիրը բնդօրինակված է 1709 թվականին:

29 «Յանկ պատմագրաց հայոց» (Ալիշան, Հայապատում, մաս Ա., Վենետիկ, 1901, էջ 13):

30 Ալիշանը Խոսրովի մասին գրում է. «Ղեռնդ՝ ութներորդ դարու պատմիչն է՝ Արարացոց գործոց. առաջ կամ ետեւ՝ անտարակոյս երեխ Խոսրով

Ամփոփելով մեր ասածները՝ գտնում ենք, որ միջնադարյան պատմիչների վկայությունները Հերակլի Պատմության մասին՝ չեն համապատասխանում Շահիմաթունյանի հայտնաբերած ձեռագրում գտնվող այն անխորագիր գրվածքին, որի հետագա ընդօրինակությունների վրա մակագրվել է «Սեբեռուի եպիսկոպոսի Պատմութիւն ի Հերակլն»։ XVII դարի ականավոր մատենագետ-ուսուցիչ Վարդան Բաղիշեցին ներկա երկի հեղինակ է նշում Խոսրով անունով մեկին։ Կիրակոս Գանձակեցու, Միհիթար Այրիվանեցու, Ղազար Զահկեցու ցուցակներում, ինչպես նաև մյուս անտիպ և տպագիր աղբյուրներում հիշատակվող Խոսրովը, ամենայն հավանականությամբ այս նույն Խոսրովն է։ Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Սեբեռուի գրած Հերակլի պատմությունը դեռ չի գտնված։

Մաշտոցի անվան Մատենադարանի № 7729 և № 993 ձեռագրերում պահպանվել են «ի Պատմութենէ Հերակլի» խո-

անուամբ պատմիլ մի, հաւանօրէն Ս. Սահակի վարքը գրող» («Հայապատմում», էջ 64)։ Մեծանուն բանասիրը Խոսրովին համարում է «հաւանօրէն Ս. Սահակի վարքը գրող», հենցելով Միհիթար Այրիվանեցու հետեւյալ ցուցակի վրա։ «Ներսէս, Սահակ, Կորին, Սայակայ, Խոսրով, Թոմայ վարդապետ, (Մի. Այրիվանեցի, Պատմ. ժամանակագր., Պետերբուրգ, 1867, էջ 37)։ Ալշանի կարծիքով «Սայակայ» բառի առցե եղել է «Պատմութիւն» բառը, որը հետագայում ընկել է։ Այս ենթադրության համաձայն՝ հատկածը կկարդացվի այսպես։ «Ներսէս, Սահակ, Կորին, Պատմութիւն Սայակայ, Խոսրով, Թոմայ վարդապետ»։ Այսպիսի ընթերցումից հետո ել «Սայակայ պատմութինը» չի առնչվի Խոսրովի հետ։ Այն կարող է վերաբերել ավելի շուտ Կորյունին, այսպես։ «Կորին՝ Պատմութիւն Սայակայ»։ Ք. Պատկանյանը այսպես էլ թարգմանել է. «Ներսէս և Սաակ. Կօրյոն (Ժիշնեօպաւուս Սաակ), Խօրօն, Տոմա Արցրուն Վարդապետ (Մխ. Այրիվանեց, Խրոն. իստորիա, Ընթաց. Ընթաց. 1869, ստ. 364)։

Ալշանի ենթադրության դեմ է խոսում նաև հետեւյալ փաստը։ Մի. Այրիվանեցին իր ցանկում բոլոր պատմիչներին (55 պատմիչ), առանց բացառության, հիշատակում է միայն անուններով, առանց նրանց գրած պատմությունները նշելու։ «Պատմութիւն» բառը այս ցուցակում ոչ մի տեղ չի դրածվում։ Հետեւաբար, չեր կարող գործածվել միայն և միայն Խոսրովի Պատմության կապակցությամբ։ Այդ բառի գործածությունը ցուցակում հավանական կլիներ միայն այն դեպքում, եթե տվյալ Պատմության հեղինակը հայտնի լիներ և նրա փոխարեն դրածածվեր Պատմության վերնադիրը։

բաղիրը կրող հատվածներ³¹, որոնց խորագիրն ու Հերակլին
նվիրված լինելու փաստը թուզլ են տալիս ենթադրելու, որ
դրանք հավանաբար Սեբեռոսի երկից մնացած հատվածներ են:
Միջազգային մատենագրության մեջ բացի Սեբեռոսի գրած
«Հերակլի Պատմությունից» հայտնի չէ այս խորագրով մի այլ
երկի: Այսուհանդերձ, Սեբեռոսի Հեղինակությունը հաստատով
ավելի որոշակի փաստերի բացակայությունը մեղ դրդում է
սահմանափակվել միայն ենթադրությամբ:

³¹ № 993 ձ. հատվածը տպված աև՛ս Անտօն Стратиг, Պլուսիոն
Իերուսալիմա թրամա 614 թ. էլք. 52–59.

II

ԱՆԱՆՈՒՆԻ ՀԱՏՎԱԾԸ ԵՎ ՆՐԱ ՀՈՐԻՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Ա

«Սեբեռսի Պատմության» իրական հեղինակի վերաբերյալ մեր տեսակետը շարադրելուց հետո Հանդրադառնանք հայագիտությանը երկար ժամանակ զբաղեցրած և մինչև այժմ իր լուծումը շգտած մի հարցի, այն է՝ Սեբեռսին վերագրվող Պատմության առաջին գլուխների կամ, ինչպես նախորդ հրատարակություններում է կոչվել, Ա. և Բ դպրությունների հորինման ժամանակի և նրանց հեղինակի ինքնության հարցին:

Հայագիտությանը որպես Անանունի (անանուն պատմիչի) բործ հայտնի այս գլուխների հետազոտությամբ զբաղվել են բազմաթիվ հայագետներ: Սրանցից ոմանք քննարկվող գլուխներն անշատելով բուն Պատմությունից, համարել են մեկ կամ մի քանի ուրիշ հեղինակների գործ, ոմանք էլ հերքել են այդ կարծիքը:

1939 թվականին ակադեմիկոս Ստեփանոս Մալխասյանցը Մատենադարանի ձեռագրերի հիման վրա կազմեց «Սեբեռսի Պատմության» բնագիրը և այն հրատարակեց որպես մեկ հեղինակի գործ: Սրանով կարծես վերջ էր արգում «Սեբեռսի Պատմության» առաջին գլուխների բանասիրական քննությանը:

Անհրաժեշտությունը, սակայն, թելազրում է նորից անդրադառնալ հարցին:

Խնդրի լուծման գործում վճռական դեր ունի քննարկվող պլուսիներից առաջինում՝ զետեղված առաջաբանը, ուստի և սկսենք նրանից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն չի համապատասխանում «Սեբեռսի Պատմությանը», հետևաբար և՝ նրան չի պատկանում:

Բերենք առաջաբանը (խոստաբանությունը).

ԽՈՍՏԱԲԱՆՈՒԹՅԻՒՆ ԱՌԱՋԻԿԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ¹

Եւ եղկ ոչ ի կամայական պիտոյից վարժ խուզակի² զանստորագրեալ³ ժամանակ և զնախնի քաջացն ձեռնարկելով դրոշմել վիպասանութիւնս, զիմն յիշատակել զառասպելս և ի նոյն շարագրելով ասացից զառ ի յապայսն եղելոյ, և ցուցից

¹ Այս վերնագիրը Մալխասյանցինն է: Զեռագիրը խորագիր չունի:

² Զգալի դժվարություն ներկայացնող խոստաբանության, մանավանդ ոկրի առողերի, կերծանմամբ դրազել են ավելի քան տաս բանասեր՝ Միհրդատյան, Պատկանյան, Հանգուա, Ֆեթթեր, Մառ, Խալաթյանց, Մատիկյան, Զամինյան, Ակինյան, Մալխասյանց, Մանանդյան և ուրիշներ: Զգտելով հասկանալի դարձնել բնագիրը՝ որոշ բանասերներ կերծանման ընթացքում իրենց բառերով և քերականական ձերով են պատվաստել այն: Բառերից մի բանիսի կերծանումը դարձել է բանասիրական հարց: Դրանցից է նաև վարդ խուզակի արտահայտությունը: Ստ. Մալխասյանցը գտնում է, որ «Խուզակի բառը ոչ մի տեղ չի հանդիպում, չնայած գիտնականները առանց որևէ հիմքի այն հասկանում են խուզակի (հետազոտող) իմաստով» (История епископа Себеоса, перевед с четвертого исправленного армянского издания, Ст. Малхасянц, Ереван, 1939, стр. 131): Այստեղից երեսում է, որ Մալխասյանցը խուզակի-ն դիտել է որպես բառի ուղղի ձև, ուղղական հոլովում, և, գտնելով, որ Հայերենում այդպիսի բառ չկա՝ չի թարգմանել այն: Մինչդեռ բնագրում բառն օգտագործված է սեռական հոլովով (ուղ. խուզակ): «Վարդ խուզակի» նշանակում է «վարդ հետազոտողի»: Հեղինակը հայտնում է, թե վարդ հետազոտողի կամավոր պահանջով չէ, որ ինքը գրի է վերցրել. «Եւ եղկ ոչ ի կամայական պիտոյից վարդ խուզակի», այնինչ Մալխասյանցի թարգմանությամբ ստացվել է այսպես. Հեղինակը իր սեփական ցանկությամբ չէ, որ սկսում է գրել («Мне пришлось не по собственной надобности приняться за описание», стр. 11): Խուզակի-ն շեն վերծանել նաև «Սեբեռսի Պատմության» մյուս թարգմանիչները՝ Պատկանյանը (ռուսերեն) և Հանգուան (Փրանսերեն):

³ Այս բառի մասին տե՛ս ստորև՝ «Թնագրի վերականգնում», Ա.

Համառաւտիւք զարգեաց ժամանակացս զավետիցս վերաբերութիւն⁴ զամս⁵ և զաւուրս հինգ⁶ թագաւորացն յիշատակելով:

Անդ⁷ հայելով ի մատեանն Մարարայ փիլիսոփայի Մծուրնացւոյ [յարձանագիրն]՝, զոր եղիտ զրոշմեալ ի վերայ արձանի ի Մծուրն⁹ քաղաքի, յաղարանսն Սանատրուկ արքայի, հանդէպ դրան արքունական տաճարին, ծածկեալ յաւերածի արքունական կայենիցն: Քանզի զսիւնս տաճարին այնորիկ խնդրեալ ի զուոն արքային Պարսից¹⁰ և բացեալ զաւերածն վասն սեանցն՝ սատ¹¹ դիպան արձանագրին, դրոշմեալ ի վերայ վիմի զամս և զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և Պարթեաց, յունարէն գպրութեամբ, զոր իմ գտեալ ի Միջագետս, ի նորին աշակերտացն, կամեցայ ձեզ զրուցակարգել, քանզի այս¹² ունէր զվերնագիրն այսպէս. «Ես Ազաթանգեղոս գրիշ, զրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատայ»՝

⁴ Տե՛ս «Բնագր. վերականգն.», Բ:

⁵ Այս՝ զամս բառից սկսած մինչեւ խստաբանության վերջը ն. Ակինյանի պոկում է տեղից և փոխազրում Պատմության բնագրի մեջ (տե՛ս ն. Ակինյան, Սեբիոսի «Ժամանակագիրն» և Փ. Բիզանդեայ Ա. պատմութիւնք—«Հ. Ամս.», 1938, էջ 14—19, 135—138 էն): Միաժամանակ նա իր սրբագրություններով զգալիորեն կերպարանափոխում է բնագիրը:

⁶ Այս բառի մասին հետո:

⁷ Տե՛ս «Բնագր. վերականգն.», Դ:

⁸ Անդ, Ե:

⁹ Անդ, Զ:

¹⁰ Նվաճված երկրներից պարսիկների ձեռքով ձարտարապետական Հուշարձանների սյուների տեղափոխման զեպքեր հիշատակում են նաև Պրոկոպիոս Կեսարացին (De Bello persico, II, 9). Մովսես Կաղանկատվացին (Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 146), Միքայել Ասորին (Chronique de Michel le Syrien, éd. J. B. Chabot, t. II, ասորերեն բնագիր, էջ 401, նաև «Ժամանակագրութիւն տեսան Միխայէլի Ասորուց պատրիարքի», Երուսաղեմ, 1871, էջ 293), XIII դարի արար պատմիլ էլ Մակինը (Historia Saracenica, Lugduni Batavum, 1625, էջ 12—14) և ուրիշներ:

Տե՛ս **Антиох Стратиг**, Пленение Иерусалима, стр. 5, 6, 38, 39.

¹¹ Տե՛ս «Բնագր. վերականգն.», Է:

¹² Անդ, Բ:

առեալի դիւանէ արքունի»: Զոր փոքր մի և ապա յիւրում տեղ-
ւոչն տեսցես զպատճենն»¹³:

թարգմանենք¹⁴.

«Վարժ հետազոտողի քմահամ ցանկությամբ չէ, որ ես
ձեռնարկում եմ գրել շգրված ժամանակի և նախնի քաջերի
պատմությունը, հիշատակել որոշ առասպելներ: Նույնը շա-
րունակելով ես կասեմ հետագայում եղածը և համառոտ ցուց
կտամ ներկա ժամանակների աղետների վրա հասնելը, հիշա-
տակելով հինգ թագավորների ատարիները: Այնտեղ նայելով
Մարաբա փիլիսոփա Մծուրնացու մատյանը [այն արձանա-
գրությանը], որը նա (Մարաբան—Պ. Ա.) գտավ սյան¹⁵ վրա
դրոշմված, Մծուրն քաղաքում, Սանատրուկ արքայի ապա-
րանքում, արքունական տաճարի դռան հանդեպ, արքայական
կայանի ավերակների տակ ծածկված, երբ որ այդ տաճարի
սյուները պահանջեցին պարսից արքայի դուռը և երբ սյուների
պատճառով բացեցին ավերակները, հանդիպեցին արձանա-
գրությանը՝ դրոշմված վեմի վրա՝ Հայոց և Պարթևաց հինգ
թագավորների տարիները՝ հունարեն գրությամբ: Սա գտնելով
Միշագետքում, նրա աշակերտների մոտ, կամեցա ձեզ պատ-
մել, որովհետեւ սա ուներ այսպիսի վերնագիր. «Ես՝ Ագաթան-
գելոս գրիչս, այս արձանի վրա իմ ձեռքով գրեցի Հայոց առա-
ջին թագավորների տարիները, քաղելով արքունի դիվանից,
քաջն Տրդատի հրամանով»: Որի պատճենը կտեսնես քիչ հե-
տո, իր տեղում»:

Առանձին-առանձին քննենք այս առաջարանի տարրերը և
տեսնենք, թե նրանք համապատասխանում են Սեբեոսին վե-
րագրվող Պատմության բովանդակությանը :

¹³ ՍեՊ, էջ 1-2:

¹⁴ Նկատի ունենալով, որ առաջարանի յուրաքանչյուր մանրամաս իրե-
նից ներկայացնում է առանձին բանասիրական հարց՝ մենք ձգտել ենք հնա-
րավոր շափով հարազատ մնալ բնագրին՝ թարգմանությանը դիմելով միա-
ժամանակ նաև որպես վերծանման միջոցի:

¹⁵ Բնագրի արձան բառը թարգմանել ենք «ոյուն»: Հին հուշարձաննե-
րում՝ արձան բառի գործածության մասին տե՛ս Օրбели Ի. Ա., «О двух
терминах в надписях Ани:—«Известия Российской Академии Истории
материальной культуры», том I, 8. VIII. 1920, էջ 11:

«Ե ՅՈՒՅՏԻՑ ՀԱՄԱՌԱԽՏԻՒՔ ԶԱՐԴԵԱՅ ԺԱՄԱՆԱԿԱՅՑՍ ԶԱՂԵՏԻՑՍ
ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒԽՆ՝ ԶԱՄՍ ԵՒ ԶԱԽՈՒՐՍ ՀԻՆԳ ԹԱԳԱԽՈՐԱՅՆ
ՅԻՇԱՏԱԿԵԼՈՎ»:

Հեղինակը խոստանում է նկարագրել իր ժամանակակից աղետները, հիշատակելով հինգ թագավորների տարիները:

Այն բանասերները, որոնք Սեբեռուին վերագրվող Պատմությունը դիտել են որպես մեկ հեղինակի՝ Սեբեռուի գործ, բնականաբար, առաջաբանը նույնպես համարելով հեղինակինը, փորձել են Պատմության բնագրում գտնել այս հինգ թագավորներին:

Որոնումները, սակայն, որևէ արդյունք չեն տվել, որովհետեւ, ինչպես նշվեց, առաջաբանը կապ չունի «Սեբեռուի Պատմության» հետ:

Ծիր այժմ վերանայում ենք այդ ուղղությամբ կատարված հետախուզումները՝ տեսնում ենք, որ «Սեբեռուի Պատմության» մեջ չգտնելով որևէ թագավորական հնգյակ, որը որոշակիորեն համապատասխաներ առաջաբանում նշված հինգ թագավորներին, բանասերները դիմել են զանազան ենթադրությունների և հինգ թագավորներ են համարել մերթ ամենավաղ ժամանակների հեթանոս թագավորների, մերթ՝ քրիստոնյա կայսրերի, մերթ հեղինակին ժամանակակիցների, մերթ մեռածների և այլն։ Այսպես ն. Աղոնցը հինգ թագավորներ է առաջադրել պարսից թագավորների՝ Որմիդդ, Խոսրով Ապրվեզ, Կավատ, Արտաշիր, Հագկերտ¹⁶, ն. Ակինյանը նկատի է ունեցել հոյն և պարսիկ թագավորների՝ Մորիկ, Խոսրով Ապրվեզ, Հերակլ, Կոստանդին, Հագկերտ¹⁷, ն. Մառը ներկայացրել է Սելլյան երեք՝ Սելլյոս Նիկանոր, Անտիոքոս Սոտեր, Անտիոքոս Թեոս և պարեական երկու թագավորների՝ Արշակ Մեծ, Արշակ Քաջ¹⁸, Մտ. Մալխասյանցն առա-

¹⁶ Адонц Н., Начальная история Армении у Себеоса, стр. 75, прим.

¹⁷ ն. Ակինյան, Սեբեռու եպիսկոպոս Բագրատունեաց և իր Պատմութինն ի Հերակլի: Մատենագրական հետազոտություններ, Հատ. Բ, Ագդ. Մատենադարան, ՃՇ, Վիեննա, 1924, էջ 48, ծան.

¹⁸ Марр Н., О «Начальной истории Армении» Анонима, «Виз. временников», 1894, № 1, стр. 279—280.

ջարկել է գերազանցապես բյուզանդական կայսրերի՝ Մորիկ, Փոկաս, Հերակլ, Երակղակ և Կոստոս¹⁹, Խալաթյանցը հնարավոր է համարել, որ դրանք եղել են Ազաթանգեղոսի արձանագրությունում Հիշված Հինգ հայ և պարթև թագավորները²⁰, միջնադարյան մի հեղինակ՝ Սիմեոն Ապարանցին (XVI դար) Հինգ թագավորներ է համարել նաբուգոնոսորյան ժամանակաշրջանի թագավորների՝ Զարեհ, Արմոզ, Սարհանդ, Շավարշ, Փառնավազ՝

Արանց հինգից թաղաւորեալ,
Հայոց և Պարթևաց տիրեալ...
Նախ Զարեհի ըզթագն առեալ,
Ապա Արմոզն արիացեալ,
Զկընի՝ Սարհանդն սիրացեալ,
Շավարշ լզՓառնաւազ տուեալ...²¹

 Ըկինյանը հետազյում համոզվելով, որ ինչպես իրեն, այնպես էլ մյուս բանասերների ենթադրությունները չեն համապատասխանում իրականությանը և «Հինգ» բառը չի հարմարվում «Սեբեսի Պատմության» բնագրին, վերանայել է տարիներ առաջ հայտնած իր կարծիքը և այս անգամ արդեն «Հինգ» բառի մեջ զետեղել է ոչ թե Հինգ թագավորների, այլ... դրբում հանդիպող բոլոր թագավորներին, նրանց տեղաբաշխելով Հինգ թագավորությունների մեջ՝ «Սելեկեանց, Պարթեւաց, Հայոց, Պարսից ու Հռոմայեցւոց»²² 

Թե ինչ սկզբունքով են առաջնորդվել բանասերները իրենց խայտարղեատ հնգյակներն առաջադրելիս՝ հայտնի չէ: Եթե, օրինակ, Աղոնցը նկատի է ունեցել Սասանյան թագավորներին՝ ապա նրանց թիվը, «Սեբեսի Պատմություն»-ում կըրկնապատիկ ավելի է հնգից, եթե Ակինյանը նախընտրել է հույն և պարսիկ թագավորներին՝ սրանց քանակը նույնպես հնգից

¹⁹ ՍեՊ, էջ հե հն:

²⁰ Հմմատ. ՍեՊ, էջ հե:

²¹ Սիմէօն Ապարանցի, Վիպասանութիւն սակս Պահաւունեացն զարմի և Մամիկոնեանցն սեփի, Վաղարշապատ, 1870, էջ 17—19:

²² Ն. Ակինյան. Սեբեսի «Ժամանակագիրն»... («Հ. Ամս.», 1938, լ. 23—24 հն):

շատ է, Մառի առաջարկած Հնգյակը, ի տարբերություն մյուս-ների, վերցված է «Սեբեոսի Պատմության» առաջին գլուխներից, սակայն այստեղ նույնպես հանդես են գալիս մի քանի անգամ ավելի շատ, քան Մառն է նշել, Սելևլյան և պարթև թագավորներ: Ո՞րն է, ուրեմն, սկզբունքը:

Ծփոթն այնքան է խորացել, որ բանասերներից ոմանք (օրինակ՝ Աղոնցը), մի կողմից համոզված լինելով, որ «Սեբեոսի Պատմությունը» Հերակլ կայսեր պատմությունն է, մյուս կողմից մոռացել են իրենց առաջադրած թագավորների շարքում տեղ հատկացնել նաև այս կայսրին: Հակասությունից զերծ չի մնացել նաև Մալիխասյանցը: Նա մեկ գրում է, որ «Սեբեոսի բուն նպատակն է եղել՝ գրել կործանիչ և ապականող՝ Աստծուց անիծված Խոսրովի պատմությունը...»²³, մեկ էլ իր առաջարկած թագավորական Հնգյակի մեջ տեղ չի տալիս գոնե այս Խոսրովին:

Հնգյակների՝ այս բազմազանությունն ինքնին ապացուց է այն բանի, որ «Սեբեոսի Պատմության» մեջ ոչ մի թագավորական Հնգյակ չկա և որ թագավորների մասին հիշատակող խոստաբանությունը կապ չունի «Սեբեոսի Պատմության» հետ:

Ք. Պատկանյանը՝ հարյուր տարի առաջ իր հրատարակած «Սեբեոսի Պատմության» ոռուսերեն թարգմանության մեջ, տողատակի մի փորբիկ ծանոթագրությունում, բնագրի հինգ բառի դիմաց ծանոթագրում է. «Մինույն էջում երկու անգամ հանդիպող հինգ բառն այստեղ ոչ մի նշանակություն չունի: Մենք մեծ վստահությամբ կկարդայինք նին, եթե բառը հանդիպեր միայն մեկ անգամ»²⁴:

Պատկանյանի ծանոթագրությունը բխում է նախադասության ընդհանուր ոգուց, որին, իրոք, չի համապատասխանում հինգ բառը, բայց սոսկ այս կարճ ծանոթագրությունը բավական չի եղել, որպեսզի հետագա բանասերներին համոզեր բա-

²³ ՄեՊ, էջ 181:

²⁴ История императора Иракла. Сочинение Себеоса, писателя VII века, перевод с армянского с объяснениями и примечаниями К. Патканьян, СПб, 1862, стр. 1, прим. 3.

սի անճշտության մեջ. դրա համար էլ հինգ թագավորներ որոշնող բանասերներն անտեսել են այդ ծանոթությունը:

Պատկանյանի կարծիքը մասսամբ կրկնել են Մատիկյանը²⁵, Ակինյանը²⁶, Աննինսկին²⁷, բայց սրանք նույնպես բավարարվել են միայն հայտարարություններով, առանց քննելու լինագիրը:

Քանի որ այժմ ընդհանուր ճանաչում է գտել «Սեբեռսի Պատմության» Մալխասյանցի հարաբակությունը, ուստի հինգ թագավորների կապակցությամբ նույնպես իշխողը Մալխասյանցի կարծիքն է:

Մանոթանանք նրա հետո: «Քանի որ,—գրում է Մալխասյանը,—Սեբեռսի ժամանակ դեռ սովորություն չէր դարձել փրկչական տարեթիվը գործածել ժամանակագրական հաշիվ-ների մեջ, հեղինակները սովոր էին անցքերի ժամանակը նշանակել տիրող թագավորների տարիներով: Հսա այսմ Սեբեռսի խոստանում է նկարագրել յուր ժամանակի աղետալի անցքերը, որոնք տեղի ունեցան հինգ թագավորների օրերով: Այս հինգ թագավորներն են... Հունաց այն հինգ թագավորները, որոնց ժամանակ կատարված գեպքերը նկարագրված են Սեբեռսի Պատմության այս ժամանակակից մասում, այսինքն՝ Մորիկ, Փոկաս, Հերակլ, Երակղակ և Կոստոս: Առաջին հուն կայսրը, որ հիշվում է այս ժամանակակից պատմության մեջ՝ Մորիկն է, և վերջինը, որի կենդանությամբ վերջանում է պատմությունը՝ Կոստոսն է»²⁸:

Հայսպիսով, Մալխասյանը՝ «Սեբեռսի Պատմությունում» հանդիպող հինգ բյուզանդական կայսրերին նույնացնում է խոստաբանությունում ակնարկված «հինգ» թագավորների հետ և գտնում, որ խոստաբանությունը ընդհանուր է նաև «Սեբեռսի Պատմության» համար, հետեւաբար և՝ «Սեբեռսի Պատմությունը» գրված է մեկ հեղինակի կողմից:]

²⁵ Ա. Մատիկյան, Անանոնը կամ կեղծ Սեբեռս, Վիեննա, 1913, էջ 68:

²⁶ Ա. Ակինյան, Սեբեռսի «ժամանակագիրն...» («Հ. Ամս.», 1938, լ. 24):

²⁷ Աննինսկի Ա., Древние армянские историки как исторические источники, Одесса, 1889, стр. 127.

²⁸ ՍեՊ, էջ 159—160:

Սկզբից և թե ասենք, որ մեծանուն պիտուականը ճիշտ չի որոշել բյուզանդական կայսրերի քանակը, «Սեբեոսի Պատմության» մեջ։ Մորիկից մինչև Կոստոս ընկած ժամանակամիջոցում թագավորել են ոչ թե հինգ, այլ վեց բյուզանդական կայսրեր։ Ուրեմն կապ չկա խոստաբանության հինգ և «Սեբեոսի Պատմության» վեց թագավորների միջև։ Այդ կապը, ինչպես ստորև կտեսնենք, բացառված կլիներ նույնպես այն դեպքում, եթե թագավորների քանակը պատահաբար համընկներ։

ԾՄալիսայանցը անտեսել է «Սեբեոսի Պատմությունում» հանդես եկող բյուզանդական կայսրերից մեկին՝ Հերակլի որդի Կոստանդինին, որի գահը բարձրանալու մասին կարդում ենք. «Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Հերակլոս զորդի իւր դԿոստանդին, ետ զնա ի ձեռն սնկղիտոսին, և յանձնեալ ամենայն մեծամեծացն պալատոյն՝ հաստատեաց զնա յաթոռ թագաւորութեան իւրոյ։ Եւ իւր առեալ յանձն զանուն զարավարութեան, հանդերձ եղբարբն իւրով Թէոդոսիւ²⁹ գումարեալ ժողովեաց զբազմութիւն զարացն, և անցեալ զնաց յԱսորեստան ի կողմանս Անտիոքացւոց»³⁰։ Մի այլ տեղում՝ «Հաճոյ թուեցաւ Երակլի և ամենայն սինկղիտոսացն նստուցանել դԿոստանդոս որդի Երակլի յաթոռ թագաւորութեանն... Ապա յայնժամ աւելի ևս հաստատեցին դԿոստանդին ի պատիւ թագաւորութեան ըստ առաջին բանին»³¹։

Ուրեմն, հիմք չկա Կոստանդին կայսրին անտեսելու կամ արժեքազրկելու՝ այսպիսի խոսքերով. «Կոստանդինին՝ քանի որ նա թագավորել է սակաւ աւուրս՝ ուրեմն պատմական-ժամանակագրական տեղ չէ գրավել՝ Սեբեոսը հաշվի չի առնում։ Բ դպրության ցանկի մեջ էլ նրան և Երակլղակին միասին է նշանակում»³², իրականում «Սեբեոսը» Կոստանդինին ոչ միայն հաշվի է առնում, այլև ավելի պատշաճ տեղ է հատկացնում,

²⁹Տե՛ս «Բնագր. վերականգն.» 1:

³⁰ՍեՊ, էջ 81—82։

³¹Անդ, էջ 92։

³²Ստ. Մալիսայանց, Սեբեոսի Պատմությունը և Մ. Խորենացի, Թիֆլիս, էջ 75։

քան Մալխասյանցի նշած հինգ կայսրերից թեկուղ հենց այս երակղակին: Այն ժամանակ, երբ երակղակը «Սեբեռոսի Պատմության» մեջ հանդես է գալիս ընդամենը մեկ անգամ՝ այդ նույն ժամանակ Մալխասյանցի անտեսած Կոստանդնին հանդիպում ենք Պատմության 81, 92, 109, 113 էջերում: Բ դպրության ցանկում նույնպես նա ավելի երկելի է, քան երակղակը: Ահա այդ հատվածը. «Թագաւորեն... Կոստանդնին երակղակ: Ի սմին ամի մեռաւ Կոստանդնին դաւեալ ի մաւրէն: Եւ թագաւորէ երակղակ: Դարձեալ փոխեցաւ երակղակ, և թագաւորէ Կոստոս՝ որդի Կոստանդեայ, որ կոչեցաւ յանուն հաւրիւրոյ Կոստանդնին»³³:]

Այս ցանկի մասին է, որ Մալխասյանցը գրում է. «Բ դրաբության ցանկի մեջ էլ նրան (Կոստանդնին—Գ. Ա.) կ երակղակին միասին է նշանակում», այսինքն՝ Կոստանդնին այնքան աննշան մի կայսր է, որ Սեբեռոս նրան Բ դպրության ցանկում նույնիսկ առանձին տեղ չի հատկացրել, այլ նշել է երակղակի հետ միասին:

Պետք է ասել, որ եթե Կոստանդնիր ցանկում առանձին տեղ չունի և այդ հանգամանքն իրավունք է տալիս՝ նրան զըրկելու թագավորությունից, ապա ճիշտ միենույն վիճակում է գտնվում նաև երակղակը, որովհետեւ սա էլ ցանկում առանձին տեղ չունի և կանգնած է հենց նույն Կոստանդնի կողքին: Ուրեմն, կամ պետք է երակղակին էլ, Կոստանդնի նման, մերժել և ճանաչել միայն շորս կայսրերի, կամ էլ,—որ ավելի ճիշտ կլինի,—Երկուսին էլ հաշվի առնել և արձանագրել վեց կայսրերի իրական գոյությունը «Սեբեռոսի Պատմության» մեջ: Երկու դեպքում էլ արդյունքը նույնն է. ո՛չ շորսը, ո՛չ էլ վեցը հնգյակ կազմել չեն կարող:

Ի պաշտպանություն «մերժված» Կոստանդնի ավելացնենք, որ այս կայսրը հայ մատենագրության և առհասարակ իրական պատմության մեջ շատ ավելի ծանոթ է, քան երակղակը: Ստեփանոս Ասողիկը, օրինակ, երակղակին չի ճանաչում, մինչդեռ Կոստանդնին քաջ ծանոթ է: Թող զարմանալի չլինի,

³³ ՍԵՊ, էջ 22:

Եթե ասենք, որ ինքը՝ ակադեմիկոս Մալխասյանցն իր կազմած բյուզանդական կայսրերի ցուցակում՝ երակղակին բոլոր բովին չի հիշատակել, իսկ Կոստանդնին պատշաճ տեղ է հասկացրել³⁴: Վերջապես դարձյալ Մալխասյանցը «Սեբեռու Պատմության» գլուխներից մեկը վերնագրել է «...Մահ Հերակլի և թագաւորել որդոյ նորա Կոստանդնի»³⁵:

Ըստ նրանք են, սակայն, խոստաբանությունում ակնարկված իրական թագավորները: Դիմենք հենց խոստաբանությանը: Այստեղ կա թագավորներին վերաբերող երեք նախադասություն. ա) «զամս և զաւորս հինգ թագաւորացն», բ) զամս և զաւորս հինգ թագաւորացն Հայոց և Պարթևաց», գ) «զամս առաջին թագաւորացն Հայոց»: Ինչպես տեսնում ենք, նախադասություններից և ոչ մեկում բյուզանդական կայսրերին վերաբերող բառ չկա: Խոսքն ամենուրեք հայ (և պարթև) թագավորների մասին է:

Հայոց բառը բացակայում է միայն առաջին նախադասությունում, բայց հենց հաջորդ նախադասությունում հեղինակը լրացնում է այդ բացը՝ գրելով «զամս և զաւորս հինգ թագաւորացն Հայոց և Պարթևաց», իսկ թիւ հետո՝ «զամս առաջին թագաւորացն Հայոց»: Առաջին նախադասության մեջ Հայոց բառի բացակայությունը խոսում է այն մասին, որ հայ թագավորների ազգությունը (որը միաժամանակ նաև հեղինակի ազգությունն է) բնագրում այնքան հասկանալի է, որ հեղինակը այն չի նշել: Նա այդպես է վարվել նաև հայոց «նախնի քաջերի», հայկական «առասպեկների» և Հայաստանի «Հնկարագրված ժամանակի» մասին խոսելիս («...զանստորագրեալ ժամանակ և զնախնի քաջացն ձեռնարկելով դրոշմել վիպասանութիւնս, զիմն յիշատակել զառասպելս») ոչ մի տեղ չօդտագործելով Հայոց բառը:

Այդպես է նախադասության բնույթը:

Այնուհետև պետք է նկատի ունենալ, որ չէր կարող պատահել, որ երեք՝ համարյա միենույն բառերից բաղկացած նախադասություններում խոսվեր երկու տարբեր ազգություն-

³⁴ Տե՛ս ՍԵՊ, էջ 176:

³⁵ Անդ, էջ 165:

ների պատկանող թագավորների մասին, բայց նշվեր նրանցից միայն մեկի աղջությունը:

Երբ համադրում ենք թագավորներին վերաբերող երեք նախադասությունները՝ ստանում ենք այսպիսի մի պատկեր.

զամո և զաւարոս	զամո և զաւարոս	զամո
նինգ թագաւորացն	նինգ թագաւորացն	առաջին թագաւորացն
Հայոց և Պարթևաց		Հայոց

Ինչպես տեսնում ենք, գործ ունենք միենույն նախադասության գրեթե բառացի կրկնությունների հետո Ամենուրեք հայտնվում է միենույն միաբր, մեկ-երկու բառով ավելի կամ պակասու:

Համապրությունից պարզվում է նաև, որ առաջին և երկրորդ նախադասություններում գանվող նինգ բառին երրորդում համապատասխանում է առաջին բառը, այլ կերպ ասած՝ միենույն թագավորների մասին մի գեղքում ասվում է նինգ թագավորներ, մյուս գեղքում՝ առաջին թագավորներ: Կնշանակի՝ հինգ և առաջին բառերը իմաստով նույնն են և ցույց են տալիս, որ հինգ թագավորները միաժամանակ ինչ որ երկրի առաջին թագավորներն են:

Այս տվյալը չի համապատասխանում ո՛չ «Սեբեոսի Պատմությանը» միացած առաջին շորս գլուխներին, ո՛չ էլ բուն Պատմությանը: Մալխասյանցի նշած բյուզանդական կայսրերն հանդես են դալիս առաջին գլուխներում հիշատակված շուրջ 30 հռոմեական-բյուզանդական կայսրերից հետո, կը նշանակի առաջին բյուզանդական թագավորներ չեն, այդպիսիք չեն նաև բուն Պատմությունում հիշատակված բյուզանդական կայսրերը: Նույն վիճակում են նաև հայոց և Պարթևաց թագավորները, որոնց թիվը բնագրում մի քանի անգամ գերազանցում է հնգին:

Ընդունված նինգ բառը ոչ մի պայմանով չի հարմարվում «Սեբեոսի Պատմության» բովանդակությանը և ներկայանում է որպես բացարձակ գրչական սխալ: Այնպես որ կարելի է համարձակորեն, առանց վարանելու Պատկանյանի հայտնած այն

մաքից, որ բառը խոստաբանովթյունում հանդիպում է երկու անգամ, հինգ-ը սրբագրել հին-ով³⁶:

Մալխասյանցը և մյուս բանասերը թագավորական հնգյակներ առաջադրելիս ելել են հիմնականում «Եւ ցուցից համառատիւ զարդեաց ժամանակաց զաղետիցս վերաբերութիւն՝ զամս և զաւորս հինգ թագաւորացն յիշատակելով» նախադասությունից, որը նրանք վերծանել են սխալ: Այս նախադասովթյունում հեղինակն ուրիշ բան չի արել, բան աղետներին վերաբերող իր խոսքում նորից կրկնել է քիչ վերը հայտնած միտքը: Վերը խոստանում էր «զիմն յիշատակել զառասպելս», այսուեղ՝ «յիշատակել ...հին թագաւորացն»: Երկուսն էլ վերաբերում են միկնույն հին ժամանակներին: Բայց քանի որ այս նույն միտքը երկրորդ անգամ հայտնելիս հեղինակը այն զետեղել է «զարդեաց ժամանակս զաղետիցս վերաբերութիւն» բառերի հետ միասին՝ կարծիք է ստեղծվել, թե այս աղետներն ու «հինգ» թագավորները իրար ժամանակակիցներ են: Մայստաբանովթյան անկանոն շարահյուսովթյան հետեւանքով ստեղծված մի պատրանք է: Հեղինակը սիրում է միկնույն միտքը մի քանի անգամ կրկնել: Մենք արդեն տեսանք, թե ինչպես նա երեք անգամ համարյա միկնույն խոսքերով հիշատակում է «զամս և զաւորս հին (կամ՝ առաջին) թագաւորացն»:

Այս երեք նախադասովթյուններից վերջին երկուսի նույնությունն այնքան ակնհայտ է, որ Մալխասյանցը նույնպես համաձայնում է հինգ-ը հին-ով սրբագրելուն³⁷:

³⁶ Հին-ը կարող էր հինգ զառնալ ամենաբարձրագան ճանապարհներով: Ինչ վերաբերում է բառի երկու անգամ հանդիպելուն՝ այդ բացատրվում է նրանով, որ առաջին նախադասովթյունում հին-ը հինգ զառնալով՝ թափանցել է նաև երկրորդ նախադասովթյան մեջ. ընդորինակող գրիշները նկատելով նախադասովթյունների նույնությունը՝ նույնացրել են նաև սխալը:

³⁷ Այս առթիվ Մալխասյանցը գրում է. «Բանասերներից սմանք արառագիր են հինգ բառը այստեղ կարդալ հին, որպես համապատասխան՝ արձանագրության առաջին բառի, բայց այս զետքում էլ դարձյալ մնում է հակասությունը՝ «քազաւորացն Հայոց» և «քազաւորացն Հայոց և Պարթևաց» մեջ: Այս հակասությունը, —շարունակում է Մալխասյանցը, —կարծում ենք, կարելի է վերացնել՝ Սեբոսի աղավաղված բնագիրն այսպես հասկանալով,

«Մերեսսի Պատմության» ամբողջական բնագրի մասին իր կարծիքը հիմնավորելու համար Մալխասյանցը օգնության է կանում նաև այս Պատմության Ե—Ծ գլուխներին նախորդող առաջաբանը, որտեղ հեղինակը իր գիրքը համարում է «Մատեան ժամանակեան, պատմութիւն թագաւորական»:

ՄԱՏԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԵԱՆ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ...

Այս խոսքերը համեմատելով առաջին շորս գլուխներին նախորդող առաջաբանի բովանդակության հետ, Մալխասյանցը գտնում է, որ երկուսն էլ միենույն միտքն են արտահայտում, նույնիսկ միենույն բառերով, հետևաբար և երկուսն էլ վերաբերում են միենույն՝ արդի ժամանակի պատմությանը: «Մատեան ժամանակեան»-ը գրում է Մալխասյանցը,—խոստաբանության արդի ժամանակն է, «Պատմութիւն թագաւորական-ը խոստաբանության, ինչնզ թագավորների տարիներն են»³⁸ և այլն:

Որպեսզի ցույց տանք, որ երկու առաջաբանների միջև կապ չկա՝ բերենք երկրորդ առաջաբանի համապատասխան խոսքերը.

«Մատեան ժամանակեան,
Պատմութիւն թագաւորական,
Վէպ արիական,
Վանումն տիեզերական,

թե Հայոց և Պարթևաց հին (կամ հինգ) թագավորների մասին գրել է Մար Աբասը՝ օգտվելով Ազաթանգեղոսի արձանագրություննից, որտեղ գրված են եղել Հայոց առաջին թագավորների անունները», (ՍԵՊ, էջ 162—163): Մալխասյանցի այս բացատրությունից ստացվում է այնպես, որ Ազաթանգեղոսի արձանագրության մեջ պարթև թագավորների անունները շեն եղել և ավելացրել է Մար Աբասը: Այսպիսի հնիքագրության կարիք չկա: Իրականում ոչ մի հակասություն գոյություն չունի: Մար Աբասը կարող էր արձանագրության մեջ հանդիպել պարթև թագավորների անուններին, չնայած արձանագրության վերնագրում այդ թագավորների մասին ոչինչ չի ասվել: Վ դարսում հորինված Հայոց պատմություններից և ոչ մեկի վերնագրում շենք հանդիպի պարթև թագավորների անուններ, բայց ամենուրեք հիշատակվում են այդ թագավորները:

³⁸ ՍԵՊ, էջ 181:

ՀԵՆ ՍԱՍԱՆԱԿԱՆ,
ՅԱՊՐՈՒԷՂՆ ԽՈՍՐՈՎԵԿԱՆ»:

Եւ արդ՝ ասացից զվէպս ի կործանիշն և յապականողն Խոսրով, յԱստուծոյ անիծեալն»³⁹։

Առաջին տողը՝ «Մատեան ժամանական» պարզապես նշանակում է «ժամանակական գիրք», ժամանակագրություն, «Կոհի առաջնաշաբաթ» («Կոհի առաջնաշաբաթ»), ինչպես թարգմանում է Մալխասյանցը։ Երկրորդ տողում հայտնում է, որ ժամանակագրական մատյանն իրենից ներկայացնելու է մի թագավորական պատմություն («Պատմութիւն թագաւորական»)։ Հաջորդ տողերում բացատրվում է, որ այդ պատմությունը պարսիկների և նրանց աշխարհավեր գործողությունների մասին է («Վէպ արիական, վանումն տիեզերական»), որոնք կատարվեցին սասանյան ավազակ Խոսրով Ապրվեզի («ՀԵՆ ՍԱՍԱՆԱԿԱՆ, ՅԱՊՐՈՒԷՂՆ ԽՈՍՐՈՎԵԿԱՆ») ձեռքով։ Վերջին առաջնում հեղինակը բացարձակ պարզությամբ հայտնում է, որ սկսում է շարադրել Խոսրով Ապրվեզի պատմությունը («Եւ արդ ասացից զվէպս ի կործանիշն և յապականողն Խոսրով, յԱստուծոյ անիծեալն»)։

Այսպիսով «Պատմութիւն թագաւորական» արտահայտությունը անվանակոչումն է Խոսրով Ապրվեզի (և ոչ «Հինգ թագաւորների») պատմության։ «Սերեսոսի Պատմության» հեղինակը պարսից թագավորին նվիրված իր գիրքը կոչել է մոտավորապես այնպես, ինչպես պարսից զրականության մեջ հայտնի թագավորական պատմություններն են (Խոդայինամե, Շահնամե)։

«Սերեսոսի Պատմությունն» ավարտվում է 661 թվականին տեղի ունեցած գեպքերի նկարագրությամբ (արաբական ամիրագետ Մավիասը՝ Մուավիեն նվաճում է Արաբիան, Պարսկաստանը, Եգիպտոսը), իսկ Մալխասյանցի նշած բյուզանդական հինգ կայսրերից Մորիկը գահ էր բարձրացել մի այնպիսի ժամանակ (582 թ.), երբ «Սերեսոսի Պատմության» հեղինակը

³⁹ ՍԵՊ, էջ 32։

Հավանաբար դեռ չէր ծնվել: Ուրեմն չէր կարող պատահել, որ այդ կայսրին հեղինակը համարեր իրեն ժամանակակից թագավոր: Ել շենք իսոսում այն մասին, որ «Սեբեոսի Պատմությունում» հանդես են գալիս ո՛չ միայն բյուզանդական կայսրեր: Պարսիկ սասանյան թագավորներից Պերոզը, օրինակ, որ ներկայացված է այստեղ, ապրել է «Սեբեոսի Պատմության» հորինման ժամանակակից շուրջ 200 տարի առաջ: Իհարկե, սա նույնպես չէր կարող Սեբեոսին ժամանակակից թագավոր համարվել:

Վերը տեսանք, որ Մալխասյանցը բյուզանդական կայսրերի մասին ասում է, որ Սեբեոսը նրանց դիմել է՝ իր Պատմության մեջ ժամանակադրությունը ցույց տալու համար. «Քանի որ, — գրում է նա, — Սեբեոսի ժամանակ դեռ սովորություն չէր դարձել փրկչական տարեթիվը գործածել ժամանակագրական հաշվների մեջ, հեղինակները սովոր էին անցքերի ժամանակը նշանակել տիրող թագավորների տարիներով: Ըստ այսմ Սեբեոս իսոստանում է Նկարագրել յուր ժամանակի աղետալի անցքերը, որոնք տեղի ունեցան հինգ թագավորների օրերով: Այս թագավորներն են... Մորիկ, Փոկաս, Հերակլ, Երակղակ և Կոստոս...»⁴⁰:

Մեզ արդեն ծանոթ այս խոսքերին հակառակ՝ «Սեբեոսի Պատմությունում» անցքերի ժամանակը նշանակված է ոչ թե բյուզանդական թագավորներով, այլ՝ գերազանցապես պարսիկ խոսքով. Ապրվեկ թագավորի տարիներով⁴¹: Սրա միջոցով է մատնանշված նույնիսկ այնպիսի մի դեպք, ինչպիսին է «Նինումն տաճարին Հոփիսիմեայ»: Այս վերնագրի տակ կարդում ենք. «Եւ եղեւ յամի ի՞լ—երրորդի թագաւորութեանն Ապրուէկ խոսրովու քակեաց կաթուղիկոսն Կոմիտաս զմատուու սրբոյն Հոփիսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած և մթին էր շինուածն»⁴²: Քրիստոնյա հեղինակը հայոց կրոնական մայրաքաղաքում կառուցված Հոփիսիմեի տաճարի շինությունը փոխանակ կապելու «իւաշափայար զերտությունից

⁴⁰ ԱՅՊ, էջ 159—160:

⁴¹ ՏԵ՛ս անդ, էջը 58, 65, 69, 72, 78, 79, 83, 89, 91, 116 և այլն:

⁴² Անդ, էջ 89:

ապաստած, բարեղաշաղա թաղավոր» Հերակլի անվան հետ, դեպքը նշում է «ապականիչ ու կործանիչ» «Աստուծոյ անիծեալ» սպարսիկ թագավորի տարիներով:

Այս նշանակում է, որ բյուզանդական կայսրերից նույնիսկ ամենանշանավորը՝ Հերակլը «Սեբեոսի Պատմություն»-ում շտանի այն գերը, ինչ նրան գերագում են: Հռիփսիմեի տաճարի շինությունը կատարվել է Հերակլի թագավորության տարիներին, եթե բյուզանդական կայսրերը, իրոք, հեղինակի կողմից ընտրված լինեին որպես ղեպքերի ժամանակը ցույց տվող միջոց՝ ապա Հռիփսիմեի շինությունը կնշվեր Հերակլի միջոցով: Մինչդեռ ամբողջ Պատմության ընթացքում Հերակլի անունը ոչ մի անգամ չի հիշատակվում ժամանակը՝ ցույց տալու համար:

Մնացած բյուզանդական կայսրերից այդ առումով նշվում է միայն Կոստանդնուպոլիսը, այն էլ այն պատճառով, որ նրա թագավորած ժամանակ այլևս պարսիկ թագավորներ չկային, որպեսզի հեղինակը, իր սովորության համաձայն, նրանց տարիներով պայմանագորեր անցքերի ժամանակը: Քանի դեռ գոյություն ունեին պարսիկ թագավորները (քանի դեռ սասանյան հարստությունը կար) «Սեբեոսի Պատմության» մեջ իրադարձությունների ժամանակը նշվում էր պարսիկ թագավորների ժամանակով, միայն՝ երբեմն նրանց հետ միացնելով՝ նաև այս կամ այն բյուզանդական կայսրին⁴³:

«Հինգ թագավորների» մասին մեր ասածները բավարար համարելով քննարկենք առաջին շորս գլուխներին նախորդող առաջարանի (խոստարանություն) մյուս տվյալները:

— / «...ԶնԱԽՆԻ ՔԱԶԱՑԻՆ ԶԵՐԱՆԱՐԿԵԼՈՎ ԴՐՈՇՄԵԼ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆՆ, ԶԻՄՆ ՅԻՇԱՏԱԿԵԼ ԶԱՌԱՄՊԵԼՄ, ԵՒ Ի ՆՈՅՆ ՇԱՐԱԳՐԵԼՈՎ ԱՍԱՑԻՑ ԶԱՌ Ի ՅԱՊԱՅՄՆ ԵՂԵԼՈՅ. ԵՒ ՅՈՒՑԻՑ ՀԱՄԱՌԱՒՏԻՒՔ ԶԱՐԴԵԱՑ ԺԱՄԱՆԱԿԱՑՄ ԶԱՂԵՏԻՑՄ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ...»:

Նշելով, որ առաջարանի «հեղինակը յուր գրելիք նյութը բաժանում է երեք շրջանի՝ 1. նախնի բաշերի վիպասանությունը («Героическое время»), 2. այդ շրջանին հաջորդող

⁴³ Հմմտ. ՍԵՊ, էջ 26, 72, 113, 119, 139, 141:

պատմական անցքերը (առ ի յապայսն եղեալք) և Յ. յուր աղետալի ժամանակի անցքերը...»⁴⁴, Մալխասյանցը գտնում է, որ առաջաբանը լիովին համապատասխանում է «Սեբեռոսի Պատմությանը», որովհետև այնտեղ նույնպես նյութը բաժանված է երեք շրջանի՝ նախնական ժամանակ (գլուխ Ա), նրան հաջորդող անցքեր (գլ. Բ—Է) և ժամանակակից դեպքեր (գլ. Ը—Ծ):

Այս կարծիքը իրականությանը չի համապատասխանում: «Սեբեռոսի Պատմությունը» երեք շրջանի չի բաժանված: Մալխասյանցը երեք շրջանի է բաժանել՝ Պատմությանը միացնելով նաև առաջին չորս գլուխները, որոնք, սակայն, «Սեբեռոսի Պատմության» հետ կազմ չունեն և բանասերների մեծ մասի կողմից ճանաչված են որպես ուրիշի գործ:

«...ԶԱՆՍՏՈՐԱԳՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿ... ԶԵՌՆԱՐԿԵԼՈՎ ԴՐՈՇՄԵԼ
ՎԻՊԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ»:

Խոստաբանության հեղինակը հայտնում է, որ ինքը նկարագրելու է ուրիշների կողմից չնկարագրված մի ժամանակ («զանստորագրեալ ժամանակ»): Եթե ընդունենք, որ «չնկարագրված ժամանակ» ասելով նկատի են առնված առաջին չորս գլուխները (Հայաստանի նախնական պատմությունը՝ Հայկի և Բելի, Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելները, Մամիկոնյանների զրուցը և այլն)⁴⁵ ապա պետք է մտածել, որ հեղինակն ասլրել է Մովսես Խորենացուց առաջ, որովհետև միայն այդ ժամանակի է, որ Հայաստանի նախնական պատմությունը դեռ որևէ հայկական սկզբնաղբյուրում չէր նկարագրված: Իսկ եթե հավատանք, որ «չգրված ժամանակ» արտահայտությամբ բնորոշվում է բուն «Սեբեռոսի Պատմության» բովանդակությունը՝ այս դեպքում էլ ստիպված ենք հեղինակին տեղափոխելու մինչև առնվազն VIII—IX դարերը, որովհետև «Սեբեռոսի Պատմությունն» ընդգրկում է հիմնականում VI—VII դարերի պատմությունը, որը «չգրված ժամանակ» կարող էր կոչվել միայն այն դեպքում, եթե արդեն գրված լիներ VI—VII դարերին հաջորդած ժամանակի պատմությունը, իսկ VI—VII դարերը մնացած լինեին չգրված: Միայն այս դեպքում,

⁴⁴ Անդ, էջ հետ.

այսինքն՝ միայն հետաղա դարերի պատմության գրված լինելու դեպքում հնարավոր կլիներ *VII—VII* դարերի պատմությունը բնութագրել որպես շգրված ժամանակի պատմություն:

Արդ, քանի որ «Սեբեոսի Պատմության» հեղինակի *VII* դարում ապրած լինելը ենթակա չէ ոչ մի կասկածի՝ ապա ևրեմն պետք է ընդունել, որ շգրված ժամանակի պատմությունը զրել խոստացած հեղինակը Մովսես Խորենացուց առաջ՝ *V* դարում ապրած մի հեղինակ է:

«Ես եղեի ՈՉ Ի ԿԱՄԱՅԱԿԱՆ ՓԻԾՈՅԻՑ ՎԱՐԺ ԽՈՒԶԱԿԻ... ԴՐՈՇՄԵԼ ՎԻԹԱՍԱՆՈՒԹԻՒՆՆՍ... ԱՆԴ ՀԱՅԵԼՈՎ Ի ՄԱՏԵԱՆՆ ՄԱՐԱԲԱՅ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ՍՆՈՒԻՐՆԱՑԻՈՑ... ԶՈՐ ԻՄ ԳՏԵԱԼ Ի ՄԻՃԱԳԵՍՍ Ի ՆՈՐԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑԻ ԿԱՄԵՑԱՅ ԶԵՋ ԶՐՈՒՅԱԿԱՐԳԵԼ»:

Առաջաբանի հեղինակի սույն խոսքերից իմանում ենք, որ մասնագետ հետազոտողի (վարժ խուզակի) քմահաճ ցանկությունը, ստեղծագործելու հաճույքը չէ, որ իրեն մղել է գրի վերցնելու: Պատմությունը գրելու շարժառիթը եղել է Մարաբա փիլիսոփա Մծուրնացու մատյանը:

Մարաբա Մծուրնացին ներկա գտնվելով Սանատրուկ արքայի պալատի պեղումներին՝ հանդիպել է հայ առաջին թագավորների տարիներն ընդգրկող մի արձանագրության («զոր եգիտ զրոշմեալ ի վերայ արձանի ի Մծուրն քաղաքի»): Այս արձանագրությունը նա ընդօրինակել է իր մատյանի մեջ և նրա հիման վրա գրել է Հայոց առաջին թագավորաց պատմությունը: Այնուհետև, Մծուրն քաղաքի ավերման կամ այլ անհայտ պատճաններով, Մծուրնացու աշակերտաները (գուցե՞նակ Մծուրնացին) տեղափոխվում են Միջագետք՝ իրենց հետ ունենալով ուսուցչի մատյանը: Ահա, այս աշակերտաների միջոցով խոստաբանության հեղինակը գանում է մատյանը և նրա մեջ ընդօրինակված արձանագրությունը, որի հիման վրա շարադրում է իր երկրությունը:

Այս ամբողջ պատմությունից երեսում է, որ խոստաբանության հեղինակն ապրել է *V* դարում: Միայն այդ դարում էր հնարավոր հանդիպել Մարաբա Մծուրնացու աշակերտներին: Հետազա դարերում այլևս Մծուրն քաղաքի բնակիչներ չկա-

յին։ Այս քաղաքն ավերվել էր IV դարի երկրորդ կեսին⁴⁵ և նրա բնակիչները կարող էին ապրած լինել առառավելն մինչև Ն դարի երկրորդ կեսը։

* * *

Մեր քննարկած առաջաբանից բացի «Սեբեոսի Պատմություն» ունի նաև մեկ ուրիշ առաջաբան։ Այսպիսով միևնույն զրգում հանդիպում ենք երկու առաջաբանի։ Եթե ուրիշ փաստեր շիներին՝ նյութերի այս տարօրինակ հերթականությունն էլ բավական էր, որպեսզի ցուց տար, որ գործ ունենք ոչ թե մեկ, այլ երկու աարբեր բնագրերի հետ։

Փաստն առավել հատկանշական է դառնում մանավանդ, երբ ուշադրություն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ նոր խոստաբանությունը զետեղված է անմիջապես բուն «Սեբեոսի Պատմության» առջևում (ՍեՊ, էջ 23—24), որից երես վում է, որ այս մասով սկսվում է նոր բնագիր։

«Սեբեոսի Պատմության» բոլոր հրատարակիչներն ու թարգմանիչները նոր խոստաբանությունը համարել են մի նոր՝ հին խոստաբանության հեղինակի հետ շառնշվող երկի սկիզբ և հրատարակել են որպես այդ երկի առաջաբան։ Միայն Մայիսայանցն է, որ երկու առաջաբանն էլ վերագրել է միևնույն հեղինակին և այդպես էլ հրատարակել։

«Սեբեոսի Պատմություն»-ը որպես մեկ հեղինակի աշխատություն դիտելիս հանդիպում ենք այսպիսի հակասությունների։

Առաջին առաջաբանի հեղինակը հայտնում է, որ ինքը գրելու և Հայաստանի հին (առաջին) թագավորների և հաջորդ տարիների պատմությունը, բերելու է մի քանի հայկական առասպելներ և համառոտ կերպով նկարագրելու է իր ժամանակի դեպքերը, իսկ երկրորդ առաջաբանի հեղինակը հայտնում է, որ նկարագրելու է ուր հույն և պարսիկ թագավորների

⁴⁵ Манандян Я. А., Начальная история Армении Мар Абаса (к вопросу об источниках Себеоса, Моисея Хоренского, Прокопия Кесарийского:—«Палестинский сборник», вып. 2 (64—65), 1956, стр. 75.

օրոք կատարված դեպքերը, ինչպես նաև արարական արշավանքները, մեկ առ մեկ թվում է թագավորներին՝ Պերող, Խոսրով Անուշրվան, Որմիզդ (Դ), Խոսրով Փարվել, Մորիկ, Փոկաս, Հերակլ, Կավատ: Այսպիսով, առաջին առաջաբանի հեղինակը նկատի ունի նին նայ թագավորաց, երկրորդը՝ իր ձամանակակից օտար թագավորների:

Ուշադրության արժանի է երկրորդ առաջաբանի հեղինակի այն ծանոթագրությունը, որով նա հայտնում է, որ Վարդանանց պատերազմի մասին ինքը չի գրելու, որովհետև «այն ամենայն ի ձեռն այլոց գրեցաւ, որպէս ցուցանէ նոյն իսկ պատմութիւնն», իսկ նրա հաջորդ դեպքերը՝ սկսած Պերողի ժամանակից (459—484) «զայս ամենայն կամեցայ ի ձեռն դրոյս այսորիկ կարճառաւոտ ձեզ վիպասանել»:

Հեղինակին հայտնի ամենավերջին գրավոր դեպքը եղել է Վարդանանց պատերազմը, ուստի նա իր աշխատությունն սկսել է այդ պատերազմին անմիջապես հաջորդած՝ Վահան Մամիկոնյանի ապստամբության նկարագրությամբ⁴⁶:

Եթե առաջին չորս գլուխներն ել պատկանեին «Սեբեռոսի Պատմության» հեղինակին՝ այդ դեպքում բոլորովին անհմասս կլիներ հեղինակի բացատրականն այն մասին, որ ինքը Վարդանանց պատերազմը չի նկարագրելու: Սա միակ դեպքը չէ «Սեբեռոսի Պատմությունում», որ չի նկարագրված: Նախքան Վարդանանց պատերազմը կան դարաշրջան կազմող իրադարձություններ (քրիստոնեության տարածումը Հայաստանում, հայ գրերի ստեղծումը), որոնց մասին «Սեբեռոսի Պատմությունում» ակնարկ անգամ չկա: Այդ բոլորը պետք է նկարագրված լիներ առաջին գլուխներում և եթե հեղինակը կարիք չի զգացել հաշիվ տալու, թե ինչ դեպքեր չի նկարագրել՝ կնշանակի նա նույն հեղինակը չէ: «Սեբեռոսի Պատմության» հեղինակը նպատակ ունենալով շարունակաբար նկարագրել Վահան Մամիկոնյանի ապստամբությունից սկսվող իրադարձությունները՝ Վարդանանց պատերազմը հիշատակել է որպես

⁴⁶ «Սեբեռոսի Պատմության» հեղինակին հայտնի չի եղել Ղաղար Փարպեցու Պատմությունը, որտեղ արդեն նկարագրված էր Վահան Մամիկոնյանի ապստամբությունը:

սահմանային կետ իր և նախորդ պատմիչների նկարագրած ժամանակների միջև:

Վահան Մամիկոնյանի ապստամբության կապակցությամբ Հեղինակը պատմում է. երբ պարսից Պերող արքան որոշեց վահան Մամիկոնյանի դեմ պատերազմելու համար զորք հավաքել՝ այդ ժամանակի Պարսկաստանի վրա հարձակվեցին թշնամիները: Պերողը վճռեց. «Երթայց նախ առաջին զնա (թշնամուն—Գ. Ա.) վանեցից, և ապա պարապաւ դարձեալ զնացից ի Հայս, և մի խնայեսցէ սուր իմ ի նոսա, յարս և ի կանայս»: Պերողի մատղրությունը մնաց անկատար, որովհետեւ նա սպանվեց պատերազմում: «Եւ ապա յայնժամ թագաւորեաց Կաւաս որդի նորա ի վերայ աշխարհին Պարսից»⁴⁷:

Այսպիսով, ըստ «Սեբեոսի Պատմության» Հեղինակի՝ Պերողին հաջորդել է նրա որդի Կավատր:

Այլ բան ենք գտնում առաջին գլուխներում. «Եւ ի ԽԶ-Երորդին Պերողի թագաւորէ Զենոն ի վերայ Յունաց՝ ամս Ժէ: Պերող ԽԶ: Զենոն՝ զառաջինն:

Յամի շորրորդի Զենոնի թագաւորէ Պարսից Զամասպ՝ ^թ⁴⁸, Զենոն ի վերայ Յունաց՝ զշորրորդն: Զամասպ՝ զառաջինն:

Եւ ի վերայ Ե-Երորդի ամի Զենոնի կայսեր թագաւորէ Պարսից Կաւատ՝ ամս ԽԱ: Զենոն՝ Ձ.—Կաւատ՝ զառաջինն»⁴⁹:

Տեսնում ենք, որ առաջին գլուխների Հեղինակը Պերողին հաջորդ է նշում ոչ թե նրա որդի Կավատին, ինչպես արել է «Սեբեոսի Պատմության» Հեղինակը, այլ՝ Զամասպին⁵⁰:

⁴⁷ ՍԵՊ, էջ 26:

⁴⁸ Բնագրում՝ «Զամասպ՝ Ը» ուղղեցինք՝ «Զամասպ՝ Բ»: Ավելի մանրամասն՝ «Բնագրի վերականգնում» Ժէ:

⁴⁹ ՍԵՊ, էջ 21:

⁵⁰ «Սեբեոսի Պատմության» և առաջին գլուխների միջև ժամանակագրական անհամաձայնություններ նշել են նաև Հ. Հյուբշմանը (Zur Geschichte Armeniens, Leipzig, 1875, S. 6), Ն. Աղոնցը (Հայ. История Армении у Себеоса, стр. 92) և ուրիշներ: Հյուբշմանի նշածը, սակայն, կապված է մեծ ժամամատ տարեթվերի հետ և կարող է համարվել գրական աղճատում: Խակ Աղոնցը, համոզված լինելով առաջին չորս գլուխների և «Սեբեոսի Պատմության» Հեղինակի նույնության մեջ, աշխատել է զանազան պատճառաբանություններով բացատրել անհամաձայնությունները:

Սա այլես առարկության շենթարկվող մի փաստ է, որը վճռականորեն բացահայտում է երկու տարրեր հեղինակների դոյցությունը Սեբեոսին վերագրվող Պատմությունում:

Կավատի և Զամասպի օրինակը միաժամանակ ցույց է տալիս, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակը VII դարում ծանոթ չի եղել այն սկզբնաղբյուրին, որն այժմ վերագրում են իրեն և որտեղ Պերողի հաջորդ է նշված Զամասպը:

Այսպիսով, եթե ամփոփենք առաջին շորս գլուխների և բուն «Սեբեոսի Պատմության» առաջարանների համեմատական ուսումնասիրության արդյունքները՝ կստացվի հետևյալը.

1. Առաջին առաջարանի համաձայն, Պատմությունը պետք է իրենից ներկայացներ հինգ թագավորների իշխած տարիներին կատարված իրադարձությունների մի պատմություն: Իրականում, սակայն, այսուեղ նկարագրված են առարրեր ժամանակների բագմաթիվ թագավորների օրոք տեղի ունեցած դեպքեր, որից երեսում է, որ առաջին առաջարանը «Սեբեոսի Պատմությանը» չի պատկանում:

2. Պարզվում է, որ առաջին առաջարանի նինգ բառը գրրական սխալ է: Նրա փոխարեն եղել է նին, որով հեղինակը հայտնում է, որ ինքը նկարագրելու է հայ հին (առաջին) թագավորների ժամանակաշրջանը:

3. Առաջին առաջարանի տվյալներն իրենց ամբողջության մեջ վերցրած ցույց են տալիս, որ առաջարանը պատկանել է V դարում գրված մի սկզբնաղբյուրի, որն ընդունակ է եղել հայոց պատմության հին, գեռ ոչ ոքի կողմից շնկարագրված շրջանը, ինչպես նաև հեղինակին ժամանակակից աղետների պատմությունը:

4. «Սեբեոսի Պատմության» հինգերորդ գլուխն սկսվում է մի նոր առաջարանով, որտեղ որոշակի հայտնված է առաջիկա գրվածքի բովանդակությունը և որտեղ ոչ մի ակնարկ չկա նախորդ շորս գլուխների մասին: Այս առաջարանը «Սեբեոսի Պատմության» իրական առաջարանն է և հենց նրանով էլ սկսվում է Պատմությունը:

Այս բոլոր ավյալները միասին ցույց են տալիս, որ առաջին շորս գլուխները և նրանց կազմում զանվոր առաջարանը

շեն համապատասխանում «Սեբեռոսի Պատմությանը» և պատահաբար են միացել նրան:

Բ

Միկնույն իրողությունը հավաստում են առաջաբաններից անկախ նաև այլ փաստեր:

Դրանցից մեկն է Ստեփանոս Տարոնացու անվան հիշատակությունը երրորդ գիրի խորագրում:

«Արդ թէ ՊԻՏՈՅ է ՔԵԶ, Ո՞Վ ԸՆԹԵՐՑԱՍԼԻՐ, ԵՐԿՐՈՐԴԵՑԻՑ Ի ՊԱՏՄԱԳՐԱՑ ՄՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՑ ԵՒ ՍԵՓԱՆՈՍԻ ՏԱՐՈՆԵՑԻՈՅ՝ ՀԱՒԱՏԾԻ ԵՒ ՃԵՄԱՐԻՏ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ»:

Այստեղ հիշատակված է X դարի պատմիլ Ստեփանոս Տարոնացին (Ասողիկը): Միայն այս փաստը բավական է ցուցյալու համար, որ երրորդ գլուխը, որ գտնվում է առաջին չորս զլատիների կազմում, թյուրիմացաբար է միացել VII դարում զրված «Սեբեռոսի Պատմությանը»:

Առաջին զլատիները «Սեբեռոսի Պատմության» հեղինակի դորձ համարած գիտնականները, սակայն, այս Տարոնացուն անշատել են Ասողիկից և համարել են Սեբեռոսից առաջ ապրած մի հեղինակ⁵¹:

Հարցը հատուկ ուսումնասիրության է ենթարկել ակադե-

⁵¹ Հմտություն. Թ. Միհրաղայան, Պատմութիւն Սեբեռոսի եպիսկոպոսի ի Հեղինակին, Կ. Պոլիս, 1851, էջ 28: Գ. Զարբիանալյան, Պատմութիւն հին զպրութեան, Վենետիկ, 1897, էջ 294: Ն. Բիգանեղացի, Իմ կարծիք զկրկին հայ թարգմանութեանց եկեղեցական պատմութեան Սոկրատայ Սբոլաստիկոսի եւ զնոցին թարգմանաց: «Հ. Ամս., 1893, էջ 276: Ա. Տեր-Միհելյան, Սամուլիի քահանայի Անեցույ հաւաքմունք ի դրոց պատմագրաց..., Վաղարշապատ, 1893, էջ 253—254: Պ. Ալիշան, Հայապատում մասն Ա., Վենետիկ, 1901, էջ 65: Ա. Մատիկյան, Անանունը կամ կեղծ Սեբեռոս, Վիեննա, 1913, էջ 29: Թ. Սարգսյան, Սիմէռն Ապարանցին և կեղծ Սեբեռոսի առեղծվածը: «Բազմավէպ», Վենետիկ, 1915, էջ 39: Ստ. Մալխասյանց՝ Սեբեռոսի եպիսկոպոսի պատմութիւն, Երևան, 1939, էջ հիմ—հիջ: Մ. Արեղյան, Հայ հին գրականության պատմություն, Հատ. 1, Երևան, 1944, էջ 338: Հ. Անաղյան, Հայոց անձնանունների բառարան, Հատ. Դ, Երևան, 1948, էջ 602: Գարեգին Ա. կրդ., Ֆիշատակարանք ձեռագրաց, Հատ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 1—2 և այլն:

միկոս Ստ. Մալխասյանցը: 'Նա 1899 թ. առանձին գրքով՝ հրատարակեց Մովսես Խորենացու և Սեբեոսի Հարաբերություններին վերաբերող մի ուսումնասիրություն⁵², որի համարյակեսը փաստորեն նվիրված է կարծեցյալ Ստեփանոս Տարոնացուն: Այնուհետև 1939 թ. նա կրկին անդրադարձավ Հարցին և երկու նոր կովան բերելով վճռականորեն հայտնեց, որ «այդ անունով մի անձ, ժամանակագրության հեղինակ, գոյություն է ունեցել»⁵³:

Քննենք կարծեցյալ պատմիչի օգտին վկայակոչված փաստերը:

Դրանցից առաջինը 1868 թ. «Արարատ» ամսագրում տրամադրելով էջանոց մի ցանկ է (առաքելական հաջորդականության ցանկը)⁵⁴, որը իբր ժաղկաքաղ է արված Ստեփանոս Տարոնացի անունով մի պատմիչից, «որ էր աշակերտ սրբոյն Մեսրովպայ»:

Ընդգծված ժանոթագրությունն ակնհայտ շփոթի արդյունք է: Հայ մատենագրությանը Մեսրոպ Մաշտոցին ժամանակակիցից որևէ Ստեփանոս Տարոնացի հայտնի չէ: Այստեղ խոսքը վերաբերում է X դարի նշանավոր պատմիչ Ստեփանոս Տարոնացուն, որին ցանկն ընդօրինակող զրիշը սխալմամբ անվանել է Մեսրոպ Մաշտոցի աշակերտ:

Այս նույն թյուրիմացությունը գտնում ենք նաև «Յայսմաւուրքում»⁵⁵, որտեղ Մեսրոպ Մաշտոցի աշակերտաների շարքում նշվում է Ստեփանոս Ասողիկ անունով մեկը: Գիտենք, որ Ասողիկը X դարի պատմիչ Ստեփանոս Տարոնացու մականունն է⁵⁶:

⁵² Ստ. Մալխասյանց, Աեբեոսի Պատմությունը և Մ. Խորենացի, Թիֆլիս, 1899:

⁵³ ՍԵՊ, էջ ԽԲ—ԽԳ:

⁵⁴ Անընդհատ շարունակութիւն առաքելական յաջորդութեան ուղղափառ և. եկեղեցւոյ Հայոց.—«Արարատ», Վաղարշապատ, 1868, էջ 104—105:

⁵⁵ Հմմտ. Հ. Վ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց..., Վիեննա, էջ 60, 94, նաև՝ 344 (Հաւաքումն քերականութեանց, ձեռ. № 84, 1613 թ.):

⁵⁶ Առաջին զեպքը չէ, երբ գրիչները Մեսրոպ Մաշտոցի աշակերտ են համարում նրանից դարեր հետո ապրած մարդկանց: Նոյն թյուրիմացությանն են հնաբարկվել նաև Ծ դարի փիլիսոփա Ստեփանոս Այսոնեցին, որը

Անվանի ձեռագրագետներ Գ. Տեր-Մկրտչյանը (Հայկականք, էջ 74), Ն. Աղոնցը (Начальная история Армении у Себеоса, էջ 68), Գ. Կթղ. Հովսեփյանը (Յիշատակարանք, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 1—2) «Արարատում» ապված ցանկը (որը պարունակած ձեռագիրը մինչև օրս էլ մնում է անհայտ) համարում են անվագերական մի գործ: Եվ հիրավի, այն չի կարող ծառայել որպես լուրջ կովան՝ կարծեցյալ պատմիչի գոյությունը հաստատելու համար: Եթե նույնիսկ հավատանք ցանկի վավերականությանը՝ պետք է ենթադրել, որ նրա համար հիմք ծառայած աղբյուրը գտնվելիս է եղել Ասողիկի «Տիեզերական պատմության» սկզբնական բնագրում (որը մեղ հասել է պակասներով) կամ ել՝ շարադրված է եղել առանձին:

Կարծեցյալ պատմիչի օգտին վկայակոչված երկրորդ կըռվանը XVIII դարի մատենագիր Ստեփանոս Ռոշքայի բառարանն է:

Մալխասյանցը, հենվելով Ալիշանի մի ցուցմունքի վրա⁵⁷, գտնում է, որ Ռոշքայի բառարանում հիշատակվում է VII դարից առաջ ապրած մի Ստեփանոս Տարոնացի: Սա թյուրիմացության արդյունք է: Նշված բառարանում Ստեփանոս Տարոնացի անունով պատմիչ չկամ⁵⁸:

Երրորդ փաստը դարձյալ Ալիշանի միջոցով եկող մի տեղեկություն է: Ալիշանը «Հայապատումում» (մասն Ա, էջ 65) դրում է, թե «պատմշաց շարադրասող՝ մեկն երկու Ստեփանոս հիշէ, դատ անձինք համարելով զԱսողիկն և զՃարոնացին»:

համարվել է նաև Մովսես Խորենացու աշակերտը (Հմմտ. Պազար Զահկեցի. Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, էջ 624—625. նաև՝ Շարակենց, երաժշտական երգեցմունք հոգևորականք... վրդապետաց Հայոց թարգմանչաց, Կ. Պոլիս, 1815, էջ 2—3), Թոնդրակեցիների ժամանակակից Խաչիկ վարդապետը (Հմմտ. Միաբան, Հայկականք, էջմիածին, 1899, էջ 74), X դարի պատմիչ Թովմա Արծրունին (Հմմտ. անդ) և ուրիշներ:

⁵⁷ Պ. Ալիշան, Հայապատում, Հատ. Ա., էջ 65.

⁵⁸ Հմմտ. Հ. Պ. (Ալիշան), Տեսութիւն ի գանձ լեզուին Հայոց կամ ի Ստեփանոսեան բառարան, Հառ ընթերցեալ ի Հայկական ճհմարանիս, «Բաղմագէպ», Վենետիկ, 1852, էջ 91: Այսուհեղ կա Ստեփանոս (ոչ Տարոնացի) անունով մի պատմիչ, որի ինքնությունը և ժամանակը հայտնի չէ:

Սա նույնպես թյուրիմացության հետևանք է։ Ալիշանին հայանի «պատմշաց շարադասողի» ցանկը նույն «Հայապատումում» (մասն Ա, էջ 13—14) տպված «Յանկ պատմագրաց հայոցն» է։ Այստեղ, հիրավի, նշված են երկու Ստեփանոսներ, երկուսն էլ կողք-կողքի Բայց պետք է նկատել, որ երկուսն էլ հիշատակված են որպես Խ—XI դդ. պատմիչներ, հետեւալ հերթականությամբ։ «Թումա վարդապետ տանն Արծրունեաց, Շապուհ Բագրատունի, Տէր Յովհաննէս Գառնեցի, Մովսէս Կաղանկատվացի, Ստեփաննոս անուանեալ Ասողիկ վարդապետ, Ստեփաննոս Տարօնեցի, ի խնդրոյ տեսառն Սարգսի կաթողիկոսի, Արիստակես Լասդիվարդեցի» և այլն։ Միաժամանակ տեսնում ենք, որ ցուցակում Ասողիկից զատ նշված Ստեփաննոս Տարօնացին իր Պատմությունը գրել է «ի խնդրոյ տեսառն Սարգսի կաթողիկոսի»։ Այս կաթողիկոսն ապրել է Խ դարում և այն անձնավորությունն է, որի պատվերով հենց գրել է Ասողիկն իր «Տիեզերական պատմությունը»։ Ուրեմն Ստ. Տարոնացին և Ստ. Ասողիկը միենալուն անձնավորություններն են, որոնք գրչի շփոթի հետևանքով դարձել են տարրեր մարդիկ։

Այսպիսով, կարծեցյալ պատմիչի օգտին բերված միակ քննելի փաստը մնում է վերոհիշյալ երրորդ գլխի հետևյալ խորագիրը։ «Արդ թէ պիտոյ է քեզ, ով ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացւոյ⁵⁹ և Ստեփանոսի Տարաւանցոյ՝ հաւաստի և ճշմարիտ մատենագրաց»⁶⁰։

Այս խոսքերից անմիջապես հետո բերվում է մի քաղվածք, որը բառացիորեն արտագրված է Ստեփաննոս Տարօնացի Ասողիկից։ Սրանից ենելով՝ բանասերները բնականաբար եղրակացրել են, որ քաղվածքը թյուրիմացաբար է հայտնված VII դարի սկզբնաղբյուրում, և խորագրում հիշատակված Ստեփա-

⁵⁹ Քաղվածքն անմիջապես Խորենացւոց չէ վերցված, բայց հեղինակը նշել է նաև նրա անոնը՝ նկատի ունենալով, որ Ստեփաննոս Տարօնացւոց բերված հատվածն ամբողջությամբ ծագում է Խորենացւոց։ Հմատ. Ածոն Ա. Նաշ. история Армении, էջ 69։

⁶⁰ ՍԵՓ, էջ 11։

նոս *Տարոնացին* նույն ինքը *X* դ. պատմիչ Ստեփանոս *Տարոնացին* է (*Ասողիկը*)⁶¹:

Գիտնականների մի այլ խումբ, սակայն, վստահելով «Աւրեռոսի Պատմության» բնագրին, ինչպիս տեսանք, ենթադրել է, թե խորագրում հիշված պատմիչը Ասողիկը չէ, այլ՝ մեկ ուրիշը, որից իրը օգտվել է Սեբեռոսը:

Ճշմարտությունը պարզելու նպատակով բերենք երրորդ դիսի քաղվածքը, որն Ասողիկի «Տիեզերական պատմության» բնագրի համեմատությամբ ունի հետևյալ տեսքը.

Ստեփանոս Տարոնացի

(Սեբեռոսի հպա. Պատմութիւն,
Երևան, 1939, էջ 11—12)
...Արդ՝ այսպէս զատուցեալ ե-
րևէին երկու ցեղքն թագաւորու-
թեանց Պարսից և Հայոց:

Արշակ քաջ նախնեաց երկուց
ցեղից՝ թագաւորեցելոյ Պահաւա-
կանին և Արշակունոյն, ամենայի
քաջութեամբ թագաւորեաց ամս
Ծէ: Յետ որոյ որդիքն զատուցեալք
թագաւորք Պարսից. Արշակ Մեծ՝
ամս Ծթ: Արշական՝ ամս լ: Ար-
շանակ՝ ամս լթ: Արշէս՝ ամս ի:
Արշաւիր՝ ամս հջ: Արտաշէս՝ ամս
լԱ: Դարեհն՝ ամս լ: Արշակ՝ ամս
ժթ: Արտաշէս՝ ամս ի: Պերող՝
ամս լԳ: Վաղարշակ՝ ամս Շ: Ար-
տաւան՝ ամս լԶ:

Ստեփանոս Տարոնացի

(Տիեզերական Պատմութիւն, Ս. Պ.
բուրգ, 1885, էջ 31—32)
...Արդ՝ այսպէս զատուցեալ ե-
րևէին երկու ցեղքն թագաւորու-
թեանց Պարսիցն և Հայոցն:

Արշակ քաջ նախնեաց երկուց
ցեղից՝ թագաւորեցելոյ Պահաւա-
կանին և Արշակունոյն ամենայի
քաջութեամբ թագաւորեաց ամս
Ծէ: Յետ որոյ որդիքն զատուցեալք
թագաւորք Պարսից. Արշակ Մեծ՝
ամս Ծթ: Արշական՝ լ, Արշանակ՝
ամս լթ: Արտաշէս՝ ամս ի: Արշա-
ւիր՝ ամս հջ: Արտաշէս՝ ամս լԱ:
Դարեհն՝ ամս լ: Արշակ՝ ամս ժթ:
Արտաշէս՝ ամս ի: Պերող՝ ամս լԳ:
Վաղարշակ՝ ամս Շ: Արտաւան՝
ամս լԶ:

⁶¹ Հմմտ. Մեսրոպ Երեց, Պատմութիւն Ներսեսի, տպվ. «Սովետք Հայկա-
կանք», Հ. Զ, Վենետիկ, 1853, էջ 145: Փ. Պատկանյան, История импера-
тора Иракла, стр. VII—IX.

Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 66, 68: Հ. Հյուրշման. Zur Geschichte der
Menschen und der ersten Kriege der Araber, Leipzig, 1875, S. 5,
Խալատինց Ռ., Армянский эпос в Истории М. Хоренского, Москва,
1896, էջ 58: Ստ. Մալխասյանց՝ Ստ. Տարոնեցւոյ Ասողիկան Պատմութիւն
սիեզերական, ՍՊբ, 1885, էջ 321, ծան. 2 և այլն:

Զսա սպանեալ Ստահրացւոյն Արտաշրի որդւոյ Սասանայ՝ երարձ բատէրութիւն Պահլաւաց, յերկրորդ ամին Փիլիպպեայ թագաւորին Հռոմայ: Աստանօր դադարէ թագաւորութիւնն Պարթեաց յազգէն Պահլաւաց⁶², սկսեալ յերեսուն ամի թագաւորութեանն Փիլեղելփոս Պտղոմէոսի, կալեաց նոցա ընդ ամենայն ամս՝ նծէ:

Յետ որոյ նուաճեալ Ստահրացւոյն Արտաշրի որդւոյ Սասանայ զամենայն Արիս և զԱնարիս, և դրազումս ի նոյն ազգէ, թագաւորութեան Պարթեաց և Պահլաւաց՝ թագաւորէ ինքն և յետ նորա պայացատք նորին զնոյն ձեւ աւրինաւ (Կի):

Տեսնում ենք, որ արտագրության փաստն այնքան ակընհայտ է, որ եթե նույնիսկ գոյություն ունեցած լինի Ասողիկից բացի մեկ ուրիշ Ստեփանոս Տարոնացի՝ դարձյալ նա չի կարող կապ ունենալ երրորդ գլխի հետ, որովհետև այստեղ արտագրությունը կատարված է անառարկելիորեն Ասողիկից:

Այս փաստի բացատրությունը որոնելիս հմանք (Գր. Խալաթյանց, Ն. Աղոնց, Ն. Ակինյան) կարծիք են հայտնել, թե հատվածը հետագա գրիշների կողմից «Սեբեռոսի Պատմության» մեջ զիտակցաբար ներմուծված մի մաս է, քաղված Ասողիկից: Մյուսները (Մալխասյանց և այլք) հատվածների նմանությունը բացատրել են՝ ենթադրելով, թե Ասողիկին է արտագրել Սեբեռոսից:

Երականությանը չեն համապատասխանում ո՛չ առաջին, ո՛չ եւ երկրորդ տեսակետները: Առաջինի հեղինակները շեն նկատել, որ երրորդ գլխում Ասողիկից ընդողինակված հատվածը չի կարող ներմուծում համարվել, որովհետև սերտ կապի մեջ է նախորդ և հաջորդ գլուխների (իմա՞ Ա—Դ գլուխների) հետ և նրանց հետ միասին պետք է դիտվի կամ որպես Սեբեռոսի:

Զսա սպանեալ Ստահրացւոյն Արտաշրի որդւոյ Սասանայ՝ երարձ զաէրութիւնն Պահլաւաց, յերկրորդ ամին Փիլիպպեայ թագաւորութիւն Հռոմայ: Աստանօր դադարէ թագաւորութիւնն Պարթեաց յազգէն Պահլաւաց՝ սկսեալ յլ (=յերեսուն) ամի թագաւորութեանն Փիլիդելփոս Պտղոմէոսի, կալեալ սոցա ընդ ամենայն ամս՝ նծէ:

Յետ որոյ նուաճեալ Ստահրացւոյն Արտաշրի, որդւոյն Սասանայ զամենայն Արիս և զԱնարիս, և դրազումս ի նոյն ազգէ, թագաւորութեանն Պարթեաց և Պահլաւաց՝ թագաւորէ ինքն և յետ նորա պայացատք նորին զնոյն ձեւ օրինակի:

⁶² Բնդգծված տողերի մասին՝ ստորև:

ստեղծագործություն, կամ էլ՝ Ասողիկից հետո ապրած հեղինակի դորձ: Տարօրինակ է մտածել, թե ինչ-որ մի գրիչ, որին հանձնարարված էր արտագրել «Սեբեսի Պատմությունը», հանկարծ կընդհատեր դասական հեղինակի դործը և մի գլուխ էլ ինքը կալելացներ այնտեղ՝ այդ մասին բացարձակ հայտարարելով՝ «Արդ թէ պիտոյ է քեզ, ով ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացւոյ և Ստեփանոսի Տարաւացւոյ»:

«Սեբեսի Պատմությանը» կից գլուխներում հեղինակը սովորություն ունի դիմելու իր պատվիրատուին (կամ՝ ընթերցողին), որով և ցույց է տալիս իր ներկայությունը ոչ միայն Ստեփանոս Տարոնացուց քաղված գլխում, այլև մյուս գլուխներում: Այսպես, օրինակ, երկրորդ գլխում նա ասում է. «զսոյն ճառէ ժամանակագիրն այդպէս՝ որպէս առաջիդ կայ» (ՍԵՊ, էջ 7), երրորդ գլխում միևնույն անձնավորությանը դիմելով գրում է. «արդ թէ պիտոյ է քեզ, ով ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացւոյ և Ստեփանոսի Տարաւանեցւոյ» (ՍԵՊ, էջ 11), չորրորդ գլուխն սկսում է այսպես. «Եւ արդ... նշանակեցից զթագաւորութեան ժամանակն» (ՍԵՊ, էջ 20):

Պնդելով, որ երրորդ գլխում Ստեփանոս Տարոնացու անվան տակ զետեղված հատվածը Սեբեսն ինքն է շարագրել՝ Մալխասյանցը բնականաբար պետք է փորձեր դտնել կարծեցյալ Տարոնացուց վերցված հատվածն այդ գլխում: Նա այդպիսի հատված է համարել հայ, պարսիկ և բյուզանդացի թաղավորների եռանուն ցանկը⁶³:

⁶³ Այս ցանկը համեմատելով 1868 թ. «Արարատում» տպված առաքելական հաջորդության ցանկի հետ՝ Մալխասյանցը ընդհանրություն է տեսնում նրանց մեջ: «Երկուսն էլ ժամանակագրական ցանկեր են,—գրում է նա, —երկուսն էլ պատմական նյութով աղքատ, երկուսն էլ թե հաշորդությունների և թե տարիների թվերի ճշտության կողմից կասկածելի» (ՍԵՐԻԱՆ պատմությունը և Մ. Խորենացի, էջ 57): Դժվար չէ նկատել, որ այս ընդհանրությունները հատուկ են ժամանակագրական բնույթի յուրաքանչյուր երկի: նրանք բալորն էլ պատմական նյութով աղքատ են և թվերի ճշտության կողմից միշտ էլ ստուգելի:

Մալխասյանցն ինքը «Արարատում» տպված ցանկում նշում է հին դա-

Սրանով՝ անտեսվել է Ն. Աղոնցի և ուրիշների («Սովերք Հայկականք» Հ. Զ, Վենետիկ, 1853, էջ 145) կողմից արդեն վաղուց նկատված այն փաստը, որ երրորդ գլխի բնագիրը խախտված է, և Ստեփանոս Տարոնացու անունը կրող վերնագիրը վերաբերում է միայն Ստեփանոս Տարոնացի Ասողիկից քաղված Հատվածին:

Հանրահայտ իրողություն է, որ Սեբեոսին վերագրվող Պատմությունը մեզ հասել է աղճատված վիճակում: Բանասերները, և ամենից առաջ Մալխասյանցը, ձեռագրում նկատելով նյութերի ետևառաջություն՝ բնագիրը հրատարակել են կարգավորելուց հետո: Այնուհանդերձ գեռ մնում են չկարգավորված տեղեր, որոնցից մեկն է, ահա, երրորդ գլուխը: Թերթի կորսույան պատճառով⁶⁴ այստեղ իրար են խառնված երկու տարրեր սկզբնաղբյուրներից քաղված նյութեր՝ Ասողիկի հատվածը և եռանուն կանոնը⁶⁵: Մեր կարծիքով, այս կորած թերթի վրա զրված է եղել երրորդ գլխի վերջը և եռանուն կանոնի սկիզբն իր վերնագրով հանդերձ⁶⁶:

Որ այս երկու բնագրերը (Ասողիկից քաղված Պարթեաց

թերթի համար անսովոր քերականական ձեեր. «Աշքի է ընկնառմ սուրա ձեի դորձածամիթյունը, փոխանակ օմա կամ զա ձեերի, և հաճախ անհախովիր հայցականի գործածությունը փոխանակ զ նախզրով հայցականի» (անդ. էջ 56): Ընդամենը երկու էջանոց ցանկում այսքան հաճախ հանդիպող քերականական անկանոնություններն էլ բավական են բնագրի ժամանակի սրոշելու համար: Ինչ վերաբերում է ցանկում հանդիպող անձնանունների գին ուղղագրությանը, որը մատնանշում է Մալխասյանցը, զա միայն հին բնագրերի մենաշնորհը չէ:

⁶⁴ Կորած թերթի գոյությունը շի ժխտում նաև Մալխասյանցը Տե՛ս Մալխասյանց, Սեբեոսի պատմությունը և Մ. Խորենացի, էջ 102—103, նաև՝ ՍԵՊ, էջ 171—172: Հմբաւ. նաև Ածոնց Ա., Խաչալյան. Առաքություն Արմենի, էջ 66, 68:

⁶⁵ Երրորդ գլխին շի պատկանում նաև նախորդ գլխից այստեղ ընկած Մամիկոնյանների հատվածը (այս մասին՝ առանձին):

⁶⁶ Թերթի կորսայան պատճառով միկնուցն վերնագրի տակ հայտնված տարրեր գլուխների բնորոշ օրինակ է տալիս նաև Թովմա Արծրունու «Պատմությունը»: Այստեղ ընդհանուր խորագրի տակ են հայտնվել ոչ միայն տարրեր գլուխներ, այլև երկու առանձին հեղինակների աշխատությունները՝ Փովմա Արծրունու և նրա անանուն շարունակողի գործերը:

ցանկը և եռանուն կանոնը) նախնական բնագրում գտնվելիս են եղել տարբեր վերնագրերի տակ՝ երևում է հետեւյալ փաստերից.

Ա.) Պարթեաց ցանկն իրենից ներկայացնում է մի սովորական միատարր ցանկ, որտեղ հաջորդաբար թվարկվում են միենույն երկրի թագավորները. դրան հակառակ՝ եռանուն կանոնը հայոց, պարսից և բյուզանդացոց թագավորների հաշորդությունը ցույց տվող մի համաժամանակյա (սինքրոնիկ) աղյուսակ է: Այսպիսի աղյուսակները հեղինակը զետեղած է, եղել առանձին վերնագրերի տակ, ինչպես այդ տեսնում ենք երկանուն կանոնի ղեպքում, որի վերնագիրն արդեն մեզ ծանոթ է. «Եւ արդ երկակի կանոնաւ զՊարսից և զՅունաց հաստատելով նշանակեցից զբազաւութեան ժամանակն»: Ինքնը սահմանադրան հասկանալի է, որ երկանուն կանոնը (որը եռանուն կանոնի նման համաժամանակյա աղյուսակ է) առանձին վերնագրի տակ զետեղող հեղինակը՝ նույն կերպ կվարվեր նաև եռանուն կանոնի ղեպքում, այն անշատելով Պարթեաց միտարրը ցանկից:

Բ) Ներկա երրորդ գլխում երկու անգամ հանդիպում ենք միենույն իրադարձության (Սասանյան հարսառության հիմնազրացման) հիշատակությանը, մեկ՝ Ասողիկի քաղվածքում, մեկ՝ էլ՝ եռանուն կանոնում: Անշուշտ, ավելի բնական կլիներ, եթե այս միենույն տեղեկությունները զետեղված լինեին տարբեր վերնագրերի տակ:

Նշված աելեկություններն են. Ասողիկի քաղվածքում «Զստ (Պարթեաց թագավոր Արտավանին—Գ. Ա.) սպանեալ Ստահրացոյն Արտաշրի՝ որդոյ Սասանայ՝ երարծ զտերութիւն Պահաւաց յերկրորդ ամին Փիլիպպեայ քագաւորինն Հռոմայ: Աստանօր դադարէ քագաւորութիւնն Պարթեաց յազգէն Պահլաւկաց⁶⁷, սկսեալ յերեսուն ամի թագաւորութեանն Փիլեդելֆիս Պտղոմէոսի, կալեալ նոցա ընդ ամենայն ամս՝ նԾէ: Յետ

⁶⁷ Հիշենք, որ բնդկձված բառերը երրորդ գլխի բնագրում պակասում են. բնդօրինակով զրիշը արտագրության բնթացքում սիսալմամբ բաց է թողել. մենք վերականգնել ենք Ասողիկի «Տիեզերական պատմության» հիման վրա: Այս մասին ավելի մանրամասն՝ ստորեւ:

սրոյ նուաճեալ Ստահրացւոյն Արտաշրի որդւոյ Սասանայ դամենայն արիս և զանարիս և զբաղումն ի նոյն ազգէ թագաւորութեան Պարթեաց և Պահլաւկաց՝ թագաւորէ ինքն և յետ նորա պայազատք նորին զնոյն ձև օրինակի»⁶⁸: Նույն տեղեւ կությունը հայտնվում է նաև եռանուն կանոնում, որպիս նոր սկսվող տեղեկություն. «Եւ եղեւ յետ մահուանն Արակեանայ, որդւոյ Վաղարշու արքային Պարթեաց թագաւորեաց Արտաշրի՝ որդի Սասանայ միահեծան տէրութեամբ ի վերայ Բարեյցուց և Ասորուց և Մարաց և Պարսից և Պարթեաց»⁶⁹,

Դ) Հստ պարթեաց ցանկի՝ Սասանյան հարստությունը հիմնվել է «յերկրորդ ամին Փիլիպպեայ քագաւորին Հոռմայ», իսկ եռանուն կանոնում այդ մասին հայտնվում է. «Յամի երրորդի Եղիանոսի կայսեր և յամս Լեռորդի առաջի Մեծի Խոսրովայ արքային Հայոց՝ փոփոխումն թագաւորութեան այսորիկ լեալ»⁷⁰,

Հ) Եյս հակասական տվյալները, անկասկած, պետք է իրարից բաժանված լինեին մի վերնագրով, որտեղ հայտնված լիներ, որ երկրորդ տեղեկությունը բերվում է ըստ ուրիշ սկզբենազբյուրների: Այլապես Հնարավոր չէր, որ հեղինակը միենույն գլխում մեկ հայտներ, թե Սասանյան թագավորությունը հիմնվել է Փիլիպպոսի ժամանակ, մեկ էլ՝ Եղիանոսի:

Նշված փաստերի ուժով եռանուն կանոնը գուրս է գալիս Երրորդ գլխի կազմից և Ստեփանոս Տարոնացուն դարձալ մնում է Ասողիկին համապատասխանող հատվածը:

Եյս բնադիրը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հետ համեմատելիս նկատում ենք, որ ժամանակագրական տվյալներն ու թագավորների հաջորդականությանը վերաբերող տեղեկությունները վերցված են Խորենացուց: Արանից ելնելով Մալխասյանցը իրավամբ եղրակացրել է, որ հատվածը կազմված է Խորենացու «Հայոց Պատմության» հիման վրա: Մնում էր պարզել, թե ո՞վ է անմիջապես Խորենացուց օգտվող՝ երրորդ գլխի հեղինակը, թե՝ Ասողիկը: Մալխասյանցը,

⁶⁸ ՍԵՊ, էջ 12:

⁶⁹ ԱՆՊ, էջ 14:

⁷⁰ ԱՆՊ:

ինչպես տեսանք, առաջնությունը տվել է Երրորդ զլիսի Հեղինակին, Ասողիկին Հանդես բերելով վերջինիս արտագրողի դերում:

Սաորեւերիվով Համեմատությունը, սակայն, ցույց է տալիս, որ Մովսես Խորենացուց անմիջապես օգավովը Ասողիկն է, իսկ Երրորդ զլիսի Հեղինակն օգավովել է Ասողիկից:

Մ. Խորենացի	Ատ. Ասողիկ	«Սերեսոսի Պատմության» Գլուխ
Յետ վաթսուն ամի	Ի վաթսուն ամի զկնի	թյան» Գլուխ
Ճահուանն Աղեքսանդրու	Վախսանի Աղեքսանդրի	Ճետ ճահուանն Աղեքսանդրու
թագաւորէ	Թագաւորէ	սանդրու
ի վերայ Պարթևաց	ի վերայ նոցա	թագաւորէ
Արշակ քաջ	Արշակ քաջ	Արշակ քաջ
ի քաղաքին որ կոշի	ի Բաձլ Շահաստանի	ի Բաձլ Շահաստանի
Բաձդ Առաւատին	յերկրին Քուշանաց...	յերկրին Քուշանաց կեց.
յերկրին Քուշանաց...	Թագաւորէ բնդ ամե-	եալ ամս Ճէ.
Թագաւորեաց (Արշակ-	նայն	թագաւորէ
Գ. Ա.)		

ամս երեսուն և մի
եւ ետ նորա որդի նո-
րին Արշակս ամս քսան
եւ վեց (գումարը տա-
լիս է Ծէ):⁷¹
Ապա Արշակ նորին որդի
որ կոշեցաւ Մեծ
ամս յիսուն և երիս...
թագաւորեցուցանէ
զեղրայր իւր
Կաղարշակ ի վերայ
մերոյ աշխարհիս⁷²:

ամս Ծէ:
Եւ ետ սորա թագաւորէ
սորին որդի Արշակ
որ կոշեցաւ Մեծ
(ամս ԾԲ, տէ՛ս էջ 31) ամս ԾԲ:
թագաւորեցուց
զեղրայր իւր
զեղրայր իւր
Կաղարշակ ի վերայ
աշխարհիս Հայոց⁷³: ամս ԾԲ:

⁷¹ Ասողիկի այստեղ տարբեր է Խորենացուց նրանով, որ միանգամից գումարում է նրան նշած տարիները և նշում բնդանուր թիվը՝ Ծէ: Այս տարբերության պատճառը, ինչպես նաև մի երկու այլ տվյալներ բացատրել է Ատ. Մալխասյանցը: Տէ՛ս «Սերեսոսի պատմությունը» և Մ. Խորենացի», էջ 39—41:

⁷² Խորենացուց օրինակներ բերել ենք ըստ Մալխասյանցի Հիշյալ աշխատության (էջ 36):

⁷³ «Մտեփանոսի Տարօնացուց Ասողիկան Պատմութիւն Տիեզերական», ՍՊ, 1885, էջ 29—30:

⁷⁴ Սիդ, էջ 11:

Այսաւեղ Խորենացու և Ասողիկի բնագրերը մի քանի տեղ կրծատված են (ցույց ենք տվել բազմակետերով), որից հետո նոր՝ համապատասխանում են երրորդ գլխի հատվածին։ Սա նշանակում է, որ երրորդ գլխի հեղինակն իր բնագիրը կազմել է Ասողիկին կրծատելու միջոցով։ Իսկ կրծատել նա կարող է ուժիայն Ասողիկի գիրը ձեռքի տակ ունենալուց հետո։

Բացի համարության մեջ երևացող բառային պատկերից՝ երրորդ գլխի հեղինակի արքերությունը Խորենացուց և Ասողիկից ցույց են տալիս նաև երկու կարևոր պատմական տեղեկատվյուններ։ Նախ՝ ըստ երրորդ գլխի՝ Արշակ Քաջն ապրել է Տէ (130) տարի, որի մասին շգփտեն ո՛չ Խորենացին, ո՛չ էլ Ասողիկը, և երկրորդ՝ Խորենացին և Ասողիկն ունեն տեղեկություն այն մասին, որ Արշակ Քաջը թագավորել է Աղեքսանդրի մահվանից 60 տարի հետո, իսկ երրորդ գլխի հեղինակն այս տեղեկությունը չունի։

Երր 60 տարվան վերաբերով տեղեկությունը հայտնելուց հետո (էջ 32) Ասողիկը կրկին անդրադառնում է նույն իրողությանը՝ տեսնում ենք, որ նա անառարկելիորեն օգտվել է Խորենացուց (և ոչ՝ երրորդ գլխի հեղինակից)։ Այսպես հայտնելով, որ իր խոսքը միևնույն գեպքի մասին է («որպէս ասացաք»), նա այս անգամ խոսում է ոչ թե առաջվա նման սեփական շարադրությամբ, վերապատմելով իր գիտեցածք (որի բնթացքում, օրինակ, նա Խորենացու Յահով Առաւատին-քարձրել էր Յահի Շահաւանի), այլ՝ ուղղակի նայելով Խորենացու Պատմությանը և բառացի արտագրելով հատվածը։

Մ. Խորենացի (Գիրը Բ, գլ. Բ)	Ա. Ասողիկ («Տիեզ. պատմ.», էջ 31)	Երրորդ գլխի հեղինակ («Արեսոսի պատմ.»), էջ 11)
--------------------------------	--	---

Յետ վախսուն ամի մահուանն Աղեքսանդրի թագաւորէ ի վերայ Պարթևաց Արշակ Քաջ ի բազարին որ կոչի Բահով Առաւատին յերկրին Քոչանաց...	Յետ վախսուն ամի մահուանն Աղեքսանդրի թագաւորէ ի վերայ Պարթևաց Արշակ Քաջ ի բազարին որ կոչի Բահով Առաւատին յերկրին Քոչանաց...	Յետ մահուանն Աղեք. սանդրու թագաւորէ ի վերայ Պարթևաց Արշակ Քաջ ի Բահով Շահաւանի յերկրին քոչանաց կեցեալ ամս Տէ,
---	---	--

Մեկնաբանությունն ավելորդ է:

Ասողիկի «Տիեզերական պատմության» վրա երրորդ գլխի Հեղինակի կատարած աշխատանքն այնքան ակնբախ է, որ Հեղառությամբ կարելի է հետևել նրան։ Այսպես նպատակ ունենալով արտագրել միայն Պարթևաց թագավորների անունները և նրանց հաջորդականությունը ցույց տվող տարեթվերը՝ երրորդ գլխի Հեղինակը Ասողիկի բնագրից բաց է թողել դեպքերի նկարագրական մանրամասնությունները, մինչև որ կրոկին հանդիպել է անունների ու թվերի և կրկին վերցրել իր ցանկի մեջ։ Ոչ մի տեղ նաև Ասողիկի բնագրից չի հեռացել և նրանից օգտվել է այնպիսի խիստ հերթականությամբ, որ կարելի է առանց շափազանցության ասել, որ եթե այժմ որևէ մեկը կրկնի նրա աշխատանքը՝ կտանա միենույն ցանկը։

Այս աեսակետից առանձնապես բնորոշ է «Տիեզերական պատմության» 30 և 31 էջերի օգտագործումը։ Առաջինում կացանի համար պիտանի բնդամենքը մեկ աեղեկություն (Հայտաբնվում է, որ Արշակ Մեծը «թագաւորեցոյց զեղբայր իւր դՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց»), մնացածն ամրող-չությամբ նկարագրական բնույթ ունի։ Երրորդ գլխի Հեղինակն այս ամբողջ էջից վերցրել է միայն այդ տեղեկությունը։ Դրան հակառակ, հաջորդ էջն ամբողջությամբ, սկզբի բառից մինչև վերջինը, մի պատրաստի ժամանակագրական ցանկ է, որը և երրորդ գլխի Հեղինակն արտագրել է առանց մի բառ բաց թողնելու։ Սա հեղինակի մտագրությունը բացահայտող բնորոշ փաստ է։

Այս հանգամանքը վրիտել է Սաեփանոս Մալխասյանցի ուղագրությունից և նա անհասկանալի է համարել, թե ինչու երրորդ գլխի Հեղինակն Ասողիկին արտագրելիս պետք է բաց թողած լիներ Հիշյալ նկարագրական մանրամասնությունները։ «Անհասկանալի կմնար,—զրում է նա, —թե ինչու այս հեղինակը յուր բնագիրը Ասողիկից արտագրելիս դուրս է դցել վերոհիշյալ կտորները»⁷⁵։

Նրա կարծիքով՝ ավելի հասկանալի կլիներ, եթե արտագրողը փոխանակ կտորները բաց թողնելու, ընդհակառակը, բն-

⁷⁵ Ատ. Մալխասյանց, Աերեսոի Պատմությունը և Մ. Խորենացի, էջ 28,

դարձակեր իր սկզբնաղբյուրը: Եվ քանի որ Ասողիկի բնագիրը երրորդ գլխի համեմատությամբ ավելի ընդարձակ է, ուստի Մալխասյանցը ենթադրել է, թե արտագրողը Ասողիկն է: Հստակ այսմ Ասողիկը կատարել է մի շատ տարօրինակ աշխատանք: Նա իբր երրորդ գլխից վերցրած յուրաքանչյուր նախադասություն մասնատել է մի քանի մասերի և նրանցում մեջնդմեջ ավելացրել Մովսես Խորենացուց և Եփսերիոս Կեսարացուց վերցրած տեղեկությունները: Այսպես, օրինակ, Մալխասյանցը գտնում է, որ Ասողիկը երրորդ գլխից վերցրել է ստորև բերվող նախադասությունը և բաժանելով երեք մասի՝ նրանցից առաջ և հետո ավելացրել է երեք հատված (կարծեցյալ ներմուծումներն ընդգծում ենք):

Գ գլուխ

Յետ մահուանն Ազերսանդրու

թագաւորէ Արշակ քաջ ի Բահի
Շահաստանի յերկիրն Քուշանաց
կհցեալ ամս Ճլ,

թագաւորեաց ամս Ծէ⁷⁶:

Տեսնում ենք, որ արտագրողը երրորդ գլխի հեղինակն է:

Մալխասյանցի աշքից վրիպել է ևս մի կարենոր հանգամանք, այն է՝ պարթե թագավորների ցանկն Ասողիկի մոտ գտնվում է «Տիեզերական պատմության» նախապատրաստական մասում, որտեղ հեղինակը անխտիր համառոտագրում է իր սկզբնաղբյուրները և կազմում մի հակիրճ ժամանակագրություն, ձեռքին եղած տասնյակ էջերից երբեմն վերցնելով մեկ կամ երկու տվյալ:

Ահա այս սղարագաներում նա չէր կարող երրորդ գլխի

⁷⁶ Առ. Մալխասյանց, Սեբեսոի Պատմությունը և Մ. Խորենացի, էջ 23—24:

Ասողիկ

Եւ եղեւ ի ժե ամին սորա (Անտիոքի Թէոսի) եւ ի ամի զինի վախճանին Աղեքսանդրի Ապրատամբէցին Պարքել ի ծառայուրեն: Մակեղոնացուց և թագաւորէ ի վերայ նոցա Արշակ քաջ ի Բահի Շահաստանի յերկիրն Քուշանաց: Եւ թափէ զամենայն կողմանս Արևելից և տայ պատերազմ սաստիկ յոյժ: Հալածէ և ի Բաբելոնի, զՄակեղոնացուց իշխանուրինն և թագաւորէաց բնդ ամենայն ամս նէ:

նկատմամբ կիրառել բոլորովին հակառակ գործողություն և ոչ միայն այն արտագրել ամբողջությամբ, այլև՝ նրա մեջ հավելումներ կատարել:

Վերը բերված օրինակում Ասողիկն ըստ Մալխասյանցի՝ երրորդ դլխից վերցրել է 4 տողանոց մի տեղեկություն Արշակ քաջի մասին և երեք մասի ծվատելով դարձրել է 13 տողանոց մի բնագիր: Սա անհնարին է ոչ միայն այն պատճառով, որ «Տիեզերական պատմության» տվյալ մասում Ասողիկը, մեր ասածի համաձայն, միայն և միայն համառոտագրում է իր սկզբնաղբյուրները, այլև այն պատճառով, որ նա պարթևաց ցանկը կազմելու համար երրորդ գլխին դիմելու ոչ մի կարիք չւներ, որովհետև բոլոր այն տեղեկությունները, որ նա պետք է քաղեր այնտեղից՝ կարող էր գտնել նույն Խորենացու մոտ, որին նա դիմել է ցանկի հիմնական տեղեկությունները քաղելու համար:

Մալխասյանցի կարծիքով Ասողիկն ընդարձակել է նաև երրորդ գլխի հետեւյալ համար:

Գ զնուին

Ասողիկ

Զնա սպանեալ Ստահրացւոյն
Արտաշրի որդույ Սասանաց
Երարձ գուերամիրն Պահլաւկաց
Ակսեալ յերեսուն ամի թագաւորա-
թեանն Փիլեզերփսս Պտղոմէսսի,
կարեալ նոցա բնդ ամենայն ամս
ննէ:

1. Զնա սպանեալ Ստահրացւոյն
2. Արտաշրի որդույ Սասանաց
3. Երարձ գուերամիրն Պահլաւկաց
4. յերկորդ ամին Փիլիպպեայ
5. քազաւորին Հռոմայ: Աստանօր
6. դաղարէ, քազաւորութիւնն Պար-
7. քեաց յազգէն Պահլաւկաց,
8. սկսեալ յերեսուն ամի թագա-
9. ուրաթեան Փիլիպպերփսս Պտղո-
10. մէսսի, կալեալ սոցա բնդ ամե-
11. նայն ամս ննէ:

Դժվար չէ նկատել, որ այստեղ գործ ունենք սոսկ գրչա-
կան մի վրիպակի հետ, երրորդ գլխի հեղինակը կամ նրան
ընդօրինակող զրիշը, ձեռագիրն արտագրելիս սխալմամբ բաց
է թողել բնդիված տողերը: Վրիպումը տեղի է ունեցել 3-րդ
և 7-րդ տողերում հանդիպող միենույն Պահլաւկաց բառի
պատճառով: 3-րդ տողի Պահլաւկաց բառն արտագրելուց հե-
տո կրկին ձեռագրին անդրադասութիս՝ զրիշը նկատել է 7-րդ

տողի միևնույն բառը և կարծելով, թե այն արդեն արտագրել է՝ շարունակել է ընդօրինակել այդ բառից հետո եկող տողերը. այսպիսով նա բաց է թողել Յ-րդ և 7-րդ տողերի միջև ընկած ընագիրը:

Այս կարգի վրիպումները սովորական են և հանդիպում են «Սեբեռսի Պատմության» նաև այլ հատվածներում: Մեզ հաշողվել է ձեռագրերում Հայտնաբերել և լրացնել մի քանի նման բացթողումներ: Այսպես, օրինակ, Հայկական ամենահին թղթյա ձեռագրում (Մատենադարանի ձեռագիր № 2679, ընդօրինակված 971 թ.) պահպանվել է «Սեբեռսի Պատմության» մի հատվածը, որը համապատասխանում է տպագիր բնագրի (1939 թ. հրատարակություն) 135 էջին: Այս էջում բնագիրը մի տեղ պահաս է, որը առիթ է տվել զանազան ենթագրությունների⁷⁷: Իրականում, սակայն, տեղի է ունեցել միենույն գրչական սխալը. բաց է թողնված օրինակից երկու տակ: Ահա այդ տողերը (ընդգծում ենք), որ գտնում ենք թղթյա հնագույն ձեռագրում.

Թղթյա հնագույն ձեռագիր
(թ. 192ա)

1. զի՞ արդ ոչ զողումն կալցի
2. զճաշակողն՝ ի Հուրն կենդա-
3. նի աներկիւզարար մերձենալ
4. զոր ոչ Սերովիլն իսկ ձե-
5. ոովի համարձակիւր մերձենալ.
6. այլ ունելեաւը և ոչ մարզարէն..

«Սեբեռսի Պատմություն»
(էջ 135)

- զի՞ արդ ոչ զողումն կալաւ
- զճաշակողն՝ ի Հուրն կենդա-
- նի աներկիւզարար մերձենալ
- այլ ունելեաւը և ոչ մարզարէն...

Այսակ բացթողումը կատարվել է Յ-րդ և 5-րդ տողերը եղրափակող միենույն մերձենալ բառի պատճառով:

«Սեբեռսի Պատմության» տպագիր բնագրի մեկ այլ հատվածում (էջ 120) պակասող շորս տող պահպանվել է մեր Մատենադարանում պահպող մի ձեռագրական պատառիկում (պատառիկ № 1343).

Պատառիկ

1. լաւ համարեցաւ տալ սակ և
2. առնել հաշտութիւն պատզա-

«Սեբեռսի Պատմություն»
(էջ 120)

- լաւ համարեցաւ տալ սակ և

⁷⁷ Հմմատ. ՍեՊ, էջ 195, ծան. 70:

- մատրաւը
- առնել հաշտութիւն պատգամառ-
- րսոք.
3. և մնալ ժամանակի իւրում զի
քերես
 4. և աստուծոյ հաշտութեամբ հա-
յեցի
 5. յերկիր և ողորմեցի նոցա. և
սկսաւ
 6. խաւել ի հաշտութիւն պատգա-
մառուաւ
 7. և փութացուցանէին իսմայելա-
ցիքն և փութացուցանէին իսմայելա-
ցիքն...

Այստեղ նույնպես գործ ունենք միենույն բառի (2-րդ և 6-րդ տողերը եղրափակող պատգամառությամբ բառի) պատճառով տեղի ունեցած բացթողման հետ:

**Թվում է, բերված փաստերը բավական են՝ համոզելու հա-
մար, որ պարթեների ցանկը Ասողիկը կազմել է Խորենացու և
ոչ՝ «Սեբեռսի Պատմությանը» թյուրիմացաբար կցված երրորդ
գլխի հիման վրա:**

Կարելի է ենթադրել, որ եթե երրորդ գլուխը հայտնի լիներ
Ասողիկին՝ նա հավանաբար «Տիեզերական պատմության»
մեջ, ի շարս իրեն հայտնի մյուս պատմիչների, որևէ առիթով
կնշեր նաև իր անուն-ազգանունը կրող Ստեփանոս Տարոնա-
ցուն, որը երրորդ գլխի խորագրում նշված է որպես Մովսես
Խորենացու հետ հավասար մի նշանավոր «հաւաստի և ճշմա-
րիտ» պատմիչ: Ասողիկն այնքան հայրենասեր տարոնացի է,
որ նույնիսկ Խորենացուն Տարոնացի է կոչում, ուրեմն պատ-
ճառ չուներ շնչելու նաև այս «նորահայտ» Տարոնացուն:

**«Սեբեռսի Պատմությանը» հետագայում միացած հատվա-
ծում գտնվող պարթև թագավորների ընդամենը մեկ-երկու
էշանոց ցանկում այնքան խիտ են Ասողիկի լեզուն ու ոճը
ցուց ավող փաստերը, որ նրանց նմանները կարելի է ցուց
տալ «Տիեզերական պատմության» մի քանի այլ հատվածնե-
րում:**

«Տիեզ. պատմ.» էջ 31, ՍեՊ, էջ 12

Աստանօր դադարէ բագաւորութիւնն

Պարքեաց յազգէն Պանլաւկաց

սկսեալ յէ ամի թագաւորութեան
Փիլաղելիոս Պաղոմէոսի,
կալեալ սոցա լնդ ամենայն
ամս ՆԾէ:

«Տիեզ. պատմ.» էջ 77

Աստանօր դադարէ թագաւորու-
թիւնն
Հայոց յաղգէն Արշակունիաց,
Սկսեալ յժմ ամի Երկրորդ Եւերգե-
տին
Պաղոմէոսի թագաւորի եղիպատաց-
ւոց
և զադարեալ ի հԴ ամին Թէղոսսի
թագաւորին Յունաց,
կեցեալ բնդ ամենայն թագաւորու-
թեան
Հայոց ամս ՇՄթ:

Երեք գեպքում էլ Ասովիկը միենույն ձեռվ է կազմել իր
Ժամանակագրությունը: Հայոց Արշակունի հարստության հ
պարսից Սասանյան թագավորության բարձման մասին նա
հայտնում է ճիշտ նույն ձեռվ, ինչպես նշել է Պարթևաց ցան-
կում սպահական թագավորության բարձման մասին: Սա
Ժամանակագրություն կազմելու ասովիկյան եղանակ է:

Միենույն Երեսովթին Ենք հանդիպում նաև հետեյալ հատ-
վածներում.

«Տիեզ. պատմ.», էջ 31, ԱԵՊ, էջ 12

Ջսա սպանեալ Ստահրացոյն Արտաշրի
Որդոյ Սասանայ Եբարձ զոէրութիւն Պահկակաց
յերկրորդ ամին Փիլիպպեայ թագաւորին Հռոմեայ:

«Տիեզ պատմ.», էջ 16

Ջսա սպանեալ Աղեքսանդրի
ի վեցերորդ ամի թագաւորութեանն
իւրոյ
Եբարձ զՊարսից թագաւորութիւնն,
որ տեեալ ամս Մէ:

«Տիեզ. պատմ.», էջ 28

Ջսա սպանեալ Աղեքսանդրի Մա-
կեպոնացոյ
Փիլիպպեայ (որուոյ) միանգա-
մայն
Պարսից և Ասորեստանեաց թա-
գաւորութեանն,
տիրեաց ամս Զ:

Եզրակացությունն. Պարթևաց ցանկի մասրակրկիա բնագրական քննությունը և վերը բերված փաստերը ցուց են տալիս, որ Սեբեռոսին վերագրվող Պատմության ներկա բնագրում զետեղված հիշյալ ցանկն արտագրված է; X դարի պատմիչ Ստեփանոս Տարոնացու (Ասողիկի) «Տիեզերական պատմությունից», ուստի և՝ սիրալմամբ է կցված VII դարում հորինված «Սեբեռոսի Պատմությանը»: Ցանկը պարունակող երրորդ գլուխը (իրեն նախորդող երկու և հաջորդ՝ Դ գլխի հետ միասին) գրված է Ասողիկից հետո:

Ստեփանոս Տարոնացու անունը կրող երրորդ գլուխը թյուրիմացաբար գտնվելով «Սեբեռոսի Պատմությունում» առիթ է տվել բանասերներին՝ կյանքի կոչելու մի նոր՝ անիրական Ստեփանոս Տարոնացու, որն իբր ասլրել է VII դարից առաջ և որից իբր օգտվել է Սեբեռոսը:

Միջնադարյան մատենագետներն ու պատմիչները, առանց խարության, բոլորն էլ ավելի ճիշտ ընկալելով Ստեփանոս Տարոնացու անունը կրող հատվածը՝ այն համարել են Ասողիկից քաղված հատված: Այդ է պատճառը, որ հայ մատենագիտական բնագրերից և ո՛չ մեկում, ինչպես նաև ո՛չ մի պատմիչի մոտ չենք հանդիպում Ասողիկից դատ մեկ ուրիշ Ստեփանոս Տարոնացու անվան:

* * *

Ստեփանոս Տարոնացի Ասողիկի անունը կրող գլխում, ինչպես նաև նրա հաջորդ՝ չորրորդ գլխում զետեղված են երկանուն և եռանուն համաժամանակյա (սինքրոնիկ) ժամանակադրական աղյուսակներ, որոնք կազմում են «Սեբեռոսի Պատմությանը» կից հատվածի գրեթե կեսը:

«Սեբեռոսի Պատմության» հեղինակի համար անիմաստ աշխատանք կլիներ այդպիսի աղյուսակ կազմելը: Այլ բան, եթե ժամանակադրական աղյուսակները հանդիսանային զըրքում բացակայող տվյալները լրացնող միջոցներ: Սակայն «Սեբեռոսի Պատմության» մեջ Պերողի թագավորությունից սկսած մինչև գրքի վերջը կրկնվում են աղյուսակում եղած տվյալները: Այս փաստը ցուց է տալիս, որ աղյուսակները

«Սեբեոսի Պատմության» համար չեն կազմված, այլ պատկանել են մի ավելի ուշ ժամանակի երկի, որի հեղինակը կարող էր դրանք բերած լինել որպես իր ժամանակակից պատմությանը նախորդած շրջանի ժամանակագրություն:

Այսպիսով, համաժամանակյա աղյուսակները նույնպես հերքում են իրենց պատկանելիությունը «Սեբեոսի Պատմության» հեղինակին:

Գ

Մենք քնննարկեցինք «Սեբեոսի Պատմությանը» թյուրիմացար միացած հատվածի բովանդակությունը գրեթե ամբողջությամբ (առաջաբանը, «Հինդ թագավորների» հարցը, ուրիշների կողմից չնկարագրված ժամանակը՝ «զանստորագրեալ ժամանակ», Ստեփանոս Տարոնացու հատվածը, համաժամանակյա աղյուսակները և այլն): Մեր աեսադաշտից գուրս մնաց հատվածում գտնվող միայն մեկ կարեռ փաստ՝ Մամիկոնյանների զրոյցը, որը մենք քննելու ենք Փավստոս Բուղանդի կորած դպրությունների առեղծվածի լույսի տակ և այդ պատճառով էլ դարձնում ենք առանձին ուսումնասիրության նյութ:

«Սեբեոսի Պատմությանը» միացած հատվածում հայտնլվում է Մծուրն քաղաքում հայտնաբերված մի հունարեն արձանագրության մասին, որը պարունակել է հայոց հին թագավորների ժամանակագրությունը և ունեցել է հետեւյալ խորագիրը. «Ես, Ագաթանգեղոս գրիշ, գրիշի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն Հայոց, Հրամանաւ քաջին Տրդատայ՝ առեալ ի դիւանէ արքունի»⁷⁸:

Սեբեոսին վերագրվող Պատմությանը կից հատվածում, այս արձանագրության հիման վրա, բերված է առաջին հայ թագավորաց ցանկը: Այսուեղ հանդիպում է Տրդատ անունով լինդամենը մեկ հայ թագավոր՝ Խոսրովի որդին, ուստի և նրա Հրամանով արձանագրությունը կազմով հեղինակը՝ Ագաթանգեղոսը մեղ ներկայանում է որպես երրորդ դարի հեղինակ:

⁷⁸ ՍեՊ, էջ 2:

Եթե ընդունենք, որ Մարաբասյան մատյանում վկայակոչված արձանագրությունը վավերական սկզբնաղբյուր է՝ կնշանակի դա մեզ հայտնի ամենահին գրավոր հիշատակարանն է, որ վերաբերել է զուտ հայոց պատմությանը։ Այս տրամաբանական եզրակացությանն է եկել մեզանից դեռ հարյուրամյակներ առաջ հայ մեծ պատմաբան-գիտնական Մովսես Խորենացին, որը Մարաբասյան մատյանը նշել է ի շարու իր օգտագործած ամենահին սկզբնաղբյուրների։ Այսպիսով, անկախ արձանագրության վավերականությունից, Ագաթանգեղոսը մեզ ներկայանում է որպես հայոց պատմության ամենահին շրջանի ժամանակագիր։

Որ արձանագրության մասին հաղորդող Մարաբասյան սկզբնաղբյուրը գրվել է Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից առաջ՝ դա մի փաստ է, որն ուղղակի կամ անուղղակի կերպով նշել են ինչպես հայ, այնպես էլ օտար բազմաթիվ գիտնականներ՝ Ք. Պատկանյան⁷⁹, Ա. Գուտչմիդ⁸⁰, Կարիեր⁸¹, Ֆետուեր⁸², Մառ⁸³, Գ. Խալաթյանց⁸⁴, Ն. Աղոնց⁸⁵, Ա.

⁷⁹ **Պատկանյ Կ.**, Ванеские надписи и значение их для истории Передней Азии, СПб, 1881.

⁸⁰ **Gutschmid A.**, Über die Glaubwürdigkeit der Armenischen Geschichtschreibung des Moses von Khoren. Berichte der Königl. Sächsischen Gesellschaft d. Wissenschaften zu Leipzig: „Phil.-hist. Klasse“, Bd. XXIII, 1876.

⁸¹ **Carrière A.**, Moïse de Chorène et les généalogies patriarchales, Paris, 1891.

⁸² **Vetter P.**, Das Buch des Mar Abas von Nisibis, Stuttgart, 1893, S. 88.

⁸³ **Марр Н. Я.** О начальной Истории Анонима:—«Виз. врем.», т. 1, вып. 2, 1894. К критике Истории Моисея Хоренского:—«Виз. врем.», 1898, № 1—2.

⁸⁴ **Халатянц Гр.**, Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского. Москва, 1896. Аноним как поздний анонтифик, стр. 58—105.

⁸⁵ **Адонц Н.**, Нач. Ист. Армении у Себеоса. Adonc N., Sur la date de l'histoire de l'Arménie de Moïse de Chorène:—„Byzantion“, v. XI, Bruxelles, 1936.

Մատիկյան⁸⁶, Ն. Ակինյան⁸⁷, Ստ. Մալխասյանց⁸⁸, Մ. Աբեղյան⁸⁹, Հ. Մանանդյան⁹⁰ և ուրիշներ:

«Սեբեռսի Պատմությանը» կից հատվածում հայ առաջին թագավորների ժամանակագրությունը պարունակող արձանագրությունից բացի պահպանվել են Հայաստանի նախնական պատմությանը վերաբերող մի քանի այլ ավանդություններ, որոնց շարքում է նաև Մամիկոնյանների ծագման մասին զրուցը:

Ն. Աղոնցը⁹¹ և Հ. Մանանդյանը⁹² արդեն նշել են, որ Մովսես Խորենացին ծանոթ է Եղել այս զրուցին⁹³: Մակայն նրանք հատվածը բուն Պատմության հետ միասին համարել են VII դարի հեղինակ Սեբեռսի գործ, ուստի և զրուցի գրանցման ժամանակը ըստունել են VII դարը, իսկ Խորենացուն տեղաշարժել են հինգերորդ դարից գեղի ութերորդ-իններորդ դարերը:

Զրուցը Սեբեռսին են վերագրել նաև Ն. Ակինյանը⁹⁴, Ստ. Մալխասյանը⁹⁵, Մ. Աբեղյանը⁹⁶ և ուրիշներ:

Թյուրիմացությունը ծագել է աղճատված ձեռագրից, որտեղ

⁸⁶ Ա. Մատիկյան, Անանունը կամ Կեղծ-Սեբեռս, Վիեննա, 1913:

⁸⁷ Ն. Ակինյան, Սեբեռս Խոփսկոպս Բագրատունեաց և իոր Պատմութիւն ի Հերակլու—«Ազգ. մատենադարան», ՃՇ, Վիեննա, 1914:

⁸⁸ Ստ. Մալխասյանց, ՍԵՊ, էջ 164:

⁸⁹ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ. Վաղ-պատ, 1899, էջ 389—400, 422—426 և այլուր:

⁹⁰ Մանանդյան Յ. Ա., Հաճ. Իст. Արմենի Մար-Աբաս:—«Պալեստինский сборник», вып. 2 (64—65), 1956.

⁹¹ Ածոնց Ա., նշված աշխ., էջ 26, 90—91, 92:

⁹² Մանանդյան Յ. Ա., նշված աշխ., էջ 80:

⁹³ Հ. Մարկվարտը (Untersuchungen zur Geschichte von Eranophilologus“, Bd. LV, H. 2. s. 217-219) գտնում է, որ Մովսես Խորենացին ծանոթ է եղել Փալստու Բուկանդի մեջ հասած դպրություններում գրող Աղոնցի Մամիկոնյանների զրուցին: Սա նույնպես կողմանակիորեն մոտենում է Աղոնցի և Մանանդյանի տեսակետին:

⁹⁴ Ն. Ակինյան, «Հանդէս ամօրեայ», 1911, էջ 528, ծանոթություն:

⁹⁵ Ստ. Մալխասյանց—ՍԵՊ, էջ Զ, է:

⁹⁶ Մ. Աբեղյան, Հայոց հինգ գրականության պատմություն, դիրք առաջին, Երևան, 1944, էջ 388:

զրույցը սխալմամբ ընդօրինակված է VII դարում ստեղծված «Սեբեոսի Պատմության» կազմում, որպես նրա բազկացուցիչ մաս: Այստեղ հեղինակն առաջին դեմքով հայտնում է, որ ինքը զրույցը լսել է ձենաստանից եկած մի դեսպանից: Այս հեղինակին նույնացնելով Սեբեոսի հետ, բանասերները բնականաբար գրանցման ժամանակը պետք է համարեին VII դարը:

Թյուրիմացությունը պարզելու և զրույցի իրական հեղինակին բացահայտելու համար նախ դիմենք բնագրին:

Մամիկոնյանների զրույցն սկսող նախադասությունը մեղ հասած բնագրում սկսվում է սկզբից թերի է, և սկսվում է մի կիսատ բառով, որին հաջորդող բառերը նույնպես աղճատված են և անհանկանալի: Այսպես. «-աղրէ զՄամիկոնէիցն սակս ազգաց զնեղութիւնն»⁹⁷:

Բանասերները փորձել են դանաղան բացատրություններ տալ այս նախադասությանը, բայց բնագիրը վերականգնել չի հաջողվել: Ք. Պատկանյանը թարգմանել է նախադասության և նիմաստը՝ «Скажем несколько слов о роде князей Мамиконяи!» և ծանոթագրել է. «Բնագրում այս տեղը բոլորովին անհասկանալի է»⁹⁸: Ֆրանսերեն թարգմանության հեղինակ Ֆ. Մակլերը, հավանաբար հետեւելով Ք. Պատկանյանին, թարգմանել է. «Nous allons parler maintenant de l'origine des Mamikoniens»⁹⁹ («Այժմ խոսենք Մամիկոնյանների ծագման մասին»): Հ. Ակինյանը բոլորովին այլ բո-

⁹⁷ Տե՛ս, ՍԵՊ, Էջ 12, տող 16: Այստեղ և մյուս տպագիր բնագրերում կիսատ բառը տպված է. «-աղրէն»: Մենք սրբագրում ենք՝ «-աղրէ», օգտվելով «Սեբեոսի Պատմության» հանգույն ձևագրից (Մաշտոցի անվան Մատենադարան, ձ. № 2639, թ. 492ա), որտեղ նախադասությունն ամրողացնելու հետեւյալ տեսքը. «աւրինաղրէ զՄամիկոնէիցն սակս դ զադգաց զնեղութիւն»: Այս նախադասության մասին տե՛ս նաև՝ ՍԵՊ, 170—171, որտեղ Մամիկոնյանցն «աւրինաղրէ» բառը դիտում է որպես «աւրինա(կի)» և «—ղրէն» բառերի միացություն: Մենք բառը վերլուծում ենք այսպես. «աւրին(ակի)» և «—աղրէ»:

⁹⁸ История имп. Иракла, стр. 13.

⁹⁹ Pseudo-Sebeos, Texte arménien traduit et annoté par Frédéric Macler:- „Journal asiatique“, juillet-aout, 1905, Paris, 18 (134).

վանդակություն է վերագրել նախադասությանը, վերծանելով
այսպես. «Օրինագրէ զՄամիկոնէիցն տան սպարապետու-
թիւնն»¹⁰⁰: Ստ. Մալխասյանցը թարգմանել է՝ «Օ Մամիկոն-
յանք, որ նարու, բելտվայ»¹⁰¹, Ա. Զամինյանը մեկ վեր-
ծանել է «զնոյն ձև օրինակի և զՄամիկոնէից (սակա) զնախա-
ւարութիւնն»¹⁰², մեկ էլ՝ «զՄամիկոնէիցն սակա յաղաց զնե-
ղութիւնն կրելոյ»¹⁰³:

ինչպես տեսնում ենք, ենթադրությունները կամ բնագրից
հեռացել են, կամ էլ բնագրին մոտ լինելով մնացել են նույն-
քան անհասկանալի, որքան որ է բնագիրը:

Կիսատ մնացած «-ագրէ» բայց, որի վերականգնումով
զգալիորեն կհեշտանար նախադասության վերծանումը, բա-
նասերներն անվերականգնելի համարելով, թարգմանության
ժամանակ բաց են թողել: Իսկ Ալինյանի վերծանությունը
(«օրինագրէ զՄամիկոնէիցն տան սպարապետութիւնն») այն-
քան հեռու է բնագրից, որ քննության առարկա չի կարող հան-
դիսանալ:

Փորձենք վերականգնել նախադասությունը:

Սկսենք մեր կարծիքով ամենից շատ աղճատված «ազգաց
զնեղութիւնն» բառերից: Սրանց փոխարեն, որպես սկզբնական
բնագրում ամենից սպասելի բառ, մեղ ներկայանում է «ազ-
գացեղութիւն» բառը: Սա իր տեսքով գրեթե նույնանում է
«ազգացզնեղութիւն» բառերի հետ և բովանդակությամբ հա-
մապատասխանում է բնագրին, որտեղ իսկապես ներկայաց-
ված է Մամիկոնյանների աղքացեղությունը (աղքակցական
կապը, աղքականությունը):

Հայտնի է, որ ձեռագրերում բառերը գրվում էին կրծատ
ձեռվ և առանց իրարից անջատվելու: Այս ուսումնաներում եր-

¹⁰⁰ Հ. Ալինյան, Սերիոս եպիսկոպոս Բագրատունեաց եւ իւր Պատ-
մութիւնն ի Հերակլն: Տպվ. Աղգ. Մատենադարան, հատ. 2, Վիեննա, 1924,
լ. 31:

¹⁰¹ История епископа Себеоса, пер. Ст. Малхасяни, Ереван, 1939, стр. 19.

¹⁰² Մաշտոցի անվ. Մատենադարան, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 232ա, լ. 114:

¹⁰³ Անդ, թղթ. 232, լ. 125: Հմմտ. նաև թ. 232, լ. 101:

կու միասին բնդօրինակված բառեր հեշտությամբ կարող էին մեկ բառի տպավորություն թողնել, ինչպես նաև կարող էր տպատաճել հակառակը՝ մեկ բառն ընկալվեր որպես երկու բառ: Բավական է, որ կրծատ ձեռվ գրված «ազգցեղուին» բառի ե-ն շփոթվեր իրեն նմանվող ն-ի հետ, բնդօրինակով գրիչն իդ առցեկ կունենար «ազգցեղուին» ձեզ, որն ուրիշ կերպ հնարավոր չէր լինի վերծանել, քան երկու բառով՝ «ազգաց զնեղութիւնն»:

«Սեբեսսի Պատմությանը» կից հատվածում «ազգաց զնեղութիւնն» բառերին նախորդում է «զՄամիկոնէիցն սակս» արտահայտությունը: Այսակեզ «սակս»-ը ակնհայտորեն աղավաղված բառ է: Թեսք է նոթագրել, որ նրա փոխարեն սկզբնական բնագրում եղել է «զՄամիկոնէիցն սենի» արտահայտությունը: Սիմեոն Ապարանցին, որը ձեռքի տակ ունեցել է «Սեբեսսի Պատմությունը» պարունակած մի առավել անաղարտ ձեռագիր, գրում է. «սակս Պահլաւունեացն զարմի և Մամիկոնեանցն սեռի»¹⁰⁴:

Դառնալով «-աղրէ» կիսատ բառին, գժվար չէ նկատել, որ սա երրորդ գեմք արտահայտող մի բայական վերջավորություն է, որը վերաբերում է Մամիկոնյանների կապակցությամբ վկայակոչված («-աղրէ զՄամիկոնէիցն») մի անձնավորության: Ինչպես կտեսնենք սառու, այդ անձնավորությունը հենց Մամիկոնյանների գրուցքը գրանցող Ագաթանգեղոսն է, որին վկայակոչող հեղինակը, գրուցքը քաղելուց առաջ հայտնել է, թե Ագաթանգեղոսն «այսպես է շարադրում Մամիկոնյանների ազգացեղությունը» (ազգականությունը):

Այսպիսով, մենք աղճատված նախադասությունն ամբողջովին վերականգնում ենք այսպես. [այսպէս շար] աղրէ զՄամիկոնէիցն սեռի ազգացեղությունն»:

Սիմեոն Ապարանցին իր օգտագործած «Սեբեսսի Պատմության» հիման վրա գրուցի հեղինակ է նշել Մծուրնի արձանագրության հեղինակ Ագաթանգեղոսին: Թերթերի ետևաղության պատճառով գրուցքը մեզ հասած ձեռագրերում հեռա-

¹⁰⁴ ՏԵ՛ս, ՍԵՊ, էջ 28—41: Այս մասին առե՛ս նաև ՍԵՊ, էջ 178—180, ձան. 29—30:

ցել է Ազաթանգեղոսի անունը կրող գլխից, հայտնվել է Դ գլխում և այդպիսով կորցրել է իր իրական հեղինակի հետքերը: Ակադեմիկոս Մալխասյանցը կարգավորել է «Սեբեռոսի Պատմության» է—թ գլուխների միջև ընկած մի շատ կարևոր և աւագություն¹⁰⁵, բայց դեռ մնում են կարգավորման ենթակա հատվածներ, որոնցից է նաև Մամիկոնյանների զրույցը, որը մեղ հասած բնագրի Գ գլխում անբնական վիճակով խցկած է իրենից առաջ և հետո գտնվող հակիրճ ժամանակագրական ցանկների միջև: Այդ գլխի նյութերը քաղված են, ինչպես խորագիրն է նշում, Սաեփանոս Տարոնացուց¹⁰⁶ (Ասուղիկից), ուստի Մամիկոնյանների զրույցն այստեղ անելիք չունի:

¹⁰⁵ Միմէօն վարդապետի Ապարանցոյ վիպասանութիւն սակա Պահանձնեաց գարմի և Մամիկոնեանցն մեսի, Վազարշապատ, 1870: Հմմտ. Ներսես Շնորհալիք՝ «Շարագրութիւն հոմերական վիպասանութեամբ սակա հայկանցն սեսի և Արշակոնեացն զարմի» (Բանք շափառ, Վենետիկ, 1830. Էջ 493):

¹⁰⁶ «Սեբեռոսի Պատմության» առաջին հրատարակիչ Թագեսս Միհրզապյանի երրորդ գլխի խորագրում նշված Ստեֆանոս Տարոնացուն համարում է Սեբեռոսից առաջ ապրած հեղինակ և գտնում է, որ նա է հայոց Խոսրով թագվարի պալատում լսել Մամիկոնյանների զրույցը: Այս կարծիքն առաջին անգամ հերքեց «Սովիեր հայկականի»-ի (Հատոր Զ, Վենետիկ, 1853) հրատարակիչ Պ. Ալիշանը, ապա Փ. Պատկանյանը՝ «Սեբեռոսի Պատմության» ուսու. թարգմանությունում, որի առաջարանում նա հայտնում է, որ Սաեփանոս Տարոնացին XI դարի մատենագիր Ասոսդիկն լ: «Տիեզերական պատմությունից» վերցված հատվածն իրավամբ Ասոսդիկինն են համարել նաև Գրեգոր Լուսավորչի առաջարանը, Զ. Հյուրշամանը, Ն. Աղոնցը, Գ. Տեր-Պողոսյանը և այլք, որոնք, սակայն, հատվածն անշատել են նախորդ և հաջորդ գրախներից և համարել են հետագա ժամանակի բնդմիջարկությունն: Ն. Աղոնցը (Խավալ, ուայ Կետորիա Արմենիա Կեսեօսա, 1901, էջ 66) Մամիկոնյանների զրույցի տեղը ցույց է տալիս նույն գլխում (իմա ՍԵՊ, էջ 14—15), այնտեղ սրտեղ խոսվում է Կոռնակի մասին և զրույցի վայրը համարվում է պարսից Խոսրով թագավորի արքունիքը: Ն. Ակինյանը («Հանդէս ամսօրեայ», 1911, էջ 528, Ժանոթություն) առանց բացատրելու, հայտարարում է, որ Խոսրովի արքունիքում Մամիկոնյանների զրույցը լսած անձնավորությունը եղել է Վրթանես բերդովը: Խակ Ա. Մատիկյանը (Անանունը կամ Կեղծ-Սեբեռոս, էջ 54—55 հն) այդ անձնավորությունը նույնացնում է Փալսոսս Բուղանդի հետ, որը նրա կարծիքով ապրել է շորորդ դարում, Խոսրով Գ-ի օրոք:

Սիմեոն Ապարանցու «Վիպասանության» համաձայն զրուցն սկզբնապես պետք է, որ դտնված լինի այժմյան Բղյուում, որտեղ գետեղված է նաև Բագրատունիների ազգաբանությունը: Ահա այս միննույն գլխում շարադրված է եղել նաև Մամիկոնյանների ազգացեղության մասին զրուցը, Բագրատունիների զրուցը բերելուց հետո, «Սեբեոսի Պատմությանը» կից հատվածի հեղինակը բերել է Մամիկոնյանների զրուցը¹⁰⁷, հայտնելով, որ Մամիկոնյանները Բագրատունյաց նման՝ Արմենակի որդիներ չեն՝ «ոչ են սոքա որդիք ազգածնինն Արմենակայ, այլ են եկեալ ի Ճենաստանէ»:

Ի դեպք Սիմեոն Ապարանցու ունեցած ձեռագրում Բագրատունիների ազգաբանության և Մամիկոնյանների զրուցի միջև եղել է մի հատված, որը «Սեբեոսի Պատմության» մեջ հասած բնագրում բացակայում է:

Այս բնագիրը պարունակել է Արշակ (Սիմեոն Ապարանցու մոտ՝ Վրիպմամբ՝ «Վաղարշակ»)¹⁰⁸ թագավորի գործերի նկարագրությունը, որի տվյալները մեզ տանում են դեպի այն միենույն սկզբնաղբյուրը, որից օգտվել է նաև Մովսես Խորենացին: Սիմեոն Ապարանցին այդ հատվածի բովանդակությունը պատճենում է հետեւալ տողերում:

Իսկ Վաղարշակ զշումն ընթացեալ
Եւ թշնամեացն սպատուհասեալ,
Արիապէս շահատակեալ,
ԶՄորփիլիկաններն սատակեալ,
Զիշխանութիւն յինքրն կորպեալ,
ԶՄակեղոնեան անունն եղծեալ:
Եւ այսքանիւք ոչ շատացեալ,
Այլ ի յոլովրն ձեռնարկեալ,

¹⁰⁷ Ա. Զամինյանը (Մաշտոցի մատենագարան, արխիվ, թղթ. 232, գ. 101) Մամիկոնյանների զրուցի տեղը նշում է Բագրատունիներին վերաբերող հատվածից անմիջապես հետո, «զարածողով եղեն ի վերայ նորա ի Միջագետն Ասսրոց» և «եւ այս են իշխանն Պարթևաց» արտահայտությունների միջև (տե՛ս ՍԵՊ, էջ 10, տող 5–6):

¹⁰⁸ Հմմա. Գր. Տեր-Պողոսյան, Նկատողություններ Փակստոսի Պատմության վերաբերյալ, մասն երկրորդ, Վիեննա, 1919, էջ 113:

Սերունդ ազգին զամումն առեալ,
Մինչ ի Վարդանըն պսակեալ:
Չորք հարիւր և հինգ ամ տեեալ,
ՅԱրտաշիսէ թագրն բարձեալ:
Ի յայս միջոցս բանրս լուեալ,
Ի յոլովէն գոլով կասեալ¹⁰⁹:

Ընդգծված և նրանց հաջորդող տողերում հայտնվում է, որ Միմեսն Ապարանցու օգագործած աղբյուրի հեղինակը Վազգարշակի (Արշակի) գործերի նկարադրությունից հետո լոել է («ի յայս միջոցս բանս լուեալ») և շատ բան բաց թողնելով («ի յոլովէն գոլով կասեալ») անմիջապես անցել է Մամիկոնյանների դրույցին.

Զի սպասմագիրն ոչ ախորժեալ,

Էզքերթուղին (Մովսես Խորենացուն—Գ. Ա.) կրկնարանեալ,

Այլ գձենագունս յիշատակեալ,

ԶՄամիկոնեանսըն ղեկուցեալ,

Վասըն սոցա դրբակագրեալ,

Բայց Մովսէսի ոչ ձայնակցեալ,

Ազարանգեայ գոլ հետեեալ,

Այն որ զինապահս ձենաց հարցեալ,

Ի սոցանէ զատոյցն ուսեալ,

Ցումէ գրբով մեզ աւանդեալ...¹¹⁰

Ինչպես տեսնում ենք, ընդգծված տողերում որոշակիորեն հայտնվում է, որ ճենացի դեսպանին հարցնողը և Մամիկոնյանների դրույցը գրի առնողը ոչ թե Սեբեռոն է, այլ՝ Ագաթանգեղոսը: Ուրեմն Միմեսն Ապարանցու օգտագործած ձեռագրում նշված է եղել, որ Մամիկոնյանների դրույցի հեղինակն Ազարանգեղոսն է¹¹¹:

¹⁰⁹ Ա. Ապարանցի. Վիպասանութիւն..., էջ 28:

¹¹⁰ Անդ, էջ 28—29:

¹¹¹ «Սոփերք Հայկականք»-ի մի ծանոթագրությունից երեսում է, որ Մեռն Ապարանցու «Վիպասանութիւնից» բացի գոյություն են ունեցել Մամիկոնյանների դրույցի կապակցությամբ Ագաթանգեղոսի հեղինակությունը

Ապարանցու բնագրում միաժամանակ հայտնվել է, որ Մամիկոնյանների զրուցն ավանդված է եղել գրավոր. «Յորմէ զըրով մեզ աւանդեալ»։ Սա գալիս է հաստատելու մեր ենթադրած «շարադրէ» բառը («այսպէս շարադրէ զՄամիկոնէ-իցն սեփի աղքացեղութիւնն»)։

Զրուցի գրավոր ձեռվ ավանդված լինելու հանգամանքը մի կարևոր փաստ է, որի հիման վրա կարելի է ենթադրել, որ Մարարասյան մատյանում Ազաթանգեղոսի անվամբ գտնված է եղել Մծուրնի արձանագրությունից բացի ևս մեկ ուրիշ նյութ, որի կազմում է գտնվել Մամիկոնյանների զրուցը։

Մծուրնի արձանագրությունը պարունակել է առաջին հայթագալորաց ժամանակագրությունը («զամս առաջին թագաւորացն Հայոց»), Մամիկոնյանները նույնպես այդ ժամանակ են ասպարեզ իշել, ուստի և Մարարայի մատյանում նրանք ներկայացված են եղել առաջին հայ թագավորների հետ միասին։

Սիմեոն Ապարանցու միջոցով պարզվում է նաև, որ «Սերեսի Պատմությունը» կից հատվածի սկզբնական բնագրում Մամիկոնյանների զրուցը պարունակել է, ինչպես Խորենացու մոտ, նաև Ճենաստանին նվիրված գովքը։ Այսպես, զրուցի մեզ ժանոթ մասր վերապատմելուց հետո Ապարանցին հայունում է, որ իր ունեցած ձեռագրի հեղինակը փառաբանել է նաև Մամիկոնյանների հայրենիքը՝ Ճենաստանը, որին նա համեմատել է Աղենի (դրախտի, եղեմի) հետ։

Այլ և զաշխարհն ներբողեալ,
Մինչ Աղենայ նամեմատեալ,
Բազմատեսակս քըրքըմաւէտ
Միրամարգօք գեղեցկացեալ,
Հրաշէիւք, էշ, այծեմամբք,
Յամօրէիւք հովիաք լըցեալք:
Անդին ակամբք և մարգարիտք
Հասարակաց գեղազարդեալ,

իմաստարկող նաև այլ հիշատակարաններ։ Տե՛ս Սոփերք Հայկականք, հատոր Զ, Վենեամիկ, 1853, էջ 144, 145, ծանոթություն Այստեղ ծանոթագրողը որոշ շակիորեն հայտնում է, որ «բանին հենաց Ազաթանգեղայ են»։

Զառ մեղ ազնիւն, զհազիւ գըտեալն,
 Զթագաւորաց պիտոյացեալն,
 Նոցա յանպէտս է համարեալ,
 Սակս բազմութեան առընդուանեալ,
 Քան զհանուրս պարարտացեալ,
 Եւ ըզբնակիշս յըղփացուցեալ:
 Մինչ տեսողացրն ցանկացեալ,
 Երանութեան բանս բարբառեալ,
 Անդ, ուր այրին ոչ դառնացեալ
 Եւ ոչ որբոյն յոգւց հանեալ¹¹²:

Մովսես Խորենացու Ճենաստանի գովքը հիշեցնող և միաժամանակ նրանից տարրերվող այս ավանդությունը միանալով Խորենացու պատմածին, ցույց է տալիս, որ Մամիկոնյանների զրույցը հնում բաղկացած է եղել ոչ միայն Մամիկոնյանների Հայաստան գալու պատմությունից, այլև Մամիկոնյանների ծննդավայրի՝ Ճենաստանի ներբողից, որ գրի են առել ինչպես Մովսես Խորենացին, այնպես էլ Ագաթանգեղոսին վկայակոչող հեղինակը:

Ներբողի հետքերը տարբեր ավանդությամբ դտնում ենր նաև Անանիա Շիրակացուն վերագրվող և Վարդան Արեւելցու «Աշխարհացույցներում»¹¹³:

¹¹² Միմեն Ապարանցի. Վիպասանութիւն, էջ 30—31:

¹¹³ Հմմտ. Մամիկոնյանների զրույցը Մովսես Խորենացու (գիրք երկրորդ, գլ. ՁԱ) և Սիմեոն Ապարանցու («Վիպասանութիւն», էջ 30—31) մոտ, ինչպես նաև Ճենաստանին վերաբերող մասը Անանիա Շիրակացուն վերագրվող Աշխարհացույցում (տե՛ս Ա. Գ. Արքահամայն, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 354) և Զինումաշինի մասին հատվածը Վարդան Արեւելցու Աշխարհացույցում (Աշխարհացույց Վարդանավարդապետի, քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէրեանի, Բարիկ, 1960, էջ 53): Ինչպես երեսում է, Վարդան Արեւելցին Մամիկոնյանների զրույցի Ճենաստանը դիմում է որպես Զինումաշին, զրա համար էլ Զինումաշինը նկարագրելիս է օգտագործել Ճենաստանի ներբողը: Գրիգոր Տեր-Պողոսյանը չնկատելով Ճենաստանի մասին մեր նշած շորս աղբյուրներում հանդիպող տեղեկությունների տարրերությունը՝ կարծիք է հայտնել, թե Խորենացու և Սեբոսի համար ընդհանուր աղբյուր է ծառայել Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացույց»-ը (տե՛ս Գր. Տեր-Պողոսյան, Նկատողություններ Փակստուի Պատմության վերաբերյալ, էջ 73):

Այս տեսակետից առանձնապես ուշագրավ է Վարդան Արեվիկյացու «Աշխարհացուցը», որտեղ համարյա բառացի կրկնությամբ հանդիպում է «Սեբեռոսի Պատմությանը» կից հատվածում եղած և Ապարանցու «Վիպասանության» միջոցով մեղհասած մի արտահայտություն.

Վարդան Արեվիկյան

«Սեբեռոսի Պատմություն»

ոչ որբն լայ և ոչ այրին
յոգոց հանէ

(Սիմեոն Ապարանցու մոտ
պահպանված)

Անդ ուր այրին ոչ դառնացեալ,
եւ ոչ որբոյն յոգոց հանեալ

«Սեբեռոսի Պատմության» կից հատվածի հեղինակը, որը մեր ունեցած տվյալների համաձայն, XI դարում ապրած մի մատենագիր է, Մամիկոնյանների զրուցին իր կողմից ավելացրել է VIII դարի պատմիչ Ղեռնդից վերցրած մի հատված՝ կանացի զգեստների մեջ ծպտյալ երեսուն հազար ճենացի զինվորների և Մահմետի զորքերի միջև տեղի ունեցած առասպելական մարտի մասին։ Այսպես Ճենաստանի ներբողը վերապատմելուց անմիջապես հետո Սիմեոն Ապարանցին շարադրում է Ղեռնդից բերված այդ հատվածի բովանդակությունը՝

Բընաւ հինից զնա (Ճենաստանը—Գ. Ա.) ոչ տեսեալ,
ՅԱղեքսանդրէ ոչ աւերեալ,
Ի Մահմէտէ ոչ կասկածեալ,
Այլ խարիկանօք զզօրսն կոտորեալ,
Յորժամ պղծոյն անդ ժամանեալ,
Զաշագեղեայ աղջկունս տեսեալ,
Ճենբագուրին ըզգեցուցեալ,
Երսուն հազար կոյս աղերսեալ,
Իսկ նա զվաշէս սպառազինեալ
Եւ կանացի զգեստիւ ծածկեալ,
Սուտ մարգարէն այսու փորձեալ
Եւ սրաութիւնն յանդիմանեալ:
Յորմէ Մահմէտ անմըտացեալ,
Իստ խըրատուն զՓեսուն անցեալ,
Զխառնիճաղանճն յայսկոյս թողեալ

Եւ գմեծաղղիս յայնկոյս տարեալ:
Եւ մինչ կամէք դրւարձանալ,
Ընդ օրիորդուրն փափկանալ,
Մանկունքն ի սայլէն վար հոսեալ
Եւ զերկսայրին ի գործ արկեալ,
Զերսուն հաղարըն խողխողեալ,
Մահմէտ ստկաւ արամբ ապրեալ,
Այնուհետեւ ոչ յաւելեալ
Բղջեն անոն ի միտ բերեալ¹¹⁴:

Ղեռնդից վերցված հատվածի մասին բանասիրության մեջ դոյություն ունի սխալ սպատկերացում, որի համաձայն Ապարանցին հատվածի բովանդակությունը իբր ինքն է քաղել Ղեղոնդից և կցել Մամիկոնյանների զրուցին¹¹⁵: Բայտ այսմ չի նկատվել, որ Ապարանցին ուղղակի հայտնում է, որ Ղեռնդի հատվածի բովանդակությունն ամրողջությամբ իրեն ծանոթացրել է իր ունեցած ձեռագրի հեղինակը՝

Զայս ամենայն մեզ ծանուցեալ
Եւ զո՞ւ բանին առ այլս փոխեալ,
ԲղՄարսակի սկիզբն արարեալ...¹¹⁶

VIII դարի պատմիչ Ղեռնդից քաղված աելեկությունների առկայությունը Սիմեոն Ապարանցու օդտագործած ձեռագրում մի նոր ապացուց է այն իրողության, որ Մամիկոնյանների զրուցը պարունակող բնագիրը «Սերեսոսի Պատմության» Ա—Դ գլուխները) թյուրիմացարար է միացած VII դարում զրված «Սերեսոսի Պատմությանը»:

Տեսանք, որ ձենաց զեսպանի հետ զրուցովը և Մամիկոնյանների զրուցը զրանցողը եղել է Աղաթանգելոսը: Կնշանա-

¹¹⁴ Սիմեոն Ապարանցի, Վիպասանութիւն, էջ 31—32: Հմմա: Պատմութիւնների մեծի վրդ. Հայոց, գլ. ԺԵ, Ս. Պետրովարդ, 1887, էջ 37—40:

¹¹⁵ ՏԵ՛ս Բ. Սարգսյան, Սիմեոն Ապարանցին և Կեղծ Սերեսոսի առեղծվածը, «Բաղմավէպ», 1915, էջ 7:

¹¹⁶ Այս տողերը միաժամանակ ցույց են տալիս, որ Սիմեոն Ապարանցու օդտագործած ձեռագրում Մարսակի հատվածը գունված է եղել Ղեռնդից քաղված հատվածից հետո, այսինքն Մամիկոնյանների զրուցից հետո:

կի Խոսրով արքայի արքունիքը, որտեղ նա հանդիպել է Ճենաց ղետպանին՝ Հայոց Խոսրով մեծ արքայի՝ Տրդատի հոր արքունիքն է, որսվճետե ուրիշ աղբյուրներից գիտենք, որ Ագաթանզեղոսն ապրել է Խոսրովի ժամանակներում։ Հայկական աղբյուրներում նա ներկայացված է որպես Խոսրովի որդու՝ Տըրդատի քարտուղար։ Այժմ Միմեռն Ապարանցու տեղեկություններից հիտենում է, որ ավանդությունը նրան արքունի դպիր է Համարել նաև Խոսրովի թագավորության ժամանակ։

Զակերտանների բացակայության պատճառով «Սեբեռոսի Պատմության» հատվածում իրար են խառնված Ագաթանզեղոսի և նրա պատմածը XI դարում վերաշարադրած Հեղինակի խոսքերը։ Սակայն բնագրի ուշադիր զննության գեազքում դժվար չէ նկատել երկու տարբեր հեղինակների առկայությունն այնտեղ։ Այսպես, սկզբում Հայտնվում է, որ Մամիկոնյանները Հայաստան են եկել Հայոց Խոսրով և պարսից Արտավան թագավորների օրոք և այս մասին հեղինակը լսել է ճենաց դեսպանից։ Բայց Հետագայում ճենաց դեսպանը ոչ մի թագավորի անուն չի տալիս։ Սա նշանակում է, որ թագավորների անուն ավլոր «Սեբեռոսի Պատմության» հատվածի հեղինակն է (XI դ.), իսկ ճենաց դեսպանի զրուցը քաղված է անմիջապես Ագաթանզեղոսից, որը ճենաց դեսպանից որևէ թագավորի անուն չի լսել։

Նշված փաստերի լույսի տակ Հատվածը ողետք է վերծանել այսպես։

Այսպէս շարագրէ զՄամիկոնէիցն սեօի աղօացեղութիւնն (քանդի ոչ են սոքա որդիք աղօածնինն Արամենակայ, այլ են եկեալ ի Ճենաստանէ յամս Արտաւանայ արքայի Պարթևաց և Մեծին Խոսրովու արքայի Հայոց)։ «Ուզէս լուայ յանէն մեծէ, որ եկեալ էր հեղշտակութեամբ ի Ճենաց թագաւորէն առ արքայն Խոսրով, յոր իմ հարցեալ ի դրանն արքունի, եթէ «Ազգ մի մեծ ի Հայաստան եւկրի կայ, զորմէ ասեն եթէ ի ձերմէ աշխարհէն գնացեալ են»։ Եւ նա ասաց ինձ. «Ասեն, ասէ, զուսանք և ի մերում աշխարհին յերգ իւրեանց զՄամիկն և զԿոննակն, արս եւկուս լեալ բաշ և զլիաւոր եղբարս հարազատս,

ուրդիմ Կառնամայ նախարարին, որ էր երկրորդ ի թագաւորութեանն ձենաստանի»¹¹⁷ և այլն:

Ընդգծված խոսքերով սկսվում է Ազաթանգեղոսի պատմածը: Իսկ դրանից առաջ խոսում է «Սեբեոսի Պատմությանը» նախորդող հատվածի հեղինակը, որը զրույցն արտագրելուց առաջ միշանկյալ նախադասությամբ (որը մենք բերել ենք փակագծերի մեջ) հայտնել է, որ Մամիկոնյանները Հայաստան են եկել Խոսրով և Արտավան թագավորների օրոք: Այսպես է: Հայտնի եղել նրան:

Հիշյալ թագավորների անունները ճենաց դեսպանի պատմածում չեին կարող հանդիպել ոչ միայն այն պատճառով, որ հեռավոր Ճենաստանում ապրող մի մարդ հազիվ թե հիշեր իրենից հարյուրավոր տարիներ առաջ Հայաստանում և Պարսկաստանում իշխած թագավորների անունները, այլ նաև այն պատճառով, որ որքան մեզ հայտնի է, ճենացիները (եթե դրանք իրոք չինացիներ են) դեսպանի Հայաստան եկած ժամանակներում չեին կարող իրենց լեզվով, այսինքն՝ միշին չինարենով ճշգրիտ արտասանել ո՛չ Արտավան, ո՛չ Խոսրով, ոչ էլ զրույցում հանդիպող մյուս այն անունները, որոնց կազմում ու հնչյուն կա: Չինարենը ու չունի և նրա փոխարեն օգտագործում է հայերենում և պարսկերենում գոյություն չունեցող մի կիսածայնավոր հնչյուն, որը գերազանցապես հանդիպում է որպես վանկը փակող հնչյուն¹¹⁸: Ուստի և Խոսրով և Արտա-

117 ՍեՊ, էջ 12:

118 Մամիկոնյանների զրույցում Խորենացու և Ազաթանգեղոսի մոտ (ինչպես նաև Ճենաստանի կապակցությամբ Անանիա Շիրակացուն վերագրվող Աշխարհացույցում և այլ մատենագիրների մոտ) հանդիպում է նաև «Ճենքակուր» բառը, որը, իբր, դարձյալ ճենական բառ է: Սակայն գիտնականներն արդեն ցույց են տվել, որ դա թյուրքական լեզուներին պատկանող մի բառ է, որը ոչ միայն հայ, այլև ուրիշ մատենագիրներ շփոթել են չինարեն բառի հետ: Այս բառի մասին գոյություն ունեցած կարծիքների ամփոփումը տե՛ս H. Sköld, l'origine des Mamikoniens d'après Moïse de Khoréne:- Revue des Etudes arméniques, t. V, fasc. 1, Paris, 1925, p. 131-136: Այստեղ նշվում է մի բառի շփոթ նաև Ֆիրդուսու մոտ: «Ճենքակուր»-ի մասին նույն հանդեսում (էջ 141—145) համեմատիր նաև՝ Louis H. Gray, Un drame anglais de source arménienne.

վան անունները Հենացի գուսանների բերանում դարեղար կրկնվելով այնպես ահճանաշելիորեն փոխված կլինեին, որ ճենաց դեսպանի օրոք նրանցից արդեն մնացած կլինեին միայն «Ճենականացած» անծանոթ անուններ: Այնպես որ Խոսրովի և Սրտավան անունները կատ չունեն ճենաց դեսպանի հետ, չեն կարող վավերական մի սկզբնաղբյուրում գտնված լինել, այլ արդյունք են հայկական հողում ստեղծված մի ժողովրդական ավանդության, որին և հետեւ է «Սեբեռոսի Պատմությանը» կից հատվածի հեղինակը XI դարում, Մամիկոնյանների գաղթը նշելով Խոսրովի և Սրտավանի օրոք:

Գաղթը այս կամ այն թագավորի հետ կապելը ուշ ժամանակի արդյունք է: Հնագույն աղբյուրը, այսինքն Ազաթանգեղոսի բերանով պատմված ավանդությունը (Մարաբասյան մատյանում), ինչպես տեսնում ենք, որեւէ թագավորի անունը պարունակել:

Հայոց դարձի պատմության հեղինակը («Ազաթանգեղոսը») նույնպես ոչ մի խոսք չի ասում Տրդատի օրոք Մամիկոնյանների Հայաստան գալու մասին: Ընդհակառակը, նրա մի վկայության համաձայն, Մամիկոնյանները Տրդատի ժամանակ արդեն Հայոց բանակի սպարապետության պաշտոնն էին վարում: Նա գրում է. «Թագաւորն Տրդատ՝ վաղվաղակի փութով և անզբազապէս արձակէր արս երիս աւագս փառաւորս պատուականս հրովարտակօք հանդերձ, զի զերկոսին որդիսն Գրիգորի վաղ առ նա հասուսցեն: Եւ որք առաքեցան յարքայէ զնոցանէն, զի ածցեն զնոսս՝ այսոքիկ են. առաջնոյն անուն Արտավագի¹¹⁹, որ սպարապետն լր ամենայն զօրացն Հայոց Մեծաց»¹²⁰:

Այսաեղ Արտավագդի Մամիկոնյան ազգանունը չի նշված, բայց այդ անունը պահպանվել է Ազաթանգեղոսի Պատմու-

¹¹⁹ Արտավագդ անվան կապակցությամբ Ն. Աղոնցը („Byzantion“ IX. 1934, Bruxelles, p. 240) գրում է. «Արտավագդ..., անշուշտ, մի Մամիկոնյան անուն է», իսկ Հ. Մարկվարտը համոզված է, որ Արտավագդն անպայման մի Մամիկոնյան զորագար էր («Էջ մի հայ Արշակունեաց հնագոյն պատմութենէն»). — «Հ. Ամս.», 1920, էջ 44):

¹²⁰ Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Սո. Կանայանց, Տփխիս, 1909, էջ 451, § 860:

թյան հին Հունական թարգմանությունով՝¹²¹ Այս բնագիրը պարունակող նորահայտ Մադրիդյան ձեռագիրը (բնօրինակված՝ 1107 թ.), որը հրատարակել է բելգիացի վաստակուն հայագետ Ժերար Գարիտը, երեք տարրեր տեղերում պահպանել է Հիշատակություններ Տրդատի օրոք Հայաստանում իշխած Մամիկոնյան սպարապետական տան մասին։ Այսպես, տպագիր բնագրի 72-րդ էջում հանդիպում է Տրդատի ժամանակակից իշխանների մի ցանկ, որի մեջ նշված է նաև «Մամիկոնյանների տերը, սպարապետը, Հրամանատարը Հեծելավորի և Հետիակի ամենայն Հայոց»¹²²։ Մի այլ տեղում՝ Տրդատին դեպի Կեսարիա ուղեկցող շքախմբին գլխավորում է «Արտավազպը՝ Մամիկոնյանների տերը և սպարապետը»¹²³, երրորդ Հիշատակությունը վերաբերում է Մամիկոնյանների տոհմին սպատկանած «սպարապետական երկրին»¹²⁴,

Այս տեղեկությունները նույնությամբ հանդիպում են նաև Աղաթանգեղոսի Պատմության արաբական թարգմանությունում (որը ծագում է Հունարենից): Այստեղ կարդում ենք. «Նրա (Տրդատի—Գ. Ա.) մոտ եկան երեք թագավոր՝ արխազաց թագավորը, վրաց թագավորը և ալանաց թագավորը, նրանց հետ միասին նաև՝ իշխանաց խումբը... Հինգերորդն էր Մամիկոնյան իշխանը, կոչումով սպարապետ։ Նա տերն էր ամենայն զորաց հայոց, ինչպես հեծելավորի, այնպես էլ հետեւակի և չէր հեռանում հայոց մեծ թագավորից»¹²⁵, Տրդատի Կեսարիա կատարած այցը նկարագրելիս հաղորդվում է. «Եվ Տրդատին բարձրացրեցին թագավորական կառքի վրա, որը զարդարված էր ոսկով և թանկագին քարերով։ Մեծատոհմիկ աղնվականները հանդիսավոր կերպով ուղեկցում էին սրբին դեպի Կեսարիա։ Եվ ամենայն զորաց հրամանատարությունը

¹²¹ Տե՛ս G. Garitte G., Documents pour l'étude du Livre d'Agathange, Citta del Vaticano, 1946, p. 246.

¹²² Անդ, էջ 72:

¹²³ Անդ, էջ 83:

¹²⁴ Անդ, էջ 103:

¹²⁵ Մարք Հ. Յ., Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием, арабская версия, СПб, 1905, стр. 115.

գտնվում էր Արտավագդի՝ Մամիկոնյան իշխանի և սպարապետի ձեռքում»¹²⁶: Մամիկոնյանների գավառը Տրդատի օրոք կոչվել է «Մամիկոնյանների սպարապետական երկիր»¹²⁷:

Տրդատի ժամանակ ապրած Արտավագդ սպարապետի Մամիկոնյան ցեղին պատկանած լինելու մասին կողմնակի տեղեկություն է պահպանվել նաև Փալմտոս Բուզանդի «Հայոց պատմությունում»: Գ գպրության է զլխում կարգում ենր. «Ապա եկն եհաս Վաշէ որդի Արտավագդայ ի Մամիկոնէն տոհմնին, զօրավար ամենայն Հայոց մեծաց»: Ինչպես տեսնում ենք, այսուղի հայտնվում է, որ Վաշեն Մամիկոնյան տաճմից էր, Արտավագդի որդին: Խսկ այս Արտավագդը Հենց Տրդատի օրոք ապրած Արտավագդն է, որի որդի Վաշեն էլ սպարապետության պաշտոն էր ժամանակի մեջ Տրդատի որդի կոսրովի առողջության համար:

Տրդատին ծառայություն մատուցած Մամիկոնյան իշխանի մասին է խոսվում նաև Բուզանդարտից ծաղկաբաղ արված մեկ ուրիշ սկզբնաղբյուրում՝ Մեսրոպ երկյի դրքում: Այսաեղ կարգում ենր՝ «նախնիքն մեր Մամիկոննեանիր Վահան և Վաշեն Արտավագդ յաւորսն Տրդատայ և Խոսրովու և Տիրանայ և Հայրն իմ Վասակ յաւորսն Արշակայ»¹²⁹:

Փալմտոս Բուզանդի «Հայոց պատմությունում» պահպանված սրոշ տեղեկությունների համաձայն Մամիկոնյանները Հայաստան են եկել Տրդատից շատ առաջ, Հայոց առաջին Արշակունի թագավորների օրոք: Հինգերորդ գպրության է զըլխում Մանվել Մամիկոնյանը Պապ թագավորի հաջորդ Վարագդատին դիմում է այսպիսի խոսքերով. «Ի հնոց ժամանակաց հետէ միամտութեամբ առ ձեզ՝ Արշակոնիս վաստակեալ մեր և եղեալ զանձինս մեր ի վերայ ձեր, ամենայն նախնիքն մեր առաջինն անկան ի պատերազմունս ի վերայ ձեր»: Ընդ-

¹²⁶ Ապր. Ա. Յ., Կրեպուս արման, ցրաց, աբխազ և ալան շաբաթական հայոց պատմություն, 1905, էջ 123.

¹²⁷ Անդ, էջ 137:

¹²⁸ Հմմտ. Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 118, ծանոթություն նաև՝ իշխան Միք. Թումանյան, Միք քանի նկատողություն Մամիկոնյանց գաղթականության վրա.—«Հ. Ամս.», 1911, էջ 520—521:

¹²⁹ Մեսրոպ երեց, Պատմութիւն, Կ. Պոլիս, 1737, էջ 214—215:

դժված բառերը մատնանշում են Վարազդատից մի բանի սերունդներ առաջ և զած ժամանակներ:

/ Նույն գլխում Փավստոս Բուգանդը բառացիորեն հայտնում է, որ առաջին Արշակունիներն արդեն ճանաշում էին Մամիկոնյաններին. «Առաջին քագաւորքն Արշակունիք, որը զիտեինն դմեկ, ով էաք կամ ուսափ էաք»:

Ուշագրավ են Փավստոս Բուգանդի «առաջին քագաւորքն Արշակունիք» և «Սերեսսի Պատմության» հատվածում պահպանված Մծուրնյան արձանագրության «զամս առաջին քագաւորացն Հայոց» արտահայտությունները: Առայժմ չպնդելով, որ սրանք միկնույն հեղինակի խոսքեր են, ուզում ենք զուգադրել միմյանց արձագանքող այս տեղեկությունները, ցույց տալու համար այն փաստը, որ Փավստոս Բուգանդը Մամիկոնյաններին համարում է առաջին հայ թագավորների ժամանակակից իշխաններ, իսկ Ագաթանգեղոսը «Սերեսսի Պատմության» հատվածում ներկայացված է որպես այդ միկնույն թագավորների ժամանակագրությունը Մծուրնում արձանագրող հեղինակ: Արդյոք սա նույնպես չի՝ նշանակում, որ Մծուրնի արձանագրության և Մամիկոնյանների զրուցի աղբյուրն ընդհանուր է:

Մովսես Խորենացին (գիրք Ա, գլ. 14) Մարաբասյան սկզբնաղբյուրի առթիվ հայտնում է, որ արքունի դիվանում պահպանված են եղել նաև գուսանական պատմություններ. «Որպէս Մար Աբաս Կատինայ պատմէ, ի փոքունց ոմանց և յաննշանից արանց ի գուսանականէն այս գտանի ժողովեալ ի դիւանի արքունեաց»: Պետք է ենթադրել, որ այս «գուսանականի» հետ կապված է նաև Ագաթանգեղոսի անվամբ շարադրված Մամիկոնյանների՝ իրապես գուսանական զրուցը («Ասեն, ասէ, գուսանք և ի մերում աշխարհին... զՄամիկն և զԿոնակն»), որի նյութը նույնպես, ինչպես երեսում է, հայկական ավանդությունը վերագրել է այն միկնույն դիվանին, որտեղից և քաղված է Մծուրնի արձանագրության նյութը («հրամանաւ քաջին Տրդատայ՝ առեալ ի դիւանէ արքունի»):

Մովսես Խորենացին ի տարբերություն «Սերեսսի Պատմության» հատվածի հեղինակի, Մամիկոնյանների գաղթի ժամա-

նակ և նշել ոչ թե Խոսրովի, այլ՝ Տրդատի թագավորության տարիները։ Սա կարելի է բացատրել նրանով, որ Խորենացուն հայտնի սկզբնապրյուրում Խոսրովի անունը փոխված է եղել Տրդատի անվամբ։ Բոլորովին զարմանալի չէ, «երբ վիպական մի գործող անձ երկուսի է բաժանվում։ Պատ և թոռ (կամ հայր և որդի), նոր ծագած անվանը սովորաբար վերագրվում են մյուս հերոսներից մեկի կամ մյուսի այս կամ այն դեպքերը։ Հասկանալի է՝ տարբեր պատումների մեջ հաճախ նաև տարբեր ձևերով և տարբեր գեղքեր»¹³⁰։ Մանուկ Աբեղյանի այս բացատրությունը լիովին վերաբերում է նաև Խոսրովի և Տըրդատի անունների փոխանցմանը։

Ծփոթի այդպիսի մի օրինակ է նաև VII դ. պատմիչ Հովհանն Մամիկոնյանի Պատմությունում պահպանված ավանդությունը Տրդատի Հյուսիսային ազգերի գեմ վարած կոփվների մասին։ Այս միենույն իրողությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունում» պատմվում են Տրդատի որդի Խոսրովի օրոք¹³¹։

Գիտնականներն անգամ Տրդատ թագավորներից մեկի անունը միաժամանակ նշել են Խոսրով¹³²։

Պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանը ցույց է տվել, որ Տիրան թագավորը կոչվել է նաև Տրդատ՝ իր պապի անվամբ¹³³։

Հետաքրքիր է նաև, որ Հովհանն Մամիկոնյանի հաղորդած «Գիտանե-Դիմետր» զրուցի պատումներից մեկում, որը հանդիպում ենք XVII դ. ժամանակագիր Դավիթ Բաղիշեցու ժամանակագրության մի տարբերակում, տեղի է ունեցել շփոթ նույնիսկ հայ և պարսիկ թագավորների միջև¹³⁴։ Հովհանն Մա-

¹³⁰ Մ. Աբեղյան. Հայոց հին դրականության պատմություն, գիրք Ա, էջ 603։

¹³¹ Անդ, էջ 407։

¹³² J. de Morgan, Histoire du peuple arménien, Paris, Nancy, 1919, p. 98 ff.

¹³³ Կ. Մելիք-Օհանջանյան, Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի, «Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ», 1947, № № 6, 7։

¹³⁴ Տեղեկագիր Հավիթ Բաղիշեցու ժամանակագրությունը, տպվ. Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան, Հատ. 2, Երևան, 1956, էջ 367, ձ. 44։

միկոնյանի պատումի համաձայն «Դեմետր և Գիսիանէ իշխանք էին Հնդկաց և եղբարք ցեղով և փախուցեալ ի թագաւորէն Հնդկաց, հալածեցան և եկին մինչև յաշխարհս յայս: Եւ իբրև եկին առ թագաւորն Հայոց Վաղարշակ եւ նա ետ զերկիրն Տարանոյ յիշխանութեամբ նոցա»¹³⁵, Սրան հակառակ, Դավիթ Բաղիշեցու տարբերակի համաձայն Դեմետրը և Գիսաննեն եկել են ոչ թե հայոց թագավոր Վաղարշակի, այլ՝ պարսից արքա Արշակի մոտ:

Այս պայմաններում, թվում է, դժվար չէ պատկերացնել, թե ինչպես է պատահէլ, որ Մամիկոնյանների գաղթի ժամանակը կապվել է մեկ Խոսրովի, մեկ Տրդատի անունների հետ:

Ժամանակակից պատմագիտությունը հայ և օտար աղյուրների քննությամբ վերջնականապես պարզել է, որ Մամիկոնյանները Հայաստանում հաստատվել են Խոսրովից և Տրդատից շատ առաջ: Այս իրողությունը մենք հաստատեցինք մի շարք պատմիչների միջոցով: Այժմ ավելացնենք երկու այլ սկզբնաղբյուր, որտեղ արդեն անվանապես հիշատակված են նախքան Տրդատն իշխած երկու թագավորներ, որոնց օրոր նշված է եղել Մամիկոնյանների գաղթը:

Այսպես. Հ գարի մատենագիր Մեսրոպ երեցի Պատմության խմբագրություններից մեկում, որը մեզ հասել է XIII դարի ձեռագիրում, գաղթը նշված է Արտաշիրի թագավորության օրոք. «Մեր նախնիքն էին թագաւորքն Ճենաստանեաց և ի գրգռութենէ երկու թագաւորացն Ճենաց, թագաւորեաց Ճենագուր փոխանակ Վահարու և փախուցեալ նախնեացն մերոց ի հօրեղօրէ իւրեանց Ճենբագուրայ և եկեալ ի Հայս և եղեն սիրեցեալք յԱրտաշրէ թագաւորէն Հայոց որպէս զնմանիս իւր եւ անուանք երկուց եղբարցն էին այսորիկ՝ Մամիկոն և Կոնակ. և անուանեցան Մամիկոննեանք»¹³⁶:

Վարդան Արեւելցին (XIII դ.) Արտաշրի փոխարեն հիշատակում է Արտաշեսին. «Մամակ և Կոնակ փախուցեալք ի

¹³⁵ Հովհանն Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատ. և առաջք. պ. գ. թեկնածու Աշ. Արքահամբանի, Երևան, 1941, էջ 107—108:

¹³⁶ Մերոպ Տահանա, Պատմութիւն մնացորդաց Հայոց և վրաց, Մադրաս, 1775, էջ 134:

թագաւորէն ձենքակրոյ եւ եկին առ թագաւորն Հայոց Արտաշես, եւ նա վասն քաջութեանց նոցա կարդեաց զօրավարս Հայոց գնդին եւ կոչեցան Մամիկոնեանք»¹³⁷:

Վարդան Արեւելցու Աշխարհացուցում հանդիպող այս տեղեկությունը, որը ծագում է Ազաթանգեղոսի զրուցից, միանալով միկնուցն ճեղինակի «Պատմություն Տիեզերականում» հիշատակվող Ազաթանգեղոսի անվան ճետ («թագաւորն Պարսից խնդրեաց զսիւնն Կճեայ, որ ի Մծբին յապարանս արքայութեան Հայոց. Կ յառնովն զտաւ զիր յունարէն, եթէ ես գրեցի Ազաթանգեղոս, զի Մեծն Արշակ ունէր չորս որդիս»)¹³⁸, զալիս է Հաստատելու ոչ միայն այն փաստը, որ Վարդան Արեւելցին ծանոթ է Եղել «Սերեսոսի Պատմությանը» կից Հատվածում պահպանված զրուցին, այլև՝ որ նրա ունեցած ձեռագրում Մամիկոնյանների զրուցը, Արշակի չորս որդիների կապակցությամբ հիշատակվող Ազաթանգեղոսի անվան ճետ միասին զտնվել է Ազաթանգեղոսի անունը կրող միկնուցն զլխում: Իսկ սա իր ճերթին նշանակում է, որ «Սերեսոսի Պատմությանը» կից Հատվածում ներկա Ա և Բ գլուխներն սկզբում բաժանված չեն Եղել առանձին վերնագրերով: (Այս մասին ավելի հանդամանորեն՝ ստոր): Նույնիսկ բնագրի մեղ Հասած լիճակում այս զլուխների կապն այնքան սերտ է, որ բանասերները դրանք միասին վերագրել են Ազաթանգեղոսին և Հրատարակել են նրա անվամբ: Այդպես են «Սերեսոսի Պատմության» րոլոր Հրատարակությունները, բացի Ստ. Մալխասյանցի Հրատարակությունից: Ֆրանսիացի արեւելակետ Վիկտոր Լանգլուան նույնպես մեղ զրադեցնող ամրող բնագրի թարգմանությունը քրանսներն Հրատարակել է Ազաթանգեղոսի անվամբ»¹³⁹:

¹³⁷ Վարդան վարդապետ, Աշխարհացոյց, բննական Հրատարակութիւն Հայկ Պէրսէրեանի, Բարիզ, 1960, էջ 53—54:

¹³⁸ ՏԵ՛ս Մեծին Վարդանայ Բարձրերդեցոյ Պատմութիւն Տիեզերական, ի բայ բնածիյեաց Մկրտչի էմին, Առակուա, 1861, էջ 46:

¹³⁹ Le Pseudo-Agathange, Histoire ancienne de l'Arménie. Extrait de l'Histoire de Héraclius par Sibéos. Traduction de l'arménien, V. Langlois, Collection..., i aris, 1867, p. 195—200.

Այսպիսով պարզվում է, որ Վարդան Արեկելցու օգտագործած ձեռագիրը նույնպես ունեցել է այն տեսքը, ինչպիսին որ ունեցել է Սիմեոն Ապարանցու ձեռագիրը, այսինքն՝ Ա. և Բ գլուխները գտնվել են Ագաթանգեղոսի անունը կրող միևնույն բնագրում:

Տեսանք, որ Մամիկոնյանների գաղթը որոշակի թագավորների հետ են կապել Մովսես Խորենացին, Մեսրոպ Երեցի խմբագրությունը, «Սեբեոսի Պատմությանը» կից Հատվածը, Վարդան Արեկելցին: Այն Հանգամանքը, որ այս աղբյուրներից յուրաքանչյուրն իր սեփական թագավորական անունն է տվել (*Տրդատ, Խոսրով, Արտաշիր, Արտաշես*), թույլ է տալիս ենթադրելու, որ Մամիկոնյանների զրուցի հնագույն սկզբնադրյուրում, այսինքն ժողովրդական ավանդությունում, որ գրի է առնված Ագաթանգեղոսի անվամբ, գաղթի կապակցությամբ որևէ թագավորի անուն Հավանաբար նշված չի եղել և՝ Տրդատ, Խոսրով, Արտաշիր, Արտաշես անուններն արդյունք են հետագա տարրեր պատումների:

Եվ իսկապես, ինչպես տեսանք, ճենացի դեսպանը Ագաթանգեղոսի հետ զրուցելիս, առանց որևէ թագավորի անուն տալու, ընդհանուր արտահայտությամբ ասում է, որ Մամիկնու Կոնակը «կնաւ և որդուվքն իրեանց և ամենայն աղսիւն իւրեանց» պարթևաց թագավորի կողմից ուղարկվեցին «յերկիրն Հայոց առ ազգական իւր արքայն Արշակունի, որ էր թագաւոր Հայաստան երկրին, ուր և սերեալ բազմացան յոյժ, և եղեն յազդ մեծ ի Մամիկայ¹⁴⁰ և ի Կոնակայ: Յայսմանէ այն է սոյարապետ»¹⁴¹:

¹⁴⁰ Ձեռագրում և տպագրում սխալմամբ՝ «Մամիկոնայ» (փխ. «Մամիկայ»):

¹⁴¹ «Յայսմանէ այն է սպարապետ» արտահայտության շուրջ գոյություն ունեն զանազան տեսակետներ: Բանասերները կարծելով, որ այդ արտահայտությունն ազավաղված է՝ նրա փոխարեն առաջարկել են մի քանի սըրբագրություններ: Այսպես, օրինակ, Ն. Աղոնցը արտահայտությունը կապելով նրան նախորդող Կոնակ անվան հետ, բնագիրը վերծանել է՝ «Կոնակայ, յայսմանէ սպարապետէ», Ն. Ակինյանը կարդացել է՝ «յայսըմ տանէ յառնէ սպարապետ» (Այս կարծիքների ամփոփումը տե՛ս ՍեՊ, էջ 172—173, ծան.

Հետաքրիբ է, որ Մեսրոպ երեցի գրքի ավելի հին ընդօրինակություններում՝ նույնպես Մամիկոնյանների գաղթը շի կապված որևէ թագավորի հետ¹⁴²: Այս ուշագրավ փաստը մեզ համար կարևոր է, այն տեսակետից, որ մենք Մամիկոնյանների գրույցի հնագույն աղբյուրը համարում ենք Բուզանդարնի կորած դպրությունները (որտեղ Ագաթանգեղոսի անունից պատմված գրույցը, Մծուրնի արձանագրության նման, ներկայացված է եղել որպես Մարաքա Մծուրնացու մատյանից՝ քաղված նյութ): Գիտենք, որ Մեսրոպ երեցը Խ գարում օգավել է Բուզանդարանից: Եթե նա Մամիկոնյանների գաղթը շի կապում որևէ թագավորի հետ՝ կնշանակի նրա ձեռքին ևդել են նաև Բուզանդարանի կորած դպրությունները, որոնց՝ մեզ հասած հատվածներից («Սեբեռոսի Պատմությունում» պահպանված) գիտենք, որ ձենաց դեսպանը Մամիկոնյանների գաղթի ժամանակը իսկապես չի կապել որևէ թագավորի հետ: Ուրեմն «Սեբեռոսի Պատմությանը» կից հատվածում հանդիպող խոսրով անունն իրոք ավելացված է XI դարի հեղինակի կողմից որպես ծանոթություն, այս ձեռվ. «Քանզի ոչ են սոքա որդիք աղքածնինն Արամենակայ, այլ են եկեալ ի ձենաստանէ յամս... Մեծին խոսրովու արքայի Հայոց»:

18): Երկու սրբագրաթյունն է, մեր կարծիքով, բխում են բնագիրը ոչ ճիշտ վերծանելուց: Այստեղ սրբագրելու կարիք չկա: «Սեբեռոսի Պատմության» հատվածի Հեղինակի օգտագործած սկզբնաղբյուրում նախօրոք հայտնված է ևդել, որ Մամիկոնյանները հասարակ մարդկի չեն, այլ՝ թագավորական ժաղում ունեն և ապա ավելացվել է, որ այդ պատճառով էլ, այսինքն՝ ազնվական ծագման պատճառով էլ Մամիկոնյանների ազգն սպարապետ է: «յայւմանէ այն (այս «այն»-ը վերաբերում է Մամիկոներից ազգին, որի մասին քիչ առաջ հայտնվում էր՝ «եղնին յազգ մեծ ի Մամիկոնայ և ի Կոնակալ») է սպարապետ»: Ա. Մատիկյանը (Անանունը կամ Կեղծ-Սեբեռոս, էջ 54) սրամըտորեն նկատել է, որ «այն է սպարապետ» արտահայտության ներկա ժամանակով գործածված լինելը նշան է այն բանի, որ արտահայտության հեղինակը ժամանակակից է սպարապետական ազգին: Սեբեռոսը, որի ժամանակ այլևս հայ սպարապետական ազգ գոյւթյուն չուներ, շեր կարող գրել «այն է (ազգն է) սպարապետ»:

¹⁴² Տե՛ս Յաղագս գարմից սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչի և Պատմութին սրբոյն ներսիսի Հայոց հայրապետի: «Սովորք հայկականք», Զ, Վենետիկ, 1853, էջ 121:

Այսպիսով, Հայկական աղբյուրները տարբեր ձևերով են տվանդել Մամիկոնյանների գրույցը:

Մովսես Խորենացուն Հայտնի եղած ավանդության համաձայն, Մամիկոնյանների նախահայրը եղել է մեկ մարդ՝ Մամգունը, այնինչ Ագաթանգեղոսի պատմածում երկուսն են՝ Մամիկ և Կոնակ: Բայց սա, ինչպես Մ. Աբեղյանն է գրել, Հատուկ է, ժողովրդական վեպին. «Չուզք անունների իրրեկ մի անձի անուն ընդունվելը, ինչպես՝ Մամ-Կոն Խորենացու մոտ, Հատուկ է ժողովրդական վեպին»¹⁴³: Ն. Աղոնցի¹⁴⁴ և Ա. Մատիկյանի¹⁴⁵ կարծիքով Խորենացին ինքն է Մամ և Կոն անունները միացրել, դարձրել մեկ անուն՝ Մամգուն, որպեսզի դրանով ավելի «օտարահնչյուն» տեսք տա նրան:

Թվում է՝ բերված փաստերը բավական են, որպեսզի ցույց տան, որ «Սերեսսի Պատմությանը» կից Հատվածում բաղվածարար պահպանված Ագաթանգեղոսի զրույցը Հանդիսանում է Մամիկոնյանների գրույցի անդրանիկ դրանցումը Հայ պատմագրության մեջ, որը զրի է առնված «Սերեսսի Պատմության» Հեղինակի ապրած ժամանակից շուրջ երկու Հարյուր տարի առաջ: Թյուրիմացարար գտնվելով VII դարում զրված «Սերեսսի Պատմության» կազմում՝ այն վերագրվել է Սերեսսին:

Դ

Արդ՝ ո՞վ է եղել Հինգերորդ դարում ապրած այն Հեղինակը, որն առաջին անգամ զրանցել է Մամիկոնյանների գրույցը, իր աղբյուրը նշելով Մծուրնի արձանագրության Հեղինակ Ագաթանգեղոսին:

Սա մեր կարծիքով այն միենալին մատենագիրն է, որին «Սերեսսի Պատմությանը» կից Հատվածի Հեղինակը վկայակոչում է նաև այլ գեպքերում և անվանում է Փամանա-

¹⁴³ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 115.

¹⁴⁴ Ածոնց Ա., Հայության պատմությանը կամ Կեղծ Սերեսսը, Վիլհելմ, 1913,

էջ 53:

կագիր, ասելով. «Քանդի զոյն ճառէ ժամանակագիրն այդ-պէս որպէս առաջիդ կայ» (ՍԵՊ, էջ 7):

Սերտ կապ կա այս ժամանակագրի և «Սեբեռսի Պատմության» սկզբում զետեղված այն առաջաբանի միջև, որտեղ հայտնվում է, որ պատմության նյութը վերցված է Մարաբ-րայի մատյանից¹⁴⁶:

Այս մատյանում գտնվել է Ագաթանգեղոսի արձանագրությունը: Ուրեմն բնական է, ենթադրել, որ Մամիկոնյանների զրուցը նույնպես պետք է գտնվեր Մարաբբայի մատյանում, որովհետև պատկանում էր միևնույն հեղինակին՝ Ագաթանգեղոսին:

Մովսես Խորենացին նույնպես «Սեբեռսի Պատմության» հատվածին արձագանքող իր նյութերի աղբյուրները կոչել է Մարաբբայան մատյան և Մարաբբային անվանել է ժամանակագիր¹⁴⁷:

Ուրեմն բավական է պարզել ժամանակագրի անձնավորությունը և ինքնրսախինքյան կապարզվի զրուցի հեղինակը:

Մինչ այդ՝ համառոտակի ծանոթանանք ժամանակագրի անձնավորության մասին հայտնված կարծիքներին:

¹⁴⁶ Ասորք կտեսնենք, որ այս առաջաբանը նույնպես պատկանում է ժամանակագրին և քաղվածարար գտնվելով «Սեբեռսի Պատմությանը» միացած հատվածին, մինչև այժմ սիալմամբ ընդունվել է որպես «Սեբեռսի Պատմության» հեղինակի, կամ էլ՝ միայն նրա առաջին դպրության հեղինակի առաջարան: Ժամանակագրի այժմ անհետ կորած գրվածքը XI դարում գտնվել է «Սեբեռսի Պատմությանը» կից հատվածի հեղինակի ձեռքում և ընդարձակ քաղվածքներով արտագրվել է ներկա հրատարակության Ա և Բ դրույներում: Արագրված քաղվածքների շարքում է նաև ժամանակագրի առողարարը:

¹⁴⁷ Մովսես Խորենացին առաջին գրքի 9-րդ գլխում ժամանակագրին այսպես է հիշատակում. «Յետ որոյ նոյն ժամանակագիր յառաջ մատուցեալ ասէ»: Ճիշտ է, Խորենացին ժամանակագրի է կոչել անմիջապես Մարաբասին, իսկ «Սեբեռսի Պատմության» հատվածի հեղինակը ժամանակագրի ասելով նկատի է ունեցել Մարաբասի մատյանը վկայակոչող հեղինակին, բայց փաստն այն է, որ Ա՝ Խորենացին, Ա՝ «Սեբեռսի Պատմության» հատվածի հեղինակը Մարաբասայան աղբյուրը նշել են միևնույն ժամանակագրի մականվամբ:

Գր. Խալաթյանցը¹⁴⁸, Ն. Ադոնցը¹⁴⁹, Ստ. Մալխասյանցը¹⁵⁰ և այլք, ելնելով Պարթևաց ապստամբության վերաբերող գրլիում (ՍԵՊ, էջ 7—11) և IV դարի հունի մատենագիր Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոն» գրքում հանդիպող որոշ ընդհանուր տվյալներից, գտնում են, որ «Սեբեռոսի Պատմությանը» կից հատվածի հեղինակը ժամանակագիր ասելով հասկացել է Եվսեբիոս Կեսարացուն: Իրականում, սակայն, Կեսարացուն հիշեցնող տեղեկությունները Պարթևաց ապրատամբությանը վերաբերող զիխում թիւ առկու են կազմում: Այստեղ օգտագործված են Հիմնականում դրիշ աղբյուրներ:

Քննարկվող զլուխը փաստորեն իրենից ներկայացնում է Պարթև Արշակունիների հարստության հիմնաղիր Արշակի գործերի պատմությունը: Այն ժամանակի, երբ որ Եվսեբիոս Կեսարացու մոտ Արշակի մասին հանդիպում են ընդամենը երկու-երեք ցարուցրիվ տեղեկություններ, Պարթևաց ապրատամբությանը վերաբերող զիխում սկզբից մինչև վերջ պատմվում է Արշակի մասին: Հստ որում այստեղ հայտնվում են Արշակին վերաբերող այնպիսի տեղեկություններ, որոնք գոյություն չունեն Եվսեբիոսի ժամանակագրությունում: Դրանցից են օրինակ՝ 1. Արշակը թագավորում է 56 տարի, 2. նա Հայոց թագավոր է կարգում իր որդուն, 3. վախճանվում է 130 տարեկան հասակում և այլն:

Եթե Արշակի երկարակիցության մասին տեղեկությունը վերցված լիներ Եվսեբիոս Կեսարացուց, ինչպես որ ենթադրում է Գր. Խալաթյանցը¹⁵¹, ապա այստեղ պետք է Արշակին հատկացված լիներ առնվազն 150 և ոչ թե 130 տարվա կյանքի տեղողություն, որովհետև ըստ Եվսեբիոս Կեսարացու՝ 132-րդ Ողոմպիասի 3-րդ տարում «Պարթևը ի մակեղոնացւոց ապստամբեցին և ի նոցանէ թագաւորեաց Արշակ, ուստի և

¹⁴⁸ Խալատյանց Գր. Армянский эпос в Истории М. Хоренского, стр. 89.

¹⁴⁹ Адонц Н., Нач. история Армении, стр. 75—76.

¹⁵⁰ ՍԵՊ, էջ 168:

¹⁵¹ Խալատյանց Գր., Армянский эпос, стр. 89.

Արշակունիք»¹⁵², և ապա՝ 163-րդ Ողոմպիասի առաջին տարին «Արշակ պարթեա զԱնտիոքոս սպանանէ»¹⁵³:

Հստ այսմ Արշակը թագավոր դառնալուց 122 տարի հետո սպանում է Անտիոքոսին: Պարզ է, որ ութ տարեկան երեխան չէր կարող ապստամբել մակեդոնացվոց դեմ և դառնալ թագավոր: Դրա համար նա պետք է լիներ առնվազն 20—30 տարեկան, ուստի և՝ իր թագավորության 122-րդ տարում՝ շուրջ 150 տարեկան:

Էլ շենք խոսում այն մասին, որ «Սեբեոսի Պատմությունում» Արշակի թագավորության տարիների գումարը 56 է, իսկ Եվսեբիոս Կեսարացու մոտ, ըստ Խալաթյանցի Հաշիվների, Արշակը Անտիոքոսին սպանում է իր թագավորության 122-րդ տարում, ուրիմն թագավորել է առնվազն 122 տարի:

Սրանք որոշակի փաստեր են, որոնք ցույց են տալիս, որ «Սեբեոսի Պատմությանը» կից Հատվածի Հեղինակի վկայակոչած ժամանակագիրը Եվսեբիոս Կեսարացին չէ:

Ն. Մառը¹⁵⁴ և Ն. Ակինյանը¹⁵⁵ ժամանակագրին նույնացրել են Մծուրնի արձանագրության հեղինակ Ագաթանգեղոսի հետ: Սակայն նրանք չեն նկատել, որ պարթեաց ապստամբությանը վերաբերող գիխում նշված են հինգ այնպիսի թագավորներ, որոնք ապրել են Ագաթանգեղոսից հետո, ուստի և նրանց մասին գրող ժամանակագիրը շի կարող նույնանալ Ագաթանգեղոսի հետ:

Ա. Զամինյանը ժամանակադիր է Համարել Մարաբա Մծուրնացուն¹⁵⁶:

Ն. Ակինյանը հետադայում վերանայելով իր կարծիքը,

¹⁵² Եվսեբիոս Կեսարացի, ժամանակականը երկմասնեայ, Վենետիկ, 1818, լ. 232:

¹⁵³ Անդ, լ. 244:

¹⁵⁴ Марр Н. Я., О Начальной истории Армении, стр. 281.

¹⁵⁵ Ն. Ակինյան, Աերիսս Կափսկոպոս թագրատունեաց և իւր Պատմութինն ի Հերակլին.—«Հ. Ամս.», 1923, լ. 403, 415:

¹⁵⁶ Մաշտոցի անվ. Մատենադարան, անհատ. արխ., թղթ, 232, գ. 101:

ժամանակագրին նույնացրել է «Դ դարի հույն Հեղինակ Փափստոս Բուզանդացու» հետ¹⁵⁷:

Սեբեռսին վերադրվող Պատմությանը կից բնագրում Բուզանդի կորած երկի հետքեր է տեսել նաև բնագրի ուսումնասիրությամբ զրազված բանասերների մեծամասնությունը (Գր. Խալաթյանց, Ն. Աղոնց, Ա. Անանիկյան, Ա. Մատիկյան, Գր. Տեր-Պողոսյան, Ա. Զամինյան և այլք), եղել են նաև այնպիսիները (Ն. Մառ, Հ. Թոփչյան, Կ. Տեր-Մահակյան և ուրիշներ), որոնք հատվածն ուղղակի նույնացրել են Բուզանդի կորած գպրությունների հետ:

Այս ենթադրությունները բխել են այն փաստերից, որոնք ապացուցում են Փափստոս Բուզանդի և «Սեբեռսի Պատմությանը» կից հատվածի միջև կոյություն ունեցող կապը:

Փաստերից կարեռագույնը վեցերորդ դարի յուղանդական պատմիչ՝ Պրոկոպիոս Կեսարացու վկայություններն են, որոնց, «Սեբեռսի Պատմությանը» կից հատվածի կապակցությամբ, առաջին անգամ ուսումնասիրությամբ անդրադարձել է Նիկողայոս Աղոնցը¹⁵⁸ և ապա՝ Ա. Մատիկյանը¹⁵⁹, Ն. Ալինյանը¹⁶⁰ և ուրիշներ:

Պրոկոպիոսն իր «Վասն պարսկական պատերազմին» աշխատության մեջ հայոց Արշակ Բ թագավորի մասին բերում է մի պատմություն (Արշակի Պարսկաստան կանչվելը, Հայկական հողի վրա ըմբոստանալը, Անհուշ բերդում բանտարկվելը և ինքնասպանությունը)¹⁶¹, որը քազված է Փափստոս Բուզանդի «Հայոց պատմության» շորորորդ դպրության ԾԲ, ԾԴ և Հինգերորդ դպրության է գլուխներից:

¹⁵⁷ Ն. Ալինյան, Սեբեռսի «Ժամանակագիրն» և Փ. Բիուզանդեալ Ա. պատմութիւնը, «Հ. Ամս.», 1938, լթ. 46, 50:

¹⁵⁸ Адониц Н., Начальная история Армении, стр. 93—95.

¹⁵⁹ Ա. Մատիկյան, Անանոն կամ Կեղծ-Սեբեռս, Վիեննա, 1913, լթ. 17—25:

¹⁶⁰ Ն. Ալինյան, Սեբեռսի «Ժամանակագիրն...» «Հ. Ամս.», 1938, լթ. 42—50:

¹⁶¹ Պրոկոպիոսի աշխատության՝ Հայոց Արշակ Բ թագավորին վերաբերուղ հատվածի թարգմանությունը տե՛ս Մատիկյանի նշված աշխատ. 18—22 էջերում:

Գիտական զրականության մեջ արդեն բազմիցս շոշափված այս փաստից բացի Պրոկոպիոսի և Փավստոսի կատի մասին է խոսում նաև մեկ այլ տվյալ, որի վրա մենք ուզում ենք առանձին ուշադրություն հրավիրել: Դա Անհուշ բերդի անվան ստուգաբանությունն է («Փ Շիշ Ն. Վ. Դ. Չ. Ջ. Ռ. Ա. Շ. Վ.») ¹⁶², ինչպես նաև այդ բերդին վերաբերող տեղեկություններն այն մասին, որ մահապատժի սպառնալիքով արգելված է եղել հիշատակել Անհուշ բերդում գտնվող կալանավորների անունը և այդ սպառնալի օրենքը խախտվել է ընդամենը մեկ անդամ՝ Հայոց Արշակ Բ թագավորի բանտարկության ժամանակ, երբ Արշակի հավատարիմ զորավարը պարսից թագավորից թույլտրվություն է խնդրել տեսակցել Անհուշ բերդում նստած իր թագավորի հետ: Պրոկոպիոսը գրում է.

Օ! նե ուտեաւ անօրա Յատիւնու ակրատու ո՞ն' ո՞ւաշ հյուտառ, ձի՞լ ևն քրօսքիք չակեմքաւ ծուր տիշ և կիմուդ չաւան նուզունաչաւ: Դու յար տւ ևնտանիւ ևրթիւնու ընչիւ: Ո՞ն էւ նորու օքուս լունդուր աշուն ընաւ, ձի՞լ ևնատու տվ ծոնքառու յի լորու էտու: Ո՞ն ծի չաւ ևն տվն էպանուրուն տայնց ործ Արքան էլաշցն: Հուաէ նե դ տվու Արքանուն իշուրի քշու ո՞ն ձիք տվ և կիմուդ չորսքիք ուշագնեան տայն ծննարւն Արքաւ էլաշցն: ¹⁶³

[«Բայց այդ խոսքերից հետո էլ նրանք չհամարձակվեցին սպառնել թագավորական արյուն ունեցող մարդուն (Կավատին — Գ. Ա.) և որոշեցին նրան պահել մոռացության (=Անհուշ) բերդում: Այսպես էր կոչվում նրանց մոտ այդ բերդը, որովհետեւ մահապատժի սպառնալիքով արգելված էր հիշատակել անուններն այն մարդկանց, ովքեր բանտարկված էին այնտեղ: «Հայոց պատմությունում» ասվում է, որ պարսիկները

¹⁶² Procopii De Bello persico 1, 5, p. 26:- Corpus scriptorum historiae Byzantinae, pars II, vol. I, Bonnae, 1833, էջ 26, ա. 4: էջ 26, ա. 9: էջ 30, ա. 22: Հմմա. Hübschmann H., Arm. Gramm. I, S.19. Անհուշ բերդի կապակցությամբ Պրոկոպիոսին հարկանցիորեն վկայակոչել են նաև Peeters P., (a début de la persécution de Sapor d' après Fauste de Buzance:- Revue des Etudes arméniennes, t. I f. I, Paris, 1920, p. 21-22, Christensen A., L'Iran sous les Sassanides, Copenhague, 1944, p. 307—308.

¹⁶³ De Bello Persico, p. 26.

միայն մեկ անգամ խախտեցին մոռացության (= Անհուշ) բերդի օրենքը հետեւյալ ձևով]:

Այսուհետև Պրոկոպիոսը շարադրում է Արշակի ինքնասպանության պատմությունը, որից հետո ավելացնում է. „, ու մեն օսն չատա տօնտօն ծղ՝ ո՞ն ՚Արտակը ու ո՞ն ՚Արթևնան սոցրագի և ներ էրրջնի, չչարդանաւ, ու ոն նօմօն տօտ ծարք ու ո՞ն ծղթից գրասրի և էնթամուս ։¹⁶⁴ [«Արդ որ ինչ ասացա զելիցն Արշակայ արքայի և թէ յայնմ ի նմին իսկ ժամանակի ընդդիմ օրինացն զործեցաւ որ զԱնյուշ բերդին է, բովանդակեալ գտանի ի «Հայոց պատմութեան», զոր ի վեր անդր յիշեցաք»] ¹⁶⁵:

Պրոկոպիոսի հիշատակած «Հայոց պատմությունում» պատմված այս բոլոր մանրամասնությունները գտնում ենք Փալստոս Բուզանդի երկում, որը Պրոկոպիոսի ժամանակ իրոք կոչվել է «Հայոց պատմություն»: Այստեղ կարդում ենք. «Եւ ասէ թագաւորն Շապուհ (Շապուհն ասում է Արշակի զորավարին). խիստ են խնդրուածք, զոր խնդրեցերդ, զի յաւորց ժամանակաց, յորմէ թագաւորութիւնս Պարսից կանգնեալ է, և բերդն այն Անյուշ (=մոռացության—Գ. Ա.) բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ եղեալ ի մարդկանէ, որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ զոք է թագաւորաց... և զու աւադիկ զանձն ի ման եղիր և յիշեցուցէր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբեք օրենք թագաւորութեանս Արեաց ի սկըզբանէ»¹⁶⁶:

Ինչպես տեսնում ենք, այստեղ առկա են Անհուշ բերդի ստուգաբանությանը և այդ բերդի օրենքին վերաբերող այնպիսի մանրամասնություններ, որոնք Պրոկոպիոսին կապում են Փալստոս Բուզանդի հետ:

Եթե այս երկու պատմիշների կապը բացահայտող փաստերի մեջ մինչև այժմ նշվել են նաև բացատրության կարոտ որոշ հակասություններ (Շապուհ—Բակուր և այլն), ապա մեր մատնանշած հատվածը զերծ է այդպիսիներից: Ընդհակառա-

¹⁶⁴ Անդ, էջ 30:

¹⁶⁵ Թրգմ. Ա. Մատիկյանի նշվ. աշխ., էջ 22:

¹⁶⁶ Փալստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 310:

իր, այստեղ կապը բացահայտող փաստերն այնքան հստակ էն, որ իրավունք են տալիս իրենց միջոցով հաստատելու նաև մնացյալ հատվածների ընդհանրությունը, անկախ նրանցում տեղ գտած բացատրելի տարբերությունների, որոնք կարող են լինել հետագա դարերի ազավաղումների արդյունք:

Պրոկոպիոսից առաջ ապրած ոչ մի հայ կամ այլազգի մատենագիր (բացի Փավստոսից) հայտնի չէ, որից օգտված լիներ Պրոկոպիոսը մեր քննարկած հատվածը շարագրելիս: Եվ քանի որ նա ինքն իր սկզբնաղբյուրը կոչում է «Հայոց պատմություն», մնում է ընդունել, որ այդ Պատմությունը իրոք Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունն» է:

Այս իրողության օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ ի տարբերություն մյուս հռոմեա-բյուզանդական աղբյուրների, որոնք «Մոռացության բերդի» տեղը նշում են Ազարայում (Ամմիանոս Մարցելինոս¹⁶⁷), Պրոկոպիոսը հետեւյում է Փավստոս Բուզանդին և Անհուշ բերդը նույնացնում Արշակի բանտարկության վայրի հետ, որը, ըստ Փավստոս Բուզանդի, գտնվում էր Խուժաստանում, «զի յԱնդմշշն բերդի կայ յերկրին Խուժաստանի»¹⁶⁸:

Իր օգտագործած սկզբնաղբյուրը Պրոկոպիոսն անվանում է «Հայոց պատմություն», առանց Փավստոս Բուզանդի անունը տալու Բայց մենք գիտենք, որ հինգերորդ դարում «Հայոց պատմություն է» կոչվել հատկապես Փավստոս Բուզանդի Պատմությունը: Ղազար Փարագեցին իրենից առաջ գրված պատմական երկերը թվարկելիս միայն Փավստոս Բուզանդի մասին է ասում, որ նրա գիրքը կոչում են Հայոց պատմություն. «զոր անուանեալ կոչեն զանուն գրոցն Հայոց պատմութիւն»¹⁶⁹: Բացի դրանից, Պրոկոպիոսն այնպիսի հարազա-

¹⁶⁷ Անհուշ բերդի գտնված վայրի մասին մանրամասն մատենագիտական տեղեկություններ կարելի է գտնել Գաբրիել Դեստունիսի մոտ (Прокопий Кесарийского История войн, кн. I. СПб, 1876, стр. 63—66).

¹⁶⁸ Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1914, էջ 256. Հմմտ. նաև 260, 262:

¹⁶⁹ Ղազ. Փարագեցի, Պատմութիւն Հայոց, Տփիսիս, 1904, էջ 1: Հմմտ. Մատիլյան, նշվ. աշխ. էջ 24:

տությամբ է վերաբռնում Արշակի Պարսկաստան գնալու և Անհուշ բերդում զոհվելու պատմության մանրամասնությունները, որ կասկած չի թողնում իր հիշատակած «Հայոց պատմության» և Փափստոս Բուզանդի «Հայոց պատմության» նույնության միջև:

Պրոկոպիոս Փափստոս Բուզանդի անվան փոխարժեն նշել է դրիփ անունը: Հնումն սովորություն է եղել երբեմն գրքերը կոչել միայն անվամբ, առանց հեղինակների անունների: Այդպիսին են կոչվել «Գիրք Գրիգորիսի» (Արքաթանգեղոս), «Պատմութիւն Հայոց» (Փ. Բուզանդ)¹⁷⁰, «Պատմութիւն Աղուանից» (Մ. Կաղանկատվացի), «Պատմութիւն Ներսէսի» (Մեսրովպ Վայոցձորեցի) և այլն:

Փափստոս Բուզանդի երրորդ դպրությանը նախորդող խոստաբանության մեջ գիրքը կոչված է «յիշեցուցիչ» պատմութեանց ազգացն Հայաստան աշխարհին որդուց Թորգոմայ¹⁷¹, Զորրորդ դպրությունը նույնպես կոչվում է «Ժամանակագիր

¹⁷⁰ Անհետաքրքիր չի լինի նշել, որ «Հայոց պատմություն» կոչվող մի գիրք էլ գտնվել է XI դարի վրաց պատմի Լեռնատիոս Ռուխեցու (Լեռնատի Մրովելի) ձեռքին: Սա «Վրաց թագավորների և նախահայրերի պատմություն» գրքում խոսելով Տրդատի քաջությունների մասին, իր սկզբնաղբյուրը կոչում է «Հայոց Պատմություն» (տե՛ս Լեռնատիոս Ռուխեցու երկի հատկութական թարգմանություն՝ կատարված Մելիքսեթ-Բեկի Կողմից՝ «Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին», Երևան, 1934, հ. Ա., էջ 167): Որոշ բանասերներ Լեռնատիոսի նշած «Հայոց պատմությունը» նույնացրել են Արքաթանգեղոսի Պատմության հետ (Յացօծնօցովո օշ, մշշո յահուղով և օւսւորհոօմ թշշրհոօմ) (Վ- ԽVIII և. և. տօնութօօ, 1916, էջ 125: Մելիքսեթ-Բեկ, նշվ. և այլն), չնկատելով որ Ռուխեցին Արքաթանգեղոսի պատմությունն համար օգտագործում է բոլորովին այլ անուն: «Վկալության գիրք» կամ «Հայոց պարձի պատմություն» (տե՛ս Մելիքսեթ-Բեկի թարգմանությունը, էջ 172): Արդյուք Բուզանդու հիշատակած «Հայոց պատմությունը», որը վերաբերել է Հայոց առաջին թագավորներին, ինչ-որ կապ չի ունեցել Բուզանդարանի կորած դպրությունների հետ:

¹⁷¹ Փափստոս Բուզանդացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ Ե: Ընդգծված բառերը լավագույն ապացույց են այն բանի, որ Բուզանդարան ժողովածուն կազմողն ապրել է Բուզանդարանում նկարագրված դեպքերից (IV դար) շատ ավելի ուշ. այլապես՝ նա IV դարի պատմությունը չէր կոչի «յիշեցուցիչ» պատմությանց»:

մատեանք տան որդւոց թորգոմայ աշխարհին Հայոց»¹⁷²: Հինգերորդ դպրության վերնագիրն է՝ «Ժամանակագիր մատեանք տան որդւոցն թորգոմայ իշխանին (կարդա՝ «աշխարհին»¹⁷³—Գ. Ա.) Հայոց»¹⁷⁴: Իսկ վեցերորդ դպրությանը՝ «Ժամանակագիր մատեանք»¹⁷⁵: Այսպիսով, բոլոր դպրությունների վրա կրկնված է եղել «Ժամանակագիր մատեանք Հայոց» բառերը, որոնք ուրիշ բան չեն կարող նշանակել, բան՝ «Հայոց պատմություն»: Բայտ որում «Մատեան» բառը անպայման մատնանշել է, գրավոր պատմություն և այդ գրավոր իմաստի հետքերը պահպանվել են նաև Պրոկոպիոսի հիշատակած վերնագրում՝ „, ՚ տես՝ ’Ազրէնց օջախն՝ ,որը նշանակում է գրավոր պատմություն»¹⁷⁶:

Բուզանդի գրքում ամենուրեք, որտեղ զրված է՝ «Ժամանակագիր մատեանք Հայոց» գրանից առաջ նշված է բոլորի համար մեկ ընդհանուր խորագիր. «Բուզանդարան պատմութիւնք»:

Սա նշանակում է, որ Բուզանդարանն ընդհանուր վերնագիր է եղել բոլոր դպրությունների համար և որ՝ «Ժամանակագիր մատեանք Հայոց»-ի մեջ հասած մասը կապված է «Բուզանդ» անունով (կամ՝ «բուզանդ» բառով) ստեղծված Փափստոս Բուզանդ անձնանվան հետ, որի հետեւանքով և Պատմությունն այժմ հայտնի է սրբես Փափստոս Բուզանդի Բուզանդարան¹⁷⁷:

¹⁷² Փափստոս Բուզանդարացի, էջ 101:

¹⁷³ Հմմտ. Հ. Գարեգին վ. Խանապետյան, Աղղազրութիւնք աղղային մատենագրաց, Վեհափոխիկ, 1907, էջ 102:

¹⁷⁴ Փափստոս Բուզանդարացի, էջ 277:

¹⁷⁵ Անդ, էջ 389:

¹⁷⁶ Հմմտ. Ա. Մատիկյան, նշվ. աշխ., էջ 23, 24:

¹⁷⁷ «Բուզանդարան» բառը բացարելու ուղղությամբ կատարված փորձերից առավել կարևորներն են Ն. Բյուզանդացու («Քննասէր, Ա, Ստոքհոլմ, 1887, էջ 21–22), Ստ. Մալխասյանցի (Փափստոս Բուզանդի աշխարհաբար թարգմանությունը, Երևան, 1947, էջ 309–310) և Հ. Անասյանի (Բուզանդարանի ոռուսերեն թարգմանությունը, Երևան, 1954, էջ 5) փորձերը, որոնց ընդհանուր հայտարարն այն է, որ «Բուզանդարանը» հավաքական իմաստ ունի:

Ղաղար Փարպեցու և Պրոկոպիոս Կեսարացու վկայություններից երկում է, որ Փավստոս Բուղանդի անոնը կրել են միայն մեղ հասած դպրությունները, իսկ նախորդ երկու դըմրությունները ներկայացված են եղել ուրիշ հեղինակների անուններով։ Դրանով պետք է բացատրել այն փաստը, որ Փարպեցին Փավստոս Բուղանդի Պատմություն ասելով հասկացել է միայն մեղ հասած դպրությունները; Իսկ Պրոկոպիոսը, որ օգավիլ է նաև նախորդ դպրություններից, բավականացել է ամբողջ «Բուղանդարանի» համար ընդհանուր «Հայոց պատմություն» արտահայտությամբ և այն չի կապել միայն մի հեղինակի՝ Փավստոսի անվան հետ։

Բուղանդարանի վեց դպրություններից բաղկացած լինելու մասին վկայող փաստ պետք է համարել նաև հենց «Հայոց պատմություն» խորագիրը։ Մեզ հասած շորս դպրություններն ընդգրկում են ընդամենը 50 տարվա պատմություն։ Պարզ է, որ այսպիսի մի հատվածական նկարագրություն չէր կարող կոչվել «Հայոց պատմություն»։ Վեց դպրությունների մասին և վկայում նաև մեր նշած «Ժամանակագիր մատեանք տան որդուց Թորգոմայ աշխարհին Հայոց» խորագիրը, որը դարձյալ չէր կարող վերաբերել միայն 50 տարվա պատմությանը, այլ մատնանշում է Հայաստանի պատմության ընդհանուր ժամանակագրությունը, սկսած հին ժամանակներից։ Եվ իրավացի է Ա. Մատիկյանը, որի կարծիքով առաջին «Հայոց պատմությունը» եղել է Բուղանդարանը (և ոչ՝ Խորենացին)՝¹⁷⁸

Պրոկոպիոսի օգտագործած Բուղանդարանի (որը նա կոչում է «Հայոց պատմություն») առաջին դպրությունների բովանդակությունը¹⁷⁹ համընկնում է «Սեբեռոսի Պատմությանը» կից հատվածում պահպանված Պարթևաց ապստամբությանը վերաբերող գլխին։ Իսկ սա իր հերթին, ինչպես տեսանք, բաղված է ժամանակագրից։ Այսպիսով, Պրոկոպիոսի միջոցով

¹⁷⁸ Ա. Մատիկյան, Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930, էջ 8։

¹⁷⁹ Procopius, vol., III, De Aedificiis, III, 1. Մեզ հետաքրքրող հատվածի գրաբար թարգմանությունը տե՛ս Ա. Մատիկյանի «Անանունը կամ Կեղծ-Սեբէռոս» աշխ., էջ 22—23։

պարզվում է, որ ժամանակիրը նույն ինքը Բուզանդարանի հեղինակն է:

«Սեբեսոի Պատմությանը» կից հատվածից երեսում է, որ Բուզանդարանի առաջին գլուխությունները (կամ նրանցից մեկը) կրել են Մարաբբա Մծուրնացու անունը («Անդ Հայելով ի մատեանն Մարաբբայ փիլիսոփայի Մծուրնացոյ...»):

Ինչպես տեսանք՝ Աղաթանգեղոսի արձանագրությունը, Մամիկոնյանների գրուցը, Պարթևաց Արշակ թագավորին վերաբերող հատվածը և առհասարակ «Սեբեսոի Պատմությունում» պահպանված երկու առաջին գլուխների նյութը ամրողապես վերցված է Մարաբբայի մատյանից։ Եթե նկատի ունենանք, որ «Սեբեսոի Պատմությունում» պահպանվել է միայն Մարաբբայի մատյանի համառոտագրությունը, քաղվածքներ նրանից՝ ապա կարելի է պատկերացնել, թե որքան ընդարձակ ծավալ պետք է ունենար այս մատյանը առաջին երկու դպրություններում։ Հետեաբար հնարավոր է, որ այդ ծավալուն զիրքը ներկայանար իր սկզբնաղբյուրի՝ Մարաբբա Մծուրնացու անվամբ, ինչպես որ երրորդից վեցերորդ դրաբությունները ներկայացված են Փավստոսի անվամբ։

Արդ՝ նշենք Բուզանդարանի առաջաբանի և ավետարաններից առաջ զետեղված եկամբերոսի առ Կարպիանոս թղթի հետեւ հատվածների նմանության փաստը։

Ավետարան

Բուզանդարան

Կանոնս տասն թուով զրոշմեցի...
Ի վերայ իւրաքանչիւր չորեցունց
աւետարանացն թիւ ինչ առընթեր
կայ ըստ իւրաքանչիւր մասին...
մինչև ցկատարած գրոցն։

Կարգօք, թուօք և համարօք
կանոնեալ զրոշմեալ նկարեցի
իւրաքանչիւր գիւտվք։ Եւ չորս
խոստմուն չորից չորեցունց
զպրութեանցս յիւրաքանչիւր
գլուխս պատուաստեցի մինչև ի
կատարած սորին։

Այստեղ գործ ունենք երկու սկզբնաղբյուրների հավանական կապի հետ։ Այդ կապը ցուց տվող պակաս նշանակալի փաստ չէ նաև «Ավետարան» և «Բուզանդարան» բառերի համանման կառուցվածքը։

Հայ մատենագրության որոշ հուշարձաններում պահպանվել են տեղեկություններ, որոնց համաձայն Բուզանդարանը

Հնում հայտնի է եղել նաև «Հայոց մնացորդաց Պատմութիւնք» անունով։ Սա ևս Բուզանդարանի և Ս. Գրոց աղերսը ցույց տվող մի կարևոր փաստ է։ Հայտնի է, որ Բուզանդարանը գրվել է Հայոց պատմությանը վերաբերող մի քանի սկզբունակում է այնպիսի նյութեր, որոնք նախորդ պատմիշները բաց են բողել։ «Է ինչ մեր պատմութիւն,—դրում է Բուզանդարանի հեղինակը երրորդ դպրության առաջարանում,—որ առաջին է, և է ինչ, որ վերջին է, իսկ որ միջին ինչ եղի, այն ի ձեռն այլոց գրել գրեցաւ»։ Ուրեմն ինչ որ «ի ձեռն այլոց գրեցաւ»՝ հեղինակը դրանց չի անդրադարձել, այլ զրել է ուրիշների կողմից շգրված պատմությունը։

Ճիշտ միենույն ծրագիրն է հայտնված եղել նաև Բուզանդարանի կրտած դպրություններում, որոնց առաջարանը բազվածարար պահպանվել է՝ «Սեբեռոսի Պատմությանը» կից հատվածում։ Այստեղ կարդում ենք. «Եւ եղեւու ի կամայական պիտոյից վարժ խուզակի զանստորագրեալ ժամանակ և զնախնի բացացն ձեռնարկելով գրոշմել վիսպասանութիւնս, զիմն յիշատակել զառասպելս, և ի նոյն շարագրելով ասացից զառ ի յատպայսն եղելոյ...»¹⁸⁰։ Այստեղ ևս հեղինակը կրկնում է Բուզանդարանի վերոհիշյալ այն միտքը, որ ինքը նկարագրելու է ուրիշների կողմից չնկարագրված ժամանակը («զանստորագրեալ ժամանակ»)։

Ս. գրոց Մնացորդաց գրքերը նույնպես, որ «Հայոց մնացորդաց պատմութեանց» (Բուզանդարանի) նման են կոչվում, գրված են Հին կտակարանի մյուս գրքերից համեմատաբար ավելի ուշ և պարունակում են այդ գրքերից դուրս մնացած պատմական հիշատակարանների մնացորդներ, որից և ստացել են «Մնացորդաց գիրք» անունը¹⁸¹,

¹⁸⁰ ՍեՊ, էջ 1:

¹⁸¹ Անհետաբրեիր չէ երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի ձեռագրերից մեկում հանդիպող այս հիշատակարանը. «Տեսուն Սահակա կաթողիկոսի զՄնացորդը յստոյ ամենայն մարգարէից է թարգմանեալ» (Մե՛ս Գիրք մնացորդաց բատ հնագոյն հայ թարգմանութեան, զառաջինն ած ի լոյս ...Գրիգոր Խալաբեանց. Մոսկվա, 1899, էջ 115), որը միաժամանակ մատ-

Մեզ թվում է, պատահական չէ նաև այն, որ Հին կտակարանի Մնացորդաց գրքերը եբրայերեն սկզբնագրում կոչված են ճիշտ այնպես, ինչպես որ Բուզանդարանը՝ այսինքն՝ երկուսն էլ կոչվում են «Ժամանակագիր մատենք» եբրայերեն՝ «Դարիրի հայամամ»¹⁸²:

Եվ այսպես, Բուզանդարանի հեղինակը, նույն ինքը՝ ժամանակագիրը, Ս. գրոց օրինակով իր գիրը ներկայացրել է որպես ժողովածու, աւարբեր հեղինակների անուններով (Ագաթանգեղոս, Մարաբբա Մծուրնացի, Փավստոս Բուզանդ)՝¹⁸³:

Նանշում է Մնացորդաց գրքերի թարգմանչի՝ Սահակ Պարթե կաթողիկոսի անունը:

¹⁸² Տպագրական բարդություններից խուսափելու համար եբրայերեն բառեր բերում ենք հայերեն տառապարձությամբ: «Դարիրի հայամամ»-ի եբրայերեն գրությունը վերցրել ենք Հին կտակարանի եբրայերեն բառարանից (Carl Stegfried und Bernhard Stade, Hebräisches Wörterbuch zum Alten Testamente, Leipzig, 1893, p. 134, 909): Եբրայերեն բնագրում «զարիրի» բառը «Ժամանակագիր մատեան» իմաստով (Կամ, ինչպես Աստվածաշնչի հայերեն թարգմանիչներն են կոչել, «Գիրք բանից աւուրց») զործածված տե՛ս նաև երրորդ գիրք թագավորությանց, գլ. ԺՌ, տոն 29 (Հմմտ. Hebräisches Wörterbuch, p. 134) և այլոր:

Մնացորդաց գրքի ասորերենից կտարգած թարգմանությունում (Գիրք Մնացորդաց..., ած ի լոյս... Գրիգոր Խալաքեանց) խնդրու առարկա արտահայտությունը տարբեր է Յոթանասնից կոչված օրինակից կտարգած հայերենի թարգմանությունից: Այս մասին տե՛ս թ. Ա. Գևորգեան, Խորենացին է Աստուածաշնչի Մնացորդաց գրքերի առաջին հայ թարգմանողը՝ ասորերէն բնագրից:—«Բագմամիպ», 1905, էջ 427: Հայ թարգմանիշները՝ «Մնացորդաց գրքի» եբրայերեն խորագիրը տառապարձության են ենթարկել նաև «զիրբը հայամիմ», «զարբեիսովմին», «զարարախմինայն» և այլ ձևերով: Տե՛ս Աստուածաշնչն Հնոց և Նորոց Կտակարանաց, Ամստերդամ, 1666, էջ 402, նաև՝ Յերոնիմեայ վասն բան և երկուս գիրս առ ի հերթայեցւց զպատմութիւնուն բամանելոյ: Գերմաներեն—հայերեն՝ ներածութեամբ եւ հայ—լատին հնագրով հրատարակեց Հ. Արիստակս Վարդանեան, Վիեննա, 1920:

¹⁸³ Ինչպես երեսում է, Բուզանդարանի հեղինակը պատահարար չէ զործածել հայերենի համար անսպիր Ազաթանգեղսս, Մարաբբա, Բուզանդ անունները: Սրանցից յուրաքանչյուրի ետևում ըստ երկույթին թաքնված է մի ինչ՝ որ իմաստ: Գիտենք, որ «Ազաթանգեղոս» նշանակում է «բարի հրեշտակ», իսկ «Բուզանդը» և «Փավստոսը»՝ «զրուց» (ըստ Ստ. Մալխասյանցի): և «երջանկություն» (ըստ Նորայր Բյուզանդացու): Հավանաբար մի իմաստ պետք է սնննա նաև Մարաբբա անունը: Համեմատիր, օրինակ,

Հայտնի է, որ հայ դպրության առաջին դարերում մեծ ծավալ ունեցող ժողովածուները միանույն կազմի մեջ տեղավորելը անհնարին էր: Տառերի խոշոր գրությունը և մագաղաթը գրքերի ծավալը կհասցնեին անզործնական մեծության: Դրա համար էլ սովորություն է եղել ժողովածուներն ընդօրինակել առանձին-առանձին հատորներով: Դա վերաբերել է նաև Աստվածաշնչին, որը միայն համեմատաբար ավելի ուշ ժամանակների ձեռագրերում ենք տեսնում ընդօրինակված միանույն կազմի մեջ: Այս տեսակետից էլ անհավանական չի լինի ենթադրել, որ Մարաբբայի մատյանը և Փավստոս Բուղանդի դպրությունները, միանույն ժողովածուի մասեր լինելով հանդերձ, ընդօրինակված են եղել առանձին հատորների մեջ: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Ղազար Փարպեցին օգտվելով Փավստոս Բուղանդի գրքերից (որը նա կոչում է «Հայոց պատմություն»), անծանոթ է մնացել Բուղանդարանի նախորդ երկու դպրություններին, որոնք հավանաբար ընդօրինակված են եղել առանձին կազմի մեջ և չեն դաշնակել Փարպեցու ձեռքի տակ:

Մարաբբայի մատյանը Բուղանդարանի կազմում է դտնվել նաև X դարի մատենագիր Մեսրոպ Վայոցձորեցու ունեցած ձեռագրում: Մամիկի և Կոնակի մասին այս հեղինակը հայունում է այնպիսի տեղեկություններ, որոնց մի մասը գալիս է Բուղանդարանի մեջ հասած դպրություններից, իսկ մյուս մասն արձագանքում է «Սեբեռոսի Պատմությունում» պահպանված Մարաբբայան մատյանին: Այսպես՝

Բուղանդարան (դպր. Ե, գլ. ԱԷ),

Մարաբբայան մատյան (ՄԵՊ,

էջ 12—13)

Մեսրոպ Վայոցձորեցի

(Սոփերք հայկականք, Հ. Զ.

էջ 120—21)

Մեր շեմմ իսկ լեալ ձեր ծառայք այլ ընկերք ձեր... Մեր նախնիքն լեալ կին բազաւորք աշխարհին ձենաց... Փախստական լեալ Մա-

Ազգն Մամիկոնելից ոչ են կացեալ

ծառայք ձեր, այլ՝ ընկերք: Եւ

նախնիք մեր՝ բազաւորքն ձենաց...

Փախեան երկու որդիք թագաւորին

ակաթանգեղս («բարի հրեշտակ») բառը հիշեցնող արարեին մարհաբառ. («բարի լուր», «բարի գալուստ») բառը, որի նման մի, անհայտ ձագումով բառ կարող է բնկած լինել Մարաբբայի հիմքում:

միկն և Կոստակն գնան առ արքայն
Արշակունի... Եւ եղին յադք մեծ
ի Մամիկայ և Կոստակայ...

ձենաց... Եւ եկեալ բնակեցան
յաշխարհիս Հայոց... որոնց անու-
անք նոցա, անդրանկանն Մամ և
երկրորդին Կոն յորչորչիր և ի հո-
գան անուանեցան Մամիկոնը...

Ինչպես տեսնում ենք, ընդդված տողերը քաղված են մեզ
հասած Բուղանդարանից, իսկ շարունակությունը համապա-
տասխանում է «Սեբեոսի Պատմությունում» պահպանված
հատվածի բովանդակությանը:

Մարաբբայի անվամբ ներկայացված դպրության կորուստը
տեղի է ունեցել ոչ այնքան էլ վաղ ժամանակներում։ Տեսանք,
որ նրանից օգտվել են Մովսես Խորենացին (V դ.), Պրոկոպիոս
Կեսարացին (VI դ.), «Աշխարհացոյց»-ի հեղինակը (VII դ.,
Ճենաստանը նկարագրելիս), Մեսրոպ Վայոցձորեցին (X դ.),
«Սեբեոսի Պատմությանը» կից հատվածի հեղինակը (XI դ.) և Վարդան Արևելցին (XIII դ.): Հնարավոր է, որ Մա-
րաբբայի մատյանից օգտված լինեն նաև բուն «Սեբեոսի
Պատմության» հեղինակը (VII դ.)¹⁸⁴, Թովմա Արծրունին
(X դ.)¹⁸⁵, վրաց պատմիչ Լեոնտիոս Ծուխսեցին (XI դ.) և ու-
րիշներ։

Նրա գոյության մասին տեղեկություն ենք գտնում նաև
XVIII դարի սկզբներին կազմված մի մատենագիտական ցան-
կում, որը գտնվում է Մաշտոցի անվան Մատենագրանի

¹⁸⁴ Գր. Խալաթյանցը (Արմ. առօս Յակոբ Մ. Խօրենցոց, 1896, տր. 58—105). Ստ. Մալխասյանցը (Սեբեոսի Պատմությունը և Մ. Խորենա-
ցի, թիֆլիս, 1899), Ն. Ակինյանը (Սեբեոս Եպս. Բագրատունեց, Աղգ. մա-
տենագրան, Վիեննա, 1924, էջ 66—72) համոզիլ փաստերով ցույց են
տվել բառապաշտի և ստեղծագործական հնարքների ընդհանրությունը մի
կողմից Մարաբբա Մծուրնացու և Փավստոսի մատյանների, մյուս կողմից՝
բուն «Սեբեոսի պատմության» միջև, որից երևամ է, որ վերջինիս հեղինակն
իր ձեռքի տակ սննեցել է Բուղանդարանի նաև կորած դպրությունները, որոնց
բառապաշտի և ոճի ապդեցության տակ է ինքը:

¹⁸⁵ Հմատ. Թովմա Արծրունի, Պատմություն տանն Արծրունեաց, Պետեր-
րուրգ, 1887, էջ 23 («Շուն դու, և Երամակ շանց, որ գինի քո ասդեալ սա-
հին») և Ուելլ, էջ 4 («Շուն ես դուն և յերամակէ շանց՝ դու և ժողովուրդ
քո»):

№№ 2271 և 2220 ձեռագրերում և կրում է «Պատմագիրք Հայոց» վերնագիրը¹⁸⁶:

Այս ցանկում Հանդիպող տեղեկությունը Բուզանդարանի մասին շատ կարեւոր է, ուստի փոքր-ինչ Հանգամանորեն անդրադառնանք ցանկին:

Սա մի արժեքավոր աղբյուր է, որի հեղինակը երբեմն Հայունում է այնպիսի տեղեկություններ, որոնք այլուր չեն պահպանվել: Մենք արգեն նշել ենք («Բանբեր Մատենագարանի», № 4, 1958, էջ 72), «Պատմութիւն վասն ազգին նետողաց» երկի (XIII դ.) իրական հեղինակի անվան (Գրիգոր Պատմիչ) այս ցուցակում պահպանված լինելու փաստը: Միայն այստեղ է պահպանվել նաև VII դարում գրված «Ժամանակակից արքականացության» հեղինակ Անանիա Շիրակացու անունը¹⁸⁷:

Թե որքան ստուգ են երկու տեղեկությունները՝ ցուց տվեցին հետագա բանասիրական ուսումնասիրությունները, որոնք սկարզեցին, որ նշված երկերն իսկապես պատահանում են այն

¹⁸⁶ «Պատմագիրք Հայոց» խորագիրը կրող ցանկն առաջին անգամ տպագրվել է «Ակդարաբառ» (Մազրաս, 1795, էջ 188—192), ապա՝ Գ. Գալեմբարյանի «Պատմութիւն Հայ լրագրութեան» գրքում (Հա. Ա. Վիեննա, 1893, էջ 205—210), ապա «Հանդէս ամսօրեալ»-ում (1952, էջ 55—63): Սրա արտասպարթյանը տե՛ս Ն. Ակինյան, Բագէջի պարուցք, Վիեննա, 1952, էջ 294—307), և Հ. Անասյանի՝ Հայկական մատենագիտությունում (Երևան, 1959, էջ LIII—LVII): Այս ցանկից ստորև բերված օրինակները տեսնել նշված հրատարակությունների էջերում:

¹⁸⁷ Մաշտոցի անվան Մատենագարանի № 6228 ձեռագրում (XIX դ.) նույնպես «Ժամանակագրության» հեղինակ է, նշված Անանիա Շիրակացին (թ. 79ա): Բայց այս տեղեկությունը գրիպել է «Ժամանակագրության» հրատարակուների (Բ. Սարգսյան, Աշ. Արքահանցյան) ուշագրությանից: Ի գեպ՝ № 6228 ձեռագրի մասին բանասիրության մեջ կոյտաթյան անհետող կարծիքը (Աշ. Արքահանցյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 104, 142, 357; Հ. Անասյան, Հայկական մատենագիտության, Հ. Ա., էջ 745, 754, 757—758) ենթակա է ճշգրտման: Զեռագիրը սխալմամբ համարվել է ընդօրինակություն Հայկական ամենահին (շուրջ Հազարամյա) թղթյա ձեռագրից (Մաշտոցի անվան Մատենագարան, ձ. № 2679), սակայն ուսումնասիրությունից պարզվում է, որ այն ընդօրինակված է Վենետիկի Մխիթարյան Մատենագարանի № 218 (739) ձեռագրից, որը 1835 թ. ար-

մատենագիրներին, սրոնց նշել է «Պատմագիրք Հայոց»-ի հեղինակը:

Հանձին «Պատմագիրք Հայոց» ցանկի հեղինակի մենք ունենք հայ մատենագրությանը քաջատեղյակի մի մասնագետ¹⁸⁸: Բնագիրը նշելիս նա աղբյուրագիտական վերլուծության է ենթարկում դրանք: Այսպես, օրինակ, Ագաթանգեղոսի Պատմությանն անդրագառնալիս նա Դաշանց թղթի մասին գրում է. «Բայց դաշանցն սիրո և միաբանութեան զգոյշ պարտ է լինիլ, զի ի հին օրինակսն ոչ ուրէք դտանի, այլ ի նորագոյնս՝ աղթարմայից բազում ինչ ըստ իւրեանց ախորժակացն շարադրեալ խորամանկութեամբ երկիր»: Եվ իսկապես, ինչպես Հայանի է, Դաշանց թուղթը հետագա ժամանակի ներմուծում է Աղաթանգեղոսի պատմության մեջ:

Եսիիփան Կիպրացաւ երկերի կապակցությամբ ցանկի հեղինակը հայտնում է. «Բայց գիտելի է, զի գիրք մի ևս անուամբ սորին գաանի խառն ճառից ընդ պատմութեանցս, յորս գաանին բանք հերձուածողաց և շաղփաղիութիւնք յոլովք»:

Այնպիսի գեպքերում, երբ հեղինակը հայ մատենագիրների այս կամ այն երկը նշելիս՝ դրանք չի ունեցել ձեռքի տակ կամ առհասարակ չի տեսել, այդպիսի գեպքերում նա նշում է այն աղբյուրը, որտեղից քաղել է տեղեկությունը: Օրինակ, գիտենք, որ Մովսես Խորենացին երկրորդ գրքի լի զիխում հայտնում է, որ իրենից առաջ ուրիշները գրել են առաքյալների պատմությունը («յառաջադոյն սրեալ յայլոց... կատարումն Առաքելոյն և որք բնդ նմա»): Այս գիրքը, սակայն, մեզ չի հասել, դրա համար էլ «Պատմագիրք Հայոց»-ի հեղինակը գիրքը նշելու հանդերձ գրում է, որ այդ տեղեկությունը ինքը քաղել է! Մովսես Խորենացուց. «Պատմութիւնք սրբոց առաքե-

աղբություն է (Հմմտ. Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց Մատենադարանի Միհթարեանց ի Վենևտիկ, հա. 2, յօրինեց Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1924, լ. 271):

¹⁸⁸ Ն. Ակինյանը «Պատմագիրք Հայոց» ցանկի հեղինակ է համարել XVII դ. անվանի գիտնական Վարդան Բաղիշեցուն: Սակայն մենք ցուց ենք այս գիտել («Բանրեր Մատենադարանի», № 4, 1958, լ. 72—75), որ այս ենթագրությունը հիմք չունի:

լոցն, որք ի Հայս կատարեցան, ուրպէս վկայի՝ Մովսէս Խորենացին՝ Բ հատոր, ԱԱ¹⁸⁹ զլուխ»:

Այդպիսի մի տեղեկություն է նաև Բուզանդարանին վերաբերող տվյալը, որից իմանում ենք, որ «Պատմագիրք Հայոց»-ի Հեղինակին Հայտնի եղած Բուզանդարանը բաղկացած է, եղել վեց դպրություններից: Այսպես. «Բիւզանդ¹⁹⁰, որ զեղեալ իրս պատմէ Հայոց աշխարհիս իբր զմնացորդս նախկին պատմագրաց. Հատորս Զ (=վեց)»: Եթե վեց դպրություններից որեւէ մեկը պակաս լիներ՝ ցուցակի Հեղինակը կնշեր այդ: Ինչպես տեսանք, նա Դաշանց թղթի մասին գրում է. «Ի հին օրինակսն ոչ ուրեմ գտանի»: Մովսէս Խորենացու և Եղիշեի երկերի կապակցությամբ նույնպես նա Համապատասխան ծանոթագրություններ է կատարում: Այսպես, Եղիշեի Պատմության նրա ունեցած օրինակը թերի է եղել, որից ելնելով նա գրել է. «Եղիշէ վարդապետ, որ է Պատմութիւն նահատակութեան սըրբոց Ղեռնդեանցն և Վարդանանցն: Թէպէտ և զպատերազմունսըն սրբոյն Վարդանայ որ նախ քան զնահատակին ըստ պատմագրաց՝ այժմ ոչ գտանի ուրեմ»:

Խորենացու գրքի կապակցությամբ նա Հայտնում է. «Մովսէս Խորենացի. Հաւաստավատում պատմագիրք, չորս Հատոր, սկսեալ ՅԱղամայ մինչև ի Զենոն կայսրն, որպէս վկայէ

¹⁸⁹ Պետք է լինի «ԷՌ» (Կամ էլ՝ պետք է ենթադրել, որ «Պատմագիրք Հայոց»-ի Հեղինակի ունեցած ձեռագրերում Խորենացու Պատմության նշված գլուխը կրել է լև Համարը):

¹⁹⁰ Նկատենք, որ այսուեղ նույնպես Բուզանդարանը Փավստոսի անունը չի կրում, այլ ներկայացված է «Բուզանդարան» ընդհանուր վերնագրից բխող «Բուզանդ» բառով: «Պատմագիրք Հայոց»-ի Հեղինակը մնացած բոլոր զեպքերում պատմէիներին նշում է իրենց կրկնակի անուններով («Մովսէս Խորենացի», «Մեսրովը երեց», «Կորիւն թարգմանիչ», «Խոսրով թարգմանիչ», «Եղիշէ վարդապետ», «Ղաղար Փարպեցի», «Զենոր պատմագիրք», «Եփսերիսս եպիսկոպոս», «Անանիա Շիրակացի» և այլն): Եթե Բուզանդարանի բոլոր վեց դպրությունների Հեղինակը Փավստոսը լիներ՝ ապա «Պատմագիրք Հայոց»-ի Հեղինակը Փավստոսի անունը ևս կնշեր իր ցանկաւմ, բայց նա նշել է միայն Բուզանդարանի բնդանուր վերնագիրը՝ «Բիւզանդ», որից երևաւ է, որ խոսքը վերաբերում է Բուզանդարանի բոլոր վեց դպրություններին և ոչ թե միայն մեզ Հասած մասին, որը կրում է Փավստոսի անունը:

Թումաս Արծրունեաց պատմագիրք, բայց այժմ զերիս հատորս միայն երեխ, իսկ շորորդն ոչ ուրեմ գտանի ի սաղրելոյ հերձուածողաց»:

Այսքանից հետո պարզ է, որ եթե «Պատմագիրք հայոց»-ում նշված Բուզանդարանը վեց դպրություններից բաղկացած շիներ՝ ցանկում կլարդացինք մոտավորապես հետեւյալը. «Բիւզանդ, հատորս վեց, Բայց այժմ զղորս հատորս միայն երեխ, իսկ նախորդքն ոչ ուրեմ գտանին»:

Հեղինակի գործածած «իբր զմնացորդս նախկին պատմագրաց» արտահայտությունը առավել որոշակիությամբ է վկայում Բուզանդարանի վեց դպրությունների մասին, որովհետեւ միայն մեկ հեղինակի՝ Փալմտոսի անունը կրող շորս դպրությունները չեին կարող համարվել «մնացորդք նախկին պատմագրացն»։ Հիշենք Թովմա Արծրունու «մնացորդք պատմագրացն առաջնոց» արտահայտությունը, որով Արծրունին նկատի է ունեցել մի քանի տարբեր պատմիչների¹⁹¹:

Վերադառնալով Պրոկոպիոս Կեսարացուն՝ հիշենք, որ նա «Վասն շինութեանց» երկում վերապատմել է Բուզանդարանի առաջին դպրություններում գտնված այն միենույն գլուխը, որից օգտվել է նաև «Սեբեսոս Պատմությանը» կից հատվածի հեղինակը։ Դա, ինչպես ասվեց, «Ապստամբութիւն Պարթեաց, որ եղել ի յայս ժամանակի» խորագիրը կրող գլուխն է։

Ինչպես որ Ագաթանգեղոսի արձանագրությունը, Մամիկոնյանների զրույցը, Ասողիկի «Տիեզերական պատմությունից» քաղված հատվածն արտագրելուց առաջ «Սեբեսոս Պատմությանը» կից հատվածի հեղինակը անվանապես նշում է իր սկզբնաղբյուրները («մատեանն Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացւոյ», «այսպէս շարադրէ Ագաթանգեղոսը — Գ. Ա.» զՄամիկոնէիցն սեռի ազգացեղութիւնն»), «երկրորդեցից ի որատմագրացն Մովսիսի Խորենացւոյ եւ Ստեփանոսի Տարօնացւոյ»), այնպես էլ Պարթեաց ապստամբությանը վերաբե-

¹⁹¹ «Իսկ առ մեզ հասին զրոյցքս այս բատ մնացորդաց պատմագրացն առաջնոց, ի Մամրէէ վերձանողէ և ի նորուն եղբօրէ Մովսէս կոչեցելոյ և միստումն թէսղորոս Քերթող» (Թ. Արծրունի, Պատմութիւն, Ա. Պիտերուրագ, 1887, լ. 44).

սոդ զլուվիր Բուզանդարանից քաղելուց առաջ նա հայտնում է. «զսոյն ճառէ Փամանակագիրն (Բուզանդարան ժողովածուն կազմող Հեղինակը—Գ. Ա.) այդպէս որպէս առաջիդ կայ»:

Այս խոսքերից անմիշապես Հեաս նա բերել է իր խոստացած զլակի պատճենը, որը, սակայն, այժմ ընկալվում է որպես «Սեբեռոսի Պատմությանը» կից Հատվածի Հեղինակի սեփական շարադրանք: Թյուրիմացությանը նպաստել է, ի շարում յուս պատճառերի, նաև ութ առջանոց մի միջանլյալ Հատված՝ Մարսյակի Հատվածը¹⁹², որը սիալմամբ ընդօրինակված լինելով պատճենի մասին աղղարարող խոսքերի («զսոյն ճառէ Փամանակագիրն այդպէս որպէս առաջիդ կայ») և նրան անմիշապես հաղորդած պատճենի միջեւ, ընդհատել է տրամաբանական կապը բնազրում և թույլ չի տվել նկատելու, որ նրանք վերաբերում են իրար և որ «Ապստամբութիւն Պարթևաց որ

¹⁹² ՏԵՌ ԱԵՊ, էջ 7, տոսք 14—21: Ի գեա՞ այս Հատվածում հանդիպող Փառոխտ և Փառական, ինչպես նաև Կրիզորի և Տրդատի վարքագիր Ազամանկեղոսի Պատմության «ածել կուտել զպառականն» և «Փառական Շեմակաց» (Աբաթ. § 211) արտահայտությունների կապակցությամբ Հայտնենք Հետեւյլ նորությունները: Ազամանկեղոսի նորահայտ մաղրիդյան ձեռագրի բնագրում պառական բառը թարգմանված է չառչաց (=շներով որս) արտահայտությամբ (Օ՛Ռու Շի Շու Շառչացաւ Շքընտէւչէ Անչա Շի Շու Շառչաց և Շի Շառչաց բառացիքնէ): Garitte G., Documents pour l'étude du livre d'Agathange, p. 48): Մրանով կարծեն թե Հաստատվում է Առձեռն բառարանի կարծիք այն մասին, որ «պառական» նշանակում է «որսի շներ»: Ինչ վերաբերում է Փառոխտ, Փառական, Փառականն Շեմակաց անուններին՝ դրանք բառ երեսութիւն պետք է նույնացնել Փարուա և Փառակա տեղանունների հետ: Մրանք արդի Զաւֆալում գտնվող երկու հարեան գյուղերի անուններ են: Պատմական Հայաստանի բարտեղի վրա ուրիշ ոչ մի անդ չի կարելի ցուց տայ իրար մոռ զոնվոր այսպիսի երկու բնակավայր, որոնք արդարացնեին հետեւյլ արտահայտությանը. «Փառոխտ կոչեն զտեղի բնակութեանն և Փառականն զաշտ որսոց և արշաւանաց նոցին» (ԱԵՊ, էջ 7): Փառական-ը պահպանել է իր անունը, իսկ Փառոխտ-ը մամանակի բնմթացրում ավելի Հայկականանալով զարձել է Փիտրուա: Խոկ այժմ ազրեցանցիները կոչում են «Բուրենուա» (<Բուրենուա<Փուխրուա<Փիտրուա>): Դեռ հինգերորդ դարում Փառոխտն արդեն աներ մեկ ուրիշ այլափոխված ձև՝ Փառախտ: Մեր նշան բառերի շուրջ սուհեծված զանազան կարծիքների մասին տեՌ Աճառյան, Արմատական բառարան, Հատ. 6, երևան, 1931, էջ 322, 323, 854, 855 և Հատ. 9, էջ 1160, 1932:

հեկւ ի յայս ժամանակի» խորագրով հանդերձ սկսվում է ժամանակագրից քաղված հատվածը:

Մարսյակի հատվածի իր տեղում լինելու փաստը նշել են զրեթե բոլոր այն բանասերները (Ք. Պատկանյան¹⁹³, Ն. Զընտոյան¹⁹⁴, Ն. Մառ¹⁹⁵, Ա. Մատիկյան¹⁹⁶, Բ. Սարգսյան¹⁹⁷, Ն. Ակինյան¹⁹⁸, Ստ. Մալխասյանց¹⁹⁹, Ա. Համբինյան²⁰⁰ և ուրիշներ), որոնք այս կամ այն առիթով գործ են ունեցել այդ հատվածի հետ:

Սիմեոն Ապարանցու ունեցած ձեռագրում Մարսյակի հատվածն ընդօրինակված է եղել Մամիկոնյանների գրուցից անմիջապես հետո, իսկ մեկ հասած ձեռագրում (№ 2639) ինչպես տեսանք, այն ընդհատում է ժամանակագրին վերաբերող նախադասության և նրանից քաղված հատվածի կապը: Պետք է ենթադրել, որ հատվածն սկզբնապես ընդօրինակված է եղել ձեռագրի լուսանցքում և հետագայում իր տեղը կորցնելով, տարբեր գրիշների կողմից դետեզվել է բնագրի տարրեր տեղերում: Այսպիսի դեպքեր հաճախ են պատահում²⁰¹:

¹⁹³ История императора Иракла, стр. 173.

¹⁹⁴ Ն. Զետոյան. Գատառտան ի վերայ Խորենացւոյն և դատաւոր նորա, «Բագմալիկ», 1878, էջ 40, ձ. 3:

¹⁹⁵ Marr H. Я. О начальной истории Армении, стр. 275. Ալուտեղ Ն. Մասր բերելով Ն. Ձնտոյանի կարծիքն այն մասին, որ Մարսյակի հատվածը «Ուտեղի ուրեմ լիշտատակի» որպես բան «Դադարայ Փարպեցոյ, որ յիտ ձասելոյ զինանց՝ ձառէ և զայս», չի նկատել, որ Ձնտոյանը նկատի է ունեցել Սիմեոն Ապարանցու «Վիպառանությունում» գտնվող այն սխալ հիշտակությունը, որի համաձայն «Սեբեռոսի Պատմությանը» միացած հատվածը շարագրված է եղել իրը Դադար Փարպեցու կողմից:

¹⁹⁶ Ա. Մատիկյան. Անանունը կամ Կեղծ Սեբեռոս, էջ 83, ձան. 2:

¹⁹⁷ Բ. Սարգսյան. Ա. Ապարանցին և Կեղծ Սեբեռոսի առեղծվածը, «Բագմալիկ», 1915, էջ 8:

¹⁹⁸ Ա. Ակինյան. Սեբեռոս եպսկ. Բագրատունիաց, էջ 31:

¹⁹⁹ Ստ. Մալխասյանց. ՍԵՊ, էջ 168, ձան. 13: Նահ՝ История епископа Себеоса, стр. 138, որում. 17.

²⁰⁰ Մաշտոցի Մատենադարան, Զամբինյանի արխիվ, թղթ. 232, վ. 101:

²⁰¹ Մաշտոցի անվան Մատենադարանի № 3079 ձեռագրի 257ր էջում, որինակ, հանդիպում ենք այսպիսի մի հիշտատակարանի. «Ով բնիթերսող եղայր, ուս շակերտ ու ունէր, գտեղն ու գիտելով՝ աստ եղի. այսպէս իմա»:

Այս հատվածը հեռացնելուց հետո բնագրում կրկին իրար
են մոտենում անշատված մասերը և դրանով հնարավորու-
թյուն են ստեղծում նկատելու, որ «Սերեսի Պատմության»
հեղինակը ժամանակագրին վկայակոչելուց հետո անմիջապես
բերել է նրանից քաղված դլուխը, խորագրի հետ միասին:
Այսպիսով, մինչև այժմ որպես երկրորդ գլխի վերնագիր ըն-
կալված «Ակադեմություն» Պարթեաց որ եղի ի յայս ժամա-
նակի» արտահայտությունը պետք է դիտել որպես ժամանա-
կագրից արտագրված բնագրի սկզբի բառեր: Սրանով «Սերես-
ուի Պատմությանը» կից հատվածում վերանում է Ա և Բ գլուխ-
ներն իրարից անջապող խորագրիրը և ամբողջ հատվածը կրր-
կին միանում է մի ընդհանուր գլխի մեջ: Այս գլխի նյութին
ամբողջապես քաղված է ժամանակագրից, որի անունը ամե-
նայն հավանականությամբ նշված է եղել գլխի խորագրում,
ինչպես որ հաջորդ գլխի խորագրում հայտնված է Մովսես Խո-
րենացու և Ստեփանոս Տարոնացու անունները: Հայտնի է, որ
«Սերեսի Պատմությանը» կից հատվածը մեղ հասել է անխո-
րագիր (տպագիր բնագրերի խորագիրը պատկանում է հրա-
տարակիչներին) և շուրջի իրեն նախորդած և հաջորդած բնա-

Այստեղ ակնարկվող հատվածը մեկ ուրիշ ձեռագրում ընդօրինակված է բո-
լորովին մի ուրիշ տեղում (ձ. № 7584, էջ 354ա): Անհետաքրքիր շի լինի
հիշել նաև Ստեփանոս Ասողիկի «Տիեզերական պատմությունում» հանդիպող
մի ընդմիջարկություն (Հմմտ. Ասողիկ, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 351, ձ.
76), որը նույնպես տարբեր ձեռագրերում ընդօրինակված է ըստ գրիշների
ճաշակի: Նկատի ունենք ՍեՊ, 124, տողք 22—23 և Ասողիկ, էջ 96, տ. 1—4
հատվածը, որը Ասողիկի հնագույն ձեռագրում (№ 2865, էջ 168բ) գտնում
ենք ընդօրինակված լուսանցքում: Սրանից մի քանի տող հետո (էջ 169ա,
տ. 12—15) դարձյալ լուսանցքում հանդիպում ենք մի ուրիշ հիշատակագրու-
թյուն այն մասին, որ ընդօրինակության համար հիմք ծառայած ձեռագիրը
տվյալ տեղում աղճատված է եղել. «Ծուռ և տեղոյ արթեակեն»: Նույնիսկ
այսպիսի մի հիշատակարան թափանցել է բնագրի մեջ և հրատարակել նրա
հետ որպես Ասողիկի խոսք: (Այս մասին մանրամասն տե՛ս ՍեՊ, էջ 194,
ծան. 66):

Բարեբախտաբար պահպանվել է Ասողիկի պատմության այն հնագույն
ձեռագիրը, որտեղից բիսել են թյուրիմացությունները և որի օգնությամբ
հնարագոր է դառնում վերականգնել ճշմարտությունը. մի բան, որ շենք կա-
րող ասել Մարտյակի հատվածի կապակցությամբ:

դրերը: Ահա այդ կորած մասերում է, մեր կարծիքով, մնացել նաև ժամանակագրի անունը պարունակած խորագիրը:

Իսկ որ «Ապստամբութիւն Պարթեաց, որ եղել ի յայս ժամանակի» խորագիրը պատկանել է ժամանակագրին՝ երեսում է նաև այն փաստից, որ այն չի համապատասխանում «Սեբեռսի Պատմությանը» կից հատվածում իր տակ գտնվող նյութին: Պարթեաց ապստամբությունից բացի այստեղ միենույն խորագրի տակ զետեղված է Հայաստանում և Պարսկաստանում Հարյուրավոր տարիներ իշխած թագավորների ժամանակադրական ցանկը, որը կապ չունի ապստամբության հետ և որը «Սեբեռսի Պատմության» հեղինակը Պարթեաց ապստամբության մասին զլուխն արտագրելուց հետո շարունակել է քաղել նույն ժամանակագրից և զետեղել է նրանից բերված մյուս նյութերի շարքում: Այս ցանկում կարդում ենք. «Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծբին քաղաքի» (ՍԵՊ, էջ 9): Հաջորդ զլուխում հանդիպում ենք միենույն դեպքին վերաբերող մի այլ տեղեկություն, որի համաձայն Արշակը Հայաստանի թագավոր է կարգել ոչ թե իր որդի Արշակ Փոքրին, այլ՝ եղբոր՝ Վաղարշակին: Պարզ է, որ միենույն հեղինակը չէր կարող սկզբում իր հայտնածը հետագայում փոխել առանց պատճառաբանելու: Մնում է ենթադրել, որ երկու տեղեկությունները նույնությամբ պատճենավորված են տարբեր սկզբնաղբյուրներից: Դրանցից մեկը Ստեփանոս Տարոնացին է, ինչպես Հայտնվում է բնագրում, իսկ մյուսը, ինչպես տեսանք, ժամանակագրը (Բուզանդարանը):

Այսպիսով, Մամիկոնյանների զրուցը ևս միանալով վերը նշված մյուս փաստերին, գալիս է ասելու, որ զրուցը պարունակող սկզբնաղբյուրը «Սեբեռսի Պատմության» հեղինակին չի պատկանում:

b

Տեսնենք, թե և՛ր և ինչպես են միացել առաջին շորս գլուխները «Սեբեռսի Պատմությանը» և ով է նրանց իրական հեղինակը:

Գերմանացի գիտնական Ա. Բաումգարտնի արդեն հնաթաղրել է, որ Հ դարում, երբ Հովհաննիս Դրասիանակերտցին օգտվում է «Սեբեռոսի Պատմությունից», այս գործի առաջին շորս գլուխները դեռ չեին միացել նրան²⁰²:

Գիրքը նույն վիճակում է Եղել, Ք. Պատիանյանի և Բ. Սարգսյանի կարծիքով, նաև XIII դարում՝ Վարդան Արևելցու օրոք²⁰³:

Մինույն իրողությունն է հաստատում նաև X դարի պատմիչ Ստեփանոս Ասողիկը: Հայտնի է, որ նա լայնորեն օգտվել է «Սեբեռոսի Պատմությունից»: Նրա բաղած տեղեկությունները համարյա բառացի կրկնում են «Սեբեռոսի Պատմությունը»: Նրան հակառակ՝ նա ոչ մի տեղեկություն չի բերում այս Պատմությանը միացած զլուխներից և առհասարակ հակասում է նրան: Սասանյան հարստությունն ըստ Ասողիկի հիմնվել է «յերկրորդ ամին Փիլիպանց թագաւորին Հռոմայ»²⁰⁴, իսկ «Սեբեռոսի Պատմության» հարակից զլուխներում՝ «յամի երրորդի եղիանոսի կայսեր և յամս Լեռորդի առաջի Մեծի Խոսրովայ արքային Հայոց»²⁰⁵, Ասողիկն այս հարստության վերացումը նշում է բյուզանդական կայսր Հերակլի թագավորության 18-րդ տարում (628 թ.), իսկ Սեբեռոսին վերագրվող հատվածում այդ տեղի է ունեցել Կոստանդ կայսեր 12-րդ տարում (653 թ.): Պարթևաց թագավորության տևողությունն Ասողիկի մոտ 457 տարի է, «Սեբեռոսի Պատմությանը» կից հատվածում՝ 573 և այլն:

XII դարի ժամանակակիր Սամվել Անեցին իր ժամանակագրությունը կազմելիս օդտագործել է «Սեբեռոսի Պատմության» մեջ հանդիսող որոշ ժամանակադրական տվյալներ, իսկ այս Պատմության սկզբում՝ զետեղված ժամանակագրու-

²⁰² Baumgartner A., Über das Buch „Die Christ“: „Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft“, Bd. XL, Leipzig, 1886, S. 466–467.

²⁰³ История императора Иракла, стр. IX, թ. Սարգսյան, Սիմեոն Ապարանցին և Կեղծ Սեբեռոսի առեղծուածը, «Բագմափէպ», 1915, էջ 34:

²⁰⁴ Ստեփանոս Ասողիկ, Տիեղերական պատմութիւն, Ս. Պ-բորգ, 1885, էջ 31:

²⁰⁵ ՍեՊ, էջ 14:

թյանը նու ծանոթ չէ: Այսողես օրինակ, Տրդատի թագավորության մասին նա գրում է, «Սակայն մեք՝ զրնախօսիցն զոհ պահելով, սկսցուք բայ կարի զհետ ճշգրտութեան հետևելով և զառաջին ամսն Տրդատայ զուգել՝ զհետ երկրորդ ամին Դիոկետիանոսի՝ բայ Մովսիսի Հայոց պատմագրի, և ոչ իններորդին կամ առաջներորդին բայ սմանց»²⁰⁶:

Հայտնի է, որ «Սեբեոսի Պատմության» սկզբում զետեղված եռանուն ժամանակագրությունում Տրդատի թաղավորության տարին նշված է Դիոկետիանոսի 15-րդ տարին: «Յամի Լ-երրորդի Արտաշրի, հնդետասաններորդի Դիոկետիանոսի, կայսերակերպ շքեղութեամբ Տրդատիոս ելանէ ախոյեան ընդդեմ արքային Գդաց: Եւ անդէն ձերբակալ արարեալ զախոյեանն անարի զիթագաւորն Գդաց՝ ածեալ կացուցանէ յանդիման կայսերն Դիոկետիանոսի. և անդէն ի նմին ամի թագաւորեցուցանէ Դիոկետիանոս զՏրդատ ի վերայ աշխարհիս Հայոց: Գումարէ ի ձեռու սորա զարս բազումս և արձակէ յիւրական իշխանութիւն աշխարհին Հայոց: Որ տիրէ ամենայն բաջութիւնամբ և բարեպաշտութեամբ ամս Հ: Եւ է այսպէս. Արտաշր՝ լի, Դիոկետիանոս՝ ԺԵ: Տրդատէս՝ զառաջինն»²⁰⁷:

Այս ընդարձակ տեղեկությունը Սամվել Անեցուն անծանոթ է, միացել, որովհետեւ այն պարունակող հատվածը Սամվելի ժամանակ գեր միացած չի եղել «Սեբեոսի Պատմությանը»:

XIII զարի հեղինակ Մխիթար Անեցին նույնապես օգտվել է «Սեբեոսի Պատմությունից» և ծանոթ չի եղել այժմ նրան միացած առաջին գլուխներին: Հայտնի է, որ Մխիթար Անեցին Բագրատունիների ազգաբանությունը կազմելու համար տեղեկություններ է բաղել նախորդ պատմագրքերից. «Եւ արդ՝ բուռն հարեալ զազգէն Բագրատունեաց և զնախնոյն մերմէ Արքարու, զայն դիցուք սկիզբն, և քաղեսցուք ի պատմագրաց»²⁰⁸: «Մկիլքին Բագրատունեաց» դիմում նույնապես նա

²⁰⁶ Սամուել Անեցի, Հաւաքմունը ի դրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 62—63:

²⁰⁷ ՄԵՊ, էջ 15:

²⁰⁸ «Մխիթարայ Անեցուն Պատմութիւն», Ա. Պ.-Բարդ, 1879, էջ 15:

Հայտնում է. «Սկսանեմք համառաւիւր բաղել զյիշատակ-
թագրատունեացն»²⁰⁹:

Այս ամենից հետո նա անծանոթ է մնացել «Սեբեոսի
Պատմության» հարակից դրուխներին, որտեղ Բագրատունինե-
րը հանդես էն գալիս, որպես ի սկզբանէ Հայաստանում իշխե-
լու իրավունք ունեցող բնիկ հայ իշխաններ։ Կարելի է շա-
րակուսել, որ եթե Անեցին իր օգտագործած «Սեբեոսի Պատ-
մության» կազմում գտներ նաև այս բացառիկ տեղեկությունը՝
անպայման կհետեւներ նրան և չէր սահմանափակվի սոսկ
Բագրատունիների հրեական ծագման մասին հայտնի ավան-
դությունը կրկնելով։

Եթե նույնիսկ ինչ-ինչ պատճառներով Անեցին «չուղենար
ընդունել» Բագրատունիների հայկական ծագումը՝ միկնույն է՝
ըստ իր խոստման («քաղեսցուք ի պատմագրաց», «զյիշատակ»
Բագրատունեացն») պետք է հայտներ, որ իրեն հայտնի պատ-
մագրքերում գոյություն ունի նաև տեղեկություն այն մասին,
որ Բագրատունիները բնիկ հայկական ծագում ունեն։

Այսպիսով, VII—XIII դարերում ապրած վեց հեղինակ («Սեբեոսի Պատմության» հեղինակը, Հովհաննես Դրասխա-
նակերտցին, Ստեփանոս Ասողիկը, Սամվել Անեցին, Միհթար
Անեցին, Վարդան Արևելցին) իրավունք են տալիս պնդելու, որ
այժմ «Սեբեոսի Պատմության» կազմում գտնվող առաջին
շորս գլուխներն այդ պատմիչների օրոք դեռ միացած չէին
բուն Պատմությանը։

Այս իրողությունը հաստատվում է մի յոթերորդ հեղինակի՝
XVI դարի բանաստեղծ Միմեոն Ապարանցու որոշակի վկա-
յությամբ։ Սա ունի ցուցմունք այն մասին, որ իր ունեցած ձե-
ռագրում այդ գլուխներն ընդորինակված են եղել բոլորովին
ուրիշ մի բնագրի հետ։

Միմեոն Ապարանցու օգտագործած ձեռագրի մասին տե-
ղեկանում ենք հեղինակի «Վիպասանութիւն սակս Պահլաւու-
նեացն զարմի և Մամիկոնեանցն սեռի» շափածո պատմու-
թյունից, որն ունի հետեւյալ վերնագիրը. «Շարադրութիւն Հո-

²⁰⁹ «Միհթարայ Անեցւոյ Պատմութիւն», Ս. Պ.-Բուրգ, էջ 22:

մերական վիպասանութեատը՝ սակա Պահաւունեացն զարմի և Մամիկոնեանցն սեսի, ի սկզբանէ մինչեւ ցվախճան, որդի զհարսն փոխանակելով, ասացեալ բանիւ բարառնական նուս-խայօրէն՝ պիտակ անուն Սիմէօն վարդապետի Ապարանցւոյ՝ ի վիպասանուրենէն Պազարու Փարպեցւոյ...»²¹⁰:

Ինչպես մեր լնդղծած բառերից, այնպես էլ պոեմի բովան-դակությունից երևում է, որ Ապարանցին Պահավունիների և Մամիկոնյանների պատմությունը գրելու համար օգտվել է մի աղբյուրից, որի հեղինակն իր կարծիքով եղել է Պազար Փար-պեցին:

ԲղՓարսկեցւոյն ճառն լնթերցեալ,
Այս որ Պազարը կոչեցեալ...²¹¹

Ի Մարարայ մատեանս մըտեալ,
ԶՄրծունացւոյնըն վերծանեալ,
Եւ զվաղբնջուցն թարքմանեալ,
Հելլեն զրով նուրբըս զրաեալ,
ՅԱգաթանգելոսէ զրոշմեալ,
Ի վերնազրէն զայս իմացեալ,
Արանց հընգից թագաւորեալ,
Հայոց և Պարթեաց տիրեալ...²¹²

Դժվար չէ նկատել, որ Սիմեոն Ապարանցին Պազար Փար-պեցու անվամբ վերարտադրել է «Սեբեոսի Պատմության» կից հատվածի հետևյալ բառերը. «Անդ հայելով ի մատեանն Մա-րարայ փիլիսոփայի Մծուրնացւոյ... զամս և զաւորս հինգ թագաւորացն Հայոց և Պարթեաց յունարէն դպրութեամբ... Քանզի այս ունէր վերնազիրն այսուէս «Ես Ազարանգեղոս գրիշ...»²¹³:

Այս հետաքրքիր փաստը որոշ բանասերների (Բ. Սարգիս-

²¹⁰ «Սիմէօն վարդապետի Ապարանցւոյ վիպասանութիւն», Վազարշա-պատ, 1870:

²¹¹ Անդ, էջ 7:

²¹² Անդ, էջ 17:

²¹³ ՍԵՊ, էջ 1—2:

յուն²¹⁴, Գ. Տեր-Պողոսյան²¹⁵, Ղ. Ալիշան²¹⁶) առիթ է տվել կարծելու, թե «Սեբեռոսի Պատմության» կից հատվածի հեղինակը Ղաղար Փարագեցին է կամ էլ՝ նրա անվամբ հանդես եկած մեկը: Այս թյուրիմացությունը հետագայում պարզեց ն. Ալինյանը²¹⁷:

Սիմեոն Ապարանցու օգտագործած ձեռագրում «Սեբեռոսի Պատմության» հատվածը խորագիր չի ունեցել և բնորոշեակված է եղել Ղազար Փարպեցու Պատմության (և ոչ՝ «Սեբեռոսի Պատմության») կից: Այս երկու տարբեր բնագրերն Ապարանցու կողմից ընկալվել են որպես միևնույն հեղինակի՝ Ղաղար Փարպեցու գործ:

Աղարանցու թյուրիմացության պատճառը բացահայտելու համար ն. Ալինյանին օգնել է «Սեբեռոսի Պատմության» մեղ հասած հնագույն ձեռագիրը, որը ծագում է Սիմեոն Ապարանցու օրինակից և որն այժմ պահպում է մեր Մատենադարանում: Այստեղ նույնպես «Սեբեռոսի Պատմությունը» խորագիր շունի և ընդորինակված է Ղաղար Փարպեցու Պատմությունից անմիջապես հետո (նրանց բաժանում է մի շգրված թերթ): Այնպես որ Սիմեոն Ապարանցին իր ձեռքի տակ ունենալով այս կարգի մի ձեռագիր, կարող էր այդ երկու՝ իրարից որևէ խորագրով շանչատված բնագրերն ընկալել որպես մեկ հեղինակի գործ:

Ակինյանը Սիմեոն Ապարանցու ձեռագրի և «Սեբեռոսի Պատմության» Մատենադարանում պահպուղ № 2639 ձեռագրի կապը իրավացիորեն անտարակուսելի համարելով հանդերձ (նա գրում է, «այդ ձեռագիրը առանց տարակուսի եղած է Սիմեոն Ապարանցոյ գործածած օրինակը»)²¹⁸, չի նկատել, որ № 2639-ն ընդորինակված է ոչ թե անմիջապես Սիմեոն Ապա-

²¹⁴ «Ազաթանգելոս և իր բազմագարեան գաղտնիքն», Վենետիկ, 1890, էջ 277—280:

²¹⁵ «Հանդէս ամսօրեայ», 1914, էջ 489—500, 1916, էջ 140—170:

²¹⁶ «Հայապատում», մասն Ա, էջ 18, 19, 62, 63, 127:

²¹⁷ Ն. Ալինյան, Սիմեոն վ. Ապարանցի. «Հ. Ամս.», 1919, էջ 84, 89, 90, 93 և այլուր, նաև՝ Բագէշի զպրոցը, Վիեննա, 1952, էջ 135—150:

²¹⁸ Ն. Ալինյան. Բագէշի զպրոցը, Վիեննա, 1952, էջ 143:

բանցաւ ձեռագրից, որտեղ հատվածը գտնվում էր Պազար Փարպեցու Պատմության առջեւում, այլ՝ նրա մի երկրորդ ընդունակությունից, որտեղ արդեն ընդօրինակող գրիշը, հավանաբար ցանկանալով անխորագիր բնագրերը մի աեղում ունենալ, այն տեղափափսել է Փարպեցու Պատմության վերջը, որի հետեւանքով հատվածը հայտնվել է մեկ ուրիշ անխորագիր բնագրի՝ «Սերենոսի Պատմության» կողքին և այդպիսով միացել է նրան:

Սիմեոն Ապարանցու ձեռագրում հատվածը շատ որոշակիութեն ընդօրինակված է եղել Պազար Փարպեցու «Հայոց Պատմության» սկզբում:

Այս փաստը վրիպել է հատվածը «Սերենոսի Պատմության» հարագատ մաս համարած բանասերների տեսադաշտից: Ակինյանը, որ Ապարանցու ձեռագրի միջոցով արժեքավոր ուղղում է մացրել Ղազար Փարպեցու վերաբերյալ՝ «Սերենոսի Պատմության» հարցում վրիպել է: Նրա կարծիքով Ապարանցու ձեռագրում հատվածը զետեղված է եղել Փարպեցու Պատմությունից հետո («պատմութենէն ետքը Մարարայ մատեանն»)²¹⁹:

Սրան հակառակ, «Վիպասանությունում» հատվածի բովանդակությունը վերասպատմանում է Փարպեցու Պատմությունից առաջ: Բացի դրանից Ապարանցին բառացի հայտնում է, որ իր ձեռագրի մեջ հատվածը կազմում էր Պազար Փարպեցու Պատմության առաջին նաոր²²⁰, որը վերասպատմելուց հետո ինքն անցնում է երկրորդին՝

Արդ զառաջին նաոն աւարտեալ...
Եւ երկրորդին ասրնթերեալ...

Սիմեոն Ապարանցու այս բացառիկ կարկորություն ունեցող վկայությունը միանալով մեր նշած մյուս փաստերի հետ

²¹⁹ Ա. Ակինյան. Բագէջի գպրոցը, Վիեննա, 1952, էջ 145—146:

²²⁰ Գ. Տեր-Պողոսյանը վկայակոչելով Սիմեոն Ապարանցու հայտնած «առաջին նաոր», կառուցել է մի ամբողջ տեսակեռ այն մասին, որ Շին դարեւում իրը մի ինչ-որ «կեղծարար» հեղինակ հորինել է հատվածը և նրա հեղինակությունը բարձրացնելու համար՝ այն կցել է Պազար Փարպեցու

վերջնականապես ապացուցում է, որ «Սեբեռոսի Պատմությանը» կից հատվածը հնագույն ձեռագրերում կապ չի ունեցել այդ Պատմության հետ և միայն հետագա դարերում է պատահաբար միացել նրան:

Միացումը, ինչպես ասվեց, կատարվել է Սիմեոն Ապարանցու ձեռագրից ծագող մի երկրորդ ընդօրինակության միջոցով:

Տարօրինակ պատահականությամբ մեզ հասել է «Սեբեռոսի Պատմության» միայն այս՝ Սիմեոն Ապարանցու օրինակի հետ կապվող բնագիրը: Հայ մատենագրության մեջ շկա ուրիշ որևէ հիշատակարան, որից երևար, որ «Սեբեռոսի Պատմությունը» երբեկցե իր կազմում ունեցել է նաև այժմ իրեն միացած հատվածը: Տեսանք, որ յոթ մատենագիրներ իրենց ձեռքի տակ ունեցել են «Սեբեռոսի Պատմության» սկզբնական բնագիրը, որի կազմում հատվածն առկա չի եղել:

Սիմեոն Ապարանցին գործել է Բաղեշի դպրոցում: Այդ դպրոցի օջախներից մեկում՝ Ամրդոլու վանքում է ընդօրինակված նաև «Սեբեռոսի Պատմության» մեզ հասած ձեռագիրը, որը կրում է միկնուցն սիմալը, այսինքն հատվածն ընդօրինակված է «Սեբեռոսի Պատմության» հետ:

«Սեբեռոսի Պատմությունը» միակ բացառությունը չէ, որ մեզ հասել է միայն մի թերի ձեռագրից ծագող ընդօրինակությամբ: Նույն վիճակում են նաև, մի շարք ուրիշ սկզբնադրյուրներ, օրինակ, Ստեփանոս Ասողիկի «Տիեզերական պատմությունը»: Աշխարհի զանազան մատենադարաններում ողաճվող այս երկի բոլոր ձեռագրերը (նրանցից տասը գտնվում է մեր մատենադարանում), որոնք ընդօրինակված են տարբեր ժամանակ և տարբեր վայրերում, բոլորն էլ միենալու տեղում

Պատմությանը, որպես նրա «առաջին ճառ» (աե՛ս Գր. Տեր-Պողոսյան, Նկատողություններ Փափստոսի Պատմության վերաբերյալ, մասն երկրորդ, Վիեննա, 1919, էջ 53): Բ. Սարգսյանը նույնպես նկատելով, որ Ապարանցու օրինակում հատվածը Փարպեցու սկզբում է եղել՝ նրա հեղինակի և համարել Փարպեցուն (աե՛ս Ակամի. և գաղտնիք, էջ 278): Հետագայում նա իր այս կարծիքը փոխեց («Բագմալէպ», 1915, էջ 1—9, 33—39):

Աւնեն մի ընդարձակ պակաս (խոսքը Երկրորդ Հանդեսի Գ գլխի նշանավոր պակասի մասին է)՝²²¹: Սա նշանակում է, որ նրանք բոլորն էլ ծագում են միևնույն ձեռագրից: Այսպիսով, ինչպես «Սերեսոսի Պատմության» դեպքում, այնպես էլ այստեղ պատահականությունը մեղ հասցրել է միայն այն ձեռագրից ծագող բնագիրը, որը թերի է եղել²²²: Իսկ գրանից առաջ գրվածները կորել են, ինչպես որ կորել են «Սերեսոսի Պատմության» այն ձեռագրերը, որուեղ հետամուտ հասվածը գեռ միացած չի եղել Պատմությանը:

* * *

Արդ՝ ո՞վ է «Սերեսոսի Պատմությանը» հետագա դարերում միացած այս հատվածի հեղինակը:

Հատվածում հանդիպում են աեղեկություններ, քաղված V—X դարերի պատմիչներից՝ «Ժամանակագիր», Մովսես

²²¹ Հմմտ. «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Տիեզերական պատմություն», Ս. Պ.-բուրգ, 1885, էջ 112:

²²² Մատինագարանում պահպան «Տիեզերական պատմության» ձեռագրերն աստվանասիրելիս մենք նկատեցինք, որ պակասի պատճառ է հանդիսացել № 2865 ձեռագիրը, որն ընդօրինակված է XIII—XIV դարերում և միաժամանակ հանդիսանում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հնագույն ձեռագիրը: Բնագիր կորուստը տեղի է անեցել՝ ձեռագիրը վերակադրելու ժամանակ նրա պրակներից մեկի անկման պատճառով:

Այս պրակի տեղն այժմ երկում է ձեռագրի 175 և 176 թերթերի միջին: 175 թերթը հանդիսանում է կորած պրակին նախորդած պրակը եղրափակող թերթը, իսկ 176-ը՝ Հաջորդի սկիզբն է: 175-ր վերջանում է «Եստաւ ի զանոյս բազաւորին» բառերով, իսկ 176-ն սկսում է «Ապստամբեցին զօրն որ ի Թիրակ»: Երկու հետագոր պրակների վրա գտնված այս բառերն այժմ խառնվել են իրար և ստեղծել հետեւյալ անկապ նախադասությունը: «Եստաւ ի զահ թագաւորին ապստամբեցին զօրն, որ ի Թիրակ» (Հմմտ. Ասողիկ, Ս. Պ.-բուրգ, 1885, էջ 113):

Բնագիրն ընդօրինակող գրիշներն ընկած պրակի փոխարեն սկսում ապստ թերթեր են թողել, որպեսզի հետագայում պակասը լրացնեն (տե՛ս ձև. №№ 3070, 1482, 4584, 1894), բայց հետագայում աստիճանաբար մուսացվել է պակասը և բնագիրն ընդօրինակից է առանց նրա մասին որեւ նշանի (տե՛ս ձև. №№ 3502, 6598 և այլն): Այդ վիճակում ել տապագրվել է:

Խորենացի, «Սեբեստի Պատմություն», Ղետնկ²²³, Ստեփանոս Տարոնացի Ասովիկ: Վերջին պատմիչը Հ դարի մատենագիր Ստեփանոս Ասովիկին է:

Մյուս կողմից հայտնի է, որ XVII դարի հեղինակ Սիմեոն Ապարանցու ոնեցած հնագույն մի ձեռագրում, ինչպես նաև «Սեբեստի Պատմության» այդ միենույն խմբից մեզ շհասած էլուս ձեռագրերում (որոնք պետք է ծագեին առնվազն XIII—XIV դարերից²²⁴), հատվածն արդեն գոյություն է ունեցել:

Հատվածի առկայության մասին վկայող մի փաստ դտնում էնք նաև մեր Մատենագարանի № 5619 ձեռագրում, որն ընդօրինակված է XII դարում: Այստեղ Սամվել Անեցու ժամանակադրության կազմում (թ. 63ր) հատվածից բառացիորեն արտագրված է Կոռնակ սպարապետի 160-ամյա կյանքի մասին գրույրը²²⁵:

Այսպիսով, հատվածը հորինվել է XI—XII դարերի (Մահվանոս Ասովիկ—Սամվել Անեցի) միջև:

Հատվածի բովանդակությունը մեզ մղում է դեպի այս ժամանակամիջոցում գրված՝ և մեղ շհասած մի պատմական երկ՝ XI դարի մատենագիր Հոգհան Տարոնացու Բագրատունյաց տան պատմությունը, որի մասին վկայում են Միիթար Այրիվանեցին, Միիթար Անեցին, «Պատմագիրը Հայոց» մատենագիտական ցանկի հեղինակը և ուրիշներ:

Մեր Մատենագարանի № 1775 ձեռագրում (էջ 8բ—16ա) ողաճպանվել է այս Պատմության սկզբից մի քանի թերթ: Բնագիրն ունի հետեւյալ խորագիրը. «Յոհաննու Տարօնացոյ, բատ արժանեաց կոչեցեալ վարդապետի, աշակերտի երանելու վարդապետին [Ար]շարունեցոյ. շարադրութիւն պատմութեան աւանն Բագրատունեաց ի վերայ Հայաստանեաց. զոր

²²³ Ղետնկից վերցված հատվածը մեզ հասած բնագրում չի պահպանվել: Նրա մասին իմանում ենք Միմեն Ապարանցու ձեռքի տակ եղած օրինակի միջնորդ:

²²⁴ Հմմտ. Ստ. Մալխաչյանցի ավալները՝ ՍԵՊ, էջ ԺԱ—ԺԳ:

²²⁵ Ավելի մանրամասն տե՛ս մեր հադրածը՝ «Կոռնակ սպարապետի պահպանը՝ Սամվել Անեցու ժամանակագրությունում», տպկ. ՀՍՍԾ ԳԱ Տեղեկադիր, 1964, № 1, էջ 80—84:

արար Հրամանաւ տեսառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի, արձանաւոր աթոռակալի սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչի /մաստոն և հահճարեղ զիւնաւորի գրոց սրբոց և ուղիղ Դիւտապետի եկեղեցւոյ Քրիստոսի աստուծոյ մերոյ ի տանս Թորումա»²²⁶:

Այստեղ Հովհան Տարոնացին հայտնում է, որ իր գրվածքն սկսելու է Հայոց պատմոթյան ամենահին ժամանակների նկարագրությամբ՝ «ի սկզբանց անտի», մինչև 887 թվականը՝ Աշոտ Բագրատունու գահակալությունը, որից հետո նոր հանգամանորեն նկարագրելու է Բագրատունյաց ժամանակագրությունը: «Ի սկսանել,—գրում է նա, —զշարագրութիւն պատմութեան յաղագս թագաւորութեան տոհմին Բագրատունեաց ի վերայ Հայաստան ազգիս... ժամանակաց դնել ի սկզբանց անտի մինչև յերեք հարիւր կ.Զ ամն թուականութեանս Հայոց (=887 թ.), յորում ամի առաջին թագաւորիաց բարեպաշտն Աշոտ, զոր յիւրում աելուզն զորպէսն գրեսցուք և անտի յառաջի կարգի զայլն ամենայն. մինչև յաւորս մեր, զթագաւորութիւն տոհմին Բագրատունեաց մի բար միոցէ կարգաւ»²²⁷:

Այս աելեկությունը հիշեցնում է «Եթեռոսի Պատմությանը» կից հատվածի բովանդակությունը: Այստեղ նույնպես Հայոց պատմությունն սկսվում է «ի սկզբանց անտի» և համառոտ ժամանակագրությամբ հասնում է մինչև VII դարի կեսերը, որից հետո բնագիրն ընդհատվում է՝ կորսոյան պատճառով:

226 Հմմտ. նաև Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմոնք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1898, էջ 291, ձ. 37: Ակինյանը (Շապոհ Բագրատունի և յոր պատմությունը, «Մատենագրական հետազոտություններ» հ. Ա, Վիեննա, 1922, էջ 219—223) կարծիք է հայտնում, թե Հովհան Տարոնացու Պատմությունը հավանաբար եղել է նույնը, ինչ որ Հրատարակած է Շապոհի անվամբ (Պատմութիւն Շապոհ Բագրատունոյ, Էջմիածին, 1921): Սակայն հայտնի է, որ վերջինի բովանդակությունը բոլորովին էլ Բագրատունյաց պատմություն չէ, այն դեպքում, եթե որ Հովհան Տարոնացին գրել է Բագրատունիների պատմությունը: Հմմտ. Հովհաննիսյան Ա.. Դրվագներ հայապատական մտքի պատմության, Երևան, 1957, էջ 56—57:

227 Մաշտոցի Մատենադարան, ձ. № 1775, թ. 8թ:

«Սեբեռսի Պատմությանը» կից հատվածը Հովհան Տարոնացու Բագրատունյաց պատմության՝ № 1775 ձեռագրում պահպանված մասին մոտենում է նաև իր կառուցվածքով։ Տարոնացու հատվածն իրենից ներկայացնում է մի ժամանակագրություն։ Այդպիսին է նաև «Սեբեռսի Պատմությանը» կից հատվածը։ Բայս որում նկատելի է, որ № 1775 ձեռագրում սկսվող ընդհանուր ժամանակագրությունն ընդհատվում է ճիշտ այնտեղ, որտեղ պետք է հաջորդեր Հայոց ժամանակագրությունը։ Իսկ «Սեբեռսի Պատմության» հատվածում գրտնում ենք Հայոց ժամանակագրությունը սկզբից սկսած։

Մրանք տվյալներ են, որոնք ցույց են տալիս № 1775 ձեռագրուի և «Սեբեռսի Պատմության» կից հատվածի նմանությունը, որի հիման վրա կարելի է ենթադրել նշված երկու երկի նույնության մասին։

Պետք է նաև ենթադրել, որ հատվածի և № 1775 ձեռագրում պահպանված բնագրի միջև պակասում է մի թերթի շափ նյութ, որը երկու հատվածները միացրած է եղել իրար։ Առանց այդ թերթի՝ հատվածներն այժմ ընդհատ են երևում։

Հատվածի և Հ. Տարոնացու երկի միջև ենթադրվող կապից անկախ, թերթի պակասն զգացվում է նաև նրանում, որ հատվածի առաջին գլուխը վերնադիր չունի²²⁸։ Մրանից երկում է, որ առաջին գլուխը սկզբի թերթը կորել է, որի վրա գտնված է եղել բնագրի սկիզբն ու դիմի վերնագիրը։ Այլապես՝ չեր կարող պատահել, որ հետագա դրույները վերնագիր ունենային, իսկ առաջինը՝ ոչ։

Ինչպես որ Մաեփանոս Տարոնացու անունը կրող վերնագրում հեղինակը հայտնում է, որ գլխի նյութը քաղել է Մաեփանոս Տարոնացուց, այնպես էլ կորած թերթի վրա մնացած վերնագրում նա իր սովորության համաձայն պետք է հայտնած լիներ առաջին գլխում օգտագործված պատմիշի անունը։ Թերթի կորստյան պատճառով այդ պատմիշի անունը չկա և հատվածում մենք նրան հանդիպում ենք միայն մականվամբ՝ ժա-

²²⁸ Տպագրերում հանդիպող վերնագրերը հրատարակիչներն են դրեւ Զեռագրերը վերնադիր շատնեն։

մանակագիր: Բայց սա նշանակում է, որ հեղիճակը կորած թերում արդեն հայտնած է եղել նրա անունը: Հատվածում հանդիպող արտահայտության ձևից իսկ երկում է, որ ժամանակիրն ընթերցողին արդեն ծանոթ մի անձնավորություն է. «զսոյն ճառէ ժամանակագիրն, այդպէս որպէս առաջիդ կայ»:

Հատվածն սկսվում է մի առաջաբանով, որը, ինչպես մեր սույն ուսումնասիրությունը ցույց տվեց, ոչ մի կերպ չի հարմարվում ո՞չ «Սերեսսի Պատմությանը», ոչ էլ նրան կից հատվածին:

Մեր կարծիքով այս առաջաբանը պատկանում է ժամանակագրին²²⁹: Հատվածի հեղինակն այն մեջ է բերել որպես պատմական վագերագիր: Հիշենք, որ հեղինակը գրում էր Բագրատունյաց պատմությունը և հակառակ Բագրատունիների հրեական ծագման մասին ընդունված ավանդության—ավանդություն, որ զալիս էր Պատմահայր Մովսես Խորենացու: —հայանում էր, որ Բագրատունիների նախահայր Բագրատը սերում էր Հայոց նահապետ Հայկի շառավիդներից («Բագրատուն Փառագեան՝ յորդացն Արամենակայ»): Այսպիսի համարձակ շեղումը Մովսես Խորենացուց, իհարկե, պետք է պահանջեր համապատասխան հավաստիացում, որպիսին կարող էր լինել ժամանակագրի առաջաբանում հիշատակվող Մարարա Մծուրնացու մատյանը և Հայոց Սանատորուկ արքայի պալատում գտնված Ագաթանգեղյան արձանագրությունը: Սրանից ելնելով հեղինակը Բագրատունյաց պատմության մեջ արտագրել է ժամանակագրի առաջաբանը, ցույց տալու համար, որ գոյություն ունի Բագրատունիների ծագման մասին նաև մեկ այլ կարծիք:

Հատվածն առհասարակ այդ կարգի բաղվածքների մի հավաքածու է: Սա Պատմության նախապատրաստական մասն է, որպիսիք նաև ուրիշ պատմիչների մոտ մեծ մասամբ հիմ-

²²⁹ Ա. Զայինյանի կարծիքով (Մաշտոցի Մատենադարան, անհատական արխիվ, թղթ. 232, գ. 121ա) «Երրորդ դարի հույն պատմիչ» Փափստոս Բուգանդացու գործը վեցերորդ դարում թարգմանել է Թեոդորոս Քերթողը. Երկու դպրությունից բաղկացած այդ թարգմանությունը «ամբողջապես իր Պատմության մեջ է առնում Սիրիուս նույնիսկ Փափստոսի կանխարանությամբ»:

նըզած են լինում նախորհ սկզբնագրյուրներից քաղված տեղեկությունների վրա, մինչեւ բուն նյութին անցնելու:

Հատվածում բառացի արտագրված է, տեսանք, Ստեփանոս Տարոնացու «Տիեզերական պատմությունից» մի ամբողջ էջ: Այդպիսի մի արտագրություն է, ահա, մեր կարծիքով, նաև ժամանակագրի առաջարանը: Նրան նախորդած բնագրում Հովհան Տարոնացին հայտնած է եղել խոստաբանությունը ժամանակագրից քաղելու մասին: Այդ ժանոթագրությունը կորել է և հատվածի բնադիրն այժմ սկսվում է հենց ժամանակագրի առաջարանով, որով տպավորություն է ստացվում, թե առաջարանը հատվածի հեղինակինն է²³⁰:

Այս անբնական դրության պատճառով «Սեբեռոսի Պատմության» կից հատվածի հեղինակը բնադրում հանդես է գա-

²³⁰ Հայ մատենագրության մեջ կարելի է ցույց տալ նաև արիշ օրինակներ, երբ այս կամ այն հեղինակի խոսքը նույնամիջամբ արտագրվելով մեկ արիշ հեղինակի կողմից՝ կարող է բնկարվել որպես արտագրողի խոսք: Մատագրություն այսպիսի մի գեպը հիշենք Ուխտանեսի մոտ: Այստեղ մի ամբողջ գույն (գլ. ԿԵ) բառացի արտագրված է Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմությունից» (գլ. Զ): Եթե այս գլուխի վերնադիրը կորած լիներ, Կաղանկատվացու խոսքերը կընկալիքին որպես Ուխտանեսի խոսքեր, այսինքն՝ տեղի կունենար նույն թյուրիմացությունը, որ առկա է «Սեբեռոսի Պատմության» հատվածում:

Ի գեա՞ Ուխտանեսի քաղվածքը կարող է նպաստել Կաղանկատվացու որոշ սիսալ ու պակասավոր նախադասությաններ հշգրտելու և լրացնելու գործին: Հմմտ. օրինակ, «Յայնմ տեղուց եղեւ սկիզբն Արեկելայց եկեղեցեաց մայրաքաղաքաց և լուսաւորութեան տիեզերաց» (Ուխտանես, Վաղ-պատ, 1871, հ. 2, էջ 123) և «Յայնմ տեղուց եղեւ սկիզբն Արեկելայց եկեղեցեաց, մայրաքաղաքաց և լուսաւորութեան տեղի» (Մ. Կաղանկատվացի. Մոսկվա, 1860, էջ 8): Ռուսերեն (История Агван Монселя Каганкатваци, писателя X века; перев. с армянского К. Патканяна, С. Петербург, 1861, стр. 7) և Փրանսերեն Deux historiens arméniens... Oukhtanes d'Ourhra... histoire en trois parties, traduits par M. Brosset, St. Pétersbourg, 1870, р. 346) հատարակաթյաններում սիսալ թարգմանված և էմինի կողմից Կաղանկատվացու հայերեն բնագրից դուրս նետված (իրքեւ «մուծեալ տեսանի ի գրչաց») այս նախադասությունը Ուխտանեսի մոտ հանդիպում էնք բնագրի կազմում, որը խոսում է Էմինի ենթագրաթյան զեմ և զրամ է Ուխտանեսի հիման վրա վերականգնել և հշգրտել այս սիսալ՝ հասկացված տեղեկությունը:

լիս միաժամանակ որպես երկու-երեք անձնավորություն։ Նա մերթ խոսում է որպես Մարտքա Մծուրնացու աշակերտների ժամանակակից մատենագիր, մերթ՝ որպես Հարյուրամյակներ հետո ապրած պատմիչների երկերին ծանոթ անձնավորություն, մերթ ներկայանում է Խոսրով արքայի պալատում պաշտոնավարող պալատականի դերում, մեկ էլ Հայտնվում է Միջազգեարում որպես շրջիկ մատենագիր, մի գետպում նա հանդես է գալիս որպես առաջին հայ պատմիչ, որ նկարագրում է «Հնկարագրված» («Հանստորագրեալ») ժամանակը՝ Հայերի և Բելի, Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելները, մեկ էլ Հիշատակում է «Հավաստի և ճշմարիտ» մատենագիր Մովսես Խորենացուն, որը վազուց արդեն նկարագրել էր այդ ժամանակաշրջանը և այլն։

Այս խայտաբղետ հակասությունները վերանում են, երբ որ հատվածը դիտում ենք իր բնական վիճակում, այսինքն՝ որպես XI դարի մատենագրական երկից պոկլած և հետագայում պատահաբար «Սեբեոսի Պատմությանը» միացած մի հատված, որտեղ պահպանվել են «Սեբեոսի Պատմությունից» առաջ և հետո դրված մի քանի պատմական գրվածքներից քաղվածքներ։ Առեղծվածի այսպիսի լուծմամբ բացատրություն են ստանում բանասիրությանը ավելի քան մեկ դար գրադարձած այն հարցերը, որոնց պատասխանը ուղնելիս մասնագետներն ստիպված են եղել դիմել զանազան ենթադրությունների։

III

ԲՆԱԴՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Արդեն ասվեց, որ «Սերեսոսի Պատմության» մեկ հասած բնագիրը պակասավոր է: Նրա ընդօրինակության համար հիմք ծառայած ձեռագիրն ունեցել է թերթերի ետևառաջություն և կորուստ, օտարամուտ հատված («Անանուն»), բնագրի աղճատում: Այժմ զոյություն չունեցող այդ մայր ձեռագրից է արտապրված Մաշտոցի Մատենադարանի № 2639 ձեռագիրը, որից և ծագում են մյուս բոլոր ձեռագրերը:

Թերթերի Ետևառաջությունը մասամբ ուղղել է Մտեփանոս Մալխասյանցն իր հրատարակությունում¹: Խոսվել է նաև օտարամուտ հատվածի և թերթերի կորսույան մասին: Շուրջ քսանական կարեռը ճշգրտումներ կատարել են հայերեն բնա-

¹ Նկատի ունենք Ե—Ը գլուխների կարգավորումը: Ի դեպ՝ Ստ. Մալխասյանցից առաջ Ա. Կարիերն էլ նկատել է «Սերեսոսի Պատմության» Ե—Ը գլուխների (նշում ենք վերջին հրատարակության գլխակարգման համարները) «միշ եղած մեծ աղավաղությունը, որ առաջ էր եկել ձեռագրի մեջ մի պոկված թուղթ ուրիշ տեղ զնելու հետևանքով, և որի պատճառով մոտ տասը երես կցկատոր, անկապ և անհասկանալի իին մնում» (ՍԵՊ, լշ 2): Այս անկանոնությունը վերացնելու նպատակով Կարիերի արած առաջարկը մասամբ համբնկնում է Ստ. Մալխասյանցի կատարած ուղղման հետ: Կարիերի առաջարկը, սակայն, մնացել է անտիպ մի նամակում (Մաշտոցի Մատենադարան, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 235, լ. 205): Ֆր. Մակերը «Սերեսոսի Պատմության» ֆրանսերեն թարգմանությունում կիրառել է իր ուսուցիչ Կարիերի առաջարկը, բայց դա կատարել է հավանաբար Կարիերից անկախ, դրա համար էլ չի նշել նրա անունը:

դրատարակիչներ Միհրդատյանը, Պատկանյանը, Մալխասյանը: Հյուրշմանը գերմաներեն (մասնակի) և Մակերը ֆրանսերեն թարգմանությունների ծանոթագրություններում նույնպես զբաղվել են բնագրի ճշգրտմամբ:

«Զնայեռվ այսքան ուղղումներին,—գրում է Ստ. Մալխասյանը,—դեռ շատ աղավաղություններ են մնում Սեբեոսի Պատմության մեջ, ինչպես և թերի տեղեր, որոնք կարող են ուղղվել և լրացվել միայն լավագույն ձեռագրի օգնությամբ»²:

Ինչպես տեսնում ենք, Ստ. Մալխասյանը «Սեբեոսի Պատմության» բնագրի մանրամասների ճշգրտման բանափրական հնարավորությունները համարում է սպասված և միակ հույսը թողնում է լավագույն ձեռագրի հայտնաբերմանը:

Թե երբեմ, այդպիսի մի ձեռագիր կհայտնաբերվի՝ դժվար է ասել: Բայց որ գիտության հնարավորությունները սկզբնական բնագրի վերականգնման ուղղությամբ տակալին սպասված չեն և որոնումները դեռ պետք է շարունակվեն՝ դա թերևս երեվում է ստորև բերվող բնագրական ճշգրտումներից և վերականգնվող հատվածներից: Բայց որում՝ այսոեղ մենք կատարել ենք միայն այնպիսի ճշգրտումներ և լրացումներ, որոնք ունեն աղբյուրագիտական կարենոր նշանակություն և որոնց հավաստիությունը մեզ ակնհայտ է թվում: Իսկ երկայնի ուղղումների մի մասը ցույց ենք տվել ուսումնասիրության նախորդ գլուխներում, մի մասն էլ կներկայացվի «Սեբեոսի Պատմության» մեր կողմից պատրաստվող հրատարակության ծանոթագրություններում:

Բնագրի բաւային կազմի ճշգրտման ուղղությամբ կատարված բանասիրական աշխատանքները մինչև այժմ ընթացել են «Սեբեոսի Պատմության» մեզ հասած հայտնի բնագրի սահմաններում և վերաբերել են մեծ մասամբ բառերի սրբագրությանը: Կորած հատվածների որոնում և վերականգնում գրեթե տեղի չի ունեցել: Ի տարբերություն նախորդների, սույն ուսումնասիրության մեջ բնգրկված են նաև «Սեբեոսի Պատմության» այնպիսի հատվածներ, որոնք պահպանվել են այս

² ՍԵՊ, էջ 2:

Պատմության ձեռագրերից դուրս և որոնց միջոցով մենք «Սերենսի Պատմության» մեջ վերականգնել ենք մի շարք բնակչության միավորներ: Վերականգնվող մանրամասները պարունակող բոլոր ձեռագրերն ավելի հին են, քան «Սերենսի Պատմության» մեզ հասած ամենահին ձեռագիրը (ընդօրինակ՝ 1672 թ.):

Սրբագրված բառերից մի քանիսը բանասիրության մեջ արդեն այս կամ այն շափով քննարկվել են, բայց նկատի ունենալով, որ եղածը, բավականաշաշափի հիմնավորված չինելով, չի կիրառվել «Սերենսի Պատմության» բնագրի հրատարակություններից և ոչ մեկում, մենք նորից ենք անդրադառնում նրանց:

Մեր կամարած բնագրական ճշգրտումներն ստորև ներկայացնում ենք «Սերենսի Պատմության» վերջին հրատարակության (Երևան, 1939, հրատ. Ստ. Մալխասյանց) էջերի հերթականությամբ, ներառյալ նաև թյուրիմացարար «Սերենսի Պատմությանը» միացած Ա—Դ գլուխները:

Ա

«Զանստարագրել» (Էջ 1, տող 9—10):

Պետք է ուղղել՝ «զանստորագրեալ»:

«Սերենսի Պատմության» բոլոր տպագիր բնագրերը, ինչպես նաև այս ձեռագիրը (Մատենադարան, ձեռ. № 2639) և երկու ուրիշ ձեռագրեր՝ (№№ 2935, 6454) ունեն «զանստարագրել», փիս. «զանստորագրել» (հապավման նշանով): Հայերենում այսպիսի բառ չկա: Միևնույն մայր օրինակից ծնված այս սխալը («զանստարագրել») ունեն նաև ՍՍՌՄ ԳԱ Ասիալի ժողովուրդների ինստիտուտի կենինգրադի բաժանմունքի ձեռագիրը (որի հիման վրա կատարված է «Սերենսի Պատմության» պետերբուրգյան հրատարակությունը, 1879 թ.), Վիեննայի Միխթարյան մատենադարանի №№ 52 և 86 ձեռագրերը և Երուսաղեմի Ս. Հակոբյանց մայրավանքի № 521 ձեռագիրը (Հմմտ. Մայր ցուցակ ձեռադրաց Սրբոց Յակոբեանց, հինգե-

բորդ հասոր, կազմեց նորայր եպո. Պողաբյան, Երևանադիմ, 1960, էջ 32): Թյուրիխացոթյունը տուաշացել է՝ «գանսառորապեալ» բառի և տառը ա-ի հետ շփոթելու և սկզբնական բնագրում բառի վրա եղած համագման նշանն անտեսելու հետեւանքով։ Այս պատահական դրշական վրիպակը առիթ է, տվել զանազան ենթադրությունների։ Բառը սրբագրելու համար առաջարկված բոլոր փորձերը հեռացել են բնագրից։ Այսպես. տուաշարկվել է՝ «զանսառորապեալ»-ի փոխարեն կարդալ «զայն ստորագրեալ» (Միհրդատյան, Մաս), «զայն ստորագրեալ» (Միհրդատյան), «զան ստորագրեալ» (Միհրդատյան, Պատկանյան, Ն. Զնամյան, Գ. Տեր-Պողոսյան), «անստերից գրել» (Ֆեթթեր), «զանսուտ գրեալ» (Մատիկյան), «զանսույզն եկարագրեալ» (Ակինյան), «զանցս տարագրեալ» (Ա. Զամինյան³) և այլն։ Որ ազակազգած բառում թաքնված է՝ «ստորագրեալ» բառը և որ բնագրի տվյալ հատվածում միայն այդ բառն է սկսած երեսում է նրանից, որ գրեթե բոլոր բանասերները սրբես ուղղում առաջարկել են հենց այդ բառը կամ՝ նույնիմաստ «նկարագրել», «գրել» բառերը։ Այսպես միաձայն գտնվելով՝ «ստորագրել»-ի զեպքում՝ բանասերները խիստ անհամերաշխ են եղել այդ բառի մյուս մասնիկի՝ զան-ի հարցում։ Մատենադարանի №№ 2867 և 3122 ձեռագրերի գրիշներն անցյալ դարում վերականգնել են բառի ուղիղ ձևը՝ «զանսառորագրեալ»։ Բառը ճիշտ են թարգմանել («неописанное время») Գր. Խաչաթյանցը (Армянский эпос, стр. 73). Այս ժեղ ճիշտ է թարգմանված նաև խուզակ. բառը), Մտ. Մալխասյանցը (История епископа Себеоса, стр. 11), Հ. Մանուկյանը (Начальная история Армении Мар Абаса, — «Палестинский сборник», 1956, стр. 74; ճիշտ է նաև խուզակ-ը): Ք. Պատկանյանը և Լանդուուն իրենց թարգմանություններում այս բառը բաց են թողել բնագրից։

Այսպիսով, «զանսառորագրեալ» սխալ ձևը պետք է սրբագրել «զանսառորագրեալ»։

³ Մաշտոցի Մատենադարան, անհատական արխիվների ֆոնդ, Զամինյանի արխիվ, թղթապ. 232, վալ. 121ա, Բ. տետրակ.

«Վերաբերութեան» (էջ 1, տ. 13):

Պետք է ուզգել՝ «վերաբերութիւն»:

Աղճատված բնագրում այս բառը հանդիպում է հետևյալ նախադասությունում. «Յուցից համառատիւք զարդեաց ժամանակաց զաղետիցս վերաբերութեան»: «Վերաբերութեան» ձեւ այստեղ բերականորեն չի հարմարվում նախադասությանը: Սկզբնական բնագրում, կարծում ենք, եղել է «ցուցից համառատիւք զարդեաց ժամանակաց զաղետիցս վերաբերութիւն»: Այսինքն՝ «համառոտ ցուց կուամ ներկա ժամանակների աղետների վրա հասնելը, կուտակումը», (և ոչ թե՝ «ցուց կուամ... աղետների վրա հասնելու», ինչպես որ կըստացվեր, եթե ընդունեինք «վերաբերութեան» սխալ ձևը):

«Վերաբերութիւն» բառն ունի մի քանի նշանակություն, որոնցից մեկն է՝ «ի վերայ բերումն, գալուստ ի վերայ, յարձակումն սաստիկ» («Նոր բառգիրք Հայկագեան լեզուի», հատ. Բ, երկասիրութեամբ Հ. Գ. Աւետիքեան, Հ. Խ. Սիրոմէլեան, Հ. Մ. Աւգերեան, Վենետիկ, 1837, էջ 802), «վրայ գալ, հարձակուել» (Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1945, հատ. 4, էջ 320) և այլն: Մեզ թվում է «Սերեսսի Պատմության» բնագրում գործածված «զաղետիցս վերաբերութիւն» արտահայտությունը ունի այս իմաստը և նշանակում է «աղետների վրա գալը, (վրա հասնելը, հարձակվելը)», «աղետների կուտակումը»: Պիտոյից գրքի (Յաղագս պիտոյից, տպվ.՝ Ս. Հ. Մ. Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1843, էջ 354) հայ թարգմանիշը գործածել է գրեթե նույն դարձվածքը, որը հանդիպում է «Սերեսսի Պատմության» սրբագրվող հատվածում: Նա ասում է. «Թուէլ զաղիտիցն վերաբերութիւն» (և ոչ՝ «զաղիտիցն վերաբերութեան»):

Ն. Մաուր (Օ «Начальной истории Армении» Анонима, стр. 280), Գ. Խալաթյանցը (Армянский эпос, стр. 76), Ն. Ակինյանը (Սերեսս եպս. Բագրատունեաց և իւր Պատմութիւնի Հերակլ.—«Հանդէս ամսօրեայ», 1923, էջ 405 և այլուր), Հ.

Մանաւանդյանը (Начальная история Армении, «Палестинский сборник», стр. 76) ընարել են բառի այս նշանակությունը:

«Սերեսոսի Պատմության» տվյալ հատվածի բոլոր թարգմանիչները սխալ են վերծանել բնագիրը: Այսպես. Ք. Պատկանայանը թարգմանել է ոտոքը (История императора Иракла, стр. 1): Նույն իմաստն է տվել նաև Վ. Լանդուան (Collection des historiens anciens et modernes de l'Arménie, t. I, Paris, 1867, p. 195): Ստ. Մալխասյանցը թարգմանել է օբстоятельства (տե՛ս Իстория императора Иракла, стр. 11):

Գ

«Հինգ» (էջ 1, առ. 14):

Պետք է ուզդել՝ «հին» (Այսուհետ պետք է ուզդել նաև էջ 2, առ. 3):

Այս բառը հանդիպում է «Սերեսոսի Պատմությանը» կից հատվածի սկզբում, որտեղ հեղինակը խոստանում է նկարագրմբել «զամս և զաւորս հին թաղաւորացն», իսկ քիչ հետո (էջ 2, առ. 8) «զամս առաջին թաղաւորացն Հայոց»: Հին և առաջին բառերն այսուհեղ համազոր նշանակություն ունեն, ինչպես Մովսես Խորենացու (գիրք Ա, գլ. թ) հետեւյալ նախադասության մեջ. «Ցուցաննել զառաջինս մեր և դրուն հին նախնիս» և կամ «Սերեսոսի Պատմության» (էջ 134) «ի հինսն և յառաջին փլիխոսփայսն»:

Այս բառի սրբագրության մասին մանրամասն խոսել ենք սույն ուսումնասիրության նախորդ դլուխներում:

Դ

«Անդր» (էջ 1, առ. 15):

Պետք է ուզդել՝ «անդ»:

«Սերեսոսի Պատմության» բոլոր ձեռագրերը և տպագրերն ունեն «անդ» ձևը: Մալխասյանցը դարձրել է «անդր»:

Բնագրում հեղինակը հայտնում է, որ ինքը գտնվել է Միջագետքում, որտեղ Մարաբա Մծուրնացու աշակերտների մի-

չոցով գտել է նրանց ուսուցչի մատյանում եղած Ապաթանդեղ-
յան արձանադրությունը: Ահա Միջազգեաբը նկատի ունենալով
է, որ Հեղինակը գրել է «անդ (այսինքն՝ Միջազգետքում) Հայե-
լով ի մատեանն Մարարայ փիլիսոփայի Մծուրնացւոյ»: Այս-
պիսով, «անդ»-ը «անդ» դարձնելը արդյունք է րնազրի ոչ
ճիշտ վերծանման, ուստի և պետք է վերականգնել բառի՝ ձե-
ռապրում հանդիպող ճիշտ ձևը:

Սույն ուսումնասիրությունում՝ մենք ցույց տվինք, որ բառը
պարունակող առաջարանը բաղված է ֆամանակազրից. առա-
ջարանի սկզբում, որը մեզ չի հասել, ֆամանակազրիը Հայո-
նած է եղել Միջազգետքում իր գանված լինելու մասին և այդ
պատճառով էլ մեզ հասած բաղվածքում Միջազգետք անվան
փոխարեն միանգամից հանդիպում է «անդ» բառը: Եթե Մի-
ջազգեաբի անունը նախօրոք հայտնված լիներ՝ անհնարին
կդառնար տվյալ տեղում «անդ» բառի դործածությունը, որով-
հետեւ եթե երկրի անունը չի տրվում, ընթեցողը չէր կարող
հասկանալ, թե ո՞ր երկրին կամ տեղին է վերաբերում «անդ»
(*«այնտեղ»*) բառը:

b

«Ի մատեանս Մարաբբայ փիլիսոփայի Մծուրնացւոյ, զոր
եկիտ զրոշմեալ ի վերայ արձանի» (*էջ 1, տ. 15—16*):

Պետք է լինի. «Ի մատեանս Մարաբբայ փիլիսոփայի
Մծուրնացւոյ [յարձանագիրն], զոր եկիտ զրոշմեալ ի վերայ
արձանի»:

Մեզ հասած բնագրում պակասում է անկյունավոր փակա-
գծերի մեջ մեր ավելացրած «յարձանագիրն» բառը, որի առ-
կայությունը սկզբնապես բնագրում ակնհայտ է:

Առանց այդ բառի ստացվում է այնպես, որ Մարաբբա
Մծուրնացին արձանի վրա գտել է իր գիրքը և ոչ թե արձանա-
գըրությունը: Սա թյուրիմացություն է: Պարզ է, որ իսոսքը վե-
րաբերում է արձանագրությանը: Եթե «արձանագիր» բառի
անկման պատճառով է ստացվել սխալը:

«Արձանագիր» բառի առկայության մասին է խոսում նաև շորս տող հետո հաջորդող մի արտահայտություն, որը համարյա թե կրկնությունն է քննարկվող բառը՝ պարունակող խոսքի և որանել արդեն «արձանագիր» բառը կա: Այսանդ ասված է: «արձանագրին, դրաշմեալ ի վերայ վիմի»: Այս արտահայտության օրինակով մենք անկյունավոր փակագերի մեջ վերականգնում ենք պակասող բառը, այսուես. «[յարձանագրին]... դրաշմեալ ի վերայ արձանի»:

Զ

«Ի Մծրին բաղարի, յապարանսն Սանարուկ արքայի» (Եջ 1, ա. 16—17):

Պետք է ուզգել՝ «Ի Մծուրն բաղարի, յապարանսն Սանարուկ արքայի»:

Փավստոս Բուղանդի «Հայոց պատմությունից» գիտենք, որ Սանարուկ արքայի ապարանքը եղել է ոչ թե Մծրինում, ինչպես որ գտնում ենք վերոհիշյալ աղճատված բնագրում, այլ՝ Մծուրքում: Փավստոսը (դպր. շորորդ, գլ. ԺԴ) գրում է: «Ապայ գնայր մարդու Հայր ի սուրբ տեղեացն և Եջ յափն դեայն հոսանացն Եփրատու, հովիտսն թանձրախուռն անտասին, ի գետախառնուն երկուց գետուցն, ի թաւութ խարձիցն մամիսեացն, որ ի տեղուցն ի հնոց իմն շինած քաղաք՝ զոր շինեալ Սանարուկ արքայի, որում անուն տեղւոյն Մծուրք կոշի»:

Ավելի մանրամասն տե՛ս ստորև՝ բնագրական ճշգրտում ԺԱ.

Հմմտ. նաև Ն. Աղոնց, Начальная история Армении, стр. 97, Ն. Ակինյան, «Հ. Ամս.», 1923, էջ 407—409, Մանանդյան, «Палестинский сборник», стр. 75, 76 և այլուր:

Է

«Ըստիպան» (Եջ 2, ա. 2):

Պետք է ուզգել՝ «աստ դիպան»:

Բոլոր ձեռագրերն ունեն «ըստ դիպան», Մալխասյանցը միացրել է և դարձրել զոյություն շունեցող մի բառ «ըստդիպան»։ Պետք է, հետեւելով ձեռագրերին, կրկին անջատել բառերը և տվյալ տեղում անիմաստ «ըստ»-ը դարձնել «աստ», որով նախաղասությունը կիմաստավորվի այսպես. «բացեալ դաւերածն վասն սեանցն՝ աստ դիպան արձանագրին»։ («սյուների պատճառով բացեցին ավերակները՝ այստեղ հանդիպեցին արձանագրությանը»):

Այս արտահայտության առթիվ հայտնված զանազան կարծիքների մասին տե՛ս ՍԵՊ, էջ 162, որտեղ Ստ. Մալխասյանցը, ի միջի այլոց, գրում է. «օթթե այնուամենայնիվ հարկ լիներ այս ըստ-ը չոկ գրել՝ պետք կլիներ նրան ուղղել աստ և ոչ թե անդ կամ ընդ»։ Այսպես ճիշտ նկատելով հանդերձ, նա ընադիրը դարձրել է «ըստդիպան» և այդպես էլ հրատարակել:

Ը

«Այսու ունէր» (էջ 2, ա. 6):

Պետք է ուղղել՝ «այս ունէր»։

Այս բառերը հանդիպում են հետեւյալ աղավաղված արտահայտության մեջ. «իմ գտեալ ի Միջագետս ի նորին աշակերտացն, կամեցայ ձեզ զրուցակարդել. քանդի այսու ունէր վերնադիրն այսպէս»։

Հեղինակը արձանագրությունը գտնելով Միջագետաքսում կամեցել է այդ մասին զրուցակարգել, հայտնելով նրա վերնադիրը. «այս ունէր զվերնագիրն այսպէս»։ Ուրեմն այստեղ չէր կարող «այս»-ի փոխարեն լինել «այսու», որը ավյալ նախադասությունում անիմաստ է։

Հաջորդ «ունէր» բառի ու-ն գրչի կողմից կրկնվելով միացել է «այս» բառին և տվել է «այսու ունէր» սիսալ ձեր։

Թ

«Զի շուեաց խաղաց գնաց Հայկն ի Քարելոնէ կնաւն և սրդութքն և ամենայն աղիսին հանդերձ, և շոգաւ ընակեցաւ

յերկիրն Արարադաց, ի տանն որ ի լեռնոտինն, որ զառաշին շինեալ էր Զբուանայ հաւրն՝ և եղբարբքն հանդերձ (էջ 3, ա. 14—17):

Պետք է լինի. «Զբուանայ՝ հարբն և եղբարբքն հանդերձ»: «շինեալ էր Զբուանայ հաւրն՝ և եղբարբքն հանդերձ արտահայտության մեջ Ստ. Մալխասյանցը Զրվանն ընկալել է որպես հայր Զրվան և «Հաւրն» բառը համարելով Զրվանի ինքնությունը բացահայտող բառ՝ բութ է զրել նրա վրա, որպեսզի դրանով այն անջատվի հաջորդ բառերից և վերաբերի Զրվանին: Այս կապակցությամբ նա գրում է (Հարցի բնդհանուր բովանդակությանը ծանոթացնելու համար քաղում ենք Մալխասյանցի կարծիքն ամբողջությամբ):

«Ի տանն որ ի լեռնոտինն, որ զառաշինն շինեալ էր Զրուանայ հաւրն՝ և եղբարբքն հանդերձ»: Առեղծվածային խոսք. ի՞նչ լեռան ստորոտ է, ի՞նչ տուն է, որ շինել է Զրվան հայրը. ո՞վ է այդ Զրվանը, ի՞նչ եղբայրներ են—այս հարցերից ոչ մեկին պատասխան չենք գտնում Սեբեռոսի մոտ. բայց բոլորի պատասխանը գտնում ենք Խորենացու մոտ, որ իբրև բանալի է ծառայում այս առեղծվածը լուծելու Խորենացին, ըստ իր սովորության, տեղերի աշխարհագրական անունները բացատրելու նպատակով՝ բերում է Օլիմպիոդորոս փիլիսոփայի պատմած անգիր զրույցը (գիրք Ա, գլ. Զ), որի մեջ պատմվում է, թե երբ Քսիսութրոս (=Նոյ) նավով հասավ Հայաստան և ցամաք իջավ՝ նրա որդիներից մեկը, Սեմը, երկիրը զիտելու նպատակով դիմեց զեպի Հյուսիս-արևմուտք. այնտեղ հանդիպեց մի դաշտի, երկայնանիստ լեռան մոտ, որտեղով մի գետ էր հոսում գետի Ասորեստան: Այստեղ նա կանգ առավ երկու լուսնական ամիս ու գնաց: Նրա կրտսեր որդիներից մեկը, Տարբան, իր որդիներով, աղջիկներով ու փեսաներով մնաց նույն տեղում, բնակության տեղ շինեց: Նրա անունով դաշտը կոչվեց Տարբան, իսկ լեռը հոր անունով՝ Սեմ. իսկ որտեղ որ նրանք իրարուց բաժանվեցին՝ Ցրոնք: Նույն Սեմը մի կարճ ժամանակ ապրեց նաև Բակտրիացոց կողմերը, և նրա անունով գավառը կոչվեց Զարավանդ, որովհետեւ Արևելքում Սեմին Զրվան են ասում: Այս զրույցով Խորենացին բացարաւում է

Սիմ (Տավրոս) լեռը՝ Սևմի անունից, Տարոն դավառի անունը՝ Տարբանի անունից, Ցրոնք տեղի անունը՝ «ցրվել» բայից, իսկ Զարավանդ գավառը Սևմի Զրվան անունից, ինչպես կոչելիս են եղել նրան Արևելքում (և ինչպես ինքը բացատրել է Թերոսոյան Միթիլայի Զրվան, Տիտան և Յատեառսթեն): Խորենացու այս հատվածով բացատրվում է Սեբեռոսի առեղծվածային հատվածը. լեռը՝ Սիմը կամ Տաւրոսն է, նրա ստորոտը՝ Տարոն գավառն է, Զրվանը Սևմն է, առաջին բնակության առևնը՝ որ Զրվան Հայրը շինել էր որդոց և Եղբայրների հետ՝ Տարբանի շինած բնակությունն է: Խուզնիսկ բացատրվում է «եւ եղբարբըն» խոսքում անտեղի «և» շաղկապը: Զեռագրում անշուշտ բաց է թողնված «որդուն» բառը, ինչպես երևում է Խորենացու պատմածից. ուրեմն պետք է այստեղ բնագիրը լրացնել՝ «շինեալ էր Զրուանայ Հաւրն՝ որդուն» և Եղբարբըն Հանդերձ»: Ահա դարձյալ մի ապացույց, որ Սեբեռոսի Մարաբասյան աղբյուրի հեղինակը ծանոթ է եղել Խորենացու Պատմության: Անձանոթ խմբագրողն այստեղ ամփոփել է Խորենացու պատմածը, բայց այնքան անաջող կերպով, որ առանց Խորենացու Պատմության օգնության՝ անհասկանալի կմնար»⁴:

Ստ. Մալիխասյանցի այս տեսակետը դժվար է հաստատել: Զրվանին վերաբերող նախաղասությունը հեղինակի օրինակելի նախադասություններից է, որտեղ գրավիշ Հակիրճությամբ պատմվում է. «Հայկը Բարելոնից շվեց, խաղաց, գնաց կնոջով և որդիներով և ամենայն կազմով հանդերձ: Եվ զնաց բնակիեց Արարադ Երկիրը, այն տանը, որ լեռան ստորոտին էր, որ առաջինը շինել էր Զրվանը՝ հոր և Եղբայրների հետ»:

Խորենացու մոտ դանում ենք զրուցի բնդարձակ շարադրությունը, իսկ այսակեղ՝ ամփոփումը, որը Խորենացու պատմածից այնքան էլ չի հեռանում:

Հատվածում հիշատակված Զրվանը նույն անձնավորությունն է, ինչ որ Խորենացու մոտ, այսինքն՝ նա իրոք որ Սևմն է և Խորենացու մոտ էլ Սևմը իր հոր հետ է եկել Հայաստան: Զրվանը հոր (Խորենացու մոտ տրված է հոր անունը, իսկ այս-

⁴ Սիմ, էջ 166—167:

անդ՝ ոչ) և եղբայրների հետ է շինել այն տունը լեռան ստորառում, ուր որ հետո եկել բնակվել է Հայկը:

Այստեղ ձեռագիրը ոչ մի «որդովն» բար բաց չի թողել և բոլորովին ել անտեղի չի գործածված «և» շաղկապը: Պարզապես, Զրվանի մասին պատմող հեղինակին հայտնի է եղել զրոյցի մի այնպիսի տարբերակ, որի համաձայն Զրվանը հոր և եղբայրների հետ է շինել տունը: Հիշենք Խորենացու պատմածը Արշակ արքայի մասին, ըստ որի՝ Արշակը Հայաստանի թագավոր է կարգում իր եղբայր Վաղարշակին, այնինչ «Սեբեռսին» կից հատվածում Արշակը թագավորեցնում է ուրդուն: Այսպիսի մի ամրբերության օրինակ է նաև Զրվանին վերաբերող զրոյցը:

Ուրեմն բնագիրը ճիշտ վերծանելիս ոչ մի բաց թողում, հավելում կամ քերականական այլ աղճատում չկա: Ուղղակի բուժք պետք է դնել իր տեղը՝ Զրվան անվան վրա և ամբողջ հատվածը կարդալ այսպես. «Ճի շուեաց խաղաց գնաց Հայկն ի Բաբեն! կնաւն և որդովքն և ամենայն աղխիւն հանդերձ, և շուշան բնակեցաւ յերկիրն Արարադաց, ի տանն, որ ի լեռուայինն, որ զառաշինն շինեալ էր Զրուանաց՝ հարբն և եղբարբքն հանդերձ»:

Միակ փոփոխությունը, որ կատարեցինք այստեղ՝ դա «Հաւրն» բառի սրբագրությունն է: Բառին հաջորդող «և» շաղկապից, ինչպես նաև «Եղբարբքն» բառի հոլովաճեկց (գործիական) երեսում է, որ աղճատված «Հաւրն» բառը նույնպես սկզբնական բնագրում պրված է եղել զործիական հոլովով՝ «Հաւրին»:

Ժ

«Քանզի թագաւորեաց Սեղմկիոս Նիանովը ի Բաբելոն ամս էլո», (էջ 7, տ. 25—26):

Պետք է ուղղել՝ «...Նիկանովը... ամս լի»

Մալխասյանը ծանոթության մեջ «Նիանովը»-ի մասին գրել է. «ուղղելի նիկանովը», բայց բնագիրը թողել է շուլըդշած: Սիմեոն Ապարանցու «Վիպասանության» մեջ (էջ 25—26) պարթևաց Արշակ քաջի մասին կարդում ենք.

Թէսպէս սուզ ինչ ի լուծ մրահալ,
 Սելևիայ հրաշանդեալ,
 Այլ փութապէս բղնա հերքեալ,
 Եւ ինքնագլուխ ազատացեալ...
 Զթէտալացիսըն գումարեալ,
 Բնդ նիկանով [բ] իւազմ արարեալ...

Ինչպես աեսնում ենք, «Սեբեռոսի Պատմության» Սիմեոն
 Ալպարանցու ձեռքում գտնված հնագույն ձեռագրում որսշա-
 կիորեն եղել է նիկանովը:

Անցնենք «ամս կթ» արտահայտությանը: Որ իրականում
 «կթ»-ի փոխարեն եղել է «կթ» հաստատվում է թվաբանական
 գործողությամբ: Այսպես բնագրում կարդում ենք. «Եւ եղե-
 յա մահուանն Աղեքսանդրու կայսեր Մակեդոնացւոց ժառա-
 յցին Պարթեփ Մակեդոնացւոց ամս կԱ (=61)»: Աղեքսանդր
 Մակեդոնացւոց հետո պարթեները մակեդոնացիներին ժառա-
 յել են 61 տարի: Այս թվանշանը գրելուց հետո հեղինակն
 սկսում է թվել այն մակեդոնացի թագավորներին, որոնց տա-
 րիների գումարը պետք է տար 61. «Քանդի թագաւորեաց Սե-
 ղեկիսու նիկանովը ի Բաբելոն ամս կթ (=38), Անտիոքոս Սո-
 տեր՝ ամս ԺԹ (=19), Անտիոքոս Թէոս՝ ամս Ժ (=10): Եթե
 այստեղ նշված թվանշանները՝ $38+19+10$ գումարենք,
 կստանանք ոչ թե 61, այլ՝ 67, այսինքն՝ վեց տարվա հավե-
 լում: Ահա հենց այս վեց տարին էլ արդյունք է գրշական աղ-
 ճատման, որի վերացմամբ ստացվում է մեր առաջարկած
 թվանշանը՝ «Սեղեկիսու նիկանովը ամս կթ» (Կրկաթագիր Բ-ի
 և Բ-ի շփոթը սովորական է ձևագրերում):

Ք. Պատկանյանը (История императора Иракла, стр. 8)
 և Ստ. Մալխասյանը (ՍեՊ, էջ 7) առաջարկել են կթ-ի փոխա-
 րեն կԱ, այսինքն մի թիվ, որի գումարը մյուսների հետ կտար
 ոչ թե 61, ինչպես որ նշված է բնագրում, այլ՝ 60: Գր. Խալաթ-
 յանը (Армянский эпос, часть II, стр. 12) գտնում է, որ
 Սեղեկիսու մասին տեղեկությունը քաղված է Եվսեբիոս Կեսա-
 րացուց, որը նշում է «կթ» թվանշանը, ուստի և «Սեբեռոսի»
 մոտ էլ է եղել «կթ»:

«Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Արշակ զորդի իւր դԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծբին քաղաքի» (էջ 9, տ. 6—18):

Պետք է ուզդել՝ «...ի Մծուրն քաղաքի»:

Հմմտ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան 1957, էջ 16—17, նաև Ա. Զամինյան, թղթ. 232, վավ. 101, 133:

Սա կարեոր ուզդում է, որովհետև նրանից իմացված է, որ «Արեսոսին» կից Հատվածի Հեղինակի օգտագործած սկզբնակը՝ բյուրում, ի արքերություն մեր մյուս սկզբնադյուրների, Հայոց թագավորության հիմնագրման վայրը նշված է եղեկ ոչ թե Մծբին քաղաքը, այլ՝ Հին Հայկական մայրաքաղաք Մծուրնը:

Նշված նախադասության մեջ Մծբին տեղանվան սիսալ լինելը բացահայտվում է, անմիջապես հաջորդ պարբերությունում, որտեղ կարդում ենք, «Եւ յուղարկէ (Արշակը—Գ. Ա.) զնա (Արշակ փոքրին—Գ. Ա.) ի Մրծանայ⁵ ընդ յարկմուտ զաւրու մեծաւ եվթանասուն հազարաց սպառագինաց»:

Ինչպիս տեսնում ենք Արշակը Փոքր Արշակին դեպի արեմուտք է ուղարկում ոչ թե Մծբինից, այլ՝ «ի Մրծանայ», այսինքն Մծուրնից: Ուրեմն նա Մծուրնում էլ թագավոր էր կարգել իր որդուն: Առաջին պարբերությունում «Մծուրն»-ը աղավաղվելով դարձել է Մծբին:

Մծուրն անունը պահպանվել է նաև շորս պարբերություն Հետո (էջ 10), որտեղ կարդում ենք. «Արդ՝ թագաւորէ Արշակին Փոքր կոչեցեալ՝ յամի Հարիւրերորդի քսան և իններորդի թագաւորութեանն Արշակայ Հաւը իւրոյ ի վերայ Հայաստան երկրի ի Մրծուրին քաղաքի»: Այստեղ նույնպես Մծբինի փո-

⁵ Մարկվարան առաջարկում է կարգալ. «ի Մծնալ». Տե՛ս Marguerit J., Eranšahr nach der Geographie des Ps. Moses Chorenaci, mit historisch-kritischem Commentar und historischen topographischen Excursen, Berlin, Weidmann, 1901, S. 172. «Մծուրն»-ը «Մծոփին»-ի հետ նույնացրել է առաջին անգամ Հ. Գաթրճյանը (Սեբեռս եպս. պատմագիր. «Եւրոպա» շարաթական յուրեր, Վիեննա, 1852, № 21. էջ 102 և այլուր):

խարեն հայոց թագավորության հիմնադիր քաղաք է նշանած Մծուրնը (ազակաղված «Մրծուին» ձևով):

Մծուրն ձեզ հանգիպում ենք նաև բուն «Սեբեսսի Պատմությունում» (էջ 39), որի սկզբնաղբյուրը եղել է դարձյալ մեր նշանած միենույն աղբյուրը: Այսպէս:

ՍԵՊ, Էջ 9

Յայնմ ժամանակի թագաւորեցուց Արշակ գորդի խոր Արշակ փառքը կոչեցեալ ի գերայ աշխարհիս Հայոց ի Մծրին քաղաքի: Եւ գտանցանէ նմա սահմանս զերուատան առ երկրաւն Տաճկաց և առ երկրաւն Խոսրւոց և գնապուակեալ առ Կիտիկեաւ: մինչեւ ցեզր ժամուն մեծի արևմտից և ցիւսիսոյ կողմանց ի լեռն մեծ կովկաս, որ ձգի բնդ կողմանս արենից և անցանէ առ սահմանաւն առ ամուր աշխարհաւն Մարաց և Հասանէ ի լեռն Զարասպ և անցանէ առ նոր Եթրակ երկրաւն:

Թովմա Արծրունու (Կ. Պոլիս, 1852, էջ 95) մոտ Մծուրն անունը պահպանվել է ավելի պակաս եղծմամբ. «...յասորոց կողմանէ զԱրուաստան (տպված է «Ասորեստան») եւ զՄծուին եւ զնուշիրական մինչեւ ի սահմանս Տաճկաց: Եւ ես մի իշխեցից քան Զարասպ (տպվ. «Զարասիս») անցանել յայդկոյս»:

Իշխան տեսնում ենք, այս բոլոր աղբյուրների փոխադարձ կապն ակնհայտ է: Եվ ազակաղված Մծրին անվանը ամենուրեք համապատասխանում է «Մծուրն»-ը (Մրծուին կամ Մծուրին աղակաղված ձերով):

Ուշադրություն պետք է դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ VII դարում ապրած «Սեբեսսի Պատմության» հեղինակը արդեն անծանոթ լինելով Մծուրն քաղաքին՝ նրա անունն ընկալել է ոչ թե որպես քաղաքի, այլ՝ դավասոի անուն և այն գետեղել է Արվաստանի և նոր Շիրականի միջև:

Այսպես շեր պատահի, եթե Հեղինակի օգտագործած սկզբնաղբյուրում հիշատակված լիներ Մծրին անունը: Մծրինը

ՍԵՊ, Էջ 39

[Պարսից իշխան Վահրամ Միւրեկանդակը Մուշեղ Մամիկոնյանին խոսանում է առաջ] «զամենայն Երկիրն Հայոց մինչեւ ցկապկոն (=Կովկաս) և ցղուն Աղուանից (=աշխարհաւն Մարաց) և յԱսորոց կողմանց զերուատան, զՄրծուին և զնոր Եթրական մինչեւ ցամանակն Տաճկաց, զի առ նախնեարք իսկ ձեղ յեալ է, և բնդ արեմուս մինչեւ ցիւսարիս Կապաղովկացոց (=զկապուտկեայ առ Կիուիկեաւ): Եւ Ես մի իշխեցից քան Զարասպ անցանել յայնկոյս»:

VII դարում էլ Արվաստանի մայրաքաղաքն էր և այդ բաց զիտենալով, «Սեբեսի Պատմության» հեղինակը այդ քաղաքի անունը չէր անշատի Արվաստանից և ընդունի որպես առանձին նահանգի անուն:

Մծուրն քաղաքը հայ Արշակունիները հիմնել են մեր թվակրության առաջին դարում կամ երկրորդ դարի սկզբին (*Markwart J., Untersuchungen zur Geschichte von Eran: —«Philologus», Supplementband X, H. I, S. 237*, Boissévain, Ein verschobenes Fragment des Cassius Dio: «*Hermetes*», Bd. 25. 1890, S. 229—339. *Մանանդյան Յ. Ա.*, Օ տօրցությունը և քաղաքները Հայաստանում՝ մայրաքաղաքի անունը մեզ հասցել է Հայաստանի ամենանշանավոր քաղաքներից մեկը: Փակստոս Բուզանդի մոտ պահպանված հին ժողովրդական ավանդությունը այս քաղաքի անունը մեզ հասցել է որպես Հայաստանի մայրաքաղաքի անուն և շատ ավելի հավանական է, որ Հայաստանի կազմում երեք շզտնված ասորական Մծրինի փոխարեն Հայաստանի մայրաքաղաքը երեքէ եղած լինի իսկապես Մծուրնը: Այս քաղաքը IV—V դարերի սահմանագլխին իր գոյությունը գաղարեցնելով և մեր պատմիչների օրոք այլևս հայ կյանքում որեւէ գեր շխաղալով, աստիճանաբար մոռացվել է և նրա անունը, մանավանդ հետագա գրիչների կողմից, ենթարկվել է աղավաղումների⁶: Այդ է պատմառը, որ նշված օրինակներում այդ անունը հանդիպում է տարբեր ուղղագրությամբ՝ «Մրծանայ», «Մրծուին», «Մրծուին», իսկ Միմեռն Ապարանցու մոռ՝ «Մրծունայ»:

«Սեբեսի Պատմության» մեզ հասած ձեռագրերում Մծուրն անունը գրված է Մրծուրն ձեռվ:

⁶ «Մովսես Խորենացին շիմանալով Հայաստանում գոյություն ունեցած Մծուրն քաղաքի մասին, Սանաարուկին և վերադրում Մծրին—Նիսիրին քաղաքի կառուցումը... Խորենացին Մծուրն-ը վերծանելով Մծուրն այդ տեղեկությունը վերագրել է Նիսիրինին» (*Մանանդյան Յ. Ա.*, Օ տօրցությունը և քաղաքները Հայաստանում, ս. 112—113).

Սիմեոն Ապարանցու տեղեկություններից երեսում է, որ քաղաքի անունը ավելի հին ձեռագրերում նույնպես գրվելիս է եղել միւնուցն Մըծուրն ձեռվ։ Ապարանցին (Վիպասանութիւն, էջ 17 և 27) գրում է.

ի Մարաբայ մատեանս մտեալ,
ԶՄըծունացոյնըն վերծանեալ...
ի Մըծունայ⁷ արտաքս ելեալ
եւ յարեմուտս ի մարտ դիմեալ...

Գրության այս ձեզ մեղ օգնում է պատկերացնել, թե ինչ նղանակով է բառը հետագայում աղավաղվել և դարձել Մըծունին։ Անվան երկրորդ տառը՝ թ-ն ընդօրինակվել է որպես թ, իսկ նախավերջին թ-ն շփոթվել է ի-ի հետ։ Իրար շափաղանց նման և ձեռագրերում հաճախ միմյանց փոխարինող այս թ, թ, ի տառերի շփոթից է, աճա, առաջացել սխալը, որին անշուշտ նպաստել է նաև այն հանդամանքը, որ ընդօրինակողներին ավելի հայտնի է եղել Մծուին (=Մծբին) քաղաքի անունը, որի հետ և սիւալմամբ նույնացվել է Մըծուրնը։

Հին ձեռագրերում Մըծուրն-ը պետք է գրվեր հապավմամբ, երբ ձայնավորները սղվում էին. այսպես՝ ՄԾՌՆ. Բավական է, որ այստեղ թ-ն շփոթվեր իրեն շատ նման Բ տառի հետ՝ ընդօրինակող գրիչներն իրենց առջև կունենային ՄԾԲՆ ձեզ, որը այլ կերպ չէր կարող վերծանվել, քան՝ Մծբին. Այս հանդամանքը նույնպես դեր է կատարել Մծուրնի և Մծբինի շփոթման դորժում։

Մեղ թվում է, Մովսես Խորենացու ձեռքին եղած ձեռագրում նույնպես առկա է եղել հենց այսպիսի մի շփոթ, որի հետեւնակրով Պատմահայրը Մարաբա Մծուրնացուն (=Մծբինացի) ընկալել է որպես Մարաբա Մծբինացի և այդտեղից էլ նրան համարել է ասորի (Գիրք առաջին, գլ. թ. «զտեալ զոմն ասորի Մար Աբաս Կատինայ»)։ Այսպիսի մի սխալի հետեւնք է հավանաբար նաև այն, որ Խորենացին ոչ թե Մծուրն, այլ Մծբին է հասկացել այն քաղաքը, որը երկրաշարժից հետո

⁷ Ձեռագրում՝ «Մըծունայ», սակայն վերեի «Մըծունացոյնըն» ձեր ցուց է տալիս, որ սկզբնապես եղել է «Մըծունայ»։

քանդվել է և կրկին շինվել Սահատրուկի կողմից (Հմմտ. Ն. Ակինյան, Սեբեռս..., «Հ. Ամս.» 1923, էջ 407):

Նախնական բնագրում եղած Մծուրնի օգտին է խոսում նաև Մարաբա Մծուրնացու բերանից հաղորդվող ամբողջ ավանդությունը հայոց նախնիների մասին: Նիկ. Աղոնցը («Վիզանտ. վրեմենիկ», 1901, ստ. 96) արդեն նշել է, որ այդ ավանդությունն «իր ներքին տվյալներով, բովանդակության տվյալներով, հակված է ավելի դեպի Հյուսիսային Հայաստան... Ավանդությունում շոշափվող անվանարկումը վերաբերում է Հյուսիսային Հայաստանին: Նույնիսկ Շամիրամին գտնում ենք Այրարատում: Ում, ում, բայց նրան կարելի է թողնել հարավում, ուր մինչև այսօր ժայռերի վրա սպահանվել է նրա հիշատակը... (Արշակունիների) նախամայրը բնակվում է Ազատ լեռան ստորոտին: Պատմականորեն, գիտենք, որ նրանի կապված են Հյուսիսային Հայաստանի հետ, որտեղ և բնակվել էին»: Ինչպես տեսնում ենք, ժողովրդական ավանդությունը հայոց օրբանը համարել է Հյուսիսային Հայաստանը: Ուրեմն շատ բնական է, որ այդ նույն ավանդությունը Հայաստանի մայրաքաղաք է նշել Մծուրնը և ոչ Մծրինը՝ հարավում գտնված մի ասորական քաղաք:

Մծուրնի փոխարեն աղավաղված Մծրին քաղաքի անունը, այսպիսով, չի համապատասխանում նաև ավանդության ոգուն: Նիկ. Աղոնցը շկասկածելով Մծրին անվան ուղղագրության վրա, բայց և միաժամանակ նշելով ավանդության «Հյուսիսհայաստանյան» հակումը, Մծրինը դիտում է որպես ավանդությանը հակասող արտահայտություն («Այս բոլորով հանդերձ,—գրում է նա, —ճիշտ է, սակայն, նաև այն որ Արշակը և Վաղարշակը ըստ «նախնական պատմության» թագավորանիստ քաղաք են ընտրում Մծրինը՝ մի բացարձակ ասորական քաղաք, որը երբեք չի գտնվել Արշակունիների տիրապետության տակ»): Մեր կատարած սրբագրությունից հետո վերանում է նաև Աղոնցի նշած այս միակ հակասությունը:

Արդ՝ եթե մենք պնդում ենք, որ Մարաբայի բերանից պատմվող ավանդությունն սկզբնապես գտնվել է Բուղանդարանի կազմում, ապա ինչպես բացատրել այն փաստը, որ

«Սեբեռսի Պատմությանը» կից հատվածում Արշակունիների թագավորության հիմնադրման ժամանակ արդեն գոյություն ուներ Մծուրնը (որտեղ թագավոր կարգվեց Արշակ փոքրը), իսկ Փափստոս Բուզանդի շորրորդ դպրության ժԴ գլխի համաձայն, Մծուրնը շինել է Արշակից հետո թագավորած մի թագավոր՝ Սանատրուկը, «ի հնոցն իմն շինած քաղաք՝ զոր շինեալ Սանատրուկ արքայի, որում անուն տեղւոյն Մծուրք կոչի»:

Բանը նրանումն է, որ «շինել» բառը հայ մատենագրության մեջ օգտագործվել է նաև «վերաշինել», «վերանորոգել» իմաստով: Նոր Հայկազյան բառարանը (էջ 478) այս բառի նշանակություններից մեկն էլ համարում է հենց վերանորոգելը: «շին և կանգուն պահել նորոգութեամբ զիրս... բարեկարգել: բարեգարգել»:

Այս նշանակությամբ «շինել» բառը հանդիպում է հայկական բազմաթիվ վիմագիր արձանագրություններում⁸ և մատենագրական հուշարձաններում:

Այսպիսի մի նշանակություն է ունեցել նաև «շինել» բառը Փափստոս Բուզանդի հաղորդածի մեջ. Սանատրուկը վերաշինել և ոչ թե հիմնել է Մծուրնը, և այս իրողության մասին կողմնակիրեն իմանում ենք նաև Մովսես Խորենացուց. «Այլ որ ինչ գործք եղեալ Սանատրկոյ՝ ոչ ինչ յիշատակաց արժանի համարեցաք բայց ի շինուածոյ Մծբին (=Մծուրն) քաղաքի: Զի ի շարժմանէ իսխտեալ՝ քակեաց և վերստին շինեաց պահառագոյն և պարսպեաց կրկին պարսպով և պատուարաւ» («Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Ցարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 160, գիրք II, գլ. 12):

Հ. Գարբիել նահապետյանը իրավացիորեն գտնում է, որ Բուզանդի սկզբնական բնագրում դրված է եղել հենց «վերստին շինեալ», հետագայում «վերստին» բառն ընկել է, որի

⁸ Հմմտ. օրինակ, Սանահնի Ամենափրկիլ եկեղեցին վերանորոգող առաջնորդ Հովհաննեսի հետևելալ արտահայտությունը՝ «շինեցի զերբեմն լեալ զեկեղեցիս» (Կ. Ղաֆարարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 27):

Հետեանքով այժմ «անիմաստ կմնան Բուղանդի շարած բառերը»⁹:

ԺԲ

«Արշակ որպի Տիրանայ՝ ամս է» (Եջ 11, տ. 10):

Պետք է ուզգել՝ «...ամս է»:

Թյուրիմացության պատճառը սկզբնապես բնագրում եղած է-ի (=30) որպես է (=7) վերծանվելն է, որին հավանաբար նպաստել է նաև այն, որ Արշակից մեկ անուն հետո հաջորդող Պապի իշխած տարիները է (=7) են: Այս է-ն կարող էր ընդորինակող գրիշը նկատել է-ի փոխարեն: Այսպիսի դեպքերի մի քանի օրինակներ մենք բերեցինք նախորդ գլուխներում:

Աղճատված թվանշանը կարող է ծագել նաև Ասողիկի ազգեցությամբ (Տիեղերական պատմություն, Փարիզ, 1859, էջ 70, «Եւ ետ Տիրանայ թագաւորեաց Արշակ որդի իւր ամս 7»): Իսկ Ասողիկի մոտ սխալն առաջացել է, ինչպես նկատել է Ն. Աղոնցը («Վիզանտ, վրեմեննիկ», ստր. 67) Մովսես Խորհնացու՝ Արշակին տված է (=30) տարին է (=7) տարով շփոթելու հետեանքով:

ԺԳ

«Շապուհ արքայ Պարսից՝ ամս ՀԳ» (Եջ 11, տ. 10—11):

Պետք է ուզգել «ամս ԺԲ»:

Խոսքը վերաբերում է Շապուհի՝ Հայաստանում իշխած տարիներին: Նախնական բնագրում այդ տարիների գումարը եղել է «ԺԲ» (Համեմատիր ՍԵՊ, Եջ 18, «Եւ տիրէ Շապուհ ի վերայ Հայոց ամս ԺԲ սրով և հրով և գերութեամբ»), սակայն ընդորինակող գրիշները սխալմամբ Շապուհի Հայաստանում իշխած տարիների թիվը դարձել են ՀԳ:

Սխալին հավանաբար նպաստել է այն հանգամանքը, որ միենույն «Սեբեռոսին» կից հատվածում մի երկու էջ հետո (Եջ 15—16) տրված է Շապուհի Պարսկաստանում իշխած տարիների թիվը, որն է՝ ՀԳ. «Յամին ԽԹ-երորդի Արտաշրի ար-

⁹ Հ. Գաբրիել վ. Նահապետեան, Ուզղագրությունը աղղային մատենաւուց, Վեսետիկ, 1907, էջ 93:

քային Պարսից, և ժթ ամ Տրդատայ արքային Հայոց թագաւորէ Շապուհ որդի Արտաշրի ի վերայ աշխարհին Պարսից ամս ՀԳ»:

ԺԴ

«Ճսա սպանեալ Ստահրացւոյն Արտաշրի որդոյ Սասանայ՝ եբարձ զտէրութիւն Պահլաւաց, սկսեալ յերեսուն ամի թագաւորութեանն Փիլիդելփոս Պտղոմէոսի, կալեալ նոցա ընդ ամենայն ամս՝ ՆԾԷ» (էջ 12, տ. 8—11):

Այսուեղ ընդօրինակող գրիչը բաց է թողել մի բնագրական հատված: Հայտնի է, որ Ասողիկը նույնությամբ արտագրել է «Սերեսոսի Պատմության» քննարկիվող հատվածը պարունակող մի ընդարձակ մաս: Այսուեղ պահպանվել են «Սերեսոսի Պատմության» մեջ հասած ձեռագրում բացակայող բառերը, որոնք Ասողիկի «Տիեզերական պատմության» (Ս. Պետերբուրգ, 1885, էջ 31) միջոցով պետք է վերականգնել այսպես (Ասողիկի մոտ պահպանված բառերն ընդգծում ենք). «Ճսա սպանեալ Ստահրացւոյն Արտաշրի որդոյ Սասանայ եբարձ զտէրութիւն Պահլաւաց յերկրորդ ամին Փիլիպպեայ թագաւորին Հռոմայ: Աստանոր դադարէ թագաւորութիւնն Պարեաց յազգէն Պահլաւազ, սկսեալ յերեսուն ամի թագաւորութեանն Փիլիդելփոս Պտղոմէոսի, կալեալ նոցա ընդ ամենայն ամս՝ ՆԾԷ»...

ԺԵ

«Թագաւորէ ինքն, և յետ նորա պայազատք նորին զնոյն ձեւ աւրինադրէ զՄամիկոնէիցն սակս ազգաց զնեղութիւնն Քանզի ոչ են սոքա որդիք Ազգածնինն Արամանեկայ, այլ են եկեալ ի Ճանաստանէ յամս Արտաւանայ արքային Պարթևաց և մեծին Խոսրովու արքայի Հայոց. որպէս լուայ յառնէն մեծէ, որ եկեալ էր Հրեշտակութեամբ ի Ճենաց թագաւորէն առ արքայն Խոսրով. յոր իմ հարցեալ ի դրանն արքունի, եթէ՝ Աղք մի մեծ ի Հայաստան երկրի կայ, զորմէ ասեն եթէ ի ձերմէ աշխարհէն գնացեալ են: Եւ նա ասաց ինձ...» (էջ 12, տ. 14—24):

Այս հատվածը մենք բաղել ենք «Սեբեռոսի Պատմության» հնագույն ձեռագրից (ձ. № 2639, թ. 492ա): Տպագիր բնադրում մեր ընդգծած «աւրինադրէ» բառը դարձել է «աւրինադրէն»: Դժվար չէ նկատել, որ մեր բերած հատվածում քերականորեն սխալ և արտասոց է հետեւյալ արտահայտությունը՝ «պայապատք նորին զնոյն ձև աւրինադրէ զՄամիկոնէիցն»: «պայապատք»-ը հոգնակի է, իսկ նրան վերաբերող «աւրինադրէ» բայց՝ եզակի: Սրանից ենելով հրատարակիչները փորձել են քերականորեն համաձայնեցնել բնագիրը, «աւրինադրէ»—ձեւ տպագիր բնագրում դարձնելով «աւրինադրէն»: Սակայն այստեղ հարցը սովորական գրչական վրիպակի չի վերաբերում: Հատվածում թաքնված է մի իրողություն, որը պետք է որոնել հենց «աւրինադրէ» ձեռւմ:

Ստ. Մալխասյանցն առաջին անգամ ինքն է դիտուկ կռահմամբ հասել այն մտքին, որ «աւրինադրէ» բառն իրենից ներկայացնում է «աւրինակի» բառի «աւրինա»—կիսատ մնացած մասնիկի և «դրէն» վերջավորություն ունեցած ինչ-որ ուրիշ բառի (որի սկիզբը կորել է) պատահական միացում (տե՛ս ՍԵՊ, էջ 170—171):

Այս շատ կարևոր հայտնագործությամբ հանդերձ չի նկատվել, որ բառը ոչ թե «Սեբեռոսին» է, այլ գտնվում է «Սեբեռոսի Պատմությանը» XI դարից հետո միացած մի քաղվածքում, որի վերնագրի մեջ պարզ հայտնվում է, որ մեջբերումը կատարված է Ստեփանոս Տարոնացոց (իմա Ասողիկից): «Երկրորդեցից ի պատմագրացն Սովորիսի Խորենացույն և Ստեփանոսի Տարաւնացույ» (ՍԵՊ, էջ 11):

Ի տարբերություն Ստ. Մալխասյանցի, մենք «աւրինադրէ» բառը (որ Մալխասյանցը դարձրել է «աւրինադրէն») ձեռադրից հարազատորեն վերցնելով դիտում ենք որպես Ասողիկի «աւրինակի» բառի (տե՛ս Ասողիկ, 1885, էջ 32. «պայազատք նորին զնոյն ձև աւրինակի») «աւրին—» մասնիկի և մեկ ուրիշ սկզբնաղբյուրից եկած «-ադրէ» վերջավորությամբ բառի պատահական միացություն:

Ինչպես ցույց ենք տվել նախորդ դլուխներում, «-ադրէ»-ն հանդիսանում է հատվածի՝ XI դարի հեղինակի դորժածած

«շարադրէ» բառի (որով նու ակնարկել է ժամանակագրին) վերջավորությունը: Այդ և նախորդ բառերով հեղինակը ժամանակագրի պատմածը (Մամիկոնյանների մասին) քաղելուց առաջ Հայտնել է, որ ժամանակագիրը «այսպէս շարադրէ զՄամիկոննիցն սեսի ազգացեղութիւնն»: Այս քաղվածքը հետագայում Հայտնվել է Ասողիկից կատարված մեջբերման վերցում: Եվ քանի որ մեղ Հասած բնագրում կորել է ինչպես Ասողիկից քաղված Հասածի շարունակությունը («աւրինակի» բառի «-ակի» վերջավորության հետ միասին), այնպես էլ XI դարի հեղինակի՝ ժամանակագրից քաղած Մամիկոնյանների զրույցին նախորդած բնագիրը, ուստի ձեռագրում իրար կողք-կողքի են Հայտնվել երկու տարբեր հեղինակների (Ասողիկի և XI դ. հեղինակի) գործերից մնացած «աւրին [ակի]» և «[շար]յաղը» բառերը, որի հետևանքով և ստացվել է «աւրինագրէ»:

Ստ. Մալիասյանցն իր Հրատարակությունում արգեն անշատել է տարբեր բառերի պատկանած մասնիկները, որով և Հարցն սղառված է Համարել: Մակայն մենք ասացինք, որ խոսրը յնազրի միայն սրբագրությանը չի վերաբերում. աղճատված բնագրում թաքնված են Մամիկոնյանների զրույցի ծագումը պարզող կարեոր տվյալներ:

Ավելորդ Համարելով կրկնել արգեն ասվածը՝ առաջարկում ենք ուսումնասիրությունում շարադրված փաստերի հիման վրա ամբողջ Հատվածը սրբագրել այսպես.

Յետ որոյ նուանեալ Ստահրացոյն Արտաշրի որդոյ Սասնայ զամենայն արիս և զանարիս, և զբագումս ի նոյն ազգէ թագաւորութեան Պարեաց և Պահլաւաց՝ թագաւորէ ինքն և յետ նորա պայազատ նորին զեռյն ձեւ աւրինա [կի]: (Այստեղ վերջանում է Ասողիկից քաղված Հատվածը: Այնուհետև XI դարի հեղինակն սկսում է ժամանակագրից քաղել Մամիկոնյանների մասին պատմածը, նախօրոք կցելով իր ծանոթագրությունը, որի մեղ Հասած մասն սկսվում է հետեւյալ խոսքերով). ... [Այսպէս շար] աղրէ (ժամանակագիրը — Գ. Ա.) զՄամիկոնէիցն սեսի ազգացեղութիւնն «բանզի ոչ են սուառդիք ազգածնինն Արամանեկայ, այլ են եկեալ ի ձենաստա-

նել, յամս Արտաւանայ արքայի Պարթևաց և մեծին Խոսրովու արքայի Հայոց (այսաւեղ վերջանում է XI դարի Հեղինակի ծանոթագրությունը Մամիկոնյանների ոչ Հայկական ծագում ունենալու մասին և սկսվում է Ժամանակագրից բերված քաղվածքը, որաեղ Ազաթանգեղոսը պատմում է, թե ինչպես ինքը՝ Տրդատի քարտուղարը, Տրդատի հոռովի արքունիքում ձենաց գեսապանից լսել է զրույցը). «Ուրպէս լուայ յատնէն մեծէ, որ Եկեալ էր հրեշտակութեամբ ի ձենաց քազաւորէն առ արքայն Խոսրով. յոր իմ հայցեալ ի դրանի արքունի, Եթէ՝ Ազգ մի մեծ ի Հայաստան Երկրի կայ, զորմէ ասեն Եթէ, ի ձերմէ աշխարհէն գնացեալ են: Եվ հա ասաց ինձ...» և այլն:

Ինչպես տեսնում ենք, Հատվածում միացած են Երեք տարբեր Հեղինակների խոսքեր. XI դարի Հեղինակինը և նրա քաղած աղբյուրներինը՝ Ասողիկ, Ժամանակագրի (որը պատմում է Ազաթանգեղոսի բերանով):

ԺԶ

«Սերեալ բազմացան յոյժ, և եղեն յազգ մեծ ի Մամիկոնայ և ի Կոնակայ» (էջ 13, տ. 28—29):

Պետք է ուղղել՝ «...ի Մամիկայ և ի Կոնակայ»:

Մամիկոնյանների զրույցի հիմնական գծերից մեկը «Մամիկոնյան» անվան ստուգաբանությունն է: Ժողովրդական ավանդությունն այս անվան հիմքում դնում է Երկու ձենացի և գրայրների անունները: Եթև Եղբայրներից մեկը իրոք Մամիկոն կոչվեր, ինչպես որ Հանդիպում ենք աղավաղված բնագրում, ատա այլևս կարիք չէր զգացվի մի Երկրորդ անվան, որովհետև «Մամիկոն»-ը արդեն պակաս չունի Մամիկոնյան ազգանունը կազմելու Համար: Բայց որովհետև իրականում եղել է ոչ թե Մամիկոն, այլ՝ միայն «Մամիկ» (կամ ավելի ճիշտ՝ «Մամ», ինչպես որ գտնում ենք Մեսրոպ Վայոցձորեցու Պատմությունում), ուստի և պահանջվել է Երկրորդ Եղբայր՝ Կոնակի (ավելի ճիշտ՝ Կոն) անունը, որպեսզի Երկու անունները միասին կազմին «Մամիկոն»:

Ելնելով սրանից պետք է «Մամիկոն» անունը սրբագրել՝ «Մամիկ»։ Քննարկվող բնագրում այդ անունը հանդիպում է չորս անգամ, որից միայն մեր նշած դեսպոտ է տեղի ունեցել աղճատումը, մնացած բոլոր դեպքերում պահպանված է «Մամիկ»-ը։ Այսպես՝ «Ասեն, ասէ, գուսանք և ի մերում աշխարհին յերդս իւրեանց զՄամիկն և զԿոնակն, արս երկուս լեալ քաջս և զլիսաւոր եղբարս հարազատս» (Էջ 12, տ. 24—26), «Եւ զորաժողով լինէին Մամիկն և Կոնակն ի վերայ նորա ի միում տեղուց աշխարհին իւրեանց» (Էջ 13, տ. 8—9), «Փախստական լեալ Մամիկն և Կոնակն դնան առ արքայն Արշակունի, որ նստէր ի Բագլ Շահաստանի, յերկիրն Քուշանաց» (Էջ 13, տ. 13—15)։

ԺԷ

«Յամի շորորդի Զենոնի թագաւորէ Պարսից Յամասպ՝ Ը» (Էջ 21, տ. 4):

Պետք է ուղղել՝ «...Յամասպ Յ»։

Երկաթագիր Բ և Ծ տառերի շփոթի Հետևանքով աղճատված բնագրում Յամասպի թագավորության տեսղությունը երկուսից (Բ) դարձել է ութ (Ծ)։ Քանի որ այս աղճատումը տեղի է ունեցել համաժամանակյա (սինքրոնիկ) աղյուսակում, որտեղ Յամասպի թագավորության տարիները նշված են բյուղանդացի թագավոր Զենոնի տարիների հետ համաձայնաբար՝ ուստի դժվար չէ Զենոնի միջոցով ստուգել Յամասպի տարիների իրական տեսղությունը։

Այսպես. աղյուսակում հայտնվում է, որ Յամասպը զա՞ է բարձրացել Զենոնի շորորդ տարին, հետևաբար, եթե նա իրոք Ծ (=ութ) տարի թագավորած լիներ՝ նրա թագավորության վերջին տարին կհամընկներ Զենոնի թագավորության տասներկուերրդ տարվա հետ (4+8=12)։

Աղյուսակում, սակայն Զենոնի թագավորության հինգեռորդ տարում արդեն Պարսկաստանում թագավոր է դառնում Յամասպի փոխարեն Կավատը («Եւ ի վերայ Ե-երորդի ամի Զենոնի կայսեր թագաւորէ Պարսից Կաւատ»), Ուրեմն Յա-

մասսպը թագավորել է երկու տարի՝ ջենոնի շորտորդ և հինգերորդ տարիների ընթացքում:

Այս փաստի հիման վրա պետք է «Ճամասպ Ը» աղավաղված արտահայտությունը սրբագրել «Ճամասպ Բ» ճշգրիտ ձեռվով, որը պահպանվել է նաև Ստեփանոս Ասողիկի, Մխիթար Անեցու և մյուսների մոտ: (Հմմտ. Ասողիկ, 1885, էջ 112, ծ. 4, Միւ. Անեցի, 1879, էջ 33, տե՛ս նաև Dulaquier, Recherches sur la Chronologie arménienne. p. 140. Адонц Н., Начальная история Армении, стр. 71).

ԺՂ

«Յամի երրորդի Յուստիանոսի կայսեր թագաւորէ Խոսրով որդի Կաւաստայ՝ ամս ԽԵ» (էջ 21, տ. 12—13):

Պետք է ուզդել՝ «...ամս ԽԵ»:

Սրբագրվող արտահայտությունը նույնպես հանդիպում է Համաժամանակյա աղյուսակում: Հայտնի է, որ այս աղյուսակի համար հիմք է ծառայել բուն «Սերեոսի Պատմությունը»: Սրա միջոցով կարելի է սառւզել առաջարկվող սրբագրությունը: Այնաեղ (ՍԵՊ, էջ 29) կարդում ենք. «Այս Խոսրովի ժամանակս իւրոյ թագաւորութեանն կապեաց զՊահակն Ճորայ և Աղուանից, կալաւ ձերբակալ զարքայն Եղերացւոց և առ մարտիւ զԱնտիոք Պիսիդացւոց, և գերեալ նստոյց առ թագաւորական կայանին... կալաւ սա զբագաւորութիւնն ամս ԽԵ»:

Ասողիկը, Սամվել Անեցին և Մխիթար Անեցին նույնպես Խոսրովի թագավորած տարիների գումարը նշում են ԽԵ: Ուրեմն սկզբնական բնագրում եղել է ԽԵ:

ԺԹ

«Ապա Բբոր բամբիշն դուստր Խոսրովայ՝ ամս Բ» (էջ 22, տ. 3):

«Եւ թագաւորեցուցին զԲբորն, դուստր Խոսրովայ» (էջ 100, տ. 4—5):

Պետք է սւպել «Բոր բամբիշն», «զԲորն», դուստր Խոսրովայ»:

Ինչպես «Սերեսսի Պատմությանը» կից Հատվածում, այնպես էլ բուն «Սերեսսի Պատմությունում» պարսից Խոսրով Բթագավորի աղջկա և թագուհու անունը սխալմամբ գրված է Բոր: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ սկզբնական բնագրում Բբոր-ի փոխարեն եղել է Բու: Երականում էլ պարսիկները Բբոր անունով թագուհի չեն ունեցել. Բբորը Բորան անվան աղավաղումն է: Հմմա. Hübschmann H., Arm. Grammatik, S. 33.

Թովմա Արծրունին, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, որոնք օգտվել են «Սերեսսի Պատմության» սկզբնական բնագրից, գրում են՝ Բոր կամ Բորն (որն ավելի մոտ է Բորան անվանք):

Ք. Պատկանյանը (Опыт истории династии Сасанидов по сведениям, сообщаемым армянскими писателями. СПб, 1863, стр. 83) և Ֆ. Յուստին (Iranisches Namenbuch, Marburg, 1895. S. 71) բերում են Խոսրով Բ-ի քույր Բորան-ի անվան Հիշտակություններ Հունական, ասորական, արարական, պարսկական և այլ աղբյուրներից, որտեղ երբեք Բբոր ձեր չի հանդիպում:

Այս և նշված մյուս փաստերի հիման վրա «Բբոր»-ը պետք է սրբագրել «Բոր»-ով:

ի

«Եւ թակաւորեաց Յազկերա ի վերայ աշխարհին Պարսից ամս ի: Յազկերա ի: Կոստանդին՝ ԺԱ: Արքայն Խսմայելի՛ թ»: Յերկոտասան ամի Կոստանդին և ի ի-երորդ ամի իսմայելացւց աէրութեանն՝ բարձաւ տէրութիւնն Պարսից» (էջ 22, տ. 24—27):

Պետք է սւպել «...Արքայն Խսմայելի՛ ԺԹ...»:

Հմմա. Hübschmann H., Zur Geschichte Armeniens. S. 6, A. 1.

թ-ից առաջ նախնական բնագրում եղած ժ-ի անկման հետևանքով տարեթիվերի հաշիվները ներկա բնագրում սիսալ են:

ԲԵՐՎԱԾ ՀԱՏՎԱԾԻ ԱՊԱԶԺԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՍՄԱՅԵԼԻ ԱՐՔԱՅԻ Թ (=9-րդ) տարին համբնինում է Կոստանդինի ժԱ (=11-րդ) տարվա հետ՝ «Կոստանդինի ժԱ: Արքայն իսմայելի Թ»:

Էյս այս տեղեկության՝ իսմայելոց արքայի ի-երորդ (=20-րդ) տարին պետք է համապատասխաներ Կոստանդինի 22-րդ տարվան, այնինչ հատվածի երկրորդ մասում Կոստանդինի 22-րդ տարվա փոխարեն գտնում ենք 12-րդ տարին՝ «ՅԵՐԿՈՏԱՍԱՆԻ (=12) ամի Կոստանդինի, և ի-երորդ (20-րդ) ամի իսմայելացոց աէրութեանն՝ բարձաւ տէրութիւնն Պարսից»:

Այսպիսով, առաջին և երկրորդ մասերում նշված տեղեկություններն իրար չեն հարմարվում և Կոստանդինի կապակցությամբ տալիս են տասը տարվա տարբերություն: Այդ տարբերությունն ավելի պարզ է երեսում իսմայելացի թագավորի կապակցությամբ: Աղյուսակում նշված է, որ Կոստանդինի 11-րդ տարին համբնինում է իսմայելի արքայի 9-րդ տարվան. այս դեպքում մի տարի անց, այսինքն Կոստանդինի թագավորության 12-րդ տարում, իսմայելացի թագավորի տարիներն ել պետք է մեկ տարով աճեին և 9-ից դառնային 10: Իրականում, սակայն, բնագրի երկրորդ մասում տասի փոխարեն կարդում ենք քսան: Սահմանից պարզ երեսում է, որ իսմայելցի թագավորը նախորդ տարին, այսինքն Կոստանդինի թագավորության 11-րդ տարում, ոչ թե Թ (=9), այլ ԺԹ (=19) տարվա թագավոր էր: Տասը տարվա այս բացարձակ սխալը կվերանա, եթե վերականգնենք նախնական բնագրում մեր ենթադրած Ժ (=10) թվանշանը իսմայելացոց արքային վերաբերող Թ-ից առաջ: Այս դեպքում բնագիրը կկարգավորվի և այլև անհամաձայնություն չի մնա նրա առաջին և երկրորդ մասերի միջև և այդպիսով Կոստանդինի երկոտասան (=12) տարին իրոք կհամապատասխանի իսմայելացոց արքայի ի-երորդ (=20-րդ) տարվան, ինչպես որ կարդում ենք հատվածի երկրորդ մասում՝ «ՅԵՐԿՈՏԱՍԱՆԻ ամի Կոստանդինի և ի-երորդ ամի իսմայելացոց աէրութեանն՝ բարձաւ տէրութիւնն Պարսից, որ կալաւ ՇԼԲ ամ»:

Ուրեմն, բնագիրը պետք է սրբագրել այսպես. «Եւ թագաւորեաց Յազկերա ի վերայ աշխարհին Պարսից, ամս ի; Յազկերու՝ ի; Կոստանդին՝ ԺԱ. Արքայն Խսմայելի՝ ԺԹ»:

Առաջարկվող սրբագրությունը հաստատվում է մեր կատարած հաշվումներից բացի նաև բուն «Սեբեոսի Պատմության» տվյալներով: Այստեղ (էջ 139—140) գրեթե միենույն բառերով պատմվում է. «Եւ եղկ ի խանեւուրդի ամի Յազկերատի արքայի Պարսից, ի մետասան ամի Կոստասի կայսեր, որ կոչեցաւ յանուն Հաւր իւրոյ Կոստանդին և յամին ԺԹ-երորդի հսմայելացւոց տէրութեանն... զարացն Թէտալաց կալեայ զՅազկերտ սպանին, որ կալաւ զթագաւորութիւնն ամս ի: Եւ բարձաւ տերութիւնն Պարսից և ազգին Սասանայ, որ կալան զթագաւորաւթիւնն ամս ՇԽԲ»:

Ի դեպ՝ այս հատվածը միաժամանակ ցույց է տալիս, որ «Սեբեոսի Պատմությանը» թյուրիմացաբար միացած հասկածի հեղինակը ոչ միայն որոշակիորեն օգտվել է բուն «Սեբեոսի Պատմությունից», այլև գրեթե արտագրություն է կատարել նրանից: Դրա լավագույն ապացույցն են Պարսից տերության անկմանը վերաբերող խոսքերը, որոնք և հասկածում, և՝ «Սեբեոսի Պատմությունում» միենույնն են: Այդպես են նաև Կոստանդինի անվան բացատրությունը և այլ փաստեր:

Իհարկե, ընդորինակող գրիչները ժամանակի ընթացքում բնագրերը ենթարկել են որոշ փոփոխությունների, որոնց հետեանքով բննարկվող հատվածում կարդում ենք. «կալաւ ՇԽ ամ», իսկ «Սեբեոսի Պատմությունում»՝ «կալան... ՇԽԲ», բայց դրանք հնարավոր են ոչ միայն տարբեր բնագրերում, այլև միենույն բնագրի ներսում, օրինակ՝ «Սեբեոսի Պատմության» բազմաթիվ միենույն անուններ զրված են տարբեր ձեվերով: Դրա ցայտուն օրինակներից է ՄԵՊ 31 և 71 էջերում հանդիպող տեղեկությունները Պարսից սահմանակալների մասին: Միենույն հեղինակի գրքում մի տեղ սահմանակալներ են նշված Խորականը, Մերակրուտը, Հոյիմանը, մի ուրիշ տեղ՝ Նիխորականը, Մերկուտը, Յեմանը, մի գետքում Խորականին «սպանին զաւրք Պարսից ի Գառնի», իսկ մյուս դեպքում՝ «սպանին զաւրքն Պարսից ի Գուփի»:

Պատահում են նաև դեպքեր, երբ ոչ թե գրիշները, այլ հեղինակներն իրենք են սխալվում։ Հ. Հյութշմանը (Zur Geschichte Arméniens, S. 6) նշել է Պարսից Հազկերտ և բյուզանդացի Կոստաս թագավորներին վերաբերող ժամանակադրական տվյալների անհամաձայնությունը «Սեբեռոսի Պատմությանը» կից համաժամանակյա աղյուսակում։ Այստեղ Կոստասը թագավորել է Հազկերտի 7-րդ տարում («Յազկերտ է-երրդ։ Կոստաս՝ զառաջինն»), սակայն քիչ հետո նույն հեղինակը հայտնում է. «Յազկերտ՝ ի (=20)։ Կոստանդին ժեմ (—11)։»

Այսպիսով երկու աելքեկությաններն իրար չեն բռնում։ Եթե Կոստասը թագավորել է Հազկերտի 7-րդ տարում (ինչպես նշված է առաջին տեղեկությունում), այդ դեպքում Հազկերտի 20-րդ տարին կհամընկներ Կոստասի 14-րդ և ոչ թե 11-րդ տարվան, ինչպես որ կարդամ ենք երկրորդ տեղեկությունում։

ԻԱ

«Յայնժամ արձակէ ի վերայ նորա Պերող արքայ՝ Հոնաց դաւր յոյժ» (էջ 25, տ. 12—13):

Պետք է ուղղել՝ «...Պերող արքայ, Պարսից...»։

Ք. Պատկանյանը «Սեբեռոսի Պատմության» ռուսերեն թարգմանության մեջ (էջ 25) նախադասությունը ծանոթադրել է այսպես. «Այս աելքը կարելի է թարգմանել երկու ձևով՝ Հոների արքա Պերողը նրա դեմ ուղարկեց հզոր զորք, կամ էլ՝ Պերող արքան նրա դեմ ուղարկեց հոնաց հզոր զորքը։ Երկու դեպքում էլ փաստի պատմական իմաստը սխալ կլինի։ Ուստի և մենք գերազանցինք «Հոնաց»-ը սրբազրել «Պարսից»-ով։

Այս ճիշտ նկատողությունն անտեսվել է և «Սեբեռոսի Պատմության» հետադա հրատարակիչները նախադասությունը թողել են նույնությամբ։ Ճիշտ է, Ֆ. Մակերը (Histoire d'Heraclius par l'évêque Sebeos, p. 3) ծանոթագրության մեջ կրկնել է Պատկանյանի ասածը, բայց բնագիրը թարգմանել է միենույն սխալով։ Իսկ Ստ. Մալիխասյանը,

առհասարակ, ոչ մի ծանոթագրություն չի տվել և «Պերող արքայ՝ Հոնաց» արտահայտությունը հրատարակել է նույնությամբ:

Ք. Պատկանյանը, ինչպես երեսում է, սխալն այնքան ակնհայտ է համարել, որ չի նշել իրեն ասածը հաստատող որևէ փաստ: Անհրաժեշտությունը, սակայն, թելազրում է ցույց տալ փաստերը:

Ամենապաշտին փաստը հենց Ք. Պատկանյանի նշանը է. Պերողը ոչ թե Հոնաց (ինչպես որ սխալ ընդորինակված է «Սերենսի Պատմության» ձեռագրում), այլ՝ Պարսից արքան էր, ուստի և «Հոնաց»-ը պետք է սրբագրել «Պարսից»-ով: Եթե անգամ «Հոնաց» բառը վերաբերիր «զօր» բառին («արձակէ ի վերայ նորա Պերող արքայ՝ Հոնաց զօր») դարձյալ դա պատմական սխալ է, որովհետև Պերող արքան Վահան Մամիկոնյանի դեմ երբեկ Հոնաց զորք չի ուկարեկել: Այնպես որ «Սերենսի Պատմության» սկզբնական բնագրում պարզապես դրված է եղել «արձակէ ի վերայ նորա Պերող՝ արքայ Պարսից զօր յոյժ», իսկ ընդորինակող գրիչը «արքայ Պարսից»-ի փոխարեն թյուրիմացաբար ընդորինակել է «արքայ Հոնաց»: Սա ակնհայտ գրչական վրհպակ է:

Մեր տեսակետը հաստատող փաստեր ենք գտնում նաև Ղազար Փարսկեցու «Հայոց պատմության» մեջ, որի միջոցով պարզվում է, որ Հոները ոչ միայն չեն մասնակցել Վահան Մամիկոնյանի դեմ ձեռնարկված կոփիներին, այլև, ընդհակառակը, դաշնակից լինելով վրաց Վախթանգ թագավորի հետ, նրանք պատրաստ են եղել կովելու պարսիկների դեմ: Պերողի թագավորության 25-րդ տարին Վախթանգն ապստամբում է և որոշում է պարսիկների դեմ Հանել Հոնաց զորքերին. «այնշափ հանեմ Հոնս, որում ոչ կարիցեն հարկանել ի դիմի զօրքն Պարսից» (Ղազար Փարսկեցի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 118, նաև՝ 121, 132, 133 ևն):

Վահան Մամիկոնյանն ինքը Պերողի դեմ ապստամբության պատրաստվելիս նկատի է ունեցել նաև Հոնաց զորքերի օգնությունը, «խորհի երթալ առ կայսր... Հոնաց... կամի խնդրել գունդ և ապստամբել» (117): Այնպես որ Պերողն ինքն

Է հնիւրելված եղել Հոնաց վտանգին և բնականաբար չէր կորող Վահան Մամիկոնյանի դեմ հանել «Հոնաց զարք յոյժ»:

իթ

«Եւ նորու առին զբանակն ամենայն հանդերձ արքունական զանձիւք: Եւ կալան զրամբիշն և զբանակն, և թափեցին զմաշաղերձանն ամենայն, դեսպակն ոսկեղէն զբաղմաքանրար, որ Եր ակամբը պատուականաւք և մարդարտաւ յօրինեալ, որ անուանեալ կոչէր ի նոցունց դեսպակ փառաց» (Էջ 28, տ. 10—14):

Պետք է ուղղել՝ «...եւ կալան զբամբիշն և զբանուկանն, և թափեցին զմաշաղերձանն...»:

Սրբագրվող բառի («զբանակն») վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Ա. Կարիերը՝ նորայր Բյուզանդացուն ուղղած մի նամակում, որն անտիպ է կ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի անհատական արխիվների ֆոնդում (թղթ. 235, վավ. 205: Նամակը ֆրանսերեն է, զրված է 1892 թ., օգոստոսի 26-ին): Այսուեղ Կարիերը հայտնում է, որ «կալան զբամբիշն և զբանակն» արտահայտության մեջ «բանակն» բառը պեսաք է ուղղել «բանուկան», որը պահապերեն «բանուկ» (=«տիկին») բառն է: Այնուեւետև Կարիերը բերում է Փափստոս Բյուզանդից համապատասխան օրինակներ, որոնցից մեկի մեջ նույնպես բառը պահպանվել է սխալ ընդօրինակությամբ. «առին... զկանայս թագաւորին և զբամբիշն և զբանական (կարդա՝ «բանուկան» վրաց՝ բանոգանի» (=տիկին) (Փ. Բուզանդ գպր. 4, գլ. իԱ) և «ըմբռնէին գտիկնանցն տիկինն հանդերձ այլովք կանամբքն (Փ. Բուզանդ, գպր. 6, գլ. 2)): Կարիերը հետագայում իր կատարած սրբագրության մասին նամակով հայտնել է Հ. Հյուբշմանին (Armenische Grammatik, I T., S. 117): Կարիերի առաջարկը «Սեբեռոսի Պատմության» ֆրանսերեն թարգմանության մեջ կիրառել է Ֆ. Մակերը (Histoire d'Heraclius, p. 6): Սրբագրվող բառին անդրադարձել են նաև Ն. Բյուզանդացին, Ն. Մառը, Հ. Աճառյանը, որն ընդունել է «բանուկան» ձևը (Հայերեն արմատական բառարան, Հ. Ա, 1927, էջ 296) և ուղիղներ:

Աղջատումը տեղի է ունեցել Վարդան Մամիկոնյանի ապստամբովթյանը վերաբերող հատվածում։ Հայոց զորքերը գրավում են պարսիկների ամբողջ բանակը (=ճամբարը). «Եւ նոքա (Հայերը—Գ. Ա.) առին զբանակն ամենայն հանդերձ արքունական գանձիւք»։ Մրանից անմիջապես հետո հաջորդ նախադասությունում կարդում ենք. «Եւ կալան զբամբիշն և զբանակն և թափեցին զմաշապերճանն ամենայն»։ Պարզ է, որ այս «բանակ»-ի փոխարեն սկզբնական բնագրում եղել է ուրիշ բառ։ Մեկ անգամ բանակի գրավման մասին հայտնելուց հետո հեղինակը չէր կարող հաջորդ նախադասությունում դարձյալ հայտնել բանակի գրավման մասին։

Նախադասովթյան բովանդակությունից էլ երկում է, որ այնտեղ խոսքը կարող էր վերաբերել ոչ թե բանակին, այլ բամբիշին (թագուհուն) և բանուկան-ին (տիկիններին)։ Այլապես՝ չէր կարող պատահել, որ հեղինակը գրեր՝ «Ճերբակալեցին թագուհուն և ճամբարին»։ «Բանուկան» (մեծամեծ տիկնայք) բառը պարսկերեն է, ընդորինակող գրիշները ծանոթ չեն ելով նրան՝ ընկալել են որպես «բանակն»։ Փակստոս թուղանդի գրքում էլ միենուզն պատճառով «բանուկան»-ը դարձել է «բանսկան»։ Բայց որ և՛ թուղանդը, և՛ «Սերենոսի Պատմովթյան» հեղինակը նկատի են ունեցել պարսից տիկիններին՝ դա երկում է նրանց արտահայտովթյան ընդհանրությունից։ Փակստոսն ասում է «առին... զիանայս թագաւորին և դրամբիշն և դրանսկան (կարգա՝ «զբանուկան»)», մեկ ուրիշ տեղ՝ «ըմբռնեցին դրիկնանցն տիկինն հանդերձ այլովք կանամբքն»։ Իսկ «Սերենոսի Պատմովթյան» հեղինակը գրում է. «Եւ կալան զբամբիշն և զբանուկան»։

Այսպիսով, «Սերենոսի Պատմովթյան» սկզբնական բնագրում եղած «բանուկան» բառի իսկովթյունն ապացուցով փաստերն այնքան ակնհայտ են, որ իրավունք են տալիս աղճամովկած «զբանակն» բառը սրբագրել «ղբանուկան»-ով։

իԳ

«Շինեալ քաղաք և անուանեալ զնա Վեհ Անջատոք Խոսքվ, զոր անուանեալ Շահաստան-ի նոկ-նոյ կոչեն» (էջ 29, տ. 5—6)։

Պետք է առզեր «...անուանեալ զնա վեհ Անտիոք Խոսրով... կոչեն»:

Խոսրով վերաբերում է Խոսրով Անուշրվան թագավորի կառացած վեհ Անտիոք Խոսրով քաղաքին: Անտիոքը 540 թ. դրավելոց հետո Խոսրովը Անտիոքի նմանությամբ կառուցեց մի նոր քաղաք, որն արար ազբյուրները կոչում են Rumija («Հոսրուական»), ասորական աղբյուրները՝ Antiox Xesron, Հույն Հեղինակները՝ 'Անտիոք' շօթքն, պարսիկները՝ Veh-Antiox-Xosrov, Հմմտ. T. Nöldeke, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden. Aus der arabischen Chronik des Tabari, Leyden, 1879, S. 165, 166. Hübschmann, Arm. Gramm. I T., S. 83. Macler F., Histoire d'Heraclius, p. 8. Marquart J., Armenische Streifen:— «Յուշարձան», Վիեննա, 1911, էջ 300—301:

«Սեբեսի Պատմության» սկզբնական բնագրում նույնպես քաղաքը կոչված է եղել «Վեհ Անտիոք Խոսրով»: Բնդօրինակող դրիշը «Անտիոք»-ը կարդացել է «Ան [ջա] տոք Խոսրով» և այդպիսով աղավաղել բնագիրը, Հ. Մարկովարտը (Arm. Streifen.—«Յուշարձան» էջ 309). Անջատով ձեր բացատրել է սրբես բաղարկություն (Kontamination) Անջոն և Անտոն անունների, սակայն սա բռնազբոսիկ բացատրություն է թվում. Հայերենում (և ոչ էլ պարսկերենում) այդ ձեերը չկան (չնայած Մարկովարտը Անջոն-ն բխեցնում է ուշ պարսկերենի Andijo-ից): Ք. Պատկանյանը (История императора Иракла, стр. 187—188) առաջարկում է քննարկվող անունը կարդալ Վեհ-ան-Անդոկ Խոսրով, որը սակայն, պարսկերենում կնշանակեր «Խոսրովի Անտիոքից լավը», այնինչ այստեղ Խոսրով վերաբերում է հենց Խոսրովի շինած Անտիոքին:

իԴ

«Եւ թագաւորէ Որմիզդ որդի նորա (Անուշ-Ծոռւանայ— Գ. Ա.) յետ նորա: Եւ արդ՝ այս են զաւրավարք արքային Պարսկաց, որ ելին մի ըստ միոչէ յերկիրս Հայոց՝ յապստամբութենէ:

Վարդանայ Մամիկոնից տեսոն սրբույն վասակայ, մինչև
ցայսաւր ժամանակի (էջ 29, ա. 26—40):

Պետք է լինի՝ «...մինչև ցայսը ժամանակ»:

Հեղինակը ե—է զլուխներում ամփոփ շարադրում է Հայաստանի պատմությունը, սկսած Վարդան Մամիկոնյանի առստամբությունից մինչև Որմիզդ Դ-ի թագավորությունը Պարսկաստանում: Դրանից հետո թվում է այն սրաբիկ զորավարներին, որոնք Հայաստան են եկել այդ ժամանակամիջույնը, այսինքն՝ Վարդանից Որմիզդ ընկած տարիների ընթացքում: Որմիզդը թագավորել է 578—590 թվականներին: Իսկ «Սեբեոսի Պատմությունը» գրվել է Որմիզդի գահ բարձրանալուց շուրջ հարյուր տարի հետո: Ուրեմն այս Պատմության հեղինակը չէր կարող Որմիզդի ժամանակ կատարված դեպքի մասին գրել «մինչ ցայսաւր ժամանակի» («մինչև այսօր»):

Այստեղ զործ ունենք գրչական թյուրիմացության հետ: Որմիզդի ժամանակը նշելով որպես Հայաստան եկած պարսիկ զորավարներից վերջինի ժամանակ, հեղինակը բնականաբար պետք է գրեր ոչ թե «մինչև ցայսաւր ժամանակի», այլ՝ «մինչև ցայսը ժամանակ», որ է՝ «մինչև այս ժամանակ», այսինքն՝ մինչև Որմիզդի ժամանակ: Եվ իսկապես, զորավարների ցանկը հասնում է մինչև այդ ժամանակը:

Այս ճշգրտումը կարևոր բանասիրական նշանակություն ունի «Սեբեոսի Պատմության» գրության ժամանակը որոշելու տեսակետից: աղճատված բնագիրը կարող է կասկածների առիթ տալ (դրա մի օրինակ տե՛ս Hübschmann, Zur Geschichte Armeniens. S. 8, A. 1), որովհետև եթե հեղինակը Որմիզդի ժամանակը (578—590) կոչում է «այսօր ժամանակ», կնշանակի կարելի է եղրակացնել, որ Պատմության հեղինակն ապրել է Որմիզդի ժամանակ: Եվ քանի որ Պատմության մեջ նկարագրված են նաև Որմիզդից ավելի քան յոթ տասնամյակ հետո կատարված դեպքեր, ուստի կարելի է հանգել նաև երկրորդ թյուրիմացությանը՝ որ Պատմությունը գրվել է նաև մի երկրորդ հեղինակի կողմից:

Առաջարկված սրբագրությունը կանխում է նման կասկածները:

«Ապա եկին սահմանակալք պարսիկք մինչև ցողառումն խողաղութեանն՝ որ ի մէջ Պարսից և Յունաց և ի մէջ թաղաւարացն երկոցունց՝ Մավրիկայ և Խոսրովայ: Եւ առա Վընդատականն: Ապա Խորականն: Զսա սպանին զաւրք Պարսից ի Գառնի, և ինքեանք ապստամբեալք գնացին ի Գեղումս: Ապա Մերակբուտն: Ապա Յաղէնն: Ապա Բուտմահ: Ապա Նոյիմանն» (էջ 31, ա. 8—14):

Նույն աեղեկությունը համարյա միենույն բառերով դտնում ենք նաև 71-րդ էջում. «Եւ այս են սահմանակալք տէրութեանն Պարսից յամս հաշտութեան այնորիկ ի Հայաստան երկրի և ի Դուին քաղաքի: Վնդատական, Նիխորական. զսա սպանին զարքն Պարսից ի Դուին և ինքեանք ապստամբեալ գնացին ի Գեղումս: Ապա Մերկուտ: Ապա Յաղէնն: Ապա Բուտմահ: Ապա Յեմանն»:

Այս տարօրինակ կրկնությունը «Սեբեոսի Պատմությունում» արտառոց է թվում: Դժվար է պատկերացնել, թե միենույն հեղինակը երկրորդ անգամ հայտներ այն, ինչ արդեն հայտնել էր և այն էլ՝ հայտներ գրեթե միենույն բառերով: Սա ավելի հավանական կլիներ, եթե մեկ ուրիշն արտագրեր կամ օգտվեր նախորդ հատվածից:

Տարօրինակ են նաև սահմանակալների անունների աղճառումները հատվածներից մեկում, ինչպես նաև այն, որ նիխորականի սպանության փաստը միենույն բառերով պատմը վելով հանդերձ մի դեպքում սպանության վայր է նշվում Դվինը, մյուսում՝ Գառնին:

Այս աղճառումներն այնպիսին են, որ տպավորություն է ստեղծվում, թե հատվածներից մեկը գտնվել է մի ձեռագրի կազմում, մյուսը՝ մեկ ուրիշ և այդպես առանձին-առանձին տարբեր գրիշների կողմից ընդօրինակվելով ժամանակի ընթացքում հեռացել են իրարից: Սակայն այսպիսի բան ենթադրել անհնարին է, որովհետև նրանք իրո՛ք մեկ ձեռագրում են գտնվում և երկու հատվածն էլ «Սեբեոսի Պատմությունում» այնքան պատճառաբանված են, որ անհնարին է մտածել

նրանցից որեկը մեկի հեռացման մասին: Միակ ճշգրտումը, որ կարելի է անել՝ դա թերեւս երկրորդ հասվածը մի այլ տեղ տեղափոխելն է, որովհետև այն չի հարմարվում նախորդքնադրին, որն անմիջապես նվիրված է Աստա Խոռոչունու ուստամությանը: Բայց սրանով հարցը չի լուծվում, քանզի հասվածը աեղաշարժելուց հետո էլ այն մնում է «Սեբեռոսի Պատմության» կազմում:

Այս հետաքրքիր փասար դեռ սառւզելի համարելով, այն ներկայացնում ենք բանասիրության ուշադրությանը: Ի դեպ՝ այս փասար վրա ուշադրություն է դարձրել Ա. Կարիերը դեռ անցյալ դարում՝ նորայր Բյուզանդացուն ուղղած նամակներից մեկում (Մաշտոցի Մատենադարան, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 235, վավ. 205). Նա կարծիք է հայտնում, որ երկրորդ անգամ հանդիպող կրկնությունը հազիվ թե Սեբեռոսինը լինի, կամ էլ՝ Սեբեռոս այդ հատվածը հետագայում վերախմբագրել է, և կամ՝ դա Սեբեռոսի սկզբնաղբյուրն է:

Ի՞Զ

«Եւ յարձակեալք՝ աստի և անտի մեծաւ տագնապաւ ի միմեանս հասանէին եւ ի մէջ երկուց ճակատուցն մարտ եղեալ ընդ միմեանս կռուէին և ոշ կարէին վաղվաղակի զմիմեանս յաղթահարել, զի արք սկայազարք էին երկոքին և կռու սպառազինեալք: Ապա ի վերուստ իմն հասեալ աւգնութիւն պատառի վերտ և ամուր բահլիկ և կռու զրահին ամրութիւն արքայից Քուշանաց ի նիզակէն Սմբատայ» (էջ 68, տ. 8—15):

Պետք է ուղղել՝ «...վերտամուտ բահլիկ և կռու զրահին ամրութիւն...»:

Բոլոր ձեռագրերն ունեն «վերտեամուտ», իսկ Սիմեոն Ապարանցու ունեցած ձեռագրում եղել է «վերտմուտ» («Վիպասանութիւն», էջ 97):

Այս երկու ձեռագրի հիման վրա պետք է աղավաղված «վերտ և ամուր» ձեն ուղղել «վերտամուտ»:

Հայկազյան բառարանը (հ. 2, էջ 817) «վերտ» բառը բառատրում է այսպես՝ «ոլորեալ, հիւսեալ, շարամանեալ, շըպթայազործ»: Այսպիսին է եղել քուշանաց արքայի դրահը: Բայ-

այսմ «վերտամուտ» ձեր պետք է դիտել որպես «դարանամուտ», «սինամուտ», «շինամուտ» բառերի օրինակով կազմված բառ, որը նշանակում է վերտի (=հյուսվածքի) մեջ մտած՝ հյուսվածամուտ, հյուսվածապատճություն, հյուսվածություն:

Այս բառի աղավաղմամբ խախտվել է նաև բնագրի շարադրությունը: Մալխասյանցը հետեւելով Աճառյանին (Նորապյուտ բառեր Սեբեոսի մեջ,—«Արարատ», 1911, էջ 230 և Արմատական բառարան), ձեռագրերի «վերտեամուտ» բառը զարձրել է «վերտ և ամուր», որի հետեւանքով իրար հաջորդում են հինգ նույնիմաստ բառեր (վերտ, ամուր, բահլիկ, կուռ, ամրութիւն): Մալխասյանցի սրբագրած նախագասությունն է. «պատառի վերտ և ամուր բահլիկ և կուռ զրահին ամրութիւն»: Անհավանական է մանավանդ, «ամուր ամրություն» արտահայտությունն այս նախաղասությունում:

իէ

«Եւ սոքա զհետ արշաւեալ հասին ասպատակաւ մինչեւ ի բահլ շահաստան Քուշանաց և աւար հարեալ զերկիրն ամենայն զշար և զկատագէս, զՏոխորոստայն ամենայն և զՏաղական» (էջ 68, տ. 17—20):

Պետք է ուղղել՝ «...զշարե, զկատագէս, զՏոխորոստայն...»:

Հ. Հուրբշմանը (Arm, Gramm. I, S. 48), Յ. Մարկվարտը (Էրանշահը, S. 76 ևն), Ֆ. Մակլերը (Histoire d'Heraclius, p. 51) արդեն նշել են, որ «զշար և» արտահայտության փոխարեն պետք է կարդալ «զշարե»: Զարկը քաղաքի և երկրի անուն է (այժմ կոչվում է «Հերաթ»): Ընդօրինակող գրիչն այս տեղանվան վերջին ե-ը ընկալել է որպես հայերեն «և» շաղկապ և այն անշատելով քաղաքի անունից ընդօրինակել է առանձին:

Հարեւերկի կամ քաղաքի անունը, որը հանդիպում է նաև Հրեւերկ (կամ Հրէ) ձեռվ, հիշատակում են նաև Ղաղար Փարտեցին, Կարծեցյալ Անանիա Շիրակացին (Աշխարհացուցում) և

ուրիշներ: Սրանց հիման վրա պետք է աղճառված լինագիրը սրբազրել «զշարե, դժատագլու» (փիս. «զշար և դժատագլու...»):

ի՛թ

«Եւ թշնամւոյն հատեալ զամբութիւնն՝ անկաւ ի բանակն, և անշնարին լինէր կոտորածն. և նոցա հատեալ զտեղի մի ոմանք հետեակը և ոմանք հեծեալք յանկումուղի ձի, ելին և զնացին փախստական» (Էջ 76, ու. 4—8):

Պետք է ուզգել «անկան յուղի, ի ձի ելին և գնացին փախստական»:

«Ճանկումուղի» բառը աղավաղված բառ է: Ֆր. Մակերի կարծիքով (Histoire d'Héraclius, p. 60) սկզբնական բնագրում նրա փոխարեն եղել է «յանկազմի» բառը, սակայն Մակերին ինքը հարցական է դրել իր կարծիքի վրա: Հը. Աճառյանը (Նորագյուտ բառեր Սեբեսի մեջ, էջ 231 և Արմատական բառարան) ենթադրել է, թե որովհետև այս բառի մեջ «մուլ» մասնիկ կա, կարող է բառը նույն նշանակությունն ունենալ, ինչ որ «մուլ» մասնիկ պարունակող երկու այլ բառ՝ «տրմուլ», «կրմուլ»: Այս ձեռվէ էլ Ստ. Մալխասյանցը բառը դրանցել է Հայերեն բացատրական բառարանում: Սակայն մեզ թվում է սոսկ «մուլ»-ի նմանության հիման վրա չի կարելի «յանկումուղի» բառը նույնացնել «կրմուլ» կամ «տրմուլ» բառերի հետ: Այսպես նմանություն չկա:

Բացի այդ՝ «կրմուլ» և «տրմուլ» բառերը, բայց Աճառյանի, նշանակում են անվարժ, խամ ձի, իսկ «Սեբեսի Պատմության» տվյալ տեղի բռվանդակությունն այնպիսին է, որ այնտեղ ձիերի վարժ կամ անվարժ լինելու մասին խոսք լինել չի կարող. ուղղակի ասվում է, որ ոմանք փախան թշնամուց որպես հետեակներ, իսկ ոմանք էլ՝ հեծյալներ. «ոմանք հետեւակը և ոմանք հեծեալք, անկան յուղի, ի ձի ելին և գնացին փախստական»: Այսպես է նախադասության միտքը:

ի՛թ

«Ապա ձռոն Վահան: Սա հետամուտ լիալ դհետ թագաւորին երակղայ ի Հայս մինչեւ ի սահմանս Ասորեսուսնի, մինչեւ

եղե պատերազմ մեծ ի նինուէ, յորում անկաք ինքն և ամենայն զարք իւր» (էջ 80, տ. 30—33):

Պետք է ուղղել՝ «...Ըստն Վահան...»:

Այս անունը հանդիպում է «Սեբեռսի Պատմության» նաև 94, 95 էջերում և երկու տեղում էլ Ծոճ (Ծոճիկ) Վահան ձեռվի: Մրանց օրինակով պետք է «Ճոճ Վահան» արտասովոր ձեն ուղղել «Յոռճ Վահան»-ով: Նախնական բնագրի Ը-ն բնկալվել է որպես Ճ և այդպիսով «Յոռճ»-ը դարձել է «Ճոճ»:

Միքայել Ասորին հիշում է Ուղբիհան: (Հմմտ. Ք. Պատկանյանի ծանոթադրությունը՝ Պատմութիւն Սեբեռսի ևսու. ի Հերակլն, Ս. Պ.-բուրգ, 1879, էջ 201: Նաև Hüb schmann H., Arm. Gramm., I T., S. 70):

Լ

«Եւ իւր (Հերակլայ—Գ. Ա.) առեալ յանձն դանուն զարավարութեան, հանդերձ եղբարին իւրով Թէոդոսիւ գումարեալ ժողովեաց զբազմութիւն զարացն, և անցեալ զնաց յԱսորեստան ի կողմանս Անտիռքացւոց» (էջ 82, տ. 2—5): «Փախըստական արարին զԹէոդոս եղբայր կայսերն երակղի» (էջ 107, տ. 3—4):

Պետք է ուղղել՝ «...եղբարբն իւրով Թէոդորոսիւ...», «զԹէոդորոս եղբայր կայսրն»:

«Թէոդոս» անունը, որ հանդիպում է «Սեբեռսի Պատմության» նաև հետագա էջերից մեկում (107), գրչական սխալ է, որը թափանցել է նաև Ստեփանոս Ասողիկի «Տիեզերական Պատմության» մեջ (Ս. Պետերբուրգ, 1888, էջ 118): Հերակլ թագավորը Թէոդոս անունով եղբայր չի ունեցել: Գրիշները «Թէոդորոս»-ի փոխարեն ընդօրինակել են «Թէոդոս» (Հմմտ. Hüb schmann H., Zur Geschichte Armeniens, S. 12):

Այդ նույն բախտին է արժանացել «Սեբեռսի Պատմությունում» նաև մեկ ուրիշ Թէոդորոս՝ Տրավատունին: Սրա անունը նույնպես 50-րդ էջում Թէոդոս է դարձել: Բայց այս դեպքում կան երկու բացարձակ փաստեր, որոնք ցույց են տալիս, որ «Թէոդոս»-ը դրչական սխալ է. 52 և 53-րդ էջերում

միենույն Տրպատունին կոչված է Թէոդորոս Տրպատունի, Վարդան Արևելցու Պատմությունում (Վենետիկ, 1862) ավելի յայտուն է Երևում Հերակլի Եղբայր Թէոդորոսի անվան աղավազումը: Այստեղ 61-րդ էջում կարդում ենք Թէոդորոս, 63-րդում՝ Թէոդորոս:

Այնպես որ ճիշտ չէ կարծել, թե «Հայ մատենագիրները սխալվում են, երբ Հերակլի կայսեր Եղբայր կոչում են Թէոդոր» (Ք. Պատկանյան, История императора Иракла, стр. 211, прим. 201):

Սխալը ոչ թե հայ Հեղինակներինն է, այլ՝ ընդօրինակող ներինը:

Բայտ այսմ սետք է «Սերեռուի Պատմությունում» «Թէոդոր»-ը ուղղել «Թէոդորոս»-ով:

~

ՀԱ

«Եւ դարձեալ վերստին հաստատէ առ նմա զբանս խաղաղութեան և սահմանացն հատելոց երդմամբ հրովարտակաց. և կենեալ աղ բատ առաջին աւրինակին զՅուստար բատ առաջին բագաւորաց: Եւ յանդիման նորա հրամայէ գրել առ Շահը Վարադ, զի ժողովեսցէ զգաւրն և եկեսցէ անցցէ յերկիրն Պարսից, և ի բաց թողցէ զսահմանս Յունաց. Թէպէտ և նա ոչ կամեցաւ լսել հրամանին այնմիկ: Եւ զՅուստաթ արձակեցին լի դանձիւք, և զնաց» (Էջ 97, տ. 18—25):

Պետք է ուղղել՝ «և կենեալ աղ բատ առաջին աւրինակին (այս բառից հետո բառ է սկակասում—Դ. Ա.) ...զՅուստար բատ առաջին բագաւորաց»:

«զՅուստաթ»-ից առաջ հավանաբար եղել է «արձակեաց» բառը, որով հայտնվել է, որ Կավատ արքան Յուստաթի հետ լայմանագիր կնքելուց հետո, հին թաղավորաց նման, արձակում է նրան իր Երկիրը՝ «[արձակեաց] զՅուստաթ ըստ առաջին թագաւորաց»: Մեր այս ենթազրության օգտին է խոսում շորս-հինգ տող հետո հանդիպող «Եւ զՅուստաթ արձակեցին լի գանձիւք և զնաց»: Ք. Պատկանյանը հավանաբառ նույն կերպ է ընկալել բնադիրը, երբ որ հիշյալ արտահայտու-

թյունը թարգմանել է այսպես. «Запечатав соль, как в первый раз он отправил Иуздата по обычаю древних царей». Ըստ այսմ բնագիրը պետք է սրբազրել՝ ավելացնելով «արձակեաց» բառը: Բայց քանի որ չկա որևէ փաստ, որով ապացուցվեր, որ պակասող բառը եղել է անոպայման «արձակեաց»-ը (կարող էր լինել և նույն բովանդակությամբ մեկ ուրիշ բառ) ուստի և անհնարին է բառը ներմուծել բնագրի մեջ, նրա փոխարեն պետք է զնել բազմակետեր, որոնք ցուց կտան, որ տվյալ տեղում բառ (կամ բառեր) է պակասում: Ֆ. Մակլերը Պատմության ֆրանսերեն թարգմանությունում (էջ 86) անդրագարձել է քննարկվող արտահայտությանը, որը դիտել է սոսկ որպես «Սեբեոսի Պատմության» բնագրին Հարմարվող արտահայտություն:

ՂԲ

«Եւ այս է շարութիւն եղեալ յորդի կայսերն Երակղի՝ ի յանցս մեծս, որում անուն էր Աքալարիկոս որ և Խոռիսոռունեաց զսիրա հաւրն և խրամատեաց զհրաշալի անձն...» (էջ 103, տ. 14—22):

Պետք է լինի՝ «Եւ այս է շարութիւն եղեալ յորդի կայսերն Երակղի ի յանցս մեծս, որում անուն էր Աքալարիկոս որ և Խոռիսոռունեաց զսիրա հաւրն և խրամատեաց զհրաշալի անձն...»:

Աղճատված «խոռիսոռունեաց» բառը կարող էր ծագել ամենից առաջ խոռիսողուն (=խոռիսողված) բառից, որովհետև այս գեպքում գործ ունենք միայն մեկ տառի՝ $\eta > n$ աղավաղման հետ: Ղ-ն և Ռ-ն գծագրական առումով այնքան մոտ են իրար, որ բավական է, որ Ղ-ի գլխիկը մի փոքր գեպի վար իշնի կ նրանից կատացվի Ռ: Այդպես էլ պատահել է մեզ հետաքրքրող գեպքում: Ակզրնական բնագրի խոռիսոռունեաց բայն ունեցել է խոռիսոռեաց տեսքը, և բանի որ հայերենում «խոռիսոռեաց» բառ չկա՝ ընդօրինակող գրիչն այն մեքենայաբար նույնացրել է միենույն պարբերությունում հանդիպող Խոռիսոռունեաց (Վահան Խոռիսոռունի) աղջանվան հետ և այդպիսով խոռիսոռունեաց-ը դարձել է Խոռիսոռունեաց: Խոռիսոռել և խրա-

մատել բառերը քննարկիող հատվածում օգտագործված են սպատկերավոր արտահայտվածք և երկուսն էլ սկսում են համաձնչուն խոռոշի: Սա ճարտասանական արտահայտության ձև է, որին զիմել է Հեղինակը, ինչպես որ արտահայտվել է, ասենք, Արքահամար Մամիկոնիցից եպիսկոպոսը նհսարի մասին՝ «Պատառող (= խրամատող) և խողխողից» (աւել' «Հայկական բառարան», հ. 1, էջ 960):

«Սեբեռսի Պատմության» հրատարակիչներից թ. Միհըրդայանը և Ք. Պատիկանյանը «և Խոռոխոսունեաց» արտահայտությունը սրբագրել են այսպես. «ի խոր վիրաւորեաց»: Այս սրբագրությունն իր տեսքով հեռու է աղքատված բառից: Անհավանական է նաև Ստ. Մալխասյանցի սրբագրությունը, որն է. «ի խոր խոցեաց»:

Սրբագրվող հատվածում երկու անգամ հանդիպում է նաև Հերակլի որդի Աթաղարիկոսի անունը, մեկ անգամ Աթաղարիկոս, մյուս անգամ Աթաղարիկոս ձեռովք: Հասկանալի է, որ սրանցից մեկն աղավաղված է զրիչների կողմից: VII դարի՝ «Սեբեռսի Պատմության» հորինման ժամանակի համար ավելի հավանական համարելով Աթաղարիկոս ձեր՝ առաջարկում ենք անունը սրբագրել այդպես:

Հ9

«Եւ շուեալ զնացին բանակը բանակէ բանակէ իւրաքանչիւր նահատեառութեանց — Նարեւը, Կեդար, Աբդիւղ, Մոսամբ, Մաստ, Մասմայ, Խողվայ, Մասէ, Քողդատ, Թեման, Յետուր, Նափիւր և Կեդմայ: Այս են ազգք իսմայելի» (էջ 106, առ. 28—31):

Պետք է աւգդի՛ «...Արդիւղ, Մարսամ, Մասմայ, Իդովմայ, Մասէ...»:

«Սեբեռսի Պատմության» Հեղինակն այս անունները վերցրել է Ծննդոց զրքի Հետելյալ տեղից (զլ. ին). «Եւ այս են անուաններ սրբացն Խսմայելի բան անուանց ազգացն նորաւ Անդրանիկն Խսմայելի Նարեւովի և Կեդար և Աբդիւղ և Մարսամ և Մասմայ և Մասէ և Քողդատ և Թեման և Յետուր և Նափիւր և Կեդմայ»:

Տեսնում ենք, որ «Սեբեռոսի Պատմությունում» աղավաղ-ված է Ծննդոց գրքի Մաքսամ անունը (որ զարձել է Մոսամը) և ավելացված է գոյություն չունեցող մի անուն Մաստ, որով աղքապեաները դարձել են 13 հոգի: Պարզ է, որ ոչ մի մատե-նագիր չէր կարող նորություն մացնել Ծննդոց գրքի մեջ և հնարել մի նոր աղքապետի անուն: Այստեղ գործ ունենք գըր-շական ակնհայտ թյուրիմացության հետ, որի պատճառը հե-տեւալն է: «Սեբեռոսի Պատմության» նախնական բնագրում Մասէ անունը գրված է եղել աղճատված ձևով՝ «Մաստ», այդ սխալը նկատելով, լուսանցքում ավելացրել են անվան ճիշտ ձևը՝ Մասէ, Հետագայում բնագիրն ընդօրինակող գրիշը լու-սանցքում սրբագրված անունը սխալմամբ ներմուծել է բնա-գրի մեջ և այդպիսով միևնույն անունն ընդօրինակվել է երկու ձևով՝ Մասէ և Մասէ, որի հետևանքով 12 աղքապետների քա-նակը դարձել է 13: Ուրեմն պետք է ներկա աղավաղված բնա-գրից հանել «Մաստ» սխալ ձևը և վերականգնել նախնական բնագիրն այնպես, ինչպես, որ է Ծննդոց գրքում: Որ «Սեբեռոսի Պատմության» նախնական բնագրում այդ անունը չի եղել՝ երեսում է նաև Վարդան Արեւելցու Պատմությունից, որտեղ հե-ղինակը «Սեբեռոսի Պատմության» տվյալ հատվածը վերա-պատմելիս աղքապետների անունը նշում է առանց աղավաղ-ված «Մաստ» անվան, թվելով միայն 12 անուն (Հմմտ. ՍԵՊ, էջ 106 և Hüb schmann H., Zur Geschichte Armeniens, S. 12):

ՀԴ

«Եւ եղեւ այս յամս Եգրի կաթողիկոսի:

Իսկ ի ձեռն այնր պատերազմի ի կայսերէ հրաման հասեալ պարավարութեանն Թէոդորոսի Ռշտունեաց տեառն հանդերձ պատրիութեան պատուով: Այս ամենայն լինի ի ձեռն կաթողի-կոսին ներսեսի» (էջ 110, տ. 28—33):

Մեր ընդգծած բառերից հետո թերթ է ընկած: Այդ երեսում է Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության համեմատու-թյունից: Դրասխանակերտցին օգտվել է Սեբեռոսին վերագրվող «Պատմություն»-ից (սկսած ՍԵՊ, էջ 109-ից): Օգտվել է հե-

տեղականորեն համառոտագրելով շուրջ 50 էջ: Եվ այնտեղ, որտեղ ենթադրվում է կորած թերթը, միայն այդտեղ նա ունի մի հավելյալ հատված, որը չկա «Սեբեսոփ Պատմությունում»: Այս հավելվածը նույնպես նա պետք է վերցրած լինի «Սեբեսոփ Պատմությունից», մանավանդ որ այստեղ հայտնված տեղեկությունները մենք չենք գտնում Դրասխանակերտցու Պատմությունից առաջ զրված որևէ այլ սկզբնաղբյուրում, որից օգտված լիներ Դրասխանակերտցին:

Հատվածը վերաբերում է Դվինի առմանը արարների կողմից:

Այս մասին հայտնող հեղինակների (Մովսես Կաղանկատվացի, Հովհաննես Դրասխանակերտցի, Սամվել Անեցի, Կիրակոս Գանձակեցի և այլք) զրվածքների համեմատական ուսումնասիրության միջացով կարելի է կորած թերթի բովանդակությունը վերապատմել այսպես (շարունակելով բնագիրը «եւ եղկ այս յամս Եղրի կաթողիկոսի» արտահայտությունից անմիջապես հետո). Սրա (Եղրի) մահից հետո Թեոդորոս Ռշտունին և այլ իշխանավորներ առաջարկեցին Ներսեսին՝ դառնալ կաթողիկոս: Բայց նա մերժեց, ասելով, թե ինքն արժան չէ դրան: Շարունակող հարդորները վերջապես համոզեցին նրան դառնալ կաթողիկոս: Նա թաղեց Ս. Սարգսի վկայարանում արարների կոտորած այն 12.000 դոհերին, որոնց արյամբ էր ներկվել վկայարանի սուրբ սեպանը: Նա վերակառուցեց թշնամու ավերած այս վկայարանը ի հիշատակ գոհերի, ինչպես որ կառուցել էր հորվիրապի վկայարանը ի հիշատակ Ս. Գրիգորի: Կաթողիկոսը շմոռացավ խրախուսել Թեոդորոս Ռշտունուն, որն իրեն լավ էր դրսեորել արարների դեմ մղած պայքարում: Ռշտունու և նրա վարած պատերազմի մասին նա տեղյակ պահեց նաև բյուզանդական կայսրին (այնուհետև՝ ինչպես բնագրում՝ «իսկ ի ձեռն այնր պատերազմի ի կայսերէ հրաման հասեալ զարավարութեանն թէոդորոսի Ռշտունեաց տեառն՝ հանդերձ պատրիկութեան պատուվի: Այս ամենայն լինի ի ձեռն կաթողիկոսին Ներսեսի»):

Այստեղ բերված են Ներսեսի կաթողիկոս դառնալու մասին մանրամասնություններ, որոնք չեն կարող ծանոթ չլինել «Սե-

բեռուի «Պատմության» հեղինակին VII դարում և ընդհակառակը, հայտնի լինեին X—XII դդ. հեղինակներ Հովհաննես Դրասխանակերտցուն, Սամվել Անեցուն և այլոց: Անհնարին է նաև մտածել, որ «Սեբեռուի «Պատմության» հեղինակը շիմանար արարների կոտորած 12.000 զոհերի մասին, ինչպես նաև չիշշատակեր ներսես կաթողիկոսի ձեռնարկած շինարարական աշխատանքները Ս. Սարգսի վկայարանի և Խորվիրապի եկեղեցու կապակցությամբ, այն դեպքում, երբ որ այդ միենույն հեղինակն առանձին ուշադրություն է դարձրել ներսեսի շինարարական գործունեության վրա: Նա մեծ հիացմունքով է խոսում, օրինակ, Զվարթնոցի շինության մասին: Հենց «Սեբեռուի «Պատմությունից» գիտենք նաև այն մասին, որ ներսեսը շինում է նաև «իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն, որի Վաղարշապատ քաղաքին»¹⁰:

«Սեբեռուի «Պատմությունում» նշված են նաև հեղինակի ապրած ժամանակ կառուցված Ավանի եկեղեցին, Թեոդորոս Ռշտունու կառուցցները Աղթամար Կղզում, Ս. Գրիգորի եկեղեցին Դվինում, Հոփիսիմեի տաճարը Վաղարշապատում: Ուրեմն, դժվար է պատկերացնել, որ այս փաստերը գրանցող «Սեբեռուի «Պատմության» հեղինակը շնչեր ներսեսի ձեռնարկած երկու կարեոր կառուցցներ, Գրիգոր Լուսավորչին նվիրված՝ Խորվիրապի եկեղեցու և Ս. Սարգսի վկայարանի մասին, մանավանդ, որ վերջինս հիշելու առիթ նա ուներ, երբ պատմում էր Դվինի առման մասին: Արաբները Ս. Սարգսի վկայարանում կոտորեցին քաղաքի բնակչությանն ու այնտեղ պատրսպարված խաղաղ շինականներին, որոնք մինչ այդ եկել էին Դվինի այգիներում խաղող հավաքելու: Արաբների քաշվելուց հետո զոհերի թաղումն անձամբ կարգավորում է ներսես կաթողիկոսը, որը և ի հիշատակ զոհվածների վերակառուցում է այրված վկայարանը: Հնարավո՞ր է, որ «Սեբեռուի «Պատմության» հեղինակը պատմեր Դվինի առման մասին և լուսավան մատներ 12.000-անոց կոտորածը և նրանց պատմին կառուցված վկայարանի փաստերը:

¹⁰ Ա. Փ. 120:

Ենթադրվող կորած թերթերի բովանդակությունը պատմող մեր նշած շորս պատմիչները սկզբնագրից օգտվել են իրարից անկախ: Նրանցից մեկի հայտնածը երբեմն չկա մյուսի մոտ: Բայց որ այդ պատմիչներն ունեցել են մի ընդհանուր աղբյուր, այդ փաստն առանձնապես պարզ է երևում Մովսես Կաղանկատվացու «Սա (Ներսեսը—Գ. Ա.)... շինեաց զբազմապայծառ փարախն բանաւոր հօտից ի Քաղաքու դաշտի (Վաղարշապատ—Գ. Ա.)»¹¹ և Հովհաննես Դրասխանակերտցու «շինէ զբազմապայծառ փարախն բանաւոր ոչխարաց ի Վաղարշապատ քաղաքին»¹² արտահայտություններից:

Գիտենք, որ Դրասխանակերտցին ծանոթ չի եղել Կաղանկատվացու գործին, որպեսզի բերված տեղեկությունը քաղեր նրանից: Ուրեմն գոյություն է ունեցել Մովսես Կաղանկատվացուց առաջ զրված մի սկզբնաղբյուր, որտեղից օգտվել են և Կաղանկատվացին և Դրասխանակերտցին: Եվ այդ աղբյուրը եղել է «Սեբեռոսի Պատմության» մեզ չհասած թերթը, որից և օգտվել է նաև Սամվել Անեցին՝ Դվինում սպանված 12.000 զոհերի մասին:

Անեցին նշում է իր աղբյուրը այնպիսի մի ձևով, որ կասկած չի թողնում այն մասին, որ դա «Սեբեռոսի Պատմությունն» է: Վերն արդեն ասացինք, որ «Սեբեռոսի Պատմությունը» վազուց զրկվել է իր խորագրից և այդ պատճառով էլ նրա հեղինակը անհայտ է մնացել: Եվ ահա, Սամվել Անեցին էլ հիշելով 12.000 զոհերին, գրում է. «ասէ պատմագիրն»¹³, ա-

¹¹ Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 363:

¹² Դրասխանակերտցու այս արտահայտությունը քաղել ենք հեղինակի մեկ այլ աշխատությունից (Շարից հայրապետացն Հայոց հայտարարութիւն, Էրանելոյն Յովհաննիսի կաթողիկոսի Հայոց), որը հրատարակել է Արշակ Տեր Միքելյանը՝ Սամվել Անեցու ծանոթագրությունների բաժնում (Սամվել Անեցի, Վաղարշապատ, 1893, էջ 275):

¹³ Սամվել Անեցի. Հաւաքումն ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 80: «Պատմագիր» ասելով Անեցին կարող էր հասկանալ նաև Դրասխանակերտցուն (որի մականունն է Պատմարան), սակայն վերջինիս մոտ չկա 12.000 զոհերի մասին տեղեկությունը:

սանց նշելու այդ պատմագրի անունը, մի փաստ, որը մատնացույց է անում անխորագրի «Սեբեռոսի Պատմությունը»:

Ի դեպ՝ Սամվել Անեցին 12.000 զոհերի սպանությունը նշում է «յաւոր սրբոյ յայտնութեան» (էջ 80): Ինչպես երկում է, «Սեբեռոսի Պատմության» Հեղինակը այս տեղեկությունը բերած է եղել Դվինի առման օրը («աւր ի եր տրէ ամսոյն») նշելուց հետո, երբ որ անդրադարձել է ն. Սարգսի վկայարանի դեպքին (որ կատարվել է երկու ամիս հետո) և ներսես կաթողիկոսի գործերին:

Նրան հետեւ լով, Անեցին նույնպես Դվինի առման ժամանակը զանազանում է Ս. Սարգսի վկայարանի դեպքի ժամանակից: Նա սկզբում գրում է, որ քաղաքը գրավվել է Կոստանդի օրոք, իսկ հետո ավելացնում է, որ սպանդը եղել է «յաւոր սրբոյ յայտնութեան»: Եթե Դվինի առումն ու վկայարանի դեպքը միենույն օրը կատարված լինեին՝ Անեցին միանգամից կզբուր. «Արդ՝ յաւորս Կոստանդնի որդույց Հերակլայ, յաւոր սրբոյ յայտնութեան, առաւ Դուին ի տաճկաց, ասէ պատմագիրն, և սպանին ի ս. վկայարանի Ս. Սարգսի թժ.ան Ռ...»: Մրա փոխարեն կարդում ենք. «Արդ՝ յաւոր Կոստանդնի որդույց Հերակլայ՝ առաւ Դուին ի տաճկաց, ասէ պատմագիրն, և սպանին յաւոր սրբոյ յայտնութեան ի ս. վկայարանի Ս. Սարգսի թժ.ան Ռ և արեամբ կոտորելոցն ծածկեցաւ սեղանն սուրբ և աւագանն. և զայլսն գերեցին աւելի քան զի՞ն»¹⁴:

Ի դեպ՝ Մ. Օրմանյանը ելնելով «Սեբեռոսի Պատմության» և Սամվել Անեցու Հիշյալ տեղեկություններից, ենթադրել է, որ Դվինի պաշարումը տեղել է երեք ամիս: Նա գրում է (Ազգապատում, հտ. Ա, Պէյրութ, 1959, էջ 705). «Երեք ամիս կը տել Դուինի պաշարումը և վերջապես 641 թ. յունուար 6-ին «յաւոր սրբոյ Յայտնութեան» արաբացիք քաղաքը կգրավեն և անինա կկոտորեն 12.000 հոգի»: Հ. Մանանդյանը իրավամբ նշել է (Քննական պատմություն հայ ժողովրդի պատմության,

¹⁴ Այս թիվը (1Ռ) գրչական սիրալ է: Պետք է ուղղել՝ «Լի՛թ»: Այսպիս են դրում «Սեբեռոս», Կաղանկատվացին, Դրասիսանակերտցին, Ասողիկը և մյուսները: Սամվել Անեցու ձեռագրերում նույնպես հանդիսում է «Լի՛թ» ձիշու ձեր:

Հատոր Է, Երեան, 1960, էջ 179—180), որ քաղաքի գրավվել է, ոչ թե երեք ամիս պաշարումից հետո, այլ՝ ինչպես «Սեբեսսի Պատմությունն» է հաղորդում, «յաւուրն հինգերորդի», երբ մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա»։ Սակայն Մանանդյանը «Սեբեսսի Պատմության» հաղորդած այս փաստը բերել է ցուց տալու համար, թե իբր հակասություն կա նրա և Սամվել Անեցու մեջ։ Այնինչ իրականում «Սեբեսսի Պատմության» և Սամվել Անեցու հաղորդածները տարբեր չեն։ Առաջինը հայտնել է քաղաքի գրավման օրը, իսկ երկրորդը՝ Ս. Սարգսի վկայաբանի գեպքի օրը, որը տեղի է ունեցել քաղաքի գրավումից երեք ամիս հետո։ «Սեբեսսն» ինքը ասում է, որ քաղաքը գրավելուց հետո արաբները «Ելին (քաղաքից—Գ. Ա.) և բանակեցան ի նմին բանակատեղն, որ աւր ի էր արէ ամսոյն, յաւուր ուրբաթի։ Եւ գաղարեալ յաւուրս ինչ ելին և զնացին ընդ նոյն ճանապարհ, ընդ որ եկեալն էին»։ Ուրեմն քաղաքը գրավելուց հետո արաբները գեռ «յաւուրս ինչ» մնացել են իրենց բանակատեղում և երբ վրա է հասել «սրբոյ յայտնութեան» քրիստոնեական տոնը՝ նրանք սպանել են Ս. Սարգսի վկայաբանում ու շրջակայքում հավաքված 12.000 քրիստոնյաների։ Եթե այս սպանդը կատարված լիներ քաղաքի գրավման օրը՝ ապա սպանությունները կկատարվեին մարտերի ընթացքում, քաղաքի մատուցների մոտ և զանազան այլ մասերում և ոչ թե անպայման Ս. Սարգսի վկայարանում։ Վկայարանի գեպքը հենց խոսում է այն մասին, որ ջարդը կատարվել է «Սրբոյ յայտնութեան» օրվա կապակցությամբ¹⁵:

Ասորի պատմիչ Դիոնիսիոս Տելմահրեցին (Chronique de Denys de Tele-Mahre, Publ. et trad. par Chabot, Paris, 1895, էջ 6. մենք օգտվել ենք Հ. Մանանդյանի թարգմանությունից, տե՛ս Հ. Մանանդյանի նշվ. աշխ. էջ 179—180) նույնպես հաղորդում է գեպքի մասին. «952 (640—641) ...արաբները պաշարեցին Դվինը (Adabin), ուր սպանված-

¹⁵ Այս գեպքը մեզ հիշեցնում է, մեկ ուրիշ սպանդ. 614 թվականին պարսիկ զրավար Խոռեամը շուրջ երեք շաբաթ երուսաղեմը պաշարելուց հետո գրավում է քաղաքը և սպանում 17.000 և դերում 35.000 մարդ (ՍեՊ, էջ 83):

ների թիվը խիստ մեծ էր՝ մինչև 12.000»։ Այս տեղեկությունը կողմնակիորեն դալիս է ապացուցելու դարձյալ այն փաստը, որ Սամվել Անեցին 12.000 սպանվածների մասին իր տեղեկությունը քաղել է «Սեբեռոսի Պատմության» կորած թերթից։ Անեցին Տելմահրեցուն ծանոթ չի եղել, եթե ծանոթ էլ լիներ՝ Տելմահրեցու մոտ չկա «յաւուր սրբոյն յայտնութեան» մասին աեղեկությունը։ Ուրեմն Անեցու տեղեկությունը քաղված է «Սեբեռոսի Պատմությունում» Դվինի գրավման մասին նշված թվականի՝ 640—641 հետ (Հմմտ. Հ. Մանանյան, նշվ. աշխ. էջ 187)։ Սրանից երևում է, որ Ա՝ «Սեբեռոսի Պատմության» Ա՝ Տելմահրեցու տեղեկությունները վերցված են պատմական ստույգ եղեկությունից։ Եվ եթե Տելմահրեցին հայտնում է նույն թվականը ինչ «Սեբեռոսի Պատմության» հեղինակը, ուրեմն նրանց տեղեկություններն ընդհանուր են և չեր կարող պատահել, որ «Սեբեռոսի Պատմության» հեղինակը, լինելով ժամանակակից դեպքին, չիմանար 12.000 սպանվածների մասին և նշշեր այդ մեծ եղենը։

Նշված փաստերի հիման վրա գտնում ենք, որ «Սեբեռոսի Պատմությունում» «Եւ եղեւ այս յամս Եզրի կաթողիկոսի» արտահայտությունից հետո եղել է մի հատված, որտեղ պատմվել է հիշյալ իրադարձությունների մասին և որը մեզ չի հասել։ Պատմության նոր հրատարակության մեջ այդ տեղը պետք է ցույց տալ բազմակետերով։

ՀԵ

«Եւ սակաւ ինչ աւուրս թագաւորեալ Կոստանդին, դաւեալ ի Մարտինեայ մաւրէ իւրմէ, ի կոնչէն երակլի՝ մեռանէր։ Եւ թագաւորէ երակլոս, որդի երակլեայ, որ ի Մարտինեայ Աւգոստեայ, քանզի Կոստանդին էր յառաջին կոնչէն։ Եւ Վաղենտին... կալեալ զՄարտինէ՝ կտրէ զեզու նորա և ապա սպանանէ զնա՝ հանդերձ երկու որդուվք նորա։ Եւ նստուցանէ թագաւոր զԿոստանդրի Կոստանդինի, և անուանէ յանուն հաւրն իւրոյ Կոստանդին» (էջ 113, տ. 19—27)։

Պետք է ուղղել՝ «...զաւեալ ի Մարտինեայ մաւուէ իւրմէ, ի կոչէն Երակլի՝ մեռանէր: Եւ թագաւորէ Երակլոս, որդի Երակլեայ, որ ի Մարտինեայ Աւգոստեայ...»:

Եթե տպագիր բնագիրը վերծանենք, կստանանք հակապատմական և հակաբնական դեպքերի մի գումար: Մի դեպքում Մարտինան՝ Հերակլի կինը մահացած է և Հերակլն ամուսնացած է Մավրինայի (Մորինա) հետ, մյուս դեպքում Մարտինան նորից կենդանի է և դավեր է նյութում հարազատ որդի Կոստանդնի դեմ, որպեսզի ճանապարհ հարթի իր ախոյանի՝ Մավրինայի որդի Երակլակի համար և այն: Հասկանալի է, որ նման անբնական դեպքեր չեին կարող պատահել: Թյուրիմացությունն արդյունք է գրշական սխալի: Մարտինեայ-ը սխալմամբ ընդօրինակվել է Մաւրինեայ, որի հետեանքով միևնույն անձնավորությունը դարձել է երկու և այդպիսով Հերակլի համար ստեղծվել է մի անսուլոր կենսագրություն¹⁶:

«Սերեսոսի Պատմության» հեղինակը մեր հավաստի մատենագիրներից է և քաջ ծանոթ է Հերակլին, որի մասին հայտնած տեղեկությունները հաստատվում են բյուզանդական ստույգ աղբյուրների միջոցով: Այսպես, օրինակ, Նիկեփորոս Կոստանդնուպոլսեցին (մահ. 815 թ.) հայտնում է, որ Հերակլի առաջին կոնջ անունը Եղոնիիա էր (Էսծուռա) և ոչ Մարտինե, — ինչպես որ սխալ տպագրություն է ստեղծում «Սերեսոսի» աղավաղված բնագիրը, —իսկ երկրորդ կինը Մարտինա Ավգոստան է (Մարտին և Լուչիոս)՝¹⁷:

«Սերեսոսի» արտահայտության ձեփից հենց երկում է, որ նա Մարտինայի մասին խոսում է որպես Կոստանդնի խորթ մոր

¹⁶ Մակերը (Histoire d'Heraclius, p. 103) հավանաբար հետեւլով Հյուրշմանին (Zur Geschichte Armeniens, S. 1875, էջ 19) կարք. Պատկանյանին (Պատմութիւն Սերեսոսի Ապիսկոպոսի ի Հերակլն, Ս. Պետրոսուրգ, 1879, էջ 202), առաջարկել է «ի Մարտինեայ»-ը թարգմանել «ի Մարտինեայ»: Առանց որեւէ պարզաբանման կատարված այս փոփոխությունը մնացել է աննկատ և «Սերեսոսի Պատմության» տպագիր բնագիրը դեռ կարու է ճշգրտման:

¹⁷ Sancti Nicephori Patriarchae Constantinopolitani breviarium rerum post Mauricium gestarum. Recogn. Immanuel Bekkeres. Bonnae, 1837.

մասին՝ «դաւեալ ի Մարտինեայ մարէ իւրմէ» («իր Մարտին, մորից» և ոչ՝ «ի մարէ իւրմէ, Մարտինեայ»—«իր մայր Մարտինեից») և ավելացնում է «ի կնոշէն Հերակլի»: Այս բացատրության կարիքը չէր զգացվի, եթե Մարտինեն Կոստանդնի Հարազատ մայր հաջվագիր:

Սեբեռսի սկզբնագրում «մաւրէ»—բառի փոխարեն եղել է «մաւրուէ»: Ու-ի կորսայան պատճառով խորթ մայրը («մաւրու») դարձել է մայր: «Սեբեռսից» օգտված մյուս պատճիշների մոտ պահպանվել է «մաւրուէ»: ձեզ Հովհաննես Թրաստիանակերտցին (Թիֆլիս, 1912, էջ 84) դրում է. «Կոստանդնին ի Մարտինեայ մօրուէ իւրմէ դաւեալ», Վարդան Արեկեցին (Վենետիկ, 1862, էջ 67): «Կոստանդնին դաւեալ ի մօրուէն Մարտինեայ» և այլն:

ՀԶ

«Եւ Եղե ի վազիւ ասաւաւառոն եկն Եհաս ի վերայ նոյսա զաւրավարն Հայոց և Եհար զնոսա անհուն կոտորածով» (Էջ 119, տ. 16—18):

Պետք է ուզդել՝ «...Եհաս ի վերայ նոյսա զաւրավարն Հայոց Թէոդորոս զաւու իւրով և յարձակեցաւ ի վերայ նոյսա և Եհար զնոսա անհուն կոտորածով»:

Ընդգծված բառերը «Սեբեռս» մեզ հասած բնագրում բացակայում են, որի հետևանքով անհայտ է մնացել Հայոց զորավարի անունը: Մաշտոցի Մատենադարանի ձեռագրական պատառիկների ֆոնդում պահպանվող № 1343 պատառիկի հիման վրա մեր վերականգնած բնագիրը հայտնի է դարձնում այդ զորավարի՝ Թէոդորոսի անունը:

Է

«Բայց սակայն զարհուրեցաւ արքայն Կոստանդնին. լաւ համարեցաւ տալ սակ, և առնել հաշտութիւն պատգամաւորաւք. և փութացուցանէին հսմայելացիք զՅոյնս, զի կատարեսցեն զբան հաշտութեանն» (Էջ 120, տ. 11—14):

Պետք է ուզդել՝ «Բայց սակայն զարհուրեցաւ արքայն Կոստանդնին. լաւ համարեցաւ տալ սակ, և առնել հաշտութիւն

ողատգամաւորաւք և մնալ ժամանակի իւր [ում] զի լրերեսը և Աստուծոյ հաշտութեամբ հայեսցի յերկիր [և] ողորմեսցի նոցա: Եւ սկսաւ խաւսել ի հաշտութիւն պատգամաւորաւմ և փութացուցանէին իսմայելացիք զՅունս, զի կատարեսցեն դրան հաշտութեան»:

Ծնդգծված տողերը վերականգնել ենք նախորդ կետում նշված № 1343 ձեռադրական պատառիկից քաղելով:

ՀԲ

«Քաջ և յաղթող փրկութենագործ երջանիկն երակի հաւո՞րյ» (Էջ 126, տ. 18—19):

Պետք է ուղղել «...երակի հաւուն քոյ»:

Այս արտահայտությունը հանդիպում է բյուզանդացի կայսր Կոստանդնիկ Հերակլի բռուանը Հայաստանից ուղարկված նամակի պատճենում: Ուստի և նամակի գրողները չեին կարող Հերակլին անվանել Կոստանդնի հայր:

Նամակի պատճենը բերելուց առաջ «Սեբեռոսի Պատմության» հեղինակը գրում է, որ նամակը գրվել է «յամս Կոստանդինայ թագաւորի բռոփին երակլի (ՍԵՊ, էջ 121), ուրեմն Հերակլը Կոստանդնի ոչ թե հայրը, այլ հաւուն (պապը) էր: Նախնական բնագրում եղել է «երակի հաւուն (և ոչ՝ «հաւո՞րյ») քոյ»: Ըստ այսմ էլ պետք է ուղղել բնագիրը:

ԼԹ

«Եւ ասկա կոչեցան ի Հոռվմ և յանդիման եղեն Կոստանդինոսի արքայի և ուսուցին նմա զհաւատս ճշմարիտս, և վկայութեամբ հաստատեցին զհիմնադրութիւն հաւատոյն» (Էջ 132, տ. 26—28):

Այս նախադասությունը չի կապվում նախորդ բնագրի և առհասարակ «Սեբեռոսի Պատմության» հետ:

Ուսումնասիրությունը պարզում է, որ այն և նրան հաջորդող մի ամբողջ էջանոց հատված (ՍԵՊ, էջ 132, տ. 26—էջ 133, տ. 32) պատահաբար է միացել «Սեբեռոսի Պատմությանը»:

«Սեբեռոսի Պատմությունը» պարունակած ձեռադրում ընդուրինակլած են եղել նաև ուրիշ երկեր (Հիշենք, որ «Սեբեռոսի Պատմության» մեզ հասած հնագույն ձեռագիրը նույնպես պարունակում է բացի այս Պատմությունից նաև մի շարք այլ մատենագիրների երկեր), որոնցից մի հատված, ձեռագրի բայցքայլած լինելու հետեւնքով, պոկլել և պատահաբար ընկած է եղել «Սեբեռոսի Պատմությունը» պարունակող մասի մեջ: Ընդօրինակուղ զրիշը այդ բնագիրը նույնպես ընդօրինակել է որպես «Սեբեռոսի Պատմության» հարազատ մաս, չնկատելով, որ դա «Սեբեռոսինը» չէ: Այդպես է վարվել, օրինակ, նաև Մաշտոցի Մատենադարանի № 6228 (թ. 77թ) ձեռագրի դրիշը, որը VII դարի հեղինակ Սնանիա Շիրակացու երկի կազմում թյուրիմացաբար ընդօրինակել է ձեռագրի այդ մասում պատահաբար ընկած մի թերթ վրաց սկզբնաղբյուր «Քարթլիս ցիովլերեա»-ի հայերեն թարգմանությունից:

Քննարկվող հատվածը այժմ գտնում ենք «Սեբեռոսի Պատմության» ԽԴ դլիսում (սկսած մեր մէջքերած նախադասությունից մինչև «Թէոդորիտոս գլուխ Քաղկեդոնի ժողովոյն, դոր նայն հաստատեաց շարափառութեամբ» բառերը ներառյալ), Դավանության թղթի սահմաններում: Այս թղթի մասին պատկերացում տալու համար բերենք Սա. Մալխասյանցի նկարագրությունը (ՍԵՊ, էջ 191—192): «Դավանության ընդարձակ թուղթը, որ գրել է Հայոց եպիսկոպոսների և նախարարների ժողովը, ներսևս Շինու կաթողիկոսի նախադասությամբ, Կոստանդ կայսրին, ոչ միայն սաստիկ աղավաղված է բառերի կողմից, որոնցից մի մասը ուղղեցինք Ասողիկի Պատմության լավագույն ընթերցվածներով, այլև աշքի է ընկնում ամբողջ հատվածների կրկնությամբ, ետ և առաջ դասավորությամբ, փաստերի անձշտությամբ: Նիկիո ժողովի դավանությունը բերելուց հետո կրկին անգամ գրում են Նիկիո ժողովի մասին, երրորդ անգամ նույն ժողովի մասին՝ մեջ բերելով Նիկիական հանգանակը, որից հետո անցնում են Դիոկղետիանոսին (սխալ աարեթիվ նշանակելով), նրա հաջորդներին և Կոստանդիանոսին, և նորից Նիկիո ժողովի մասին: Նիկիական հանգանակը բերելուց հետո գրում են. «Կ ապա կոչեցան ի

Հոռվմ և յանդիման եղեն Կոստանդիանոսի արքայի և ուսուցին նմա զհանաւոս ճշմարիս»: Ովքե՞ր են գնացել Հոռվմ Կոստանդիանոսին ճշմարիս հավատը սովորեցնելու՝ հայտնի չէ: Եթե Նիկիո ժողովի անդամներից մի քանիսը՝ սա խոշոր պատմական սխալ է, որովհետեւ Կոստանդիանոսը ինքը անձամբ գտնվում էր Նիկիո ժողովում և հսկում էր նրա բարեկարգության վրա: Այսպիսի անտեղությունները թելադրում են ենթագրել, թե Սեբեոսի մեջ բերած Դավանության թուղթը վավերական գրվածք չէ: Մի ազդի բարձր հողերը և մարմնավոր ներկայացուցիչների կողմից կայսրին ուղարկվելիք գրությունը չէր կարող այսքան անփուլթ, կարելի է ասել անգրագետ խըմբագրուած լինել: Ավելի հավանական է կարծել, թե այս թուղթը, (որ համենայն դեպս կեղծիք չէ) եղել է մի նախագիծ՝ սեագիր, որի համաձայն պետք է խմբագրվեր իսկական վավերական օրինակը՝ կայսրին ուղարկելու համար. բայց այս բանը տեղի չունեցավ. կայսրը Հայոց կողմից դավանության թուղթ շատացավ... Սեբեոս եպիսկոպոսը, որ ներկա է եղել Դինա ժողովին, որտեղ խմբագրվել է այս թուղթը՝ հարկ է համարել նրան զետեղել յուր Պատմության մեջ այս անկատար ու պակասավոր ձևով: Մեր այս կարծիքը հաստատություն է գտնում նաև նրանով, որ Դավանության թուղթը չէ կրում սովորական վերնագիրը, որտեղ նշանակվում են թուղթը գրողների անունները և այն անձի անունը, որին ուղղված է թուղթը: Պաշտոնական գրությունների մեջ միշտ պահպանվում էր այս կարգը: Մի ուրիշ կարեոր ասլացուց այս թղթի անվավերականության պետք է համարել այն, որ այս թուղթը, որ այնպիսի բացարձակ պաշտպանություն է Հայոց եկեղեցու դավանության և դատապարտություն քաղկեդոնականության՝ տեղ չէ դտել Գիրք թղթոց պաշտոնական ժողովածուի մեջ»:

Դավանության թղթի կրկնությունները նկատելով հանդերձ, ինչպես տեսնում ենք, Մալխասյանցը չի կասկածել թղթի «Սեբեոսի Պատմությանը» պատկանելու վրա և անկանոնությունները բացատրել է ենթադրելով, թե թուղթը վավերական գըրվածք չէ, սեագրություն է¹⁸: Սակայն, դժվար է պատկերացնել,

¹⁸ Հ. Գաթրճյանը («Ելքոպա», Վիեննա, 1852, № 21) նույնպիս նկատել 188

թե «Սերեսոի Պատմովիյան» հեղինակը կպրագլեր մի անհայտ սեազրաթյուն նորից արտազրելով: Իսկ որ թուղթը տեղ չի դաւել «Գիրք թղթոց» ժողովածուի մեջ, դրանով չի կարելի առաջուցել թղթի անվագերականությունը: «Գիրք թղթոց»-ում շղրանցված դանաղան փաստաթղթեր կան, որոնցից մեկն էլ այս թուղթն է: Բացի դրանից՝ «անվագերական» համարվող զորձերի հեղինակներն իրենց հօրինածին վագերական տեսք տալու համար բավական ճիգ են թափում, որպեսզի չնկատվի անվագերականությունը: Այնուես որ նիկիայի ժողովի մասին երեք անգամ կրկնելը չի կարելի բացատրել թղթի անվագերականությամբ:

«Սերեսոի Պատմովիյան» մեջ կա որոշակի հիշատակություն այն մասին, որ դաշնանության թուղթը ոչ թե «եղել է մի նախագիծ՝ սեազրի», որը այդպես էլ թերի է մնացել, այլ՝ քննարկել է 648 թվականի ժողովում (Մ. արք. Օրմանյան, Աղջապատում, Հ. Ա., Պեյրութ, 1959, էջ 712), վավերացվել է բարձմաթիվ եպիսկոպոսների կողմից և կնքվել է ինչպես ներսես կաթողիկոսի, այնուես էլ թուղթն ստորագրած մյուս եպիսկոպոսների և իշխանների կողմից: «Յառաջ քան զայս շորուածաւք՝ ժողով արար դա (ներսես կաթողիկոսը—Գ. Ա.), և դամենայն եպիսկոպոսունս այսր ժողովեաց, և վասն հաւատոյ զիր ետ առնել, և կնքեաց նախ իւրով մատանեաւն, և տպաւ մեր, և տպաւ ամենայն իշխանացն մատանեաւք: Եւ զիրն այժմ առ դմա է, հրամայեցեք խնդրել և տեսանել»: Պարզ է, որ Հայոց կաթողիկոսը, եպիսկոպոսներն ու իշխանները շեին կարող ստորագրել մի վագերագիր, որը գեռես սեազրի էր: Մատանիով կնքվում էին վագերական փաստաթղթերը: Իսկ որ թուղթը բյուզանդական կայսրին չի ուղարկվել, դա ոչ մի կերպ չի կարող կապվել թղթի սեազրի լինել-չլինելու հետ (սեազրին արտագրելը և ուղարկելը դժվար չեր լինի): Դրան հավանաբար խանդարել է որևէ լուրջ պատճառ, որը մենք հայտնի չենք:

Է զանաղան անհամաձայնություններ, «որոնք Սերեսոին աս մասին վրայ մեծամեծ տարակոյսներ կը արուցանին»:

Թուղթը զրվում էր մի ժամանակ, երբ Հայաստանը ենթալա էր արարական արշավանքներին: Պետք էր զգույշ լինել: Թուղթը կարող էր գրգռել կայսրին, որն առանց այն էլ մեծ բարյացակամություն չէր ցուցաբերում Հայաստանի նկատմամբ:

Այնպես որ թղթի «սեագիր» լինելով շի կարելի բացատրել այնտեղ նկատվող թերությունները: Այստեղ որոշակիորեն նկատվում է թղթին շղատկանող և պատահաբար այնտեղ ընկած հատվածների առկայությունը: Դա առանձնապես ցայտուն է երևում նիկիայի ժողովին հաջորդող հատվածից:

Այսպես. նիկիայի ժողովի բանաձեռ (Հանգանակ նիկիան ժողովոյն) մի դավանաբանական տեսություն է, «Սերեսի Պատմության» հեղինակը շարադրել է այս տեսությունը: Բանաձեռի վերջին բառերն են՝ «իսկ մեք փառաւորեալք՝ որ յառաջ քան զյափիտեանս, երկիր պագանելով սրբոյ երրորդութեանն և միասնական աստուածութեանն հաւը և որդոյ և հոգոյն սրբոյ. այժմ և միշտ և յափիտեանս յափիտենից, ամէն»: Սրանից անմիջապես հետո բնագրում հաջորդում է բոլորովին անսպասելի մի արտահայտություն՝ «Եւ ապա կոչեցան ի Հռովմ» և այլն: Ովքե՞ր «կոչեցան ի Հռովմ» նախորդ բնագիրը, ասացինք, որ մի դավանաբանական տեսություն է և ոչ թե որևէ դեպքի նկարագրություն, որպեսզի հիշատակվեին դեպքին մասնակից մարդկանց անուններ: Այնուհետև՝ Հռովմի հիշատակությանը հաջորդում է «Յամի ժո՞յ երեքտասաններորդի կենարարին և փրկչին մերոյ» (և այլն) արտահայտությունը, որը չէր կարող գտնվել ոչ միայն Դավանության թղթում, այլև «Սերեսի Պատմության» որևէ այլ մասում, որովհետև այս Պատմության մեջ դեպքերի տարեթվերը նշված են ոչ թե փրկչական թվագրությամբ, այլ՝ հույն և պարսիկ թագավորների ժամանակին հարմարեցնելով: Փրկչական տարեթվի օգտագործումն անսպասելի է առհասարակ VII դարի հայ մտահնագրության մեջ:

Մեկ այլ փաստ: Հայտնի է, որ «Սերեսի Պատմության» սկզբում թյուրիմացարար դետեղված համաժամանակյա աղյուսակների հեղինակն իր աղյուսակները կադմելիս օգտվել է

նաև «Սեբեռսի Պատմություն»-ից: Եթե այս Պատմության սկզբնական բնագրում նա գտած լիներ «Յամի ԺԿ՝ երեքտասաններորդի կենարարին և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի թագաւորէ Գիոկիլետիանոս երեք ընկերաւայն թագաւորութեանն Հոռվմեացոց» տեղեկությունը՝ այդ դեպքում համաժամանակյա աղյուսակի ավյալները կարձագանքեին այս տեղակությանը: Այնինչ այնտեղ (*ՍԵՊ*, էջ 15) Գիոկղետիանոսի թագավորության տարին նշված է ոչ թե «յամի ԺԿ՝ երեքտասաններորդի Յիսուսի Քրիստոսի», այլ՝ Հայոց Խոսրով արքայի 48-րդ և Պարսից Արտաշիրի 18-րդ տարիկ: Համաժամանակյա աղյուսակում խոսք չկա նաև այն մասին, թե Գիոկղետիանոսը թագավորել է «Երեք բնկերաւին»:

Խ

«Յոյս արդեաւք «Ի նոսա». յայտ է ի բիւրապատիկ զաւրութին» (էջ 134, տ. 10—11):

Պետք է ուղղել՝ «Յով արդեաւք «Ի նոսա» յայտ է Եթէ ի բարձունան յոր ել ուրդին Աստուծոյ և բիւրապատիկ զաւրութին»:

Ընդգծված բառերը, որ բացակայում են «Սեբեռսի Պատմության» մեղ հասած բնագրում, վերականգնել ենք Մաշտոցի Մատենադարանի՝ 981 թվականին ընդօրինակված հնագույն թղթյա ձեռագրի (*№ 2679, էջ 191ա—192ա*) միջոցով:

ԽԱ

Վասն այնորիկ մեք ոչ ամաշեմք ասել ցորդին Աստուծոյ. «սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր» (էջ 134, տ. 12—13):

Պետք է ուղղել՝ «Վասն այնորիկ մեք ոչ ամաշեմք ասել ցորդին Աստուծոյ. «սուրբ Աստուծած, սուրբ և հզաւր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր»:

Ընդգծված բառերը վերականգնել ենք ըստ 981 թվականի ձեռագրի:

ԽԲ

«ՃԹէանով ումն դկին մարդ զաշակերտ Պիւթագորայ հարցեալ եղեւ, թէ ես քանի աւուր մերձաւորութեանն ի կին մարդ

արժան է յարքունիս մտանել: Եւ նա առել. «յիւրմէն աւրէն և, յաւարքէն և ոչ բնաւ» (էջ 135, ա. 3—6)

Պետք է ուզգել՝ «...յիւրմէն նոյն աւրին, յաւարքէն և ոչ բնաւ»:

Այսպես է ուզգել նաև Ստ. Մալխասյանցը բառ «Պիտոյից զրբի»: Այս ուզիղ ձեր մենք գանում ենք «Սերեոսի Պատմության» 981 թվականի ձեռագրում ընդօրինակված հատվածում, որի հիման վրա և վերականգնում ենք բնագիրը:

Որոշ բանասերներ (Հ. Տաշյան, Մատենագրական հետազոտություններ, Վիեննա, 1895, էջ 215, ն. Ակինյան, «Հանդէս ամսօրեայ», 1934, էջ 205) աղավաղված են համարել նաև սրբազրվող հատվածի արքունիք («յարքունիս մտանել») բառը: Նրանք այս բառի փոխարեն առաջարկել են «սրբատեղի» կամ այդ նշանակությունն ունեցող մի այլ բառ, որովհետեւ ենթադրել են, որ «Սերեոսի Պատմության» մեջ տվյալ տեղում խոսվում է այն մասին, որ անբարոյականները չպետք է մտնեն սրբատեղի: Ըստ որոշ նրանք շեն նկատել, որ «Սերեոսի Պատմությունում» նույնական արքունիք բառն օգտագործված է սրբատեղի իմաստով (հմմտ. «Երկնաւոր թագաւորի արքունիք», «արքունական և երկնային սեղան»): Արդունիքը բառի փոխարերական իմաստով գործածության մի օրինակ տե՛ս նաև Մաշտոցի Մատենադարան, ձեռ. № 7729, «ի Պատմութենէ Հերակղի. վասն աւերածոյն Երուսաղէմի» հատված, «ի վերին արքունեաց», էջ 538): Այս փաստը վրիտել է սւահարությունից, որովհետև «Սերեոսի Պատմությունը» հայտնաբերվել և հրատարակվել է Հայկագյան բառարանի տպագրությունից հետո և արքունիք բառի փոխարերական իմաստը չի մտել բառարանի մեջ: Հետագա բառարանները կրկնել են Հայկագյանի լուսաւորությունը:

Բայց հարցն այստեղ վերաբերում է ոչ թե բառի փոխարերական, այլ՝ իսկական իմաստին: Քննարկվող հատվածում բառն օգտագործված է իր բուն՝ աշխարհիկ թագավորի արքունիքի իմաստով և, ինչպես տեսանք, սրան է, որ առարկել են բանասերները: Հատվածում հայտնվում է, որ հին հույներն արգելում էին անբարոյականներին՝ մտնել արքունիք, ապա

դրանից հետո ավելացվում է՝ եթե անբարոյական մարդն անցանկալի է աշխարհիկ արքունիքի համար՝ որքա՞ն ևս ավելի արգելված պետք է լինի նրա մուտքը երկնավոր թագավորի արքունիք, այսինքն՝ սրբատեղի։ Տեսնում ենք, որ այստեղ արքունիք բառը ոչ միայն սխալ չէ, այլև հանդիսանում է քըննարկվող հատվածի առանցքը, ուստի և նրա սրբագրման մասին խոսք լինել չի կարող։

Հատվածը սովորաբար կապել են Թեոն Աղեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց» աշխատության հետ, այսինչ՝ այս աշխատության մեջ խոսվում է անբարոյական կանաց և ոչ՝ տղամարդկանց, Դեմետր դիցուհու տաճարի և ոչ՝ աշխարհիկ թագավորի արքունիքի մասին։

Աղեքսանդրացու հունարեն բնագրում (Theonis Progymnasmata, armeniaca et graeca, ed. Pr. Dr. A. Manandian, Erevani. 1938, էջ 37) արքունիք բառի դիմաց գտնվում է նետմօֆօրէնու (թեսմոփորեոն) բառը, որը հայկական աղբյուրներում սովորաբար կամ չի թարգմանվել կամ էլ գործածվել է սրբատեղի իմաստով։ Գերմանացի գիտնական Ադոլֆ Բաում գարտների կարծիքով (Über das Buch «Die Chrie», ZDMG, Leipzig, 1886. III, էջ 466) «Սեբեոսի Պատմության» հեղինակը սխալ է թարգմանել այս բառը՝ նույնացնելով «արքունիք»-ի հետ։ Մատենադարանի № 350 և 4149 ձեռագրերում պահպանված մի փաստ գալիս է հերքելու այս կարծիքը։ XII! և XIV դարերում ընդօրինակված հիշյալ ձեռագրերում գտնում ենք հունարենից հայերենին անցած փոխառյալ բառերի մի միջնադարյան բառարան, որտեղ բառացի կարդում ենք՝ «թեսմոփորոն=արքունիք կամ եկեղեցի»։ Այսպիսով պարզվում է, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակն անվրեպ ճըշգրտությամբ է թարգմանել նետմօֆօրէնու բառը, որն անշուշտ նրան հայտնի է եղել ո՛չ թե Թեոն Աղեքսանդրացու աշխատությունից, որը ինչպես տեսանք տարբեր բովանդակություն ունի, այլ՝ Թեանովի մանրապատումի հունարեն մեկ այլ տարբերակից։

ԽԳ

«Զի՞ պիզծն մերձեսցի բերան, կամ զի՞ արդ ոչ դողումն կալաւ գճաշակողն ի հուրն կենդանի աներկիւղաբար մերձենալ. այլ ունելեաւք, և ոչ մարգարէն արժանաւոր լինէր ճաշակել զնա» (էջ 135, տ. 11—14):

Պետք է լինի «Զի՞ պիզծն մերձեսցի բերան, կամ զի՞ արդ ոչ դողումն կալցի գճաշակողն՝ ի հուրն կենդանի աներկիւղաբար մերձենալ, զոր ոչ Սերոբէն իսկ ձեռաւք համարձակէր մերձենալ, այլ ունելեաւք, և ոչ մարգարէն արժանաւոր լինէր ճաշակել զնա»:

Ընդգծված բառերը վերականգնել ենք 981թ. ձեռագրի միջոցով:

Նրանց բացակայությունը «Սերեսի Պատմության» մեզ հասած բնագրում առիթ է տվել զանազան ենթադրությունների: Ստ. Մալխասյանցը այդ առիթով գրում է. «Այստեղ նորից աղավաղված է խոսքը: Թվում է, թե այլ ունելեաւք պետք է տեղափոխել մի տող ներքեւ և կարդալ. զիա՞րդ դողումն ոչ կալաւ զեաշակողն՝ ի հացն կենդանի աներկիւղաբար մերձենալ. և ոչ մարգարէն արժանաւոր լինէր նաշակել զնա, այլ ունելեաւք միայն մերձենալով ի շրուտն նորա՞ներէն ընկալաւ զմաքրութիւն: Ակնարկություն է եսայի մարգարէի տեսլեան: Ես. Զ. 6—7: Պատկանյանը այսպէս է թարգմանել այս հատվածը (Եր. 147). «И пророк не удостоился вкусить его сам—щипцами, но приблизив губы свои, получил ощущение,—преградил путь к земле счастья» (ՍԵՊ, էջ 195):

Բնագրում մեր վերականգնած նախադասությամբ լուծվում է բանասերներին տարակուսանք սպառճառած հարցը:

ԽԴ

«Ապա ասէ. «Ես դամ ի Կարնոյ քաղաք, և եկայք դուք առիս»: Եւ կամ՝ «Ես դամ առ ձեզ, և տամ ձեղ աւգնութիւն հռովի, և խորհիմք ի միասին, եթէ դինչ արժան իցէ առնել»: (էջ 141, տ. 8—11):

Պետք է լինի «...տամ ձեզ օգնութիւն ՀՌ ոգի (=70.000 հոգի»):

Աղավաղված բնագրի «հոռոգի» բառը «Սերեռսի Պատմության» բոլոր թարգմանիչները (Ք. Պատկանյան, Հ. Հյուգըշման, Ֆ. Մակեր, Ստ. Մալխասյանց) նույնացրել են հոռ (ռոճիկ, օրապահիկ) բառի հետ և բնագրի տվյալ հատվածը թարգմանել են այսպես. 1. Ք. Պատկանյանը՝ «дам вам сильную помошь (История императора Иракла, стр. 153), 2. Հ. Հյուգըշմանը՝ «Unterstutze euch durch Sold» (Zur Geschichte Armeniens, S. 31), 3. Ֆ. Մակերը՝ «Je vous assisterai par une solde» (Histoire de Heraclius, p. 133), 4. Ստ. Մալխասյանը՝ «дам вам средства на содержание (жалование)» (История епископа Себеоса, стр. 117).

Քննարկվող հատվածն ունի հետկյալ բովանդակությունը: Բյուզանդացի կայսր Կոստանդ 2-րդի (641—668) թագավորության 12-րդ տարում Թեոդորոս Ոշտունին ապստամբում է բյուզանդացիների դեմ և անցնելով արաբացիների կողմը. կնքում է հայ-արաբական նշանավոր պայմանագիրը, որը Հայաստանին վերապահում էր բացառիկ արտոնություններ¹⁹:

¹⁹ Բյուզանդական պատմիչ Թեոփանեսի Chronographia -ում vol I, Bonnae, 1839, p.527. Թեոդորոս Ոշտունու անվան փոխարեն կարդում ենք Պասագնատես Պատշշնածից (Պատշշնածից և առաջնաշահանաւուն պարիքուս), Պ. Պետրոսը (Պատշշնածից-Պերշշնածից-«Byzantion», t. VIII, f. 2 (1933) Bruxelles p. 405-423) կարծիք է հայտնել, թե Պասագնատեսին պետք է նույնացնել Թեոդորոս Ոշտունու հետ կամ էլ՝ այս անվան ակնոնքները որոնել վրացերեն sparstagani բառի մեջ: Մեր կարծիքով Թեոփանեսի սկզբնական բնագրում Պատշշնածից անոնքը չի եղել: Այս անոնքը հայկական պատրիկ գոյություն չի ունեցել (առնասարակ Պատշշնածից անոն հայտնի չէ): Թեոփանեսն ինքը նշում է Կոստանդ 2-րդ կայսեր ժամանակ կնքած միայն մեկ հայ-արաբական պայմանագիրը: Ուրեմն նա ինքը ժխտում է երկրորդ դաշինքի (հետեւ վարար նաև՝ երկրորդ հայ պատրիկի) գոյությունը: Պետք է ենթադրել, որ Թեոփանեսը Թեոդորոս Ոշտունու անոնքը գրելու փոխարեն նրան կոչել է «ուխտագիր», «ղավաճան» մականվամբ, որը հունարեն կրինի ութաթաշտունի է, որ Թեոփանը Թշտունուն պատրիկության պատիվը տվել էր Կոստանդ 2-րդը: Եվ քանի որ Թշտունին ապստամբեց հենց այս միկնույն Կոստանդի դեմ և անցավ մահմեդական արաբների կողմը, բյուզանդացիները

Կոստանդր դիմում է Ծշտունուն և առաջարկում է միանալ իրեն, խոստանալով տալ «օգնութիւն հոռդի»: Ծշտունին չի համաձայնվում: Այդ ժամանակ Կոստանդր արշավում է Հայստան 100.000 զորքով:

«Հոռդի» արտահայտության սխալ վերծանմամբ անհայտ է մնացել մի կարենոր տեղեկություն՝ Հայ-բյուզանդական հարաբերությունների մասին: Բնագրի վերականգնման միջոցով պարզվում է, որ բյուզանդացի կայսր Կոստանդր մտադիր է եղել Հայոց զորավար Թեոդորոս Ծշտունու տրամադրության տակ դնել 70.000-անոց մի զորախումբ և ձեռնարկել միասնական գործողություններ արաբացիների դեմ:

Սկզբնական բնագրի «Հոռդի» («70.000 ոգի») բառը մեզ հասած բնագրում սխալմամբ բնդօրինակված է միասին՝ «հոռդի», որը նմանվելով «հոռդ» (ոռծիլ) բառին՝ շփոթության մեջ է զցել բնագիրը վերծանողներին:

Ավելի ուշադիր զննությունը, սակայն, ցույց կտար, որ «Հոռդ» («ոռծիլ») բառի գործածությունն այստեղ անսպասելի է: Բացի դրանից, եթե բառն իսկապես «Հոռդ» լիներ, ապա նշված նախադասության մեջ այն չէր կարող գործածվել սեռական-տրական հոլովով և դառնալ «Հոռդի»:

Իրականում «Հոռդ» բառն անծանոթ չէ «Սեբեսի Պատմության» հեղինակին և նա այն գործածել է ճիշտ առումով. «բաշխէր զարացն հոռզս, և ճաշ և ընթրիս» (էջ 90):

«Օգնութիւն հոռդի» արտահայտությունը սխալ է ոչ միայն բերականորեն, այլև բովանդակությամբ:

Քննարկվող բնագրում «օգնություն» բառն ունի միայն ուժով (և ոչ՝ նյութապես) օգնելու իմաստ: Հայոց զորավարը երբեք ոոճկի կամ նյութական օգնության պահանջ չէր առաջարկել, որպեսզի Կոստանդր կայսրն էլ խոստանար նրան ոռ-

Նրան զրկեցին պատրիկության պատվից և հրապարակորեն, հոչակեցին «ուխտազանց»՝ ուժաչութեաւ: Հավանաբար այս բառի աղճատումից էլ առաջացել է Պատաշնանց: -ը: Պալեոգրաֆիկ առումով այս բառերի շփոթը շատ հնարավոր է. այսպիս՝ ուժը (շահ) աշխանց: Ածականն ընկալելով որպես հատուկ անուն, ներմուծող գրիշներն այդ անվան հետ հարմարեցրել են նաև նախադասության մյուս անդամները:

ճիկ տալ: Խոճիկ տալու համար սկեսը էլ չէր, որ կայսրը դար կարին, նա կարող էր նստել իր մայրաքաղաքում և ոռջիկն ուղարկել գործակալների միջոցով:

Արաբների իշխանը թեոգորոսին արդեն խոստացել էր տալ «զաւը յափնականութիւն» և բյուզանդական կայսրն այս ուզմական օգնության դեմ է, որ առաջադրում է իր 70.000-անոց օգնությունը:

Արաբների իշխանը թեոգորոս Ռշտունուն սիրաշահելու համար առաջարկել էր այնպիսի մեծ արտոնություններ, որոնց դիմաց լրյուզանդական կայսրի առաջարկած կարծեցյալ հոռոգը ծիծաղելի կթվար: Ահա այդ արտոնությունները. «Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ,—ասում է արաբների իշխանը,—որչափ ամաց և դուք կամիջիք, և ոչ առնում ի ձենց սակ զերեամ մի. ապա յայնժամ տաշիք երդմամբ, որչափ և դուք կամիջիք: Եւ հեծեալ կալէյ յաշխարհիդ թե հազար և հաց յաշխարհէն տուք և ես ի սակն արքունի անգարեմ. և զիեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ, բայց այլ ուր և Հրամայեմ պատրաստ լիցին ի գործ: Եւ ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս, և ոչ՝ տաճիկ սպայ ի բազմաց մինչև զմի հեծեալ: Թըշնամի մի մտցէ ի Հայս, և եթէ զայ Հոռոմ ի վերայ ձեր՝ արձածեզ զաւը յափկեականութիւն՝ որչափ և դուք կամիջիք: Եւ երդում ի մեծն Աստուած՝ եթէ ոչ ստեմ»:

Ահա այս զարմանալի արտոնություններին հակադրվելու համար է, որ Կոստանդին կայսրը Ռշտունուն խոստանում էր 70.000-անոց մի բանակի:

«Սեբեոսի Պատմության» մեջ օգնություն բառն ամենուրեք գործածված է ուազմական օգնության (և ոչ՝ ոռջիկ) առումով: Հմմտ. «տայր նոցա զզաւըն կայսերական յաւգնութիւն» (էջ 27), «արձակեա ինձ զաւը յափնութիւն» (36—37), «մատուսցէ զզաւըն յափնութիւն» (44), «զաւը բազումս յափնութիւն իւր» (67), «եթէ զաւը սկիտոյ է՝ արձակեցից յափնականութիւն» (99), «Գունդս կազմել իբրև ՀՌ (= 70.000)... այլ զաւը գումարեալ արձակեցէ յափնականութիւն նոցա» (107), «խնդրել ի բերդէն Դարաւնից զաւը յափնականութիւն իւրեանց» (118) և այլն: Այսպիսի մի արտահայտու-

թյուն է նաև «տամ ձեզ աւգնութիւն ՀՌ (=70.000) սդի» արտահայտությունը, որտեղ արդեն որոշակիորեն նշված է օդ-նության չափը, ոչը փոխարինում է մյուս նախադասություններում անորոշ «դաւր» (գորք) բառին:

Իսկ որ «Սեբեռոսի Պատմության» հեղինակը սովորություն ունի մարդկանց քանակը «հոգի», «ոգի» բառերով նշելով՝ այս փաստն առկա է ոչ միայն «Հռ ոգի» արտահայտության մեջ, այլև մի քանի այլ արտահայտություններում։ Համեմատիր, օրինակ, «Եւ խաղացուցին զբազմութիւն զերւոյն լե հաղար հոգի» (Էջ 110) («Երեսուն և հինգ հաղար ոգի զերկացին», Հովհ. Դրասիս., Թիֆլիս, 1912, էջ 82), «զպատանդսն, զոր տարեալ էին յերկրէն, ոգիս իրրե ՌԶՀԵ» (Էջ 155) և այլն։

ԽԵ

«Արդ իբրև ետես բազմութիւն զարացն իսմայելի, եթէ ոչ յաջողի նոցա գործն ի կողմանէ ամուս լերանցն Մարաց. քանզի ոչ իսկ նուաճեցան ի ժառայութիւն նոցա Կեթրուս և Սկիւթեայ, որ են զետք Դելումն, հանդերձ ամենայն ամրաբնակ բազմութեամբն» (Էջ 151, ա. 6—10):

Պետք է, ուղղել «...Կեթրուս և Սկիւթեայ, Գեղի, Դելումն...»։

Մեր բերած հատվածի բովանդակությունից որոշակիորեն երեսում է, որ «Կեթրուս»-ը և «Սկիւթեա»-ն գետեր չեն։ Գետերի մասին հեղինակը չէր ասի «ոչ իսկ նուաճեցան ի ժառայութիւն նոցա... հանդերձ ամենայն ամրաբնակ բազմութեամբն»։ Այստեղ խոսքը երկրների մասին է, որոնք իրենց ամբողջ ամրաբնակ բնակչությամբ չհնազանդվեցին իսմայելցիներին։ Գետերը բնակչություն չէին ունենա և ոչ էլ ժառայության կմտնեին որևէ իշխողի տիրապետության տակ։

Հին աշխարհի քարտեզի վրա հիշյալ անուններով գետեր շկան։ Ընդհակառակը, գոյություն են ունեցել Գեդրուախա (=Կեթրուս) և Սկիւթիա երկրներ։ Գեդրուսիան (Գեծրածնա) Պլուտարքոսի մոտ հիշատակվում է որոշես պարսից տերության հարավ-արելյան նահանգ։ Հերոդոտոսը նույնպես

սլարսից ցեղերի շարքում Հիշատակում է դերուսիացիներին, որոնց անունից, ինչպես ենթադրում է Վ. Բարտուլդը²⁰ առաջացել է Պարսկաստանի հարավ-արևելյան Դեղրուսիա Նահանգի անունը: Խոր «Սկիւթեայ»-ը ակնհայտորեն սկյութացիների աշխարհն է, որը տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր սահմաններ և հին հայկական աղբյուրներում հենց այդպես էլ կոչվում է՝ «Սկիւթիա»:

«Սեբեսի Պատմությունում» Հիշատակված են այս՝ Կեթրուս և Սկյությա երկրները: Այսպիսով, կասկածից վեր է, որ «Կեթրուս և Սկիւթեայ», որ են գետք Դելումք» արտահայտության մեջ սկզբնական բնագրում «գետ» լառի փոխարեն եղել է մեկ ուրիշ բառ:

Այդ բառը գտնելու համար մեզ օգնության է գալիս ամենից առաջ նրա կողքին գտնվող Դելումք տեղանունը: Սա կասպից ծովի հարավ-արևելյան մասում գտնված Դելում (Դեյլամ) նահանգն է, որի սահմանները գտնվել են Պարսկաստանում, Գիլանի կազմում: Գիլանն իր անունն ստացել է այդ երկրում ապրած Դեղ ցեղից, որին Հիշատակում են Պլուտարքոսը (Γελ.α!), Պլինիոսը (Geloe) և ուրիշներ²¹: Հայկական աղբյուրները հաճախ Գել (Գեղ) և Դելում (Դեղում, Դիղում) անունները հիշատակում են միասին: «Սեբեսի Պատմությունում» սրբագրվող արտահայտությունից մի պարբերություն առաջ հիշվում է «Գելն (=Գեղն) և Դելումն»²²: Այսպես է (Հուլոված ձեռվ՝ «Գեղաւք և Դիղմովք») նաև Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացուցում»²³:

Պաղոմեսի քարտեզում նույնպես Գեղք և Դելումք երկրները նշված են եղել միասին. «Կատուու, Կարսոննու, Ղելու

²⁰ Бартольд В., Историко-географический обзор Ирана, С.16, 1903, стр. 92 ՀԱՄՏ. ՆԱԿ Էջ 99:

²¹ Barbier de Meynard, Dictionnaire géographique, historique et littéraire de la perse et des contrées adjacentes, Paris, 1861, p. 690.

²² ՍբՊ, էջ 150.

²³ Աշխարհագիր հատած երկրորդ, տպված՝ Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 340:

(=Գեղք), Արէթւշը (=Դիլումք)՝²⁴ նույնը հանդիպում էնք նաև Մովսես Խորենացու անվամբ հրատարակված «Աշխարհացոյցի» մի տարբերակում «Գեղք, Դիլումք»²⁵: (Այսուղի Սկյութիան նույնպես ամենուրեք նշված է «Սեբեռոսի Պատմության» մեջ հանդիպող ձևով՝ «Սկիւթիա»²⁶): Եղիշեն գրում է. «զգունդն ...Գեղաց»²⁷:

Հ. Հյուրշմանը ցույց է տվել, որ «Սեբեռոսի Պատմության» մեջ ամենուրեք «Գեղում» անունը փոխարինում է Դելումին (=Դեղում), իսկ մեր կողմից սրբագրվող հատվածից մեկ պարբերություն վերը հանդիպող «Դելն և Դելումն»-ի փոխարեն պետք է կարդալ «Գեղն և Դելումն»²⁸:

Նշված փաստերի հիման վրա պարզվում է, որ «Կեթրուս և Սկիւթեայ, որ են գետ Դելումք» արտահայտության մեջ գետը բարի փոխարեն սկզբնապես եղել է Թեղք²⁹, որը ինչպես մեր մյուս աղբյուրներում, այնպես էլ «Սեբեռոսի Պատմության» մեջ նշված է Դելումի կողքին՝ «Գեղք, Դելումք»:

Դա ապացուցվում է նաև սրբագրվող հատվածից քիչ վերը հաղորդվող այն տեղեկությամբ, ըստ որի մարերն ապստամությունն սկսելիս իրենց հույսը դրել էին ինչպես մարաց անառիկ լեռների, այնպես էլ Դել (=Գեղք) և Դելում երկրների քաջ բնակիչների վրա: «Ապստամբեցան մարք ի ծառայութենէն իսմայելի... ապաւէն և թիկունս իրեանց արարին զամուրս աշխարհին մարաց... զժիր և զքաջ աղքացն զաւրութիւնս, որ բնակիեալ էին ի նոսա, Դելն և Դելումն»³⁰: Ահա այս

²⁴ Ptolemeaus, *Geographia*. E codicibus recognovit C. Müllerus, Parisiis, 1883, VI. 25: Հմամ. Géographie de Moise de Coréne, d'après Ptolémée, texte arménien traduit en français par le P. Arsène Soukry, Venise, 1881, p. 54, An. 1.

²⁵ «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյց, յաւելուածովք նախնեաց», Վեհատիկ, 1881, էջ 41:

²⁶ Անդ, էջ 41, 42, 43:

²⁷ Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ ե. Տեր-Մինասյան, Երևան, 1957, էջ 115—116:

²⁸ Hüb schmann H., Arm. Gramm. 1 T., S. 34-35.

²⁹ Հմամ. Marquart J., Eranšahr, S. 125

³⁰ ՍեՊ, էջ 150:

նույն Դել և Դելում երկրների քաջ բնակիչներն են, որ սրբազնովող հատվածում շեն հնագանդվել արարներին: «Կեթրուս և Սկիփթեայ, Գեղք, Դելումք»:

